

Հարգելի՝ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄ) նախագիծ հանդիսացող Արցախի Էլեկտրոնային Գրադարանի կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆԿԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Ծնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների Էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlis.am/>

E-mail: info@artsakhlis.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlis.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhlislibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>






Ա. Չուլերսկով

ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿԻ
ՀԵՐՈՍԸ

ՀԱՅՊԵՏՏՎԱՆ

Ա. Յու. Լերմոնտվ

ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿԻ
ՀԵՐՈՍԸ



Ավելածայթիք + քաջ.
Հայուսան Յի Հանրապետություն
Գլխավոր Խնդիրական գրադարան

ՀԱՅՈՒՏՀԱՐԱՑ

6064.0.6

1957

МИХАИЛ ЮРЬЕВИЧ ЛЕРМОНТОВ
ГЕРОЙ НАШЕГО ВРЕМЕНИ
(На армянском языке)

Армянское государственное издательство
(Айпетрат), Ереван, 1957 г.

20653

Յուրաքանչյուր զրբում առաջաբանն առաջին և դրա հետ մեկտեղ վերջին բանն է. առաջաբանը կամ ծառալում է որպիս երկի նպատակի բացարություն, կամ որպես արդարացում ու պատասխան քննադատներին: Բայց սովորաբար ընթերցողները չեն հմտաբրբուժում բարոյական նպատակով և ժուռնալային հարձակումներով, ուստի և նրանք առաջարան-իեր չեն կարգում: Բայց ափառու, որ այդ այդպիս է, մանա-վանդ մեզ մոտ: Մեր հասարակությունը դեռ այնքան երիտա-սորդ է և պարզամիտ, որ առակը չի հասկանում, եթե նրա վերջում բարոյախոսություն չի գտնում: Նա կատակը չի կռա-չում, չեղնամքը չի զգում, նա պարզապես վատ է դաստիա-րակիած: Նա գեռաւ շգիստէ, որ կարգին հասարակության մեջ է կարգին զրբում ակների հայցոյանքը չի կարող տեղ ունենալ, որ ֆամանակակից կրթությունը հնարել է ավելի սուր, հա-մբրյա անհետանելի և այնուհանդերձ ոչ-պակաս մահացու մի գեներ, որը շողաբրթության հանդերձի տակ թաքնված, ան-վանելի և անվերել հարված է հասցնում: Մեր հասարակու-թյունը նման է մի գավառացու, որը, թշնամի արքունիքների պատկանող երկու դիվանագետների խոսակցությունը լսելով, հավատացած կմնար, թե նրանցից ամեն մեկը խարում է իր կառավարությանը հօգուտ փոխադրաց, ամենաաքնարից բարե-կամության:

Այս գիրքը դեռևս նորերս իր վրա զբաց ու կործեց ըն-թերցողներից և մինչև իսկ ժուռնալներից ուստից դժբախտ

վստահությունը դիպի բառերի տառացի նշանակությունը։
Ոմանք սոսկալի և լրջորեն վիրավորվեցին, որ նրանց համար
օրինակ են դարձնում այնպիսի մի անբարոյական մարդու,
ինչպես Մեր ժամանակի Հերոսն է, ուղիղներն էլ շատ նրբորեն
դիտողություն արեցին, որ հորինողն իր և իր ծանթերի
պատկերն է նկարել... Հի՞ն և ողորմելի՛ կատակ։ Բայց երևի
Ռուսիան արդեն այնպես է ստեղծված, որ նրանում ամեն ինչ
նորոգվում է, բայց նման անհեթեթություններից։ Կախարդա-
կան հեքիաթներից ամենակախարդականը մեզ մոտ հաղի՛վ
թի խոսափի անձ վիրավորելու հանցափորձի համար հանդի-
մանվելուց։

Մեր ժամանակի Հերոսը, ողորմած պարոնի՛րս, ճիշտ որ
պատկեր է, բայց ոչ թե մի մարդու, այդ մի պատկեր է, որ
կազմված է մեր ամբողջ սերնդի արատներից իրենց լրիվ
զարգացմամբ առած։ Դուք ինձ նորից կասեք, թե մարզը չի կա-
րող այդքան վատ լինել, իսկ ես ձեզ կասեմ, որ եթե գուր հա-
վատում էիք բոլոր տրափիկ և ոռմանտիկ շարագործների գո-
յության հնարավորությանը, ել ինչո՞ւ չեք հավատում Պեղորի-
նի իրական լինելուն։ Եթե դուք, հաճույք էիք զգում շատ ավելի
սոսկալի և այլանդակ հորինվածքներից, ել ինչո՞ւ այս նկա-
րագիրը, անգամ իրեն հորինվածք, ձեր ներողամտությանը չի
արժանանում։ Չինի՞ այն պատճառով, որ նրա մեջ ճշմար-
տություն ավելի շատ կա, քան դուք այդ կցանկանայիք...

Դուք կասեք, բայց չե՞ որ բարոյականությունը դրանից չի
շահում, Կներեք։ Մարդկանց բավական կերակրել են քաղցրա-
վենիներով. դրանից նրանց ստամոքսը փշացել է, հարկավոր
են դառն դեղեր, կծու ճշմարտություններ։ Սակայն սրանից
հետո մի՛ կարծեք, թե այս գրքի հեղինակը իրենէ մարդկային
արատների ուղղից դառնալու հպարտ պատրանք է տնիցեց։
Աստված ազատի նրան այդպիսի տիսմարությունից։ Նրան
պարզապես ուրախացնում էր ժամանակակից մարդուն նկա-
րագրելը, ինչպես նա այդ մարդուն հասկանում է և որին, ի
դժբախտություն իր և ձեր, խստ հաճախ է պատահել։ Բա-
վական է և այն, որ հիմանդրությունը մատնանշված է, իսկ թե
այն ինչպես պիտք է բժշկել—այդ արդեն աստված դիտե։

ԱՌԱՋԻՆ ՄԱՅ

I

Բ Ե Լ Ա²

Ես փոստի կառուվէ դալիս էի թիֆլիսից։ Իմ սայլակի
ամրոց բներ մի փոքրիկ ճամպրուկ էր, որի կեսը լի էր
վրաստանին վերաբերող ճամփորդական նոթերով։ Դրանց
մեծ մասը, ձեր բախտից, կորել է, իսկ ճամփարկղը, մնացած
իրերի հետ, իմ բախտից, մնացել է։

Երին արդեն սկսում էր թաքնվել ճյուղապատ լեռնաշղթա-
յի հաեր, երր իմ կառքը մասավ Կոյշատորի հովիտը։ Օս կա-
սապանն անդադրում քշում էր ձիերը, որպեսզի մինչև գիշեր
կարողանա բարձրանալ Կոյշատորի սարը, և կոկորդով մեկ եր-
գիր էր երգում։ Ճիշակալի՛ տեղ է այդ հովիտը։ Սարի բոլոր կող-
մերում անմատչելի կարմրավուն ժայռեր են, որոնց վրա կախ-
ված է կանաչ բաղեղ, և որոնց կատարները պասկում են շի-
նարների խմբերը։ Սարի շուրջը գեղին զառիթափներ են, որոնց
խաղողիկ են ողողատները, իսկ այստեղ, հուսկ բարձրում, ձյու-
ների ոսկե ծովին է, իսկ ցածրում՝ Արագվան, որ մշուշով լի
սկ կիրճից ազմումով դուրս պրծնող մեկ տրիշ՝ անշանուն գի-
տակի հետ զրկախառնված՝ ճպվում է արծաթե թելի պես և
փայլիլում, ինչպես օճն իր մաշկով։

Համանելով Կոյշատորի սարի ստորոտին, մենք կանգ առանք
դուրսնի մոտ։ Այդտեղ խոնմված՝ ազմկում էին մի երկու տաս-
նյակ վրացիներ և լեռնցիներ։ մոտերքում ուղտերի կարա-
վանն էր կայանել՝ գիշերերու։ Ես պիտք է եղներ վարձեի, որ-

պեսզի սալլակս քաշեն, բարձրացնեն այդ անիծյալ սարը, որովհետև արդեն աշուն էր և գետինը սառույցով պատաժ, իսկ այդ սարն ունի մշտ երկու վերստ երկարություն:

Ճար չկար, ևս վարձեցի վեց եղ և մի քանի օս: Սրանցից մեկն իր ուսերին առավ ճամպրուկս, մյուսներն սկսեցին օգնել եղներին համարյա միայն բղավոցով:

Իմ սալլակի հետեկից զալիս էր մի ուրիշ սալլակ, որը եղների մի քառակ զարմանալի հեշտ էր քաշում, չնայած այն քանին, որ այդ սալլակը գլխազրուս լիցուն էր բեռով: Այս հանգամանքն ինձ դարմացընց: Այդ սալլակի հետեկից գնում էր նրա տերը՝ իր փոքրիկ, արծաթապատ կարարդական ծխամորձ ծխելով: Նրա հագին կար առանց ուսադիրների սպայական սերթում⁴ և գլխին չերթեղի թափամազ դդակ: Նա մոտ հիսում տարեկան էր երևում, նրա դեմքի թուխ գույնը ցույց էր տալիս, որ այդ զեմքը վաղուց է ծանոթ անդրկովկասյան արևին, ու վաղաժամ սպիտակած բեղերը չեն համապատասխանում նրա հաստատում քալլվածքին ու առույդ տեսրին: Նս մոռեցա նրան և զլուս տվեցի: Նա լուս պատասխանեց իմ բարեկին ու ծխի մի ահագին բուլա բաց թողեց բերանից:

— Մենք, կարծեմ ուղեկիցնե՞ր ենք:

Նա լուելլայն նորից գլուխ տվեց:

— Դուք, երկի, Ստավրոսո՞ւ եք զնում:

— Ճիշտ այդպիս է... արքունի իրեր ենք տանում:

— Ասացեք ինդրեմ, այդ ինչից է, որ ձեր ծանը սալլը չորս եղներ ասեն խաղ անելով են քաշում, իսկ իմը, որ դատարկ է, վեց անասուն հաղիվ են առաջ շարժում այս օսերի օգնությամբ:

Նա խորամանկ ժպտաց և նշանակալից նայեց ինձ:

— Դուք, երկի, վաղուց չէ, որ Կովկասում եք:

— Մոտ մի տարի է, — պատասխանեցի հա:

Նա կրկին ժպտաց:

— Եսկ ի՞նչ կա որ:

— Հենց այսպիս: Սարսափել՝ սատանաներն են այդ սահացիները: Դուք կարծո՞ւմ եք, թե նրանք բղավելով օգնում են: Սատանան գիտի, թե ի՞նչ են բղավում: Եղները նրանց լավ

են հասկանում. թեկուղ քսանը լժեք, նրանք որ իրենց ձևով կանչեն, եղները բնավ տեղից չեն շարժվի... Սարսափելի խարդախներն են: Իսկ ի՞նչ կարող ես անել... Սիրում են ուղեկարներից փող կորպել... Սրիկաներին երես են ավել, կտեսնե՛ք, նրանք ձևներից զեռ արագի⁵ փող էլ կվերցնեն: Ես նրանց լավ եմ ճանաշում, ինձ չե՞ն խարի:

— Իսկ վազո՞ւց է, որ գուր այստեղ եք ծառայում:

— Այս, ևս Արեքսիյ Պետրովիչի⁶ օրով արդեն այստեղ էի ծառայում, — պատասխանեց նա, — Հպարտ կեցվածք ընդունելով: — Երբ նա պաշտպանության գիծը⁷ եկավ, ես պոդպորուշիկ⁸ էի, — ավելացրեց նա, — և նրա օրով երկու աստիճան ստացա լեռնցիների գեմ ունեցած կոփիների համար:

— Իսկ հիմա՞ դուք...

— Հիմա երրորդ շարային գումարտակում են հաշվվում: Իսկ դուք, համարձակվում եմ հարցնել...

Ես ասացի նրան:

Խսակցությունը սրանով վերջացավ, և մենք շարունակեցինք լուս կողք-կողքի առաջ գնալ: Ասրի գոտիաթին ձյուն կար: Երեր մայր մտավ, և դիշերը հաջորդեց ցերեկին առանց ընդմիջումի, ինչպիս սովորաբար լինում է հարավում. բայց, ձյուների արտափայլի շնորհիվ, մենք հեշտությամբ կարողանում էինք նշամարել ճանապարհը, որը դեռևս լեռն ի վեր էր բարձրանում, թեև արդեն ոչ այնքան կարուկ կերպով: Ես կորպաղրեցի ճամփարկոս սալլակը գնել, եղները փոխարինել ձիերով և վերջին անդամ նայեցի ցած՝ հովտի կողմը. բայց թանձր մառախուղը, որ այինքներով հորդել էր կիրճերից, բոլորովին ծածկել էր հովիտը, և այսուղից արդեն ոչ մի հնչում չեր հասնում մեր ականջին: Օսերն աղմկելով շրջապատեցին ինձ և օգու փող էին պահանջում. բայց շտարս-կապիտանն այնպիս սովորնադին բղավեց նրանց վրա, որ նրանք մի ակընթարթում փախան զանազան կողմեր:

— Ի՞նչ խալիս է, — ասաց նա, — Հացի անունն անգամ ուսւերին չգիտե, բայց սոլորել է՝ առֆիցիր, դայնա վո՞ղկու^{**}:

* Երժուովի: (Մանոք. Լեռմանավի):

** Սոլո, արագի փող տուբ:

ինձ որ հարցնեմ՝ թաթարները⁹ սրանցից լավ էն, նրանք գոնե խմող չեն...

Մինչև կայանը մնում էր ևս մի վերստի չափ: Շուրջը լուս էր, այնքան լուս, որ մոծակի տպացին ականջ զնելով՝ կարելի էր որոշել նրա թոփչի ուղղությունը: Զախարովմում սկին էր տալիս խոր կիրճը, նրանից դենը և մեր առջնը, զեռն վերջալույսի վերջին արտափայլն իր վրա պահած գունատ երկնակամարի վրա՝ գծագրում էին կնճիռներով ակուված, ձյունի շերտերով ծածկված սարերի մուգ-կապույտ գագաթները: Մութ երկնքում սկսում էին առկայծել աստղերը և, տարօրինակ բան, ինձ թվաց, թե նրանք շատ ավելի բարձր են, քան մեզ մոտ՝ Հյուսիսում: Ճանապարհի երկու կողմերում ցցված էին մերկ, սև քարեր: Տեղ-տեղ ձյունի տակից թիքեր էին գուրս նայում, բայց ոչ մի շոր տերևիկ չէր շրջում, և ուրախալի էր բնության այս մեռելային քնի մթնոլորտում լսել փոստակառի հոգնած եռյակի¹⁰ փունչոցն ու ոռաւական զանգակի անհավասար զնզպնդոցը:

— Վաղը հիանալի՝ եղանակ է լինելու, — ասացի ես: Ծարս-կապիտանը ոչ մի խոսք չպատասխանեց և մատով ցույց տվեց ինձ ուղարկի մեր դիմացը վեր խոյացող բարձր սարը:

— Այդ ի՞նչ է որ, — հարցրի ես:

— Գուգ-սարը:

— Է՛, ի՞նչ անհնք որ:

— Տեսէ՛ք, ինչպես է ծխում:

Եվ իրոք, Գուգ-սարը ժխտում էր. նրա կողերով սողում էին ամպերի թեթև շերտերը, իսկ գագաթին նստած էր սև թուխա, այնքան սև, որ մութ երկնքում սև բիծ էր թվում:

Մենք արդեն նշմարում էինք փոստի կայանը, նրան շրջապատող սակլյաների¹¹ տանիքները, և մեր առջև երևում էին գրավիչ լույսեր, երբ փշեց խոնավ, պաղ քամի, կիրճը գղրդաց, և մանրահատիկ անձրև մաղեց: Ես հաղիկ էի այծենակածն¹² ուսերիս առել, երբ վրա տվեց ձյունը: Ես ակնածանքով նայեցի շտարս-կապիտանին:

— Մենք ստիպված կլինենք այստեղ գիշերեւ, — ասաց նա տհաճությամբ. — այսպիսի բուրին սարերով անցնել չի

լինի: Հը՛, Կրեստովվայա սարից սառցակույտեր թափվե՞լ են, թե ոչ, — հարցրեց նա կառապանին:

— Չեն թափվել, պարո՞ն, — պատասխանեց օս կառապանը, — բայց կախված սառցակույտեր շա՞տ, շա՞տ կան:

Կայանում ճամփորդների համար սենյակներ շինելու պատճառով՝ մեզ գիշերելու տեղ հատկացրին ծխուտ սակլյայում: Ես ուղեկցիս հրավիրեցի ինձ հետ մի բաժակ թիյ իմհերու, բանի որ հետս ոմնեի շուգունե թեյնոց—կովկասյան ճամփորդություններիս ժամանակված միակ սփոփանք:

Սակլյան մի կողքով կպած էր ժայռին, երեք սահմիկ-թաց աստիճաններ տանում էին դեպի նրա գուռը: Ես շոշափերով ներս մտա և դիմ առա մի կոպի (այս մարդկանց մոտ զոմը փոխարինում է ծառայանցին): Ես չէի իմանում՝ որ կորչեմ, այստեղ ոչխարներն են մայում, այնտեղ շունչ է զոմում: Իմ բախտից, մի կողմում աղոտ լույս փայլեց և սպիսեց ինձ գանելու մեկ ուրիշ, զուան նման անցք: Այստեղ բավական հետարքրական տեսարան բացվեց. լայն սակլյան, որի տանիքը կոթնած էր երկու ծխուտած սյուների, լիքն էր մարդկանցով: Մեջտեղում ըրբթշրթում էր գետնին վառած կրակը և ծուխը, որին տանիքի անցքից¹³ փշող քամին ետ էր մզում, փափամ էր շուրջն այնպիսի խիս շղարշի պես, որ ես երկար ժամանակ չէի կարողանում բան տեսնել. կրակի մոտ նստած էին երկու պառափ, բազմաթիվ երեխաներ և մի նիշուր վրացի, — բոլորն էլ ցնցուիներով պատած: Ճար չկար, մենք նստեցինք կրակի մոտ, ծխամորձներս վառեցինք, և շուտով թեյնոցն անուշ թշոց արձակեց:

— Ողորմելի՝ մարդիկ են, — ասացի ես շտարս-կապիտանին, մատնացուց անհետով մեր կեղտուա տանտերերին, որոնք քարացածի պես լուս մեզ էին նայում:

— Կիստ հիմար ժողովուրդ է, — պատասխանեց նա. — Կհավատա՞ք, ձեռքներից ոչի՞նչ չի գալիս, ո՞չ մի կրթության ընդունակ չեն: Էլի մեր կարարգացիք կամ չեննեները, թեպիտ և ավագակներ են, ակլորներ, բայց զիմից ձեռ քաշած մարդիկ են, իսկ սրանք զենքի սեր էլ չունեն՝ կարգին գաշուն ոչ մեկի վրա չես տեսնի: Խսկապե՞ս որ օսեր են:

— Իսկ դուք երկա՞ր ժամանակ եք անցկացրել Չհշ-նիայում:

— Այո՛, ես մի տասը տարի բերդապա՞շ եմ եղել այս-տեղ իմ վաշտով, Կամհննի թրողի մոտ — զիտե՞ք:

— Լսել եմ:

— Հա՛, սաստիկ ձանձրացրել էին մեղ այդ ավագակնե-րը. Ֆիմա, փառք ասսծու, բավական հանգիստ են. իսկ առաջ, մի հարյուր քայլ պարսպաթմբից անցնեիր թի չէ, կտնոնեիր՝ որևէ տեղ թափամազ սատանան նստել, որսի է սպասում: Հենց որ թի անուշադիր իինեիր, մեկ էլ կտնոնեիր կամ օղա-պարանը վիզզ ընկավ կամ զնդակը ծոծրակդ խրվեց: Բայց կտրի՛ մարդիկ են...

— Երեխ ձեզ շատ արկած պատահած կլինի, — ասա-ցի ես, հարցասիրովթյունից զրդված:

— Ինչպէ՞ս չէ, պատահում էր...

Այստեղ նա սկսեց քաշքաշել ձախ բեղը, զուփար կախ զցեց ու ժամանմանքի մեջ ընկավ: Ես անշափ ուվում էի նրա բերա-նից որևէ պատմովթյուն զուրս քաշել, — մի ցանկություն, որ հատուկ է բոլոր ճամփորդող ու զրի աննող մարդկանց: Մինչ այդ, թեյր հիմլեց, ես ճամփորուկից հանեցի երկու ճամփորդա-կան բաժակ, թեյր լցրեցի ու բաժակներից մեկը զրի նրա ասաց: Նա մի կում արավ ու ասաց՝ կարծես ինքն իրեն. «Հա՛, պատա-հում էր»: Այս բացապանշությունն ինձ մեծ հյուսեր տվեց: Ես գիտեմ, երկար ժամանակ Կովկասում ապրած մարդիկ սիրում են խոսակցել, պատմել. նրանց այնպէ՞ս հայդագեպ է հաջող-վում այդ, մարդ կա, որ հինգ տարու չափ որին խուլ անկյու-նում է անցկացնում իր վաշտի հետ, ու ամրող հինգ տարի նրան ոչ ոք չի ասում բարեւ (որովհետև ֆելդֆերեն¹⁴ տառում է՝ ողջուրյուն եմ ցանկանում¹⁵): Իսկ խոսելու շատ բան կդուռը, — շուրջը վայրենի՝ հետաքրքրական մարդիկ են. ամեն օր վտանգ կա, գարմանահրաշ դեպքեր են պատահում, և այստեղ ակամա ափսոսում ես, որ մեզնում այնպես քի են զրի առնում:

— Արդյոք չե՞ր ուզի թեյր մեջ ուսմ¹⁶ ածել, — ասացի զրու-ցակիս: — Ես թիֆլիսից բերած սպիտակ ոսմ ունեմ. Հիմա ցուրտ է:

— Ոչ, չնորհակալ եմ, չեմ խմում:

— Ինչո՞ւ այդպիս:

— Հենց էնպիս: Երդմել եմ: Երբ ես դեռ պողպորտուշիկ էի, մեկ անգամ, գփտեք, մենք տանից-տանու քիփ արթնք, իսկ զի-շեր տագնապ ընկավ, մենք էլ քեփներս տեղը՝ ֆրունտ¹⁷ զուրս եկանք ու ո՞նց հասավ մեղ, երբ Ալեքսեյ Պետրովիչն իմացավ. — տե՛ր աստված, ինչպիս բարկացավ. քիշ էր մնա-ցել դատի տա: Եվ իրավ որ, պատահում էր, որ մի ամ-րոց տարի ես ապրում, մարդու երես շեմ տեսնում, թի որ էպահ օդի էլ եղավ. — կորած ես:

Այս լսելով, ես համարցա հույսու կտրեցի:

— Ա՛յ, թեկուզ չերքեցները, — շարտնակեց նա, — Գենց որ բուզա խմեցին հարանիքում կամ մեռելաթաղին, թրատե-լը կոկովի: Մեկ անգամ ես հազիվ գրուստ ազատեցի, էն էլ դեռ խազաղ¹⁸ իշխանի մոտ էի հյուր զնացել:

— Այդ ինչպէ՞ս պատահեց որ:

— Ա՛յ (նո ծխամորճը լցրեց, ծովսը ներս բաշեց և ոկսեց պատմել): Ա՛յ, ասեմ ձեզ. ես այն ժամանակ իմ վաշ-տով բերդապա՞շ էի Տերեկի էն կողմում գտնվող մի բեր-դում — շունող հինգ տարին կլրանա: Մեկ անգամ, աշնանը, եկավ մթերաքեր տրանսպորտը. տրանսպորտում կար մի սպա, բանհինդի մոտ մի երիտասարդ: Նա ներկայացավ ինձ լրիվ զգացավորված ու հայտարարեց, որ իրեն հրամայված է մաս ինձ մոտ, բերդում¹⁹: Նո այնպես բարակին էր, սպի-տակը. նրա հազի նշանազգեստն այնպես նորն էր, որ ես իսկույն կուահեցի, թե նա մեղ մոտ՝ Կովկաս վաղուց չէ, ինչ եկել է: «Չեզ, երեխ, — հարցրի ես նրան, — Ըուսաստանի՛ց ին այստեղ տեղափոխելու: — Ճիշտ այդպիս է, պարոն շտաբս-կապիտան, — պատասխանից նա: — Ես բանիցի նրա ձեռքը և ասացի. «Նատ ուրախ եմ, շատ ուրախ: Չեզ համար մի քիշ ոխուր կլինի... բայց, դե, մենք ձեզ հետ բարեկամարար կապենք: Հա՛, խնդրում եմ, — ինձ անվանեցեք պարզապիս Մաքսիմիլ, և խնդրեմ — ինչի՞ համար է այդ լրիվ զգացավորումք. ինձ մոտ եկեք միշտ ֆուրամիա գրած»: Նրան բնակարան հատկացրին, և նա բնակվեց բերդում:

— Իսկ նրա անունն ի՞նչ էր, — Հարցրի ևս Մաքսիմ Մաքսիմիշին:

— Նրա անունն էր... Գրիգորի Ալեքսանդրովիչ Պետրին: Հիանալի՛ երիտասարդ էր, համարձակվում եմ Հավատացնել ձեզ, միայն մի քիչ տարօրինակն էր: Ախր, օրինակ անձրսին, ցըսին ամբողջ օրը որս էր անում. բոլորը ցըսից կառաջին, կհոգնեին, իսկ նրա վեջը չէր. իսկ երրեմն էլ կնստեր իր սկզբակում, թիթի քամի էլ որ փշեր, կհավատացներ, թե մրսեց. փեղկը որ թխկար, նա կցնցվեր ու կպունատվեր. իսկ ևս աշքովս տեսել եմ, որ մեն-մենակ վարագի վրա է զնացել. մեկ-մեկ ամբողջ ժամերով մի խոսք չէիր կարողանա բերանից գուրս բաշել, բայց դրա փոխարժեն երրեմն էլ ար կսկսեր պատմել, ծիծաղից փորդ կրոնեիր... Այսո՛, մեծ տարօրինակությունների տեր էր, և երկի հարուստ մարդ էր՝ ինչքան տեսակ-տեսակ թանկագին իրեր ուներ...

— Իսկ նա երկա՞ր ապրեց ձեզ հետ, — կրկին Հարցրի ևս:

— Մի տարու շափ: Բայց Հիշատակելի է՛լ է ինձ Համար այդ տարին, հա՞՛. գլխացավանք տիեց ինձ, հա՞՛, ականջը վատ շկանչի: Զէ՞ որ էն տեսակ մարդիկ կան, որոնց Հակատին գրված է, որ նրանց հետ զանազան արտասովոր բաներ պետք է պատահն:

— Արտասովո՞ր— բացազանչեցի ևս՝ Հարցասիրությամբ բոնվածի տեսք ընդունելով և նրա բաժակը թիյ լցներով:

— Այ, ես ձեզ պատմեմ: Թիրդից մի վեց վերաս հեռու տպում էր մի խաղաղ իշխան: Նրա որդին՝ մոտ տասնհինգ տարեկան մի տղա, սովորություն դարձեց ձիով մեզ մոտ դալամեն օր մեկ այս, մեկ այն բանին էր գալիս: Ու մենք էլ՝ ես ու Գրիգորի Ալեքսանդրովիչը, երես էինք տվել նրան: Իսկ ի՞նչ թոկից փախածն էր, ի՞նչ ճարպիկն ամեն բանի մեջ. ձին արագ վաղեցնելիս դիմում դպակ վերցներում, թե հրացան կրակելում: Մի բան նրա մեջ վատ էր—սաստիկ փողասեր էր: Մեկ անգամ, հանաբով, Գրիգորի Ալեքսանդրովիչը խոստացավ նրան մի շերվոնեց²⁰ տալ, եթե նա իր Հայրական հոտից լավագույն այժը գողանա ու մեզ բերի: Եվ ի՞նչ եք կարծում. մյուս գիշերն ենթ եղջրությունից բարչ տալով՝ բերեց: Իսկ, պատահում էր, մենք սկսում էինք նրան ձեռնել, աշքերն ար-

յանով էին լցվում և իսկույն ձեռքը դաշույնին էր զցում. «Է՛յ, Աղամա՞թ, զլումսդ ողջ շես պահի ուսերիդ վրա, — ասում էի ևս նրան, — յաման²¹ կզա զլիսիդ»:

Մեկ անգամ ինքը ծեր իշխանը ձիով գալիս է մեղ Հարսանիքի կանչելու. նա իր մեծ աղջկան մարդու էր տալիս, իսկ մենք նրա հետ կումակներ²² էինք, շեր կարելի, զիտեք, հրաժարվել, թեկետև նա թաթար էր: Գնացինք: Առկում²³ բազմաթիվ շներ դիմավորեցին մեզ բարձր հաշոցով: Կանայք, մեզ տեսնելով, թաքնվում էին. նրանք, որոնց դեմքը մենք կարողացանք դիտել, բնակ էլ գեղեցկուցի չեին: «Ես շատ ավելի լով կարծիքի էի չերքեկութինիրի մատին», — ասաց ինձ Գրիգորի Ալեքսանդրովիչը: «Կացե՞ք», — պատասխանեցի ևս՝ քմծիծաղ տարով: Մտքամս իմ իմացածք կար:

Իշխանի մոտ, սակայնում, մարդկանց բազմություն էր Համարվելու: Ասիացիները, գիտեք, սովորություն ունեն ամեն պատահողի հարսանիքի հրավիրել: Մեզ ընդունեցին բոլոր պատշաճ պատիվներով ու տարան կումականոց²⁴: Ես, ստեղծին, ընուացա նկատել, թե որտեղ կապեցին մեր ձիերը, — զիտե՞ք, աննախատեսելի դեպքի համար:

— Իսկ նրանք հարսանիքի հանդիսն ինչպե՞ս են կատարում, — Հարցրի ևս շտաբ-կապիտանին:

— Սովորական կերպով: Ակզրում մոլուան²⁵ ինչ-որ բան է կարգում Ղուրանից²⁶, հետո նվերներ են տալիս ամուսնացողներին ու նրանց բոլոր աղքականներին, ուսում են, բուզ են խորում. հետո սկսում է զիգիթը²⁷ և միշտ՝ պատառուած, հարպոտ Հագուստով մեկը մի անպետք, կադ ձի նստած՝ կոտրատվում է, խեղկատակություն անում, ծիծաղեցնում աղնիկ հասարակությունը, հետո, երբ մթնում է, կունականոցում սկսում է, մեր լոկիսվ ասած, պարագանդեսը, Խեղճ ծերուկի մեկը ճնկրտացնում է եռալար... մուացա ինչպես է նրանց լեզվով... Հա՞՛, մեր բալալայկայի նման մի գործիք: Աղջիկներն ու ջահել աղերքը երկու շարք են կանգնում, մեկը մյուսի դիմացը, ծափ են տպամարդ ու սկսում են երդելով իրար ուստանացորներ ասել, ինչ որ բերանները կզա, իսկ մնացածները խմբովին երկնում են: Մենք Պելորինի հետ նստած էինք

սլատվավոր տեղում, և ահա Պեշորինին մոտեցավ տանտիրոջ կրտսեր դրատը—մոտ տասնվեց տարեկան մի աղջիկ, ու նրա համար երգեց... ինչպէ՞ս ասեմ... կոմպլիմենտի²⁸ պես մի բան:

— Իսկ նա ի՞նչ երգեց, չե՞ք ջիշում արդյոք:

— Հա՛, կարծեմ, այսպիս. «Բարեկալմ» են մեր երիտասարդ ջիպիթները²⁹, և նրանց հագի բաճկոնները արծաթ թելերով են ասեղնագործված, իսկ երիտասարդ ուսւ սպան նրանցից բարեկալմ է, և նրա կլապիտոնները³⁰ ուսկեցն են: Նա տնց որ բարդին նրանց մեջ, միայն թե նա չի աճի, չի ժաղկի մեր այցում»: Պեշորինը ոտքի ելավ, գլուխ ովից նրան, ձեռքը տարավ ճակատին ու սրտին, և ինձնից խնդրեց, որ պատասխանեմ այդ աղջկան. ևս նրանց լեզուն լավ փիտեմ և թարդմանից Պեշորինի պատասխանը:

Երբ աղջիկը մեղնից հեռացավ, ևս 22նշացի Գրիգորի Ալեքսանդրովիչին. «Հը, ի՞նչ կասես, ո՞նցն է»:

— Զնաշխարհիկ բան է,— պատասխանեց Պեշորինը, — իսկ անոնն ի՞նչ է: «Նրա անոնը Բելա է», — պատասխանցի ես:

Եվ ճիշտ որ, նա գեղիցիկ աղջիկ էր՝ բարձրահասակ, բարակիկ, աշքերը սև՝ լեռնայծյամի աշքերի պես, հնաց ձեր հոգու խորքն էին նայում: Մտասուզ Պեշորինը աշքերը նրանից չէր հեռացնում, աղջիկն էլ հաճախակի հոնքերի տակից նրան էր նայում: Միայն թե մենակ Պեշորինը չէր հիանում գեղեցիկ իշխանագուատրով, սենյակի անկյունից նրան էին նայում երկու ուրիշ աշքեր՝ անշարժ, կրակում: Ես սկսեցի ուշի-ուշով նայել, և ձանաշեցի իմ հին ծանոթ Կազրիչին: Նա, զիտեք, ոչ էն է՝ խաղաղ էր, ոչ էն է՝ ոչ-խաղաղ: Նրա նկատմամբ շատ կասկածներ կային, թեպես նա ոչ մի շարագործության մեջ չէր բռնվիլ: Պատահում էր, նա մեկ մոտ՝ բերդը ոչխարներ էր բերում և էժան էր ծախում, միայն թե երբեք չէր սակարեւմ՝ ինչ գին պահանջեր, պետք է տալիր, — որ մորթեիր էլ, չէր զիշի: Նրա մասին ասում էին, որ սիրում է արբեկների³¹ հնակութանի մյուս ափը հաճախել, և ճիշտն ասած՝ նրա կերպա-

րանք ամենաավագայինն էր—մանրոտիկը, ցամաք, լայնաթիկունը... Իսկ ճարպի³² է էր, ճարպի³³ սատանայի պիստ թիշտարը³⁴ միշտ պատռված էր, կարկատած, իսկ զենքն՝ արձամուպատ նրա ձին էլ չո հոշակված էր ողջ Կարարզալում. և ճիշտ որ, այդ ձիուց լավ ոչինչ չէր կարելի հորինել: Զոր չէր, որ նրան նախանձում էին բոլոր վարպետ ձի հեծնողները և բանից փորձել էին գողանալ, միայն թե չէր հաջողվել: Ոնց որ աշբիս տապար լինի: Սևաթուց էր, կասես ճյութ, ոտքերը՝ լսութիզ և աշքերն էլ թելայի աշքերից վասր չէին. իսկ ի՞նչ ուժ ուներ—կուպի 50 վերտ ուացիր. և ինչպէ՞ս էր վարժեցրած—յան պիստ վազում էր տիրոց հնատեցից, նույնիսկ նրա ձայնն էր մահայում: Կազրիչը երբեք նրան չէր էլ կապում: Մի խոսքով՝ ավագութիւնը ուրեմն այս էր:

Այդ երեկո Կազրիչն ավելի մոայլ էր, բան երբեկ, և ես նկատեցի, որ թշմեսի տակից հագին օղազրաց³⁵ կար: «Այդ սպազմունք նա զար էլ հագել, — մտածեցի ես, — անպատճառ որեւէ բան կա մտրումք»:

Մակարյանց խեղուոկ դարձավ, և ես բաց օդ գուցս եկա՞ թարմակալու: Դիշերն արգել վագրին լինաների վրա, և մասսայուն սկսում էր թափառել կիրճերում:

Մարզիս անցագ զնուած ծածկի տակը, որտեղ մեր ձերեն էին կառպած, նայել՝ կիր ունեն արդյոք, բացի դրանից՝ զգուշությունն էլ երբեք չի խանդարի. իսկ իմ ձին սքանչելի ձի էր, ու շատ կարարգացիներ բաղցր հայացքով էին նայում նրա վրա, ասելով՝ յաբշի բիս, չո՞յ յաբշի³⁶:

Անցնում եմ ցանկապատի մոտով ու հանկարծ ձայնիք իմ լուսմ, այդ ձայներից մեկը ես խկույն ձանաշեցի: զա թուիկ փոխած Ազամաթն էր, մեր հյուպենկալի որդին: Մյուսն ավելի սակայ ու ցածրածայն էր խոսում: «Արանք այս ի՞նչի մասին են խոսում», — մտածեցի ես, — «Հինի՝ իմ ձիու մասին»: Նստեցի ցանկապատի մոտ ու ականչ հմ դնում նրանց խոսակցությանը, աշխատելով ոչ մի բառ բաց շթողներ: Երբեմն սակայացից գուրս թռչող երգ ու խոսակցության ձայնիք խուցնում էին ինձ հետաքրքրող խոսակցությունը:

* Կովկաս, շոյող խոսք:

— Քո ձին հիանա՞լի ձի է,— ասում էր Ազամաթը.— Եթե ևս տան մեծը լինեի ու երեք հարյուր զամբիկից բաղկացած երամակ ունենայի, կեսը կտայի քո երիվարի փոխարքն, Կապրի՛չ:

«ԱՌ, Կապրիչն է»,— մտածեցի ևս և հիշեցի օղագրահը:

— Այո՛,— պատասխանեց Կապրիչը կարճատե լուսիլունից հետո.— ամբողջ Կարարդայում այդպիսին չես գտնի: Մեկ անգամ,— այդ պատահեց Տերեկի էն ափում, և արդեկների հետ զնացել էի ուստական երամակներ փախցներու. մեր բախտը շրանեց, և մենք ցրվեցինք՝ ով ուր պատահեց: Իմ հետեւ սրբնիքաց գալիս էին չորս կազակներ. ևս արդեն լսում էի իմ թիւունքում գյավուրների³³ կանչերը, ու առջևս էլ խիտ անտառ էր: Զիու ականջը մուա, բախտս ալլահի³⁴ ձեռքը հանձնեցի ու կյանքում առաջին անգամ վիրավորեցի ձիուն՝ մտրակի հարված հասցրի նրան: Թուշտնի պիս նա սուզվեց Հյուղքերի արանքն ու սլացավ. սուր փշերը պատռում էին իմ հագուստը, թիղու չոր ոստերը զարկում էին երեսիս: Նժույզու ցատկում էր կոճղերի վրայով, կրծքով ճեղքում էր թփուտը: Լավ կանեի, որ նրան թողնեի անտառի եղրին ու ոտով զնալով անհետանայի անտառում, բայց մեղքս տվեց նրանից բաժանվել՝ և մարգարեն ինձ վարձատրեց: Մի քանի զնակ բզդալով անցան զիսիս վրայով. ևս արդեն լսում էի, թե ինչպես ձիերից իշած կազակները վազում են ձիուն հետքերով... Հանկարծ իմ առջև երեաց մի խոր փոս. նժույզու մի պահ մտածեց ու ցատկեց: Նրա հոտեի ոտքերի մերակները պոկվեցին Հակառակ ափից, և նա կախվեց առջևի ոտների վրա: Ես բաց թողի սանձափոկերն ու նետվեցի ձորակը. այդ փրկեց իմ ձիուն. նա գուրս թռավ: Կազակներն այդ բոլորը տեսնում էին, միայն թե ոչ որ ցած շիշավ ինձ փնտրելու. նրանք երկի մտածում էին, թի ևս մահացու կերպով շարդիկել եմ, և ես յսիցի, ինչպես նրանք նետվեցին՝ իմ ձին որսարու: Միրտս արյունիվա եղավ. խիտ խոտի վրայով ևս սողացի ձորակի երկայնքով. տեսնեմ՝ անտառը վերջացավ, մի քանի ձիավոր կազակ այնտեղից բացատ են դուրս գալիս, և ահա ուղղակի նրանց կողմն է դուրս թռում իմ Ղարապյողը. բոլորը ճիշերով ընկան նրա հույսից: Նրանք երկար, երկար հետապնդեցին նրան, մանա-

վանգ մեկը մի երկու անգամ քիչ մնաց օղագրաբանը Ղարապյողի վիզը ցցեր. ևս դողացի, աշքերս ցած ցցեցի ու սկսեցի աղոթիլ: Մի քանի ակնթարթից աշքերս վեր եմ բարձրացնում ու տեսնեմ՝ իմ Ղարապյողը, պոշը փոփացնելով, թռում է ուց աղատ քամի, իսկ գյավուրները հնովում միմյանց հետեւ զնում են տափաստանով՝ իրենց ուժասպառ ձիերին նստած: Վալլա³⁵, այս ջշմարիս է, իսկապես ջշմարիս: Մինչև ուշ պիտի ևս նստեցի իմ ձորակում: Հանկարծ, ի՞նչ ևս կարծում, Ակամաթ, խամարի մեջ լսում եմ՝ ձորակի եղրով ձի է վազում, փնտացնում է, խրխնջում և մերակները գետնին գարկում. ևս ձանացից իմ Ղարապյողի ձայնը—այդ նո՞ւ էր, իմ ընկերը... Այդ ժամանակից ի վեր մենք չենք բաժանվել իրարից:

Եվ ևս յսիցի, ինչպես նու ձեռքի ափով փաղաքարար խօսում է իր երիվարի ողորկ պարանոցին, զանազան քնքուշ անուններ տալով նրան:

— Եթե ևս հագար զամբիկից բաղկացած երամակ ունենայի, — ասաց Ազամաթը, — այդ ամրող երամակը քեզ կտայի քա Ղարապյոցի հոմարի:

— ԱնՌ, չեմ ուզում, — անտարբեր պատասխանեց Կապրիչը:


— Հսի՛ր, Կապրիչ, — փաղաքարար ասում էր նրան Ազամաթը, — զու բարի մարտ ես, զու բաշ շիզիթ ես, իսկ իմ Հայրը վախինեամ է ուսւներից և չի թողնում, որ լեռները զնամ. քո ձին ինձ տուր, և ես կանիմ քիզ համար այն ամենը, ինչ զու կցանկանա— Հորիցս կրողանամ նրա ամենալավ հրացենը կամ թուրը՝ արք զու ցանկանաս, իսկ նրա թուրն իսկական զուրդամ³⁶ է. բիրանը ձեռքիդ դիպղու, ինքը մարմնիդ մեջը կիսրի, իսկ օղագրահը, ինչպիսին քոնն է, նրա համար ուինչ է:

Կապրիչը լուռ էր:

— Առաջին անգամ, երբ ևս ամենամասն պարանունը, կապրիչը Ազամաթը, — երբ նա քա մարտին գույնում էր ու թուրը ուսնդիրը լայնացնելով, ու կալծարարինը ցաբրունելոի նման ցայտում էին նրա մերակների տակից, իմ հոգու հետ իշուր անհասկանալի բան պատահեց, և այդ ժամանակվանից

* Ա.

3 Մեր ժամանակի հերոսը



ևս ամեն ինչ ատեցի. իմ հոր լավագույն ձիերին ևս արհամարհանքով՝ էի նայում, ևս ամաշում էի նրանց վրա նստած՝ մարդու աշքի երևալ, ու վիշտը պաշարեց ինձ. և, տիրելով, ևս ամբողջ օրեր էի անցկացնում ժայռին նստած ու ամեն բռնիք մտքերիս մեջ ինձ երևում էր քո սեաթուզր ձին՝ իր սիգապանը ընթացքով, իր ողորկ, սլաքի պիս ուղղաձիդ ողնաշարով. նա իր աշխույժ աշքերով նայում էր իմ աշքերի մեջ, կարծես ուղում էր խոսք ասել, նու կմեռնեմ, Կազրի՛չ, եթե այդ ձին դու ինձ շծախես,— ասաց Ազամաթթ գողգողացող ձայնով:

Ինձ թվաց, թի նա լաց եղավ. իսկ ևս ձեզ պետք է տաեմ, որ Ազամաթթ խխու Համառ տղա էր, ու նրա աշքերից արցոնք քամել չեր լինում մինչև իսկ այն ժամանակ, երբ նա ավելի փոքր էր:

Ի պատասխան նրա լացին՝ ծիծաղի պիս մի բան լսվեց:

— Լսիր,— Հաստատում ձայնով ասաց Ազամաթթ,— տեսնում ես, ևս ամեն ինչի պատրաստ եմ: Ուզո՞ւմ ես, ևս քրոջ գողանամ քեզ Համար: Քուրս ինչպե՞ս է պարում, ինչպե՞ս է երդում, իսկ նրա ոսկեթել ասեղնագործը հրաշք բան է: Թուրքի փաղիշահն* էլ այդպիսի կին չի ունեցել... Ուզո՞ւմ ես. վաղը գիշերն սպասիր ինձ այնտեղ՝ կիրճում, ուր վտակն է վաղում. ևս քրոջ հետ դրա մոտով հարեւան առվը կերթամ, ու նա քոնք կլինի: Մի՞՛թե Բելան քո ձիուն շարժի:

Կազրիշը երկար, երկար լուց. վերջապես, պատասխանի փոխարեն, նա մի հին երդ երգեց կիսամայն:

Սիրուներ շատ կան մեր առւլներում,
Աստղեր են փայլում նրանց աշքի մութում,
Նրանց սիրելն անուշ, բայտ նախանձելի,
Բայց զլուխն աղատ, վեր է ավելի:
Ոսկով թի ուղես՝ կզնես չորս կին,
Բայց ձին սրբնթաց շունի արժան գին.
Նա ևս չի մնա քամուց էլ ստեղի,
Չի դավաճանի, նա քեզ չի խարի**:

* Թագավորը:

** Ես ներողություն եմ յենդում ընթերցողներից նրա. Համար, որ ուսանալորի վերածեցի Կազրիշ երդը, որն ինձ Հաղորդել էին, Հասկանալի է, արձակի ձևով. բայց սովորությունը երկրորդ բնություն է: (Ծանր. Աւրմնանովի):

Ազամաթթ իզուր էր աղերսում նրան Համաձայնել, և լոլին, և՛ շողոքորթում նրան, և՛ երդվում. վերջապես Կազրիշն անհամբեր ընդհատեց նրան.

— Դնին կորի՛ր, խելացնո՞ր լակուս: Դու ինչացո՞ւ ես, որ իմ ձին հեծնաս: Առաջին երեք քայլում նա քեզ ցած կցցի, ու զու ծոճրակի կշարդիս՝ քարերին զարկվելով:

— Ի՞նձ,— ճցաց կատաղած Ազամաթթ, և մանկական զաշույնի երկաթը զնգաց՝ օզագրահին զարկվելով: Ուժեղ ձեռքը նրան ես մ'ողից, և նա այնպիս զարկվեց ցանկորմին, որ ցանկորմը երերաց: «Թամաշա է լինելու, — մտածեցի ես, ախոռ նետվեցի, սամձեցի մեր ձիերը և ետնարակ տարա: Երկու բարեց սակլյայում արդեն սոսկալի աղմուկ-աղաղակ էր բարձրացել: Ահա թի ինչ էր պատահել. Ազամաթթը պատրսում բիշմետով նիրս էր վաղել, ասելով, թի Կազրիշը ուղեցի էր նրան մորթել: Բոլորը տուքի էին թուիլ, հրացաններն տուիլ, ու սկսվել էր թամաշան. Ճիշ աղմուկ, կրակոցներ. սակայն Կազրիշն արդեն ձիու վրա էր և փողոցում ֆոփում էր ամբոխի մեջ դեի պիս, թի Հարվածներով պաշտպանվելով: «Գինին խմի Հայրապետը, խումար ընկնի Կարապետը», — ասացի Գրիգորի Ալեքսանդրովիշին, բռնելով նրա ձեռքը. ռավելի լավ չի: քանի շուտ է՝ քաշվենք այստեղից»:

— Ե՛, կացեք, տեսնենք ինչո՞վ է վերջանում:

— Վստահ եղեք, որ վատ է վերջանալու. այս ասիացի-երի մոտ ամեն ինչ այդպիս է՝ գլուխները բուզա կբաշեն, ու կոկովի կոտորածք: — Մենք ձի նստեցինք ու տուն սլացանք:

— Իսկ Կազրիշն ի՞նչ եղավ, — անհամբեր Հարցրի ես բարեր-կապիտանին:

— Այդ մարդկանց ի՞նչ կպատահի որ, — պատասխանեց ես, խմելով թեյի մնացորդը, — ճողոպրեց, էլի:

— Եվ առանց վիրավորվելով, — Հարցրի ես:

— Աստված գիտի: Դիմացկում են ավազակները: Ումանց ես կոլի մեջ եմ տեսել, օրինակ. որ նայեմ՝ մաղի պիս ամրաց ծակծկուված է սլիմներով, բայց էլի թափահարում է թուրը: — Շոտարս-կապիտանը կարծառել լուսթյունից հետո յարուհակց, ուղը գիտնին խփելով:

— Երեք չեմ ների ինձ մի բան. ասես սատանան
2* 19

բղեց՝ բերդ հասնելուց հետո պատմել Գրիգորի Ալեքսանդրովիշին բոլորը, ինչ լսել էի՝ ցանկապատի ետեր նստած ժամանակ. նա ծիծաղեց, այնպիսի խորամանկն էր, իսկ ինքը ժորում ինչ-որ բան զրեց:

— Իսկ ի՞նչ բան. պատմեցի՞ք, ինպիսի՞մ:

— Է՛ս, էլ ինչ արած, սկսեցիր պատմել, պետք է շարունակեն:

Մի չորս օր անց՝ Աղամաթը ձի նստած բերդ եկավ. Քսա սովորականին, նա այցելեց Գրիգորի Ալեքսանդրովիշին, որը նրան միշտ քաղցրավենիներով էր Հյուրասիրում: Ես այդտեղ էի: Խոսք բացվեց ձիերի մասին, և Պիշորինը սկսեց գովիտ Կազրիչի ձին. թէ՝ այնքան արագավագ է, զեղեցիկ, ասս լեռնալծյամ լինի. դե, նրա ասելով, ուղղակի դրա հատը ողջ աշխարհում շկա:

Փայլառակեցին թաթար տղայի աշխիները, իսկ Պիշորինն իրը թի շէր նկատում. ես տրիշ բանի մասին էի խոսք բաց անում, իսկ նա մեկ էլ տեսար իսկունք խոսքը դարձնում էր Կազրիչի ձիու վրա: Այս պատմությունը շարունակվում էր ամեն անդամ, երբ Աղամաթը բերդ էր զալիս: Մի երեք շաբաթ անց, ես սկսեցի նկատել, որ Աղամաթը գումատվում է ու ցամաքում, ինչպիս սիրուց է պատահում վեպերում: Ի՞նչ դարձանալի բան է...

Հա, գիտեք ինչ, ես վերջն իմացա այս ամբողջ խաղը. Գրիգորի Ալեքսանդրովիշն այն աստիճան էր գրուել նրան, որ նա քիչ էր մնում իրեն չուրը գցի, խեղդի: Մեկ անգամ էլ Գրիգորի Ալեքսանդրովիշը շվերցնի ու ասի նրան. «Տիսնում էմ, Աղամաթ'թ, որ քեզ խիստ շատ է գուր եկել այդ ձին. բայց դու նրան չեն տեսնի, ինչպիս ծոծրակդ չեն տեսնում: Գի, ասա՛, զու ի՞նչ կտայիր նրան, ով այդ ձին քեզ կնվիրեր...»:

— Այն ամենը, ինչ նա կցանկանար, — պատասխանել էր Աղամաթը:

— Այդ գիպքում ես այդ ձին ձեռք կրերեմ քեզ համար, միայն մի պարմանով... Երդվի՛ր, որ այդ պայմանը կկատարեն...

— Երդվում եմ... Դուն էլ երդվի՛ր:

— Լավ! Երդվում եմ, դու ձիուն տեր կդառնաս. միայն

թէ նրա համար զու ինձ պետք է տաս քո քույր Բելային. — Դարապյովը նրա զավիմը³⁷ կլինի: Հուսով եմ, որ քեզ համար ենուու առուտուր է:

Աղամաթը լուսմ է:

— Չե՞ս ու ուզում: Գի՛, ինչպիս կուզես: Ես կարծում էի, թե զու տղամարդ ես, իսկ զու գեռ մանուկ ես—քեզ համար ձի նոսկը զիս վաղ է...

Աղամաթը բռնկում է: «Թա իմ հա՞յրը», — ասում է նա:

— Մի՞թի նա երբեք որևէ տեղ չի մեկնում:

— Ճիշտ է...

— Համաձա՞յն ես...

— Համաձայն եմ, — շշնչում է Աղամաթը, մահվան պիս դամաւու— Ուրիշն ե՞ր:

— Հենց առաջին անգամ, երբ Կազրիչն այսուհեղ զա իր ձիով, նա խստացել է մի տասնյակ ոչխար բերել այսուեղ մնացածը իմ բանն է: Տե՛ս, շմուանս հա՛, Աղամաթ'թ:

Այսպիս նրանք սարքեցին այդ գործը... ճշմարիտն ասած՝ մի փառ դորձ: Ես հետո այդ բանն ասացի էլ Պիշորինին, միայն թե նա դրան պատասխանեց, թե վայրենի չերքնոււշին պետք է երջանիկ լինի աշնպիսի համակրելի ամուսին ունենալու, ինչպիսին ինքն է, որովհետեւ, ըստ նրանց օրենքի, նա այսուամենայնիվ Բելայի ամուսինը կլինի, իսկ Կազրիչը—մի ավագակ է, տրին պետք է պատժել: Ինքներդ դաւտեցեք, զրան իս ի՞նչ կարող էի պատասխանել... Բայց այն ժամանակ ես ուիմն շփիտեի նրանց դափարության մասին: Ահա մեկ անդամ զալիս է Կազրիչն ու հարցնում՝ ոչխար ու մեղր հարկավոր չէ». իս նրան կարգադրում եմ հաջորդ օրը բերել: «Աղամաթ'թ, — ասում է Գրիգորի Ալեքսանդրովիշը, — վազը Կարագյոզն իմ ձեռքին կլինի. Եթե այս գիշեր Բելան այսուղ մինի, դու էլ ձին չիս տեսնի...»:

— Լավ! — ասում է Աղամաթը և առվ սլանում:

Երեկոյան Գրիգորի Ալեքսանդրովիշը զինվեց ու ձի հեծած՝ բերդից գուրս զնաց: Թէ նրանք ինչպես են գլուխ բերում այդ գործը, շփիտեմ, — միայն թե զիշերը նրանք երկուսն էլ վերադառնում են, ու ժամապահը տեսնում է, որ Աղամաթի

ձիու թամբի վրա պառկեցրած է մի կին, որի ձեռքերն ու ստքերը կապկապած են, իսկ գլուխը փաթաթված է շաղրայով:

— Իսկ ձի՞ն, — հարցրի ևս շտաբս-կապիտանին:

— Իսկո՞ւն, իսկո՞ւն: Մյուս օրը վաղ առավտայան եկավ Կազրիչն ու բերեց ծախելու մի տասնյակ ոշխար: Զին ցանկապատի մոտ կապելով, նաև մտավ իմ սենյակը, ևս նրան թեյով հյուրասիրեցի, որովհետև թեպետև նա ավագակ էր, բայց այնուամենայնիվ իմ կունակն^{*} էր:

Մենք սկսեցինք դեսից-դենից խոսել... Հանկարծ տեսնում եմ՝ Կազրիչը ցնցվեց, դեմքն այլայլվեց ու նետվեց դեպի պատուհանը, բայց պատուհանը, դժբախտաբար բացվում էր ետնաբակի վրա: «Քեզ ի՞նչ պատահեց», — հարցրի ես:

— Եմ ձի՞ն... ձի՞ն, — ասաց նա, ողջ մարմնով դողալով:

Ես իսկապես լսեցի սմբակների դոփիտն: «Այդ, երեխ, որևէ կազակ եկավ...»:

— Ոչ: Ռուռա յաման, յաման, — մոնշաց նա և աճապարանքով դուրս նետվեց սրպեն վայրենի հովագ: Երկու ցատկումով նա հասավ բակ. բերդի դարբասի մոտ ժամապահը հրացանով փակեց նրա ճանապարհը, նա ցատկեց հրացանի վրայով ու սկսեց վազել ճանապարհով... Հեռվում փոշի էր ոլորվում — Ազամաթը սուրում էր՝ սրբնթաց Ղարապյողին հեծած: Վազելիս Կազրիչը դուրս քաշեց հրացանը բնից ու կրակեց: Մի բոսկեաշափ նա անշարժ մնաց, մինչև համոզվեց, որ վրիպել է, հետո վնասվագ, հրացանը քարին զարկեց, փշուրփշուր արեց, զլորովեց գեաին ու մանկան պիս հեկեկաց... Աշաբերդից հասարակությունը նրա շուրջը հավաքվեց, — նա ու ոքի չեր նկատում: Կանգնեցին, խոսեցին ու ետ զնացին. ես կարդադրեցի նրա մոտը դնել ոշխարների արժեքը — նա այդ փողին ձեռք չտվեց — պառկած էր երեսնիվար, ասես մեռել: Կհավատա՞ք, նա այդպիս պառկած մնաց մինչև ուշ դիշեր ու ողջ գիշերը... Միայն հետևյալ առավոտյան բերդ եկավ ու սկսեց խնդրել, որ ձին գուացողի անունն ասեն: Ժամապահը, որ տեսել էր, թե ինչպիս Ազամաթն արձակեց ձին ու նրան հեծած՝ սուրաց, հարկ շհամարեց թաքցնել այդ: Այդ անունը

* Կոմակ — նշանակում է բարեկամ: (Մանոք, Վերմոնտովի):

լուելիս՝ Կազրիչի աշքերը փայլատակեցին, և նա գնաց այն տպար, որտեղ Ազամաթի հայրն էր ապրում:

— Իսկ հայրն ի՞նչ արեց:

— Բանն էլ հենց այդ է, որ Կազրիչը նրան շփուավ. նա մի վեց օրով ինչ-որ տեղ էր գնացել, եթե ոչ, Ազամաթին ինչպիս հացողվեր իր քրոջը փախցնել:

Իսկ երբ հայրը վերադարձավ, ո՛չ աղջիկը կար, ո՛չ էլ տպան: Այնպիսի խորամանկն էր. զլիին էր ընկել, որ գլուխը ողջ չի պրծացնի, եթե բռնվի: Այդպես էլ այդ ժամանակից անհետ կորավ. Հավանորեն հարեց արքեկների որևէ խմբի ու ինենթ գլուխը գոհ տվեց Տերեկի կամ Կուբանի էն ափում — ու նրան տեղն էր...

Խոսապվանում եմ, ինձ էլ բավական հասավ: Հենց որ ես տեղեկացա, որ շերքեպուհին Գրիգորի Ալեքսանդրովիշի մոտ՝, կպուհուներս դրեցի, սուրս կապեցի ու գնացի նրա մոտ:

Գրիգորի Ալեքսանդրովիշը պառկած էր առաջին սենյակում անկողնի վրա, մի ձեռքը ծոծրակի տակը դրած, իսկ մյուսում հանգած ծխամորճը բռնած. երկրորդ սենյակի դուռը փակված էր, և բանալի շկար փականքի մեջ: Ես այս բոլորն խկույն նկատեցի... Ես սկսեցի հազար և կրոմիներով թըխացնել շեմքը, բայց նա ձևացնում էր, իբր թե չի լսում:

— Պարոն պրապորշչիկ, — ասացի ես որքան կարելի է խիստ տանով: — Մի՞թե դուք շեք տեսնում, որ ես եկել եմ ձեզ մոտ:

— Աչ, բարեկ ձեզ, Մաքսիմ Մաքսիմի՛չ: Մխամորճ ծխել չե՞ք ուղարկ, — պատասխանեց նա, տեղից շրաբրանալով:

— Ներեցե՛ք: Ես Մաքսիմ Մաքսիմիլ չեմ, ես շտաբսկապիտան եմ:

— Այդ միենույն է: Արդյոք թեյ չեի՞ք կամենա: Եթե իմանայիք, թե ինչ հոգս է տանջում ինձ:

— Ես ամեն ինչ պիտիմ, — պատասխանեցի ես, մահմակալին մոտենալով:

— Ավելի լավ. Ես պատմելու արամադրությունն չունեմ:

— Պարոն պրապորշչիկ, դուք մի հանցանք եք դործել, որի համար ես ես կարող եմ պատասխանառու լինել:

— Ե՞, գուք էլ հո. ի՞նչ կա որ: Զէ՞ որ մենք վազուց աժմնին կես ենք անում:

— Ի՞նչ կատակներ են: Հաճիցեք ձեր սուրբ հանձնել:

— Մի՛ տկա, սուրբ բե՛ր...

Միտկան բերեց սուրբ: Պարտականությունս կատարելով, ևս նստեցի նրա մահճակալին և ասացի. «Լսիր, Գրիգորի Ալեքսանդրովիշ, խոստովանիր, որ լավ չէ»:

— Ի՞նչը լավ չէ:

— Այն, որ դու Բելային փախցրել ես... Ա՛խ, այդ սաւանա Ազամաթը... Դե՛, խոստովանիր,— ասուցի ևս նրան:

— Խոկ եթե աղջիկն ինձ գո՞ւր է գալիս...

Դե՛, ի՞նչ կհրամայիք պատասխանել սրան... Ես փակուցի բնկածի պիս շվարեցի: Սակայն, կարձատե լուսիթյունից հետո, ևս նրան ասացի, որ եթե հայրը Բելային պահանչի, Հարկավոր է տալ:

— Բնավ Հարկավոր չէ:

— Բայց նա կիմանա՞՝, որ աղջիկն այստեղ է:

— Խոկ ինչպի՞ս կիմանա:

Ես նորից շվարեցի: «Ասեցիք, Մաքսիմ Մաքսիմի՛լ, — ասաց Պելորինը, կիսով շափ բարձրանալով, — չէ՞ որ գուք բարի մարդ եք, խոկ եթե աղջկան տրդ վայրենուն տանք, նա դրան կմորթի կամ կծախի: Գործը կատարված է, միայն թե պետք չէ կամուվին փշացնել. աղջկան ինձ մոտ թողեք, խոկ սուրբ ձեռ մոտ...»:

— Մի ցույց տվեք ինձ այդ աղջկան, — ասացի ես:

— Աղջիկն այս գոան եսուն է. միայն թե ևս ինքս էլ այսօր իվուր էի ուղում նրան տիսնել, նստած է անկյունում, փաթթավիկ է ծածկոցի մեջ, չի խոսում ու չի նայում. խրտշող է, ինչպես վայրի լեռնայժյամ: Ես վարձել եմ մեր գուբանապանություն. սա թաթարերեն գիտե, կիսնամի աղջկան և կընտելացնի այն մտքին, որ աղջիկն իմն է, որովհետեւ նա ոչ ոքի չի պատկանելու, բացի ինձանից, — ավելացրեց Պելորինը, բռունցքը սեղանին խփելով: Ես դրան էլ համաձայնեցի... Ի՞նչ կհրամայիք անել, Կան մարդիկ, որոնց ասածին անպայման պետք է համաձայնել:

— Եվ ի՞նչ, — Հարցորի ես Մաքսիմ Մաքսիմիշին, — իրո՞ք

առ այդ աղջկան ընտելացրեց իրեն, թե՞ Բելան հյուծվեց գերաթյան մեջ, հայրենիքի կարոտից:

— Ի՞նչ եք ասում, ինչո՞ւ հայրենիքի կարոտից: Բերդից երեսում էին նույն սարերը, ինչ և առվից, իսկ այդ վայրենիկին էլ որիշ ոշինչ հարկավոր չէ: Բացի այդ, Գրիգորի Ալեքսանդրովիշն ամեն օր նրան որիէ բան էր նվիրում. առաջին օրիր Բելան լուռ, գոտովաբար իտ էր վանտում նվիրները, որոնք այդ դեպքում բաժին էին ընկնում դուքանապանուհուն և զգական նրա պերճախոսությունը: Ա՛խ, նվիրնե՛ր. կինն ի՞նչ լի անի գունավոր լաթի կտորի համար... Բայց այս մի կողմ թողնենք... Գրիգորի Ալեքսանդրովիշը երկար ժամանակ զլուխ զավեցրեց Բելայի պատճառուով. մինչ այդ՝ թաթարերեն էր սովորում, և աղջիկն էլ սկսում էր մեր լեզուն հասկանալ: Սակայն ուսակավ Բելան վարժվեց նայել նրա վրա, ոկրում հոնքերի տակից, շեղակի, ու շարունակ տիրում էր, կիսաձայն երգում իր երգերը, այնպես որ, պատահում էր, ևս էլ էի տիրում, երբ Հարկան մինչյակից լսում էի նրա երգը: Երբեք չեմ մոռանա մի տիսարան. ևս անցնում էի պատուհանի մոռավ ու ներս նայեցի: Բելան նստած էր պատկոցի վրա՝ զլուխը կրծքին կախած, խոկ Գրիգորի Ալեքսանդրովիշը կանգնած էր նրա տապաց մէսիր, իմ փերի²⁸, — ասում էր Պելորինը, — չէ՞ որ դու դիմաս, որ վաղ թե ուշ գու պետք է իմը լինես, էլ ինչո՞ւ ես միտին տանջում ինձ: Մի՛թե զու որևէ շիշենի ևս սիրում: Եթե ույզպես է, ևս քեզ խկույն բաց կլիողնեմ՝ ձեր տուն զնաս»: Բելան հատպիվ նկատելի ցնցվեց ու օրորեց զլուխը: — «Կամ թե, — շարունակից Պելորինը, — ևս քեզ բոլորովին ատելի՛ եմու: — Բելան հատաշեց: — «Թէ՞ քո հավատն է քեզ արգելում ինձ սիրելու: — Բելան գունատվեց ու լուս մնաց: — «Հավատա ինձ, ալլահը բոլոր ցեղերի համար մեկ է նույնը, և եթե նա ինձ թույլատրում է քեզ սիրել, ինչո՞ւ է արգելելու, որ զու ինձ փոխապարձը հատուցես»: — Բելան սկսում հայացքով նայեց նրա գելքին, ասես այդ նոր միտքը նրան ապշեցրեց. Բելայի աշքիրում արտահայտվեց անվատահություն և համոզվելու ցանկություն: Ի՞նչ աշքեր էին. նրանք փայլատակում էին, տաս երկու ածխենի:

— Ուսի՛ր, սիրելի՛, բարի Բելա, — շարունակեց Պելորի-

Նը.— Պուտենում ես, ես քեզ ինչպես եմ սիրում. ես պատրաստ եմ տալ ամեն ինչ՝ քեզ ուրախացնելու համար. ես ուղում եմ, որ Պու հրչանիկ լինես, իսկ եթե դու էլի տիրես, ես կմեռնեմ: Ասա, դու ավելի ուրախ կլինե՞ս»: — Բելան մտած. մունքի մեջ ընկավ, Հեռուացնելով Պելորինից իր սկ աշքերի հայացքը. Հետո փաղաքշաբար ժպտաց ու գլուզ համաձայնության նշան արավ: Պելորինն իր ձեռքի մեջ առավ նրա ձեռքը և սկսեց համոզել նրան, որ նա իրեն համրուրի. Բելան թույլ պաշտպանվում էր և կրկնում. «Поджалуста, поджалуста, не нада, не нада»³⁹. — Պելորինն սկսեց պնդել. Բելան դողպողաց, լաց եղավ, — «Ես քո գերին եմ, — ասաց Բելան, քո ստրկուհին. Իհարկե, դու կարող ես ինձ ստիպե՞ր, — ու դարձյալ արցունքներ:

Գրիգորի Ալեքսանդրովիչը բռունցքը խփեց իր ճակատին ու գույս թռավ մյուս սենյակը։ Ես մտա նրա սենյակը, Պեղորինը ձեռքերը ծալած՝ մոպալ ետ ու առաջ էր քայլում։ «Հը՛, ի՞նչ կա», — ասացի ես նրան։ «Դև է, ո՞շ թե կին, — պատսախանեց Պեղորինը։ — սակայն ես ձեզ ազնիվ խոսք եմ տալիս, որ նա իմը կլինի...»։ Ես գլուխս օրորեցի։ «Կուզե՞ք գրազ գանք, — ասաց նա, — մի շաբաթից»։ «Համեցից՞ք»։ Ի նշան համաձայնության՝ մենք ձեռք տվինք միմյանց ու բանինեցինք։

Հետևյալ օրը Պեղորինն իսկուքն հատում սուբհանդակ ուղարկեց Ղզլար՝ զանազան գնումներ կատարելու. բերվեցին բազմաթիվ տեսակ-տեսակ պարսկական կտորներ. բոլորի անումը թիւն դժվար է:

— «Ը՞նչ եք կարծում, Մաքսիմ Մաքսիմիչ, — ասաց նա ինձ, նվերները ցուց տալով, — ասիական գեղեցկուհին կդիմանա՞» այսպիսի մարտկոցի հանդեպ: — «Դուք շերքիզուհիներին չեք ճանաշում, — պատասխանեցի ես, — դրանք բոլորովին այն շեն, ինչ՝ վրացուհիները կամ անդրկովկասյան թաթարուհիները, ամենևին նույնը չեն: Սրանք իրենց կանոններն ունեն, սրանք այլ կերպ են դաստիարակված»: — Գրիգորի Ալեքսանդրովիչը ժպտաց և սկսեց քայլերդ սուես:

Ու բանից դուքս եկավ, որ ես իրավացի էի. նվերները մի-
այն կիսուլ չափ աղղեցին. Բելան ավելի փաղաքուշ դարձավ,

ավելի վստահող, ու միայն այդքանը, այնպես որ Պեղորինը
վճռեց զիմել վերջին միջոցին: Մեկ անգամ, առավոտյան, նա
կարգադրեց թամբել ձին, չերքեղական հագուստ հագավ, զին-
վեց ու մտավ թելալի սենյակը: «Բևլա՛, — ասաց նա, — զու
դիտես, թե ես քեզ ինչպես եմ սիրում: Ես վճռեցի քեզ
փախցնել, մտածելով որ զու, երբ ինձ ճանաշես, կսիրես. ես
սիսալվեցի, — մնաս բարի՛: մնա այն բոլորի լիակատար տիրու-
հին, ինչ ես ունեմ. եթե կկամենաս, վերադարձիր Հորդ մոտ.
զու պատ ես: Ես մեղավոր եմ քո առաջ և պետք է պատժեմ
ինձ: Մնաս բարով, ես մեկնում եմ. ո՞ւ. Ես ի՞նչ զիտեմ: Գուցե
երկար շինտրեմ զնդակ կամ թիր հարված: Այն ժամանակ Հի-
շիր ինձ և ներիրօ: — Նա երեսը շուռ տվեց և ձեռքը մնաս
բարկի մեկնեց թելալին: Թելան շառավ նրա ձեռքը, լուր մնաց:
Դուն ետեղ կանգնած լինելով ես կարողացա բանալու անց-
րով զիտել նրա զեմքը. և ես խողճացի նրան—այնպիսի՝ մա-
հացու գունատություն էր պատել նրա անուշ ուեմքին: Պա-
տասխան չլսելով, Պեղորինը մի քանի քայլ արեց զեսի դուռը,
նա դոզում էր, և արդյոք ասե՞լ ձեզ, ես կարծում եմ, որ նա
ի վիճակի էր իսկապես կատարելու այն, ինչ կատակով էր
ասել: Այդպիսի մարդ էր, աստված զիտի նրան: Սակայն նա
հազիվ էր ձեռք զիացրել գուանը, երբ թելան ցատկեց տեղից,
հեկեկաց և նրա վզովն ընկալվ: — Կհալատա՛ք արդյոք, — ես,
դուն ետեղ կանգնած, նույնպես լաց եղա, այսինքն, զի-
տեր, ոչ թե լազ եղա, այս այնպե՞ս հիմարությո՞ւն...

Շտաբս-կապիտանը լոեց:

— Այո՛, խոստավանում եմ,— ասաց նա հաստ, բեղերը
քաշքաշելով,— ես դժկամեցի, որ երբեք ոչ մի կին ինձ այդպես
չի սիրել:

— Ել երկարատես՝ եղալ նրանց երջանկությունը, —

— Այս՝ Բելան մեզ խռոտավանեց, որ այն շրից, եթ
տհիւ է Պելորինին, վերջինս հաճախ է երևացել նրան երա-
պութ, և որ ոչ մի տղամարդ երբեք նրա վրա այդպիսի տպա-
վորություն չի գործել: Այս՝ նրանք երջանիկ էին:

— Ի՞նչ ձանձրալի է այդ, — բացագանեցի ևս ակամա: Եթի իրոք, ևս հանգուցի տրագիկ լուծման էի սպասում, ու

հանկարծ այդպես անակնկալ ինձ հուսախաբ անել... Բայց
միթե, — շարունակեցի ես, — Բելայի հայրը չկռահեց, որ ազ-
տիկը ձեզ մոտ է, բերդում:

— Այսինքն, կարծեմ, նա կասկածում էր: Մի քանի օր
անց՝ մենք իմացանք, որ ծերուկն սպանվել է: Աշա թե ինչպես
էր պատահել այդ...

Եմ ուշադրությունը նորից վասից:

— Պետք է ձեղ ասել, որ Կապրիչը ենթագրել էր, թե իբր
Ազամաթը հոր համաձայնությամբ է գողացել իր ձին. գոնի ես
այդպես եմ ենթադրում: Եվ ահա մեկ անգամ նա սպասում է
Հանապարհի մոտ, մի-երեք վերսա առվից դեմք. ծերուկը վե-
րագրանում էր աղջկան ապարդյուն տրոնելուց. նրա ուզգեն-
ները⁴⁰ ետ էին մնացել — մթնշաղի ժամանակ էր, — նա մատ-
սույզ առաջ էր ընթանում, երբ հանկարծ Կապրիչը կատվի պես
դուրս թուավ թիփի ետևից, թուավ նրա ձիու գավակին, գաշույնի-
հարվածով նրան գեախն գլորեց, սանձափոկը իր ձեռքն ա-
ռավ — ու ծր՝ լի. մի քանի ուզգեններ այս րուրոք տեսնում են
բրից. նրանք ընկնում են Կապրիչի ետևից, սակայն չեն
հասնում:

— Նա վարձահատուց է եղել իր ձիու կորստի համար ու
վրիժ է լուծել, — ասացի ես, որպեսզի զրուցակցիս կարծիքը
երևան բերել տամ:

— Ի՞արկե, ըստ նրանց, — ասաց շտարս-կապիտանը, —
նա միանդամայն իրավացի էր:

Ինձ ակամա ապշեցրեց ուսւ մարդու ընդունակությունը՝
հարմարվելու այն ժողովուրդների սովորություններին, որոնց
շրջանում նրան վիճակվում է ապրել: Զգիտեմ, պախարակու-
թյան, թե գովասանքի է արժանի խելքի այս հատկությունը,
միայն թե դա ապացուցում է նրա անհեթեակայելի ճկունու-
թյունը և ներկայությունն այն պարզ, առողջ գատողության,
որ ներում է շարիքն ամենուր, որտեղ տեսնում է նրա անհրա-
ժեշտությունը կամ նրա ոլնացման անկարելիությունը:

Մինչ այդ՝ թիյը խմեցինք, պրծանք, վաղուց լժված ձիերը
մրսել էին՝ ձյունի վրա կանգնելուց, լուսինը դժունում էր
արևմուռքում և արդեն պատրաստ էր սուզվելու իր սկ թխակերի
մեջ, որոնք կախվել էին Հեռու գագաթին վերեր, ասես

պատուած վարագույրի ծվեններու Մենք սակլյայից դուրս
եկամեր Հակառակ ուղեկցիս գուշակությանը, եղանակը պարզ-
վել էր և խոստանում էր մեզ խաղաղ առավոտ. աստղերի
խորերը հեռավիր հորիզոնի վրա հրաշալի նախշերի ձեռվ
լուսվում էին միմյանց և մեկը մյուսի ետևից մարում, մինչ-
քեզ արևելքի գունատ արտափայը փովում-տարածվում էր
մուգ-մանիշակագույն երկնակամարում, աստիճանաբար
լուսավորելով կուսական ձյուներով պատաժ լիոնների գահա-
վեժ զառիվայրերը: Աշից և ձախից սեխն էին տալիս մուալ,
խորհրդավոր անդունդները, և մշուշները, քուզա-թուզա բարդ-
վելով ու գալարվելով օձերի պես, հարևան ժայռերի կնճիռ-
ներով ասհում էին դեպի այդ անդունդները, կարծես թե նա-
խազգալով ցերեկը և վախենալով նրա մոտենալուց:

Խաղաղ էր ամեն ինչ երկնքում և երկրի վրա, ինչպես
մարդու սրտում է լինում առավտոյան աղոթքի բոպեին: Միայն
երբեմն արեկելքից վրա էր հասնում զով քամին, բարձրացնելով
ձիերի բաշը, որ եղյամով էր պատաժ: Մենք ճանապարհ ըն-
կանք, գինդ վտիտ ձիով դժվարությամբ էին բաշում մեր սայ-
լակները Գուդ-սարը տանող ոլորապույտ ճանապարհով:
Մենք հետիուն գնում էինք սայլակների ետևից, անիվների
տակը բարեր գներով այն պահերին, երբ ձիերն ուժասպառ էին
լինում: Թվում էր, թե ճանապարհը դեպի երկինք է տանում,
որովհետեւ, աշք որքան կտրում էր՝ ճանապարհն անվիրջ
բարձրանում էր ու վերջապես կորչում այն ամպի մեջ, որ դեռ
երեկոյից սկսած ճանդատանում էր Գուդ-սարի գագաթին,
ասես որսի սպասող ուրուր: Ջունը ճոճում էր մեր ոտքերի
տակ, օդն այնքան նսար էր զառնում, որ շնչելիս մեր կուրծքը
ցավում էր: Արյունն ամեն վայրկյան դեպի գլուխներու էր
հորդում: Այնուհանդեմ, ինչ-որ համեմի զգացում տարածվում
էր իմ բոլոր երակներում, և ես մի տեսակ ուրախ էի, որ
աշխարհից այսքան բարձր եմ գտնվում, — երեխայական զգա-
ցում է, չեմ վիճում, բայց հասարակության պայմաններից հե-
ռանալով և բնությանը մոտենալով, մենք ակամայից երեխա
ենք դառնում: բորբ ձեռք բերած թթափավում է հոգուց, և
նու դառնում է նորից այնպիսին, ինչպիսին եղել է մի ժա-
մանակ և, անշուշտ, երբեք դարձյալ լինելու է: Նա, ում պա-

տահել է, ինչպես ինձ, թափառել անբնակ սարերում ու երկարորեն, խորը գիտել նրանց տարօրինակ պատկերները ու ագաճարար ծծել նրանց կիրճերի կենարար օդը, նա, իշարիե, կշատկանա այս կախարդական պատկերները հաղորդելու, պատմելու, նկարելու ցանկությունն Ահա, վերջապես, մենք բարձրացանք Գուգ-սարը, կանգ առանք և մեր շուրջը նայեցինք: Սարի գլխին կախված էր մի գորշ ամպ, և նրա սարը շունչը մտալուս փոթորկի սպառնալիք էր բովանդակում. բայց արևելրում ամին ինչ այնպես պարզ ու ոսկեգույն էր, որ մենք, այսինքն ևս և շտաբս-կապիտանը, նրա մասին բոլորովին մոռացանք... Այս՝ նաև շտաբս-կապիտանը. պարզ սրտերում բնության գեղեցկության ու վեհության դդացումը հարյուրապատիկ ավելի ուժեղ ու վառ է, քան մեր՝ խոսելով և թղթի վրա ոգերով պատմողներին մեզ:

— Ես կարծում եմ, որ այս վեհապանն պատկերները ձեզ համար արդեն սովորական բան են դարձել, — ասացի ևս նրան:

— Այս, գնդակի սովորն էլ կարող է սովորական բան դառնալ, նրան էլ կարելի է վարժվել, այսինքն վարժվել՝ թաքնելու սրտի ակամա բարախումք:

— Ես լսել եմ, որ, ընդհակառակը, հին ռազմիկներից ոմանց համար այդ երաժշտությունը նույնիսկ հաճելի է:

— Հասկանալի է, եթե կուզեք, այդ հաճելի էլ է. ասկայն դարձյալ այն պատճառով, որ սիրտող ավելի ուժեղ է բարախումք: Նայեցեք, — ավելացրեց նա, դեպի արևելք ցույց տալով, — ի՞նչ երկիր է:

Եվ ճիշտ որ, այդպիսի պանորամ հաղիկ թե դարձյալ որևէ տեղ ինձ հաջողվի տեսնել. ներքեւում Կոյշառուի հովիտն էր փովել. Արագվան և մեկ ուրիշ գետակ, որպես երկու արծաթի թերեր, հատում էին արդ հովիտը. երկնագույնին տվող մշուշը սահում էր նրա վրայով՝ առավոտյան տաք հառագայթներից հարևան կիրճերը փախչելով. աջ ու ձախ մեկը մյուսից բարձր, ձյանով, թիերով ծածկված սարերի կաստարները իրար հատում, ձգվում էին դեպի վեր: Հեռվում նույն սարերն էին, բայց գո՞նե երկու ժամանակ կատար մասնաւությունը անհամար էր:

պարզու, որ թվում էր, թե հենց այստեղ էլ կմնայիր հավերժ պարհու: Արևը հազիվ երևաց մուգ-կապույտ սարի ետևից, որի միայն սովոր աշքը կարող էր զանազանի փոթորկարեր աժպից: բայց արեւից վեր կար արնագույն մի շերտ, որի վրա իմ բնիկերը հատուկ ուշագրություն դարձեց. «Ես ձեզ ասացի, — բացազանչեց նա, — որ այսօր փոթորիկ է լինելու հարկանի սովոր է շտափել, ապա թե ոչ նա թերևս վրա հասնի մեզ երկարությամ սարում: Շարժվեցն՝ ք», — բղավեց նա կառապահներին:

Արգելակների փոխարեն տակից շղթաներ կապեցին անիմներին, որպեսզի նրանք արագ չգլուրվեն, բռնեցին ծիերի սանձը երախակալների մոտից և սկսեցին ցած իշնել, աջ կողմում ժայռ էր, ձախում՝ մի այնպիսի անդունդ, որ նրա հատակում ապրող օսերի մի ամբողջ գյուղը ծիծեռնակի բույն էր թիւմ, ևս սարսուցի, երբ մտածեցի, որ խուզ գիշերին այսակով, այս ճանապարհով, ուր երկու հանդիպած սալակ անկարող են իրար կտղով անցնել, հաճախ որևէ սուրճանդակ տարիեկան տասն անգամ անցնում է, առանց իր ցնցվող կառրից դուրս գալու: Մեր կառապաններից մեկը յարուլավցի ոսու զեղչով էր, մյուսը՝ օս: Օսը, երախակալի մոտից սանձը բռնած առաջ էր քաշում քեղաձիդ ձին բոլոր հնարավոր հախազություններով, վաղօրոք արձակելով առջեց լծած ձիերը, իսկ մեր անհոգ ոռաց մինչև իսկ իր նստացից չիշավ: Երբ ես նրան նկատեցի, որ նա կարող էր հոգալ զոնե իմ հազմանուկի մասին, որի ետևից ես բոլորովին շեմ ուզի այդ անդունդը իշնել, նա ինձ պատասխանեց. «Ե», աղա՛, աստուծավ նրանցից վատ չենք տեղ հասնի, առաջին անգամ հո չենք զիւմք: Եվ նա իրավացի էր: Մենք իսկապես որ կարող էինք տեղ հասնել, սակայն և այնպես հասնենք եվ եթե բոլոր մարդիկ էլ ավելի շատ խորհրդածեին, կհամոզվեին, որ կյանքն այլրան թանկ չէ, որ նրա մասին այդքան հոգա...

Բայց դուցք դուք ցանկանո՞ւմ եք թելայի պատմության վերջավորությունն իմանալ: Նախ՝ ես վիպակ շեմ գրում, այս անմիջորդական նոթեր, հետևարար, շեմ կարող հարկադրել յատարս-կապիտանին, որ նա ավելի շուտ պատմի, քան նա իրոք սկսեց պատմել: Ուրեմն սպասեցեք, կամ, եթե ցանկա-

հում եք, մի քանի էջ շուռ տվեք, սակայն ևս ձեզ խորհուրդ շեմ տալիս այդպիս անել, որովհետև Կըստովայա սարով (կամ, ինչպիս գիտնական Գամբան⁴¹ է անվանում՝ le Mont St.-Christophe*-ով անցնելն արժանի է ձեր Հետաքրքրասիրությանը: Այսպիս ուրեմն, Գուղ-սարից մենք իշնում էինք Զերտովա Գոլինա կողման Հովիտը... և ոչ ոռմանտիկ անուն է: Դուք արդեն շար ոգու բույն եք տեսնում անմատելի ժայռերի միջև, բայց սխալում եք. Զերտովա անունը ծագում է «Վերտա» (գիծ, սահմանադիմ. Թարմզ). և ոչ թե «Հերտ» (սատանա. Թարմզ) բառից, որովհետև ժամանակով այստեղով էր անցնում Վրաստանի սահմանը: Այդ Հովիտը ծածկված էր ձյունի շեղերով, որոնք բավական կենդանի կերպով հիշեցնում էին Սարատովը, Տամբովը և մեր Հայրենիքի այլ սիրելի վայրերը:

— Ահա՝ և Կրեստվայան,— ցույց տալով ձյունի շերտով ծածկված բլուրը, ասաց ինձ շարս-կապիտանը, երբ մենք Զերտովա Գոլինա իշանք. բլրի զագաթին սկին էր տալիս մի քարե խաչ, իսկ նրա կողքով անցնում էր Հազիվ նկատելի մի ճանապարհ, որով կառքերը դնում են միայն այն ժամանակ, երբ բլրի կողի ճանապարհը ծածկված է լինում ձյան շեղերով. մեր կառապանները Հայտարարեցին, որ ձյան Հյուսքերը զեռևս չեն թափիլ և, ձիերին խնայելով. մեզ տարան շրջանցիկ ճանապարհով: Ոյրանին հասնելով, մենք Հանդիպեցինք մի հինգ օսերի. նրանք մեզ իրենց ծառայությունն առաջարկեցին և, անիվներից կաշերտվ, աղաղակերով սկսեցին քաշել մեր սալլակը և ապա պահել, որ ցած ըստովի: Նվակապիս, ճանապարհը վտանգավոր էր. աշխաց մեր գլուխների վերը կախված էին ձյան շեղերը, որոնք կարծես պատրաստ էին քամու առաջին իսկ թափից պոկվել ու կիրճը թափվել. նեղ ճանապարհը մասմաս ծածկված էր ձյունով, որը որոշ տեղերում այնքան փիրուն էր, որ ոտքերս խրվում էին նրա մեջ, մրու տեղերում էյ արևի ճառարայթների և դիշերով սառնամանիքների ապացության տակ՝ սառուց էր կտրել, այնպիս որ մենք ինքներս դժվարությամբ էինք տուա անցնում, իսկ ձիերն ընկնում էին. Ճախակողմում կար մի խոր

* Սուրբ Քրիստովորի սար (ֆր.):

վագար, որտեղ թավալվում էր մի վտակ՝ մեկ թաքնվելով սուզ կեղեկի տակ, մեկ փրփրած ցատկելով ու բարիբի գրայով Երկու ժամում մենք հազիվ կարողացանք պառույտ զարծել Կրեստվայա սարի շորջը. Երկու վերստր երկու ժամում: Մինչև այդ, ոև ամպերը ցածրացան, տեղաց կարկուտ, ձյուն բամբին, ներս խուժելով կիբճերը, ոռնում էր, սուլում, ինչպիս Առլովից-Ռազբոյնիկը⁴², և շուտով քարե խաչը ծածկեցից մշուշում, որի ալիքները, մեկը մյուսից թանձր ու սեղմ. որագ վրա էին տալիս արևելքից... Ի գեպ, այդ խաչի մասին գոյություն ունի տարօրինակ, բայց ընդհանրացած ավանդույթուն, իրը թե այն կանգնեցրել է Պետրոս⁴³ Ի կայսրը Կովկասով անցնելիս. բայց, նախ Պետրոսը եղել է միայն Պաղտանում և, երկրորդ՝ խաչի վրա խոշոր տառերով զըլմած էր, որ այն կանգնեցրել են գին. Երմոլովի հրամանով, այն է 1824 թվին: Բայց, չնայած մակագրությանը, ավանդությունն աթուկի էր արմատացել, որ, ճիշտն ասած, չգիտես ինչին հայտառաս, մանավանդ, որ մենք սովոր չենք արձան ուղղություններին հավատալու:

Քորի կայարանին համելու համար մենք պետք է իշխնել ևս մի հինգ վերստ սառցապատ ժայռերով ու ձյուների խորտուփ: Զիերը հալից ընկել էին, մեր սառել էինք: Փոթորիկը շաշում էր ավելի ու ավելի ուժգին, ասես մեր հարազատ, Հյուսիսացին փոթորիկը լիներ, միայն թի սրա վայրենի ձայներն ավելի տխուր, ավելի թախծու էին: Ալքուական՝ մտածում էի ևս,— զու էլ ևս լալի՞ս րո ւայն, արձակածավալ տափաստանների համար, Այլտեղ ապատ տեղ կա տարածելու պաղ թևերդ, իսկ ալսուել քեզ համար խողղոց ու նեղ է, ինչպիս վանդակն ուրծվի համար, որը միունի զարկվում է նրա երկաթի հաշերեն:

— Վա՛տ է,— ասում էր շարս-կապիտանը, — ն սյեցեք՝ մեր շորջը ոչի՞նչ չի երևում, միայն մշուշ է ու ձյուն. մեկ էլ տեսար անդունդ գլորվեցինք կամ խոռոշ ընկանք. իսկ այնուհետ քիչ ցածրում, երկի, Բայդարն այնպիս է Հորդացել և կառագել, որ անցնել էլ շես կարողաւա: Ա՞յս այս Աստիան: Ջարդիկի, Հո գետակները — ոչ մեկին չի կարենի վստահել: Կառապանները ճշլով ու հայշոյելով ծեծում էին ճիշ-

բին, որտոնք փոնչացնում էին, համառում և ոչ մի կերպ չէին ցանկանում տեղերից շարժվել, չնայած աարագանների պերճախոսությանը: «Զերդ աղնվություն, — ասաց վերջապես մեկը, — չե՞ որ մենք այսօր Քորի շենք հասնի, չե՞ ք հրամալի, քանի դեռ կարելի է, ձախակողմ ծովել: Հրե՛ն այնտեղ, սարալանջին ինչ-որ բան է սկին տալիս, երեւ սակայաներ են, վատ եղանակին ճամփորդները միշտ այնուեղ են իջևանում. սրանք ասում են, որ ճամփին ցուց կտան, եթե արադի փող տաք»: — Հարեց նա, օսերի կողմը ցուց տալով:

— Գիտեմ, եղրայր, առանց քո ասելու էլ զիտեմ, — ասաց շտարս-կապիտանը. — ա՞յս այդ սատանաները, պատրաստ են մի պոչ գտնել, որպեսզի օղու փող պոկեն:

— Բայց խոստովանիցեր, — ասացի իս, — որ առանց նրանց մեր բանն ավելի վատ կլիներ:

— Այդ այդպիս է, այդպիս է, — քրթմնջաց նա, — ա՞յս այդ ուղեցուցները, հոտառությամբ են իմանում, թե որտեղ կարելի է շահվել, կարծես թե առանց նրանց ճանապարհ գտնել չի լինի:

Ահա մենք գեափի ձախ ծովեցինք և շատ զլխացավանքից հետո մի կերպ հասանք մի աղքատիկ օթևան, որը բաղկացած էր սալերից ու գետաքարից շինած և նույն այդ նյութերից շարած պարսպով շրջապատված երկու սակալայից: Պատառութած հագուստներ ունեցող տնատերերը մեզ ուրախ ընդունեցին: Ես հետո իմացա, որ կառավարությունը նրանց վճարում է և կերակրում այն պայմանով, որ նրանք ընդունեն փոթորկի պատահած ճանապարհորդներին: — «Ամեն ինչ գեափի լավն է գնում, — ասացի ես, կրակի մոտ նստելով, — այժմ դուք կափարտեք թելայի պատմությունը. ես հավատացած եմ, որ գրանով չի վերջացել»:

— Իսկ ինչո՞ւ եք դուք այդպիս հավատացած, — պատասխանեց ինձ շտարս-կապիտանը, խորամանկ կերպով ժըպտալով և աշքով անելով:

— Այն պատճառով, որ դա կարգից դուրս բան է, այն, ինչ արտասովոր կերպով է սկսվել, նույն կերպով էլ պետք է վերջանա:

— Դուք ախր կուահեցիք...

— Շատ ուրախ եմ:

— Զել ինչ, դուք կուրախանաք, իսկ ես, ձիշտ եմ ասում, չենց որ հիշում եմ, այնպէս եմ ախրում: Հիանալի աղջկե էր այդ թելան: Ես նրան վերջապես այնպէս ընտելացա, ինչպիս զտեր. նա էլ ինձ էր սիրում: Պետք է ձեզ ասեմ, որ ես թատանիք չունեմ. հորս և մորս մասին ես մի տասներկու տարի է արգեն, որ տեղիկոթյուն չունեմ, իսկ կոչողվ ինձ ապահովել առաջ գլխի շենքել, հիմա էլ, զիտեք, ինձ սաղական լի: այդ պատճառով էլ ես ուրախացել էի, որ գտել էի մեկին, ում կարող էի նրեւ տալ: Մեկ-մեկ նա մեզ համար երգեր էր երգում կամ լեզվինկա պարում... Իսկ ինչպէս էր պարում: Տիսել եմ ես մեր նահանգական օրիորդներին, իսկ մեկ անդամ էլ, որանից մի քանի տարի առաջ, եղել եմ Սոսկվայի աղյուսականիների ակումբում, բայց նրանք ո՞ւր, սա ո՞ւր, բոլորովի՞ն այն չե՞... Գրիգորի Ալեքսանդրովիչը նրան տիկնիկի պես էր զուրում, խնամք էր տանում, գգվում նրան, և նա մեզ մոտ տիսպի՞ն էր գեղեցկացել, որ մարդ հիանում էր. դեմքից ու ձեռքերից անհետացել էր արևասությունը, այտերին վարդ էր բացվել... Ու երբեմն ինչքան ուրախ էր լինում, և միշտ շարանձին ի՞նձ էր կատակի առարկա դարձնում... աստված թող ների նրան...

— Իսկ ինչպէս ընդունեց, երբ դուք նրան հայտնեցիք իր ջոր մահը:

— Մենք երկար ժամանակ այդ թարցնում էինք նրանից, մինչ որ նա ընտելացավ իր դրությանը. իսկ երբ ասացինք, իս մի երկու օր լաց եղավ, իսկ հետո մոռացավ:

Մի չորս ամիս ամեն ինչ ուզածիդ պես լավ էր զնում. Գրիգորի Ալեքսանդրովիչը, ես արգեն կարծեմ ասել եմ, թունդ ոիրում էր որորդությունը. առաջներում՝ նրան ձգելով-ձգում էր զեափի անտառ՝ վարազների կամ այծերի որսի, իսկ հիմա զո՞նի երգի պարսպաթմբից դենն անցներ: Սակայն և այնպիս, մի ժամանակ տեսնեմ նա սկսել է նորից մտքերի մեջ ընկնել: Ռոյրում է սենյակում՝ ձեռքերը ետևին ծալռած. հետո մեկ անգամ էլ առանց մեկն ու մեկին ասելու, գնաց որս խփելու ամերով առավոտը շկար. մեկը երկու դարձամ, ապա՝ ալելի ու

ավելի հաճախ... և ավ չի՝ մտածեցի ես. Հավանորեն սրանց ժիշտ սկ կառու է անցել:

Մի առավոտ մտնում եմ նրանց մոտ,— ոնց որ հիմա աշքերիս առաջը լինի. Բելան նստած էր մահձակալի վրա սկ մետաքսե բեշմետը հապին, գունատ, այնպիս տխուր, որ ես վախեցա:

— Իսկ Պեղորինը որոտե՞ղ է,— հարցրի ես:

— Որսի է գնացել:

— Այսօ՞ր է գնացել— Բելան լուռ էր, կարծես թե խոսքը նրա համար դժվար լիներ:

— Ո՞ւ, երեկվանից,— վերջապես ասաց նա՛ ծանր հառաջելով:

— Նրան որևէ բան պատահած չլինի:

— Ես երեկ ամբողջ օրը մտածում էի, մտածում,— պատասխանեց Բելան՝ արցունքն աշքերին,— զանազան դժբախտություններ էի հորինում. մեկ ինձ թլում էր, թե նրան վայրի վարագ է վիրավորել, մեկ—չեզեն է սարերը քարշ տվել... Իսկ հիմա ինձ արդեն թլում է, թե նա ինձ չի սիրում:

— Ճիշտն ասած, սիրելիս, զու ավելի վատ քան չեր կարող հորինել— Նա լաց եղավ, հետո հպարտությամբ գլուխը բարձրացրեց, արցունքները սրբց և շարունակեց.

— Եթե նա ինձ չի սիրում, նրան ո՞վ է խանգարում ինձ ետ ովարկել մեր տունը: Ես նրան չեմ ստիպում: Իսկ եթե սա այսպես շարունակվի, ես ինքս կհնուանամ. ես նրա սորկութին չեմ, ես իշխանի աղջիկ եմ...

Ես սկսեցի նրան համոզել.— «Ճափ՛ր, Բելա, ախր նա չո չի՝ կարող հավիտյան նստել այստեղ, ասես քո շրջագետին կարած. նա երիտասարդ մարդ է, սիրում է որսի ետևից ընկնել—ման կփա, ման ու ետ կգառնաւ: Իսկ եթե դու տիրես, նրան ավելի շուտ կձանձրացնես»:

— Ճշմարիտ է, ճշմարիտ,— պատասխանեց Բելան,— Ես ինձ ուրախ կպահեմ:— Ու քրքարով վերցրեց իր զահիրան, սկսեց երդել, պարել ու թոշկոտել ինձ մոտ. սակայն այդ էլ երկարատե չեղավ. նա նորից ընկավ անկողնի վրա ու ձեռքի րով ծածկեց երեսը:

Ի՞նչ անելի նրան: Ես, գիտեք, երբեք կանանց հետ չեմ

շփվել: Մտածեցի, մտածեցի, թե ինչով նրան սփոփիմ, ու ովինչ չպատասխանակ երկուս էլ լուռ էինք... Խի՛ստ առ առաջ դրություն:

Վերջապես, ես նրան ասացի. «Կուզե՞ս, գնանք պարսպանիրի վրա զրունակություն. Հիանալի եղանակ է»:

Սեպտեմբերն էր: Եվ իսկապես հիանալի, պայծառ ու ոշուղ օր էր, բոլոր սարերը երկում էին՝ ասես ափսեի մեջ զրած:

Մինք գնացինք լուռ ետ ու առաջ ման եկանք բերդի պարսպանիրի վրա. վերջապես նա նստաց ճմի վրա, ես էլ նստացի նրա մոտ: Դե, ճիշտն ասեմ, հիշելն էլ ծիծաղելի է, ես վազում էի նրա նոտեկց, ասես դայակի:

Մեր բերդը գտնվում էր բարձրադիր տեղում, պարսպանիրից սքանչելի տեսարան էր բացվում, մի կողմից մի քանի ձորակներով կրատավող լայն մարգագետին էր, որը վերջամարտիւմ էր անտառով, անտառն էլ ձգվում էր մինչև լեռների ջղման. լեռնաշղթայի վրա տեղ-տեղ առվներից ծուփ էր լորձրանում, երամակներ էին շրջում: Մյուս կողմից վազում էր ծանծաղ մի գետակ, և նրա մոտից սկսվում էր մի խիտ թփուտ, որը ծածկում էր Կովկասի զիսավոր լեռնաշղթային ժիացող քարքարոտ բարձունքները: Մենք նստած էինք բաստինի⁴ անկյունում, այնպես որ երկու կողմն էլ կարող լինը ամեն ինչ տհանել: Ահա տեսնում եմ. անտափց դուրս է զալիս գորշ ձի նստած մի մարդ, ավելի ու ավելի է մոտենում, և, վերջապես, կանդ է առնում գետակի մյուս ափին, մեղանից մոտ շարյութ սաժեն հնապարության վրա, ու ոկտում է կոտադածի պես շուրջանակի վաղեցնել իր ձին: Այս ի՞նչ ոյին է. «Եայի՛ր, Բելա,— ասում եմ ես,— դու ջահել ես, ու ուրիշ՝ սուր. այդ ինչ իսկիթ է, եկել է ո՞ւմ զվարճացնելու...»:

Նա նայեց ու ճշաց՝ «Դա Կազրիշն է...»:

— Այս ավագակ, մեր վրա ծիծաղելու է եկել, ի՞նչ է,— նորը նայում եմ. ի՞սկ որ Կազրիշն է. նրա թուխ ուիխն է, ինքն էլ զզգված շորերով, կեզտոտ՝ ինչպես միշտ: «Դա ի՞ն ձին է»,— ասաց Բելան, ձեռքս բռնելով. նա տերեկի պիս զզում էր, և աշքերը փայլում էին: «ՔՅը!— մտածեցի ես, — ու մեջ էլ, հոգյակս, ավագակի արյունը չի՝ լուսմ»:

Ալստեղ արի, — ասացի ժամապահին, — լավ զննիր

Հրացանդ ու էն զոշաղին վեր բեր. մի արծաթ մանեթ կստա-
նաս: — «Ասում եմ, ձերդ գերազն լություն, սակայն նա իր տե-
ղում չի կանգնում»: — «Հրամայիր թող կանգնի», — ծիծաղելով
ասացի ես... — «Ե՛յ, սիրելիս, — բղավեց ժամապահը, ձեռքի
թափահարումով նրան նշան անելով, — մի քիչ սպասիր, ի՞նչ
ես հոյի պես ֆոռում»: Կազբիչն իրոք կանգ առավ և սկսեց
ականջ զնել. երեխ կարծեց, թե իր հետ բանակցություններ են
սկսում. ինչպես չե... իմ գրենագերը նշան բռնեց... թրա՛խկի...
վրիպեց. — միայն վասողը խանձոցում բռնկեց: Կազբիչն աս-
պանդակեց ձին, և նա մի կողմ սատնեց: Կազբիչը կանգնեց
տապանդակներում, իրենց լեզվով ինչ-որ բան բղավեց, մտրա-
կով սպառնաց ու ծը՛լի:

— Բա շամաշեց՝ ր, — ասացի ժամապահին:
— Զերդ գերազն լություն, զնաց որ մենո՞ւ, — պատաս-
խանեց նա. — այնպիսի նղովված մարդիկ են, միանգամցից
չես կարող սպանել:

Քառորդ ժամ անց, Պեչորինը վերագրածավ որսից: Բե-
լան նրա վզովն ընկավ, և ոչ մի գանդատ, ոչ մի հանդիմանու-
թյուն երկարատև բացակայության համար... Այնպիս որ ես
բարկացա Պեչորինի վրա. «Ժ՞նչ եք անում, — ասացի ես, —
ախր Կազբիչը հենց այս բռնեխս գետակի մյուս ափին էր, և
մենք նրա վրա կրակեցինք. մեկ էլ տեսար՝ պատաշեցիք
նրան. դժվա՞ր բան է: Այդ լեռնցիները վրիմառու մարդիկ են.
գուք կարծում եք, թե նա զիմի չի՝ ընկնում, որ մասամբ դուք
եք օգնել Ազգամաթին: Իսկ ես գրազ կզամ, որ նա այսօր ճա-
նաշեց Բելային: Ես դիտեմ, որ մի տարի սրանից առաջ Բելան
նրան խիստ գուր էր զալիս, նա ինքն է ինձ ասել, և եթե
կարդին դալիմ հավաքելու հույս ունենար, անշուշտ կուզեր
Բելային...»: Այստեղ Պեչորինը մտքի մեջ ընկավ: «Այո՛, —
պատասխանեց նա, — հարկավոր է զգույշ լինել... Բելա՛,
այսօրվանից դու այլևս բերդի պարսպաթումը շպետք է
զնաս»:

Երեկոյան ես երկար բացատրություն ունեցա Պեչորինի
հետ. վաստ գալիս էր, որ նա փոխել էր իր վերաբերմունքը
դեպի այդ խեղճ աղջիկը. բացի այն, որ օրվա կեսը որս անե-
լով էր անցկացնում, նրա վերաբերմունքն էլ սառն էր դարձել,

Հազվագետ էր փաղաքշում աղջկան, և Բելան սկսել էր նկա-
տելի կերպով նիշարել, երեսը երկարել էր, մեծ աշքերծ
աղոտացել էին: Երբեմն հարցնում էր. «Ժնչո՛ւ հոգոց հանե-
ցիր, Բելա՛. գու տիրո՞ւմ ես»: — «Ոչ»: — «Դու որևէ բան ես
ուզո՞ւմ»: — «Ոչ»: — «Դու հարազատներիդ կարուն ես քա-
շո՞ւմ»: — «Ես հարազատներ չունեմ»: — Պատահում էր, որ
ամբողջ օրերով, բացի «այո՞-ից ու «ոչ»-ից նրա բերանից ու-
րիշ բան չէիր կարող գուրս քաշել:

Ա՛յ, Հենց սրա մասին է, որ ես սկսեցի ասել Պեչորինին:
«Նսցեք, Մաքսիմ Մաքսիմիչ, — պատասխանեց նա, — ես
դժբախտ բնավորություն ունեմ. արդյոք դաստիարակությունն
է ինձ այսպիս դարձել, թե աստված է ինձ այսպիս ստեղծել՝
լցիտեմ. միայն գիտեմ, որ եթե ես ուրիշների դժբախտության
պատճառ եմ, ապա ինքս էլ պակաս դժբախտ չեմ: Հասկա-
նալի է, որ այս վատ միխթարանք է նրանց համար, բայց բանն
այն է, որ այս այսպիս է: Իմ առաջին երիտասարդության ժա-
մանակ, այն բոպեց, երբ ես հարազատներիս խնամակալու-
թյան տակից դուքս եկա, ևս սկսեցի խննթորեն վայելել բոլոր
հաճույքները, որ կարելի է փողով ձեռք բերել, և, հասկանա-
լի է, այդ հաճույքներն ինձ զգվեցրին: Հետո ես ընտիր հա-
սարակություն մտա, և շուտով հասարակությունն էլ ինձ
ձանձրացրեց, սիրահարվում էի աշխարհիկ գեղեցկութիւնների,
և սիրվում, բայց նրանց սերը միայն գրառում էր իմ երևակա-
յությունն ու ինքնասիրությունը, իսկ սիրտս մնում էր զա-
տարկ... Ես սկսեցի կարդալ, ատվորել—դիտությունները նույն-
պիս ձանձրացրին. Ես տեսնում էի, որ ո՛չ փառքը, ո՛չ երջան-
կությունը բնավ կախված չեն դրանցից, որովհետև ամենաեր-
շանիկ մարդիկ տգետներն են, իսկ փառքը բախտի բան է, և
այն ձեռք բերելու համար հարկավոր է միայն հարպիկ լինել:
Այս ժամանակ ինձ ձանձրույթ պատեց... Շուտով ինձ Կովկաս
փոխադրեցին: Դա իմ կյանքի ամենաերշանիկ ժամանակն է:
Ես հույս ունեի, թե ձանձրույթը կյանք շոմի շեշենների գրն-
դակների տակ. իզո՞ւր. մի ամսից հետո ես այնպիս վարժ-
վեցի նրանց բզզոցին և մահվան մոտիկությանը, որ, ազնիվ
խոսք, մոծակների վրա ամելի ուշադրություն էր դարձնում,
և իս առաջվանից ամելի ձանձրույթ դրացի, որովհետև հա-

մարյա վերջին հուզսն կորցրի: Երբ ես թէլային իմ տանը տեսա, երբ առաջին անգամ, նրան ծնկներիս վրա պահած, համբուրքի նրա ու խոպոպները, ես՝ հիմարս, մտածեցի, թէ նա մի հրեշտակ է, որին կարեկցող բախտն է ինձ ուղարկել... ես նորից սիսակվեցի. վայրենուաւու սերը քիչ բանով է լավ մէծատոհմիկ խանումի սիրուց. մեկի տպատությունն ու պարզասրտությունը ձանձրացնում են նույնպիս, ինչպիս և մյուսի կոկետությունը: Եթե կուզեք, ես գեռ սիրում եմ նրան, ես շնորհակալ եմ նրանից մի քանի բավական քաղցր բուպեների համար, ես նրա համար կյանքս կտամ, բայց նրա Հետ ձանձրանում եմ... Հիմար իմ ես, թե շարագործ, զդիտեմ. բայց ճիշտն այն է, որ ես ես խոնաշարության շատ եմ ո.րդենի, փոցի ալիկի, քան նա, բարձր հասարակությունը վիշացրի է իմ հոգին, երևակայությունս անհանգիստ է, սիրում՝ անկուշտ, ինձ ինչ էլ որ շատ, քիչ է. տիրության ես նույնքան հեշտ եմ վարժվում, որքան և վայելիի, և կյանքս օր-օրի վրա ալիքի դատարկ է զառնում. ինձ մի միջոց է մնում. ճանապարհորդել: Հենց որ կարելի լինի, կմեկնեմ. միայն թե ոչ նկրուա, աստված՝ շանի. կմեկնեմ Ամերիկա, Արարիա, Հնդկաստան — գուցի թե որևէ տեղ մենամ ճանապարհին: Համենայն գիպս, ես համոզված եմ, որ այս վերջին սփոփանը շատ չի սպառվի՝ փոթորիկների և վատ ճանապարհների շնորհիվ: — Այսպես նա երկար խոսեց, և նրա խոսքերը հիշողությանս մեջ դրոշմվեցին, որովհետեւ առաջին անգամ էի այդպիսի խոսքեր լսում մի 25 տարեկան մարդուց և, աստուծով, վերցին անգամ... Զարմանալի՞ քան է: Ասացե՛ք խնդրեմ, — շարունակեց շաբաս-կապիտանը, ինձ գատնալով. — այս, զուր կարծեմ եղել եք մայրաքաղաքում, այն էլ մոտ ժամանակներս. մի՞թե այնտեղի ամրողը երիտասարդությունն է այդպիս:

Ես պատասխանեցի, որ շատ մարդիկ կան, որոնք նույն այդ բանն են ասում. որ նրանց մեջ երեկ կան և այնպիսիները, որոնք ճիշտ են ասում. սակայն, հուսահատությունը, ինչպիս բոլոր մողաները, սկսվելով հասարակության բարձր խավերից, իշել է դեպի ցածր խավերը, և սրանք շարունակում են կրել-մաշել այն, և որ այժմ նրանք, ովքեր ամենից շատ և խռապիս ձանձրանում են, շանում են թաքցնել այդ դժբախտու-

թյունը որպիս արատ: — Շտաբս-կապիտանը չհասկացավ այս նրությունները, օրորեց պլուսը և խորամանկորեն ժպտաց.

— Իսկ ձանձրանալու մողան երեկի դարձյալ ֆրանսիացիք են մտցրել:

— Ա՛Ն անգլիացիները:

— Ծզը՝, այս թե ինչ... — պատասխանեց նա, — Հէ՛ ոյ նրանք միշտ էլ մոլի հարբեցողներ են եղել...

Ես ակամա հիշեցի մի մոսկվացի խանումի, որը պընդում էր, թե Բալբոնը⁴⁵ ոչ այլ ոք է, բայց եթե մի հարբեցողը Սակայն շտաբս-կապիտանի դիտողությունն ավելի ներկլի էր. գինուց հեռու մնալու համար, նա, իհարկի, ճգնում էր հավատացնել իրին, որ աշխարհի բոլոր դժբախտությունները հարբեցողությունից են առաջ զալիս:

Ապա նա այսպիս շարունակեց իր պատմությունը.

— Կազրին այլևս չիրեաց: Սակայն շգիտեմ ինչու, ես չեմ կարողանում զիմիցոց հանել այն միտքը, որ նա իզոր չեր եկել և ինչ-որ վատ մտադրություն ունի:

Ահա մեկ անգամ Պետրինն ինձ մկնեց համոզել, որ իր հետ վարագի որսի գնամ. ես երկար շեմ ու չում արի. զի՛ վարագն ինձ համար ի՞նչ մի շտենված բան էր որ: Սակայն նա ինձ այնուամենայնիվ իր հետ քարշ տվեց: Մենք հետներս վերցրինք մի հինգ զինվոր և վաղ առավոտյան՝ ձիեր նստած՝ դնացինք: Մինչև ժամանել: Երեկի թե դժբախտ օր է բացվելը: Սակայն Գրիգորի Ալեքսանդրովիլիը, չնայած շոգին ու հոգիածությանը, չեր ուզում առանց որսի ետ զառնալ... Սեյ տեսակ մարդ էր. մտքումը ինչ որ գներ, պետք է կատարեիր. երեկի մանկության ժամանակ մայրը երես էր տվիլ... Վերջապիս կհօօրին գտանք անիծյալ վարագին. զը՞մի, զը՞մի... բան դուրս չեկավ. քաշվեց եղեգների մեջ: Այդքան դժբախտ օր էր... Ահա մենք, մի քիչ հանգստանալով, ուղերդեցինք տուն:

Մենք գնում էինք կողք-կողքի, լուս, սանձերը բաց թողած, և արդեն համարյա բերդի մոտ էինք. միայն թիւսուն էր

ծածկում բերդը մհկանից: Հանկարծ լսվեց մի կրակոց... Մենք իրար երեսի նայեցինք՝ մեղ շանթա՞րեց միենույն կասկածը... Գլխապատճռ սուրացինք կրակոցի կողմը. տեսնենք՝ պարսպաթմրին զինվորներն իրար գլխի են հավաքվել և դաշտի կողմն են ցուց տալիս, իսկ այնուհետ ամբողջ արագությամբ մի ձիավոր է սուրում, որն ինչ-որ սպիտակ բան ունի թամրի վրա: Գրիգորի Ալեքսանդրովիչը ծղրտաց ուլածդ շեշնից ոչ պակաս ուժով. Հրացանը հանից բնից ու սլացավ դեպի այդ ձիավորը. ևս՝ նրա ետևից:

Բարերախտաբար, անհաջող որսի պատճառով, մեր ձիերը շատ չէին շարչարվել. նրանք թոշում էին և յուրաքանչյուր ակնթարթ մենք ավելի ու ավելի էինք մոտենում մեր հետապնդյալին: Եվ, վերջապես, ևս ճանաչեցի Կազրիչին, միայն վկարողացա չովել, թե նա ինչ ունի իր առջևը՝ թամրի վրա: Այն ժամանակ ևս հավասարվեցի Պելորինին և ասացի նրան՝ «այդ Կազրիչն է»... Նա նայեց վրաս, գլխով արավ ու յորակեց ձին:

Աչա վերջապես մեզ գնդակի հասողության շահ մի տառածություն էր բաժանում նրանից. արդյոք կազրիչի ձին էր շատ հոգնած, թի մերինից վատն էր, միայն թե, շնայած Կազրիչի բոլոր շանքերին, նրա ձին այնքան էլ առաջ չեր գնում: Ես կարծում եմ, որ այդ բոլեին նա կհիշեր իր Դարավոյոցին...

Մեկ էլ տեսնեմ Պելորինը ձին քշած ահեղ նշան բռնից... «Եմ!» կրակեր, — բղավեցի ևս նրան, — խնայեցի իցըք. մենք առանց այդ էլ նրան կհասնենք: — Այս, այդ երիտասարդները, միշտ անտեղի են տարանում... Բայց կրակոց հնչեց, և դնդակը շարդեց ձիու ետևի ոտքը. ձին տաքացած ևս մի տասը ոստյուն գործեց, սայմաքեց ու շոքեց: Կազրիչը թամրից ցած թռավ, և այն ժամանակ մենք տեսանք, որ նա իր ձեռքերի վրա բռնած ուներ շաղրայի մեջ փաթաթված մի կին... Այդ թելան էր... խեղճ թելա: Կազրիչն ինչ-որ բան բղավեց մեզ իրենց լեզվով և դաշույնը բարձրացրեց թելայի վրա... Հապաղումն անտեղի էր. ևս, իմ հերթին, կրակեցի հույսու հաջողության վրա դնելով. գնդակը հավանորեն Կազրիչի ուսին դիպավ, որովհետեւ նա հանկարծ իշեցրեց ձեռքը... Երբ

ծովար ցրվեց, գետնին ընկած էր վիրավոր ձիս և նրա մոտ թելան. իսկ Կազրիչը, հրացանը գեն ցցելով, թփուռներով կատվի պես մաղպցում էր ժայռն ի վեր: Ես ուղարկում էի սուզում էի նրան վեր բերել այնտեղից, սակայն պատրաստի վիցք չկա՞ր: Մենք ցած թռանք ձիերից և նետվեցինք դեպի թելան, և նե՞զ կին. սա պառկած էր անշարժ, և արյունը վերքից հոսում էր գետի վիճա... Այդպիսի՛ էլ շարագործ. գոնե սրտին խփեր—դե, եթե այդպես էր անելու, գոնե մի անգամից հաշիվը կփակեր, թե չէ թիկունքին խփել... դա ամենաավագակայի՛ն հարվածն է, թելան ուշաթափիվել էր: Մենք պատուեցինք շաղրան և վերը որքան կարելի է պինդ կապեցինք. Պելորինն իդուր էր համբուրում նրա պազ շրթունքները—ոչինչ չեր կարող թելային ուշքի բերել:

Պելորինը ձի նստեց, ևս թելային գետնից բարձրացրի և մի կերպ Պելորինի թամրին նստեցրի: Պելորինը մի ձիուրով գրկեց նրան, և մենք ետ դարձանք: Մի քանի բոտեի լուսթյունից հետո, Գրիգորի Ալեքսանդրովիչն ինձ ասաց. «Ասեցի՛ք, Մաքսիմ Մաքսիմի՛չ, մենք սրան այս բնթացքով կենդանի տեղ չենք հասցնի»: — «Ճի՞շտ է», — ասացի ևս, և մենք ձիերի գլուխը բաց թողինք: Թերզի դռների մոտ մեզ մարդկանց բազմություն էր սպասում: Վիրավորին զգուշությամբ տարանք Պելորինի բնակարանը և բժշկի ետևից ուղարկեցինք: Բժիշկը թեպետև հարբած էր, բայց եկավ, զննեց վերքը և հայտարարեց, որ թելան մի օրից ավելի չի կարող ապրել. սակայն նա սխալվեց...

— Առողջացա՞վ, — հարցրի ես շտաբս-կապիտանին, նրա հեռքը բռնելով և ակամա ուրախանալով:

— Ո՛չ, — պատասխանեց նա, — սակայն բժիշկը նրանով սիսալվեց, որ թելան հրկու օր էլ ապրեց:

— Դե, բացատրեցեք ինձ, Կազրիչն ինչպէ՞ս էր առեանցի նրան:

— Աչա թե ինչպես. շնայած Պելորինի արգելելուն, թեյան բերդից գետակի ափ է դուրս գալիս: Շատ շոգ էր, զիտե՛ք: Թելան նստում է քարին և ոտները չուրը կախում: Ու Կազրիչը գողեգող մոտենում է—հա՛մի-թա՛մի՝ բռնում է նրան, փակում բերանը ու քարշ տալիս թփուտը, ապա այնտեղ հիծ-

նում է իր ձին ու — հայդա՝ Մինչ այդ Բելան կարողանում է ճշակ, պահակներն իրար են անցնում, կրակում են, բայց գընդակը վրիպում է, այստեղ մենք վրա ենք հասնում:

— Բայց Կազրին ինչո՞ւ էր ուսում Բելային փախցնել:

— Ի՞նչ եք ասում; Այդ շերքեկները հայտնի գողեր են. ինչ լավ չի պահված, չեն կարող շթացնել. շատ բան խկի պետք ներն էլ չի, բայց էլի գողանում են... Այդ արդեն նրանց բնափորության գիծն է: Բացի դրանից, Բելան նրան վաղուց էր դուր գալիս:

— Եվ Բելան մեռո՞վ:

— Մեռավ, միայն թե երկար առաջվեց, ու մենք էլ նրա հետ բավական ռոպապեցինք: Երեկոյան ժամի մոտ ատամն ուշքի եկավ. մենք նստած էինք նրա անկողնու մոտ. Հենց որ աշքերը բացեց, սկսեց կանչել Պելորինին: — «Ես այստեղ եմ, որ մոտք, ջանիկ» (այսինք, մեր լեզվով ասում, Հոգյակս), — պատասխանեց Պելորինը՝ նրա ձեռքն իր ձեռքերի մեջ առնելով: — «Ես կմեռնեմ», — ասաց Բելան: Մենք սկսեցինք սիրտ նրան, ասացինք, որ բժիշկը խոստացել է նրան անպայման բուժել: Նա վկուն օրորեց և դիպի պատը շուռ եկավ. մեռնել չե՞ր ուղում...

Գիշերը Բելան սկսեց զառանցել. նրա գլուխն այրված էր, ամրող մարմնով երեխն տեսնի գող էր անցնում. նա անկապ բաներ էր ասում հոր, եղբար մասին. նրա սիրոն ուղում էր իրենց սարերը, տունը... Հետո նու նույնական խոսեց Պելորինի մասին, նրան զանազան քնրուշ անուններ էր տալիս, կամ կշտամբում էր, որ նա սուսել է դիպի իր ջանիկը...

Պելորինը լուս լսում էր նրան՝ զրուխը ձեռքերին խոնարհեցի նրա արտեանունների վրա: Առյո՞ք խկապես նա չեր կարողանում լաց լինել, թե զնպում էր իրեն, չգիտեմ. գալով ինձ, պիտի ասեմ, որ ես դրանից ավելի սրտաշարժ բան չեմ տեսել:

Առավոտվա դեմ զառանցելն անցավ. մոտ մի ժամ Բելան պահած էր անշարժ, գոնատ և այնքան ուժապատճեն, որ հազիվ կազիվ կարելի էր նկատել. թե նա իրեն համբուրի: Պելորինը չոփեց նրա մաշճակալի առաջ, Բելայի դլուխը բարձրացրեց բարձից և իր շրթունքները հափեց նրա սառչող շրթունքներին: Բելան գողացող ձեռքերով ամուր գրկեց նրա պարանոցը, կարծես թե այդ համրուրով ցանկանում էր իր հոգին նրան տալ... Զէ՛, նա լա՛վ արավ, որ մեռավ: Դե, ի՞նչ կլիներ նրա դրույտնը, եթի Գրիփորի Ալեքսանդրովիչը նրան թողներ: Խսկ այդ վաղ թե ուշ կպատահեր...

զգաց իրեն և սկսեց խոսել, բայց, ի՞նչ եք կարծում, ինչի՞ց... Անք այդ տեսակ տարօրինակ միտք միայն մահացողի գլուխը կդա... Նա ցավում էր, որ ինքը քրիստոնյա չի, և որ այն աշխարհում իր հոգին երբեք չի հանդիպի: Գրիփորի Ալեքսանդրովիչը նույն և որ զրախտում տրիշ կին կլինի Պելորինի ընկերակցությունին: Իմ զգութը մի միտք եկամ՝ մահվանից առաջ մկրտել նրան: Ես այդ առաջարկեցի նրան: Նա անվճառական ինձ նայեց և երկար ժամանակ չէր կարողանում ոչ մի խոսք ասել: Վերջապես պատասխանեց, որ կմեռնի այն հավատքով, ինչ հավատքով ծնվիլ է: Այսպես անցավ մի ամրող օր: Ինչպես փոխվեց նա այդ օրվա ընթացքում: Գունատ այտերը ներս էին ընկել, աշքերը խիստ մեծացել էին, շրթունքներն այրվում էին: Նա ներքին շերմ էր զգում, կարծես թե կրծքում շիկացած երկաթ կար:

Եկալ մյուս գիշերը, մենք աշք չփակեցինք, շհուացանք նրա անկողնուց: Նա սարսափելի տանջվում, տնքում էր, և հենց որ ցալին սկսում էր մեղմել, ջանում էր հավատացնել Գրիփորի Ալեքսանդրովիչին, թե ինքը լավ է զգում, համոզում էր նրան, որ զնա քնի, նրա ձեռքն էր համրուրում, իր ձեռքերից բաց չէր թողնում այն: Առավոտվա դեմ նա սկսեց մահվան տագնապ զգալ, դեսուդեն նետվել, քանզեց վերքի կապը, և արյունը նորից հոսեց: Երբ վերքը կապեցինք, նա մի բոպի հանգստացավ և սկսեց խնդրել Պելորինին, որ նա իրեն համբուրի: Պելորինը չոփեց նրա մաշճակալի առաջ, Բելայի դլուխը բարձրացրեց բարձից և իր շրթունքները հափեց նրա սառչող շրթունքներին: Բելան գողացող ձեռքերով ամուր գրկեց նրա պարանոցը, կարծես թե այդ համրուրով ցանկանում էր իր հոգին նրան տալ... Զէ՛, նա լա՛վ արավ, որ մեռավ: Դե, ի՞նչ կլիներ նրա դրույտնը, եթի Գրիփորի Ալեքսանդրովիչը նրան թողներ: Խսկ այդ վաղ թե ուշ կպատահեր...

Հետեւյալ օրվա կեսը նա խաղաղ էր, լուսկյաց և հնագանդ՝ որքան էլ մեր բժիշկը նրան շատ էր տանջում խաշիլ-ներով ու հեղուկ դեղով: «Ներեցեր, — ասում էի ես բժշկին, — շէ՛ որ դուք ինքնիրդ ասացիր, որ նա անպայման կմեռնի, էլ ինչի՞ են պետք ձեր բոլոր պրեպարատները»: — «Այնուամենայնիվ ավելի լավ է, Մաքսիմ Մաքսիմիշ, — պատասխանեց

նա,— տալիս եմ, որ խիզն հանգիստ լինի»:— «Ամպ խիզն է»:

Կեսօրից հետո Բելան սկսեց ծարավից տառապել: Մենք բաց արինք պատուհանները, բայց դուրս ավելի շոգ էր, քան սհնյակում. մահմակալի մոտ սառուց դրինք. ոչինչ չօգնեց: Ես գիտեի, որ այդ անտանելի ծարավը մտացող վախճանի նշան է և այդ ասացի Պելորինին:— «Ճո՞ւր, զո՞ւր»...— ասում էր Բելան խոպոտ ձայնով, անկողնուց կիսով շափ բարձրանալով:

Պելորինը գունատվեց, դարձավ քաթանի գույնի, վերցրեց բաժակը, չուր լցրեց և նրան տվեց: Ես աշքերս փակեցի և սկսեցի աղոթք կարդալ — շեմ հիշում ինչ աղոթք... Այս՝ հարգելիս, ես շատ եմ տեսել, թի մարդիկ ինչպես են մեռնում հիվանդանոցներում և կռվի դաշտում, միայն թի այդ բոլորն այն չե, բոլորովին այն չէ... Մեկ էլ, խոստովանք լինի, ինձ ահա թի ինչն է վշտացնում. մահվանից առաջ նա ոչ մի անդամ ինձ շնչեց. այնինչ, կարծեմ ես նրան հոր պես էի սիրում... Է՛, աստված թող ների նրան... Եվ ճիշտը որ ասենք՝ ես ի՞նչ եմ, որ մահվանից առաջ ինձ շիշեմ...

Հենց որ Բելան չուրը խմեց, լավ զգաց, իսկ մի երեք րոպե անց՝ վախճաննեց: Հայելին մոտեցրինք շրթունքներին. Վրան ո՞չ մի հետք... Ես նենյակից դուրս տարա Պելորինին, և մենք զնացինք պարսպաթումքը. մենք կողք-կողքի երկար ետ ու առաջ քայլեցինք՝ ոչ մի խոսք շասելով, ձեռքերս ետևներս դրած. Նրա դեմքն առանձին ոչինչ չեր արտահայտում, և ես սրտնեղեցի. Ես որ նրա տեղը լինեի, վշտից կմեռնեի: — Վերջապես նա նստեց գետնին, ստվերով, և սկսեց ավազի վրա ինչ-որ բան գծագրել փայտիկով: Ես, գիտեի, ավելի շուտ քաղաքավարությունից դրված, ցանկանում էի մխիթարել նրան, սկսեցի խոսել. Նա զլովսը բարձրացրեց և ծիծաղեց... Ես փշաքաղվեցի այդ ծիծաղից... Ես զնացի դագաղ պատվիրելու:

Խոստվանք լինի, ես մասսամբ մտքերս ցրելու համար դրանով զրադիլեցի: Ես մի կտոր տերմալամա⁴⁶ ունեի, զրանով պատեցի դագաղը և զարդարեցի շերքեղական արձաթե տրեզ-

ներով, որ Գրիգորի Ալեքսանդրովիչն էր զնած եղել Բելայի համար:

Մյուս օրը վաղ առավոտյան մենք Բելային թաղեցինք բերդից գուրս, զնոտակի ափին, հենց այն կամրջի մոտ, որտեղ նա վերջին անգամ նստած էր եղել: Նրա շիրիմի շորջը հիմա ածել են սպիտակ ակացիայի և թանթրվենու թիւնը: Ես ուղղում էի խաչ զնել, բայց գիտեի, անհարմար էր: Չէ՝ որ նա քրիստոնյա չէր...

— Իսկ Պելորինն ի՞նչ եղավ, — Հարցըրի ես:

— Պելորինը երկար ժամանակ տկար էր, նիշարեց խեղճը. միայն թե դրանից հետո մենք էլ երբեք շխոսեցինք Բելայի մասին... ես տեսնում էի, որ այդ նրան հաճելի չի լինի. Էլ ինչո՞ւ խոսեի: Մի երեք ամիս անց նրան նշանակեցին ե... գումզը, և նա Վրաստան մեկնեց: Այդ ժամանակից ի վեր մենք շենք հանդիպել իրար... Հա՛, հիշում եմ, մոտ ժամանակներս մեկն ինձ ասաց, որ նա Ծուաստան է վերադարձել, սակայն կորպուսին վերաբերյալ հրամաններում արդ չի եղել: Ասենք, լուրերը մեզպեսներին ուշ են համառմ:

Այսուղ նա երկար դիսերտացիա⁴⁷ սկսեց այն մասին, թե որքան տհաճ բան է նորությունները մի տարով ուշ իմանալը. Հավանաբար նրա համար, որպեսզի խեղճի տխուր հիշողությունները:

Ես նրան չեի բնդհատում և ոչ էլ լսում էիր:

Մեկ ժամից մեկնելը հնարավոր եղավ. փոթորիկը հանդարտվեց, երկինքը պարզեց, և մենք ճանապարհ ընկանք: Ճանապարհին ես ակամայից նորից խոսակցություն բաց արի Բելայի ու Պելորինի մասին:

— Իսկ դուք շե՞ք լսել, թի Կազբիչն ի՞նչ եղավ, — Հարցըրի ես:

— Կազբիչը: Ճիշտն ասած՝ չգիտեմ... Լսել եմ, որ մեր դասավորության աջ թիւ կողմերում շապուղների⁴⁸ մեջ ինչո՞ւ Կազբիչ կա, մի կտրիճի մեկը, որը կարմիր բեշմետը հագին, ձին հեծած՝ դանդաղ շրջում է մեր կրակոցների տակ և ամենաքաղաքավարի ձևով զլուխ է տալիս, երբ զնդակն իր մոտով է անցնում բզզալով. բայց հազիվ թի դա այն Կազբիչը լինի...

Քորիում մենք բաժանվեցինք Մաքսիմ Մաքսիմիլիսից. ևս փոստի կառով գնացի, իսկ նա, ծանր քեռ ունենալու պատճառով, չէր կարող ինձ հետեւել: Մենք հույս շունեինք այլեւ երբեմեւ հանդիպելու իրար, սակայն հանդիպեցինք, և, եթե կցանկանար, ևս կպատմիմ ձեզ. այդ մի ամբողջ պատմություն է... Խոստովանեցե՛ք, սակայն, որ Մաքսիմ Մաքսիմիլլը հարգանքի արժանի մարդ է... եթե դուք այդ խոստավանեք, ևս լիովին վարձատրված կլինեմ իմ, գուցե խօստ չափաղանց երկար, պատմության համար:

II

ՄԱՔՍԻՄ ՄԱՔՍԻՄԻԼ

Մաքսիմ Մաքսիմիլից բաժանվելով, ևս արագորեն ուղաց Տերեկի և Դարյալի կիրճերով, նախաճաշու արեցի Կապեկում, թերը խմեցի Լարտում, իսկ ընթրիքին հասա Վլադիկավագ: Ազատում եմ ձեզ լեռների նկարագրությունից, բացադաշություններից՝ որոնք ոչինչ չեն արտահայտում, պատկերներից, որոնք ոչինչ չեն պատկերում, մանավանդ այն մարդկանց համար, ովքեր այդտեղ չեն եղել, և վիճակագրական դիտություններից՝ որոնք բացարձակապես ոչ ոք չկարգա:

Ես իշխանեցի Հյուրանոցում, որտեղ իշխանում են բոլոր համփորդները, և որտեղ, չնայած գրան, չկա մեկը, որին կարգադրես վասիան տապակել կամ չէի եփել, որովհետև երեք հաշմանդամները, որոնց խնամքին հյուրանոցը հանձնված է, այնքան հիմար են, իամ այնքան հարրած, որ նրանց ոչինչ չես կարող անել տալ:

Ինձ հայտնեցին, որ ես այստեղ պետք է ապրեմ էլի երեք օր, որովհետև «օկազիան»⁴⁹ եկատերինողրադից դեռ չէր եկել, ուստի և ես դառնալ չէր կարող Այս քեզ օկազիան⁵⁰... Բայց վատ կալամբուրը⁵¹ սփոփանք չէ ուստ մարդու համար, և ես, ժամանակը դուր անցկացրած չինելու համար, մտածեցի գրի առնել Մաքսիմ Մաքսիմիլի պատմածը Թելայի մասին, չինթագրելով, թե զա վիպակների երկար շղթացի առաջին

օլակն է Անելու. տեսնո՞ւմ եք, քիչ կարևոր գեապքը երբեմն ինչպիսի՝ զաժան հետեւանքներ է ունենում... Իսկ դուք գուցե շգիտեք, թե ինչ է «օկազիան»: Այդ պաշտպան զորամաս է, որ բաղկացած է հետևակների կես վաշտից և հրանոթից. Վլագիկավկազից եկատերինողրադ գումակները գրանց պաշտպանության տակ են անցնում Կաբարդայով:

Առաջին օրը ևս շատ տաղտկալի անցկացրի. մյուս օրը, վաղ առավոտյան, տեսնեմ՝ բակ է մտնում մի սալլակ... Այս, Մաքսիմ Մաքսիմիլ... Մենք հանդիպեցինք իրար որպես հին բարեկամներ. Ես իմ սենյակին առաջարկեցի նրան: Նա նազ շարեց, մինչև իսկ ձեռքն ուսիս խփեց և ժպտալու պես բերանը ծռմուց: Այդպես առօրինակն է...

Մաքսիմ Մաքսիմիլը խորապես գիտակ էր խոհարարական արքիստում. Նա զարմանալի լավ տապակեց փասիանը, հաջող կերպով վրան վարունգի աղաջուր լցրեց, և ես պետք է խոստովանեմ, որ առանց նրան ստիպված պետք է լինեի ցամաք կերակրով սնվել: Կախեթի գինու մի շիշն օգնեց մեզ մոռանալու ճաշատեսակների համեստ քանակը, որ ընդամենը մեկն էր, և, ծխամորճներս կացնելով, մենք նստեցինք. Ես՝ պատուհանի մոտ, նա՝ վառած վառարանի մոտ, որովհետև օրը խոնավ էր ու ցորու: Մենք լուս էինք: Ինչի՞ մասին պիտի խոսեինք... Նա արդեն պատմել էր ինձ իր մասին այն ամենը, ինչ հետաքրքրական էր, իսկ ես պատմելու բան շունեի: Ես պատուհանից գուրս էի նայում: Հետզհետե ավելի ու ավելի լայն փոփող Տերեկի ափին ցրված բազմաթիվ ցածր տնակները երեսում էին ծառերի արանքից, իսկ ավելի հեռովում ժանիքամոր պարսպի պես կապուցին էին տալիս լիոները, և նրանց ետեւից նայում էր Կազբեկը իր կարդինալական⁵² սպիտակ զգակը գլխին: Ես մտքում հրաժեշտ էի տալիս նրանց ափսոսում էի...

Այսպիս մինք երկար նստեցինք: Արևը ծածկվում էր պաղ գագաթների ետեւը, և սպիտակավուն մշուշը սկսում էր տարածել հովիտներում, երբ փողոցից լովեց ուզենորի կառքի զանգակի զնոցը և կառապանների կանչ: Հյուրանոցի բակը մտան աղտոտ հացերով լի մի քանի սալլակներ և նրանց ետեւից դատարկ ճամփորդական կոլյակական⁵³: Նրա թերեւ ըն-

թացքը, հպամար կառուցվածքը և պճնատես արտաքինն ինչ-որ արտասահմանյան կնիք ունեին: Նրա ետևից գալիս էր մեծ քեղերով, հաղին վենդերկա⁵⁴, լաքեցի համար բավական լավ հագուստով մի մարդ. նրա կոշման նկատմամբ չէր կարելի սխալվել, երբ տեսնում էր լոթու շարժումները, որով նա մոխիրը թափ էր տալիս ծխամորճից և բզավում կառապանի վրա: Ակներև էր, որ նա ծույլ աղայի երես տված ծառա էր, ուսական Ֆիգարոյի⁵⁵ պիս մի բան: «Ասա, սիրելիս,— Հարց-րի նրան պատուհանից,— այդ ի՞նչ է՝ օկա՞զիս է եկելու:— Նա բավական հանդուպն նայեց, ուղղեց իր փողկապը և երեսը շուռ տվեց. նրա կողքից բայլող հայր ժպտալով պատասխանեց նրա փոխարեն, որ իսկապես օկազիս է եկել և վաղն առավոտյան ետ կմատ:— «Փառք աստծու,— ասաց Մաքսիմ Մաքսիմիչը, որ այդ ժամանակ մոտեցել էր պատուհանին:— Ի՞նչ հրաշալի կոլյասկա է,— ավելացրեց նա, — Հավանորեն որևէ աստիճանավոր հետաքննության է գնում Թիֆլիս: Երևի ծանոթ չէ՝ մեր սարերին: Ո՛չ, սխալվում ես, սիրելիս. նրանք խնայել զգիտեն, կցնցահարեն թեկուց ինգլիզական կոլյասկան:— Իսկ զա ո՞վ կարող է լինել, մոտ գնանք՝ տեսնենք ո՞վ է... Մենք միջանցք դուրս եկանք: Միջանցքի ծայրին բացված էր կտղիք սենյակը տանող դուրս: Լաքեյն ու կառապանը ճամպրուկներն այնտեղ էին կրում:

— Էսի՛ր, ախալեր,— Հարցրեց նրան շտարս-կապիտա-նը, — այդ հիանալի կոլյասկան ո՞ւնի է... Հը... Սքանչելի՝ կոլյասկա է...— Լաքեյը, առանց երեսը մեր կողմը դարձնելու, ինչ-որ բան էր քրթմնջում ինքնիրեն, ճամպրուկի կապերն ար-ձակեցով: Մաքսիմ Մաքսիմիչը բարկացավ. նա շարժեց այդ անքաղավարիի ուսը և ասաց. «Ես քեզ եմ ասում, սիրե-լի՛ս...»

— Ո՞ւմ կոլյասկան է... Իմ պարոնինը...

— Իսկ ո՞վ է քո պարոնը:

— Պեշորինը...

— Ի՞նչ ես ասում, ի՞նչ ես ասում: Պեղո՞րին... Ա՛խ, աստված իմ... արդյոք նա Կովկասում չի ծառայել...— բա-ցագանչեց Մաքսիմ Մաքսիմիչը, իմ թեքից քաշելով: Նրա աշ-քերում ուրախություն էր փայլում:

— Ծառայել է, կարծիմ, բայց ես նոր իմ նրանց⁵⁶ մոտ ծառայության մտել:

— Դե՛մ, ի՞նչ ոկե, իգա՞րկե... Դրիգորի Ալեքսանդրո-վի՞չ... Սյապես է նրա անունը, չէ՞... Ես և քո աղան մտերիմ ծանոթներ ենք եղել, — ավելացրեց նա, բարեկամաբար խփե-լով լաքեյի ուսին այնպես, որ նա երերաց...

— Կացեր, տեր իմ, զուք ինձ խանդարում եք, — ասաց լաքեյը, դեմքը խոժողելով:

— Ի՞նչ տեսակն ես, տո՛... Բայց դու դիտե՞ս արգյոր՝ ես և քո աղան մտերիմ բարեկամներ ենք եղել, միասին ենք ապրել... Իսկ նա ինքը որտե՞ղ մնաց...

Ծառան հայտնեց, որ Պեղորինը մնացել է ընթրելու և գի-շերելու պնդապետ Ն-ի մոտ...

— Իսկ երեկոյան այս կողմը չի՝ անցնի, — ասաց Մաք-սիմ Մաքսիմիչը, — կամ թե դու, սիրելիս, որևէ բանի չե՞ս գնալու նրա մտա... Թե զնաս, ասա, որ Մաքսիմ Մաքսիմիչն այստեղ է, այդպես էլ ասա... Նա արդեն դիտի... Ես քեզ մի չինդ շահանոց⁵⁷ արադի փող կտամ...

Լաքեյն արհամարհական արտահայտություն տվեց գեմ-քին՝ այդպիսի համեստ խոստում լսելով. սակայն վստահեց-րեց Մաքսիմ Մաքսիմիչին, որ նրան հանձնարարությունը կկատարի:

— Ախր իսկուն վագելով կգա՞... — Հաղթական տեսք բնդունելով՝ ասաց ինձ Մաքսիմ Մաքսիմիչը, — զնամ դարբա-սից դուրս նրան սպասեմ... Է՞ս, ափսո՞ս, որ ես Ն-ի հետ ծանոթ չեմ...

Մաքսիմ Մաքսիմիչը նստեց դարբասից դուրս գտնվող նստարանի վրա, իսկ ես գնացի իմ սենյակը: Խոստովանում եմ, ես ևս որոշ անհամբերությամբ էի սպասում այդ Պեղորինի հայտնվերան. թեև, շտարս-կապիտանի պատմածների հիման վրա, ես շատ էլ նպաստավոր կարծիք չեի կազմել նրա մա-սին, սակայն նրա բնավորության մի քանի գծերն ինձ խիստ ուշագրավ էին թվում: Մի ժամանակ հաշմանդամը բերեց եռացող հեշտահեն ու թեյնոցը: — «Մաքսիմ Մաքսիմիչ, թել չե՞ք կամհնա», — կանչեցի նրան պատուհանից:

— Ենորհակալ եմ, ախորժակ չի քաշում:

— ևսեք, խմե՞ք: Տեսեք, ախր արդեն ուշ է, ցուրտ:

— Ոչի՞նչ. շնորհակալ եմ...

— Դե՛, ինչպես ձեզ հաճելի է:— Ես մենակ սկսեցի թեյ խմել, մի տասը բռպեցի հետո ներս մտավ իմ ծերուկը:— «Ախր դուք իրավացի եք. էլի լավ է թեյը խմել, բայց ես գեղ սպասում էի... Նրա ծառաբազն արդեն վաղուց նրա մոտ է գնացել, բայց երկի որևէ բան ուշացրեց»:

Նա շտապով կուլ տվեց մի գավաթ, երկրորդից հրաժարվեց ու նորից գարբասից դուրս գնաց՝ ինչ-որ անհանդիսա վիճակում. ակներև էր, որ ծերուկին վշտացնում էր Պեշորինի անուշադիր վերաբերմունքը, մանավանդ որ նա քիշ առաջ ինձ պատմել էր իր և Պեշորինի բարեկամության մասին ու գեռ մի ժամ առաջ հավատացած էր, թե նա, հենց որ իր անունը լսի, վագելով կտա:

Արդեն ուշ էր և մտվթ, երբ ես նորից բացեցի պատուհանը և սկսեցի կանչել Մաքսիմ Մաքսիմիշին, ասելով, որ քնելու ժամանակ է. նա ինչ-որ բան քրթմնչաց ատամների արանքով. ես կրկնեցի հրավերը, նա ոչինչ չպատասխանեց:

Շինելի մեջ փաթաթվելով և մոմք պառկոցի վրա թողնելով, ես պառկեցի բազմոցի վրա, շուտով ննջեցի և հանդիսա կրնեի, եթե արդեն շատ ուշ Մաքսիմ Մաքսիմիշը, սենյակ մտնելով, ինձ շարթնացներ: Նա ծխամորձը սեղանին նետեց, սկսեց քայլել սենյակում, վառարանը խառնել, վերջապես պառկեց, բայց երկար ժամանակ հագում, թրում, շուռումուն էր գալիս...

— Հո փայտողիներ չե՞ն կծում ձեզ,— հարցրի ես:

— Հա՛, փայտողիներ...— պատասխանեց նա, ծանր հառաշելով:

Մյուս օրն առավոտյան ես վաղ արթնացա. բայց Մաքսիմ Մաքսիմիշը կանխել էր ինձ: Ես նրան գտա դարբասի մոտ, նստարանին նստած:— «Ես պիտք է պարհանի մոտ գնամ, — ասաց նա, — խնդրում եմ, եթե Պեշորինը զա, մարդ ուղարկեք իմ հետեւցի...»:

Ես խոսուցած: Նա վաղեց, կարծես թե նրա մարմնի անդամները նորից երիտասարդական ուժ և ճկունություն էին սուացել:

Փոքր-ինչ ցուրտա, բայց հիանալի առավոտ էր: Ոսկե ամպերը բարդվել էին սարերի վրա, ասես օգեղեն սարերի մի նոր շարք լինեին. գարբասի առաջ տարածվում էր լայն հրապարակ. նրանից գենը՝ շովայրով ամրութիւն էր խոնվել, որովհետև կիրակի էր. բորիկ օս տղաները, շալակներին հացամեղրի մախաղներ, իմ շուրջն էին պատվում. ես վոնդեցի նրանց, նրանցով վրալվելու զլուխ չունեի, բարի շատրա-կապիտա-նի անհանդատությունն ինձ էլ էր վարակել:

Դեռ մի տասը բռպեց էլ շանցած, հրապարակի ծայրին երևաց նա, ում մենք սպասում էինք: Նա գալիս էր գնդապետ նոր հետ, որը, Պեշորինին հյուրանոց հասցնելով, հրաժեշտ տվեց նրան ու ծովեց դեպի բերդը: Ես իսկույն հաշմանդամին ուղարկեցի Մաքսիմ Մաքսիմիշի ետեւից:

Պեշորինին ընդառաջ դուրս եկավ նրա լաբեյը և զեկուցեց, որ իսկույն կսկսեն լծել. Նրան մի տաւիսով սիգար մատուցեց ու, մի քանի կարգադրություն ստանալով, գնաց հոգալու: Նրա պարտնը, սիգարը վառելով, մի երկու անգամ հորանչեց ու նստեց դարբասի մյուս կողմի նստարանի վրա: Այժմ հս ձեզ համար պետք է նկարեմ նրա պատկերը:

Նա միջահասակ էր: Նրա բարեկասզմ, բարակ իրանը և լայն թիկունքն ապացուցում էին, որ նա ունի ամուր կազմվածք, որն ընդունակ է դիմանալու քոչվորական կյանքի բոլոր դժվարություններին և կլիմաների փոփոխություններին, մի կազմվածք, որին չէին հաղթել ո՛չ մայրաքաղաքի ցոփ կյանքը, ո՛չ էլ հոգեկան փոթորիկները. Նրա փոշոտ թավիշե սերթուկը, որի միայն ներքեւ երկու կոճակներն էին կոճկած, հնարավորություն էր տալիս զիտելու շլացնելու աստիճան մաքուր սպիտակեղենը, որ գրուորում է կարգին մարդու սովորությունները. տեղ-տեղ կեղաստված նրա ձեռնոցները թվում էին դիտմանք իր փոքրիկ արիստոկրատիկ ձեռքի շափով կարած, և երբ նա մի ձեռնոցը հանեց, ինձ զարմացրեց նրա գունատ մատների վտիտությունը: Նա ուներ ծուլ և անփուլթ քայլվածք, բայց ես նկատեցի, որ ձեռքերը չեր թափահարում. փոքր-ինչ ծածկամիտ բնավորության ստույգ նշան: Սակայն սրանք իմ սեփական նկատանքներն են, որոնք հիմնոված են իմ իսկ դիտողության վրա, և ես բնավ չեմ ցանկա-

նաև հարկադրել ձեզ, որ կուրորեն հավատաք դրանց: Երբ նա նստարանին նստեց, նրա ուղիղ իրանը կուցավ, տևո նրա ողնաշարը ոչ մի ուկրիկ չուներ, նրա ողջ մարմնի գրությունն արտահայտեց ինչ-որ ներփային թուզություն. նա այնպես էր նստած, ինչպես բաղզակյան Յօ-ամյա կոկեառուհին⁵⁵ էր նստամ իր բժրուկ բաղկաթոռին՝ հոդնեցուցիչ պարահանդեսից հետո: Նրա երեսին առաջին հայացքը ցցելով, ևս կասիի, որ նրա տարիքը 23-ից ավելի չէ, թեպետ հետապատրաստ էի նրան 30 տարեկան համարել: Նրա ժամանակի մեջ ինչ-որ մանկական բան կար: Կաշին ուներ ինչ-որ կանացի քնքություն. ի ընե գանգուր, շեկ մազերն աճնպես գեղեցկորեն էին բուրրում նրա գունատ, աղնվական ճակատը, որի վրա, միայն երկար տնտեղլով, կարելի էր նկատել միմյանց հատող և հավանորեն ցաման կամ անհանգիստ հոգեկան կացության բուգեներին շատ ավելի ցայտուն կերպով ուրվագծվող կնճիռների հետքերը: Չնայած նրա մազերի բաց գույնին, բեղերն ու հոնքերը սկ էին, իսկ դա մարդու ազնվացեղ լինելու նշան է, ինչպես սպիտակ ծիու սկ բաշն ու սկ ազին: Դիմանկարը լրացներու համար ես կասեմ, որ նրա քիչ ծայրը մի քիչ էր ցցված, ատամները շլացնելու աստիճան սպիտակ էին և աշքերը՝ շատանակագույն. աշքերի մասին ես մի բանի խոսր էլ պիտք է ասեմ:

Նախ երբ նա ծիծաղում էր, այդ աշքերը չէին ծիծաղում:— Զեզ չի պատահել որոշ մարդկանց մեջ այսպիսի տարօրինակություն նկատել... Դա կամ շար բնավորության, կամ խոր մշտական վշտի նշան է: Կիսով շափ վար թողած թերթերունքների տակից նրանք փայլում էին ինչ-որ ֆուֆուրային փայլով, եթե կարելի է այսպէս արտահայտվել: Դա հոգեկան կրակի կամ վառ երևակայության ցոլացում չէր. դա մի փայլ էր, որ նման էր ողորկ պողպատի փայլի՝ շլացնող, բայց պաղ. նրա հայացքը երկարառու չէր, բայց թափանցող էր և ծանր, անհամեստ հարցի տհաճ տպավորություն էր թողնում և կարող էր հանդուն թվալ, եթե այնքան անտարբեր-հանգիստ շիներ: Այս բոլոր նկատանքներն իմ միտքն եկան գուցի միայն այն պատճառով, որ ես գիտեի նրա կյանքի մի բանի մանրամասնությունները և գուցի ուրի-

շի վրա նրա տեսքը բոլորովին տարրեր տպավորություն գործեր. բայց քանի որ դուք նրա մասին ոչ ոքից բան չեք լսել, բացի ինձանից, ուստի ակամացից պիտք է բավականանաք այս պատկերով: Ի վերջո կասեմ, որ նա առհասարակ բավական գեղեցիկ էր և ուներ այն յուրահատուկ դեմքերից մեջ, որոնք առանձնապես դուք են գալիս կանանց:

Չիերն արդեն լծված էին. զանգակը մեկ-մեկ զնդում էր անուրի տակ, և լաքեյն արդեն երկու անգամ մտտեցել էր Պեչորինին՝ զեկուցելով, որ ամեն ինչ պատցաստ է, իսկ Մաքսիմ Մաքսիմիշը դեռ չէր հայտնվում: Բարեբախտաբար Պեչորինը Կովկասյան լեռնաշղթայի կապույտ ժանիքներին նայելով՝ մտածմունքի մեջ էր ընկրմվել և կարծես թե բորբոքին չէր շատապում ձանապարհ ընկնելու ևս մոտեցա նրան. «Եթե դուք կամենաք մի փաքը էլ սպասել,— ասացի ես,— ապա բավականություն կունենաք տեսնվելու ձեր հին մտերիմ ժանոթի հետ»:

— Ա՛խ, Ճի՛շտ որ,— արագ պատասխանեց նա, — ինձ երեկ ասացին. բայց որտե՞ղ է նա:— Ես դարձա գեափի հրապարակը և տեսա Մաքսիմ Մաքսիմիշին, որ վազում էր՝ որքան ուժ ուներ... Մի քանի բոպեկց նա արդեն մեղ մոռ էր. նա հազիվ էր կարողանում շնչել. բրոյինքը հեղեղի պիս թափվում էր նրա երեսից. սպիտակ մազերի թաց փնջիկները, գգակի տակից դուրս պրծնելով, կպել էին ճակատին. նրա ծնկները դողում էին... Նա ուզում էր Պեչորինի վզովն ընկնել, բայց սա բավական սառը, թեպետև բարեհամբույր ժպիտով, ձեռք մեկնեց նրան: Շտարս-կապիտանը մի բոպե քարացավ, բայց հետո ագահարար բռնեց նրա ձեռքն իր երկու ձեռքերով, նա դեռ անկարող էր խոսել:

— Որքա՞ն տրախ եմ ես, թանկագին Մաքսիմ Մաքսիմիշ: Է՛, ինչպե՞ս եք, — ասաց Պեչորինը:

— Իսկ... դո՞ւ... իսկ դո՞ւ...— արցունքն աշքերին՝ քրթմնցաց ծերուկը...— քանի՛ տարի է... քանի՛ օր... իսկ այդ ո՞ւր...

— Գնում եմ Պարսկաստան և ավելի հեռու...

— Մի՛թե այս բոպեին... Մի կացե՛ք, թանկագի՞նս...

Մի՞ թի այս բողեիս պիտի բաժանվենք... Ինչքա՞ն ժամանակ է շնչը տեսնել...

— Իմ գնարու ժամը հասել է, Մաքսիմ Մաքսիմի՛չ, — եղավ նրա պատասխանը:

— Աստված իմ, աստված իմ, բայց այդ ո՞ւր եք արդպես շտապում... Ես այնքա՞ն բան կուզեի ձեզ ասել... այնքա՞ն բան հարցնել... Հը՛, ո՞նց է, պաշտոնաթո՞ղ եք... ինչպէ՞ս... ի՞նչ էիք անում...

— Զանձրանում էի, — պատասխանեց Պելորինը՝ ժըլտով:

— Եսկ հիշո՞ւմ եք մեր օր-ապրուստը բերդում... Որսի համար հիանալի երկիր է... Չէ՞ որ դուք որսի թունդ սիրացր էիք... իսկ թէլա՞ն...

Պելորինը հագիվ նկատելի դունատվեց ու շրջեց երևը...

— Այսո՛, հիշում եմ, — ասաց նա, համարյա իսկուն բռնադրուի կերպով հորանցելով...

Մաքսիմ Մաքսիմիչն սկսեց խնդրել նրան էլի մի երկու ժամ իր հետ մնալ: «Մենք հիանալի կճաշենք, — ասում էր նա, — ես երկու փասխան ունեմ. իսկ այստեղի Կախնիթի զինին սրանչելի է... Հասկանալի է, այն չէ, ինչ վրաստանում, սակայն լավագույն տեսակին է... Մենք կխսենք... դուք ինձ կպատմեք Պետերբուրգի ձեր կյանքից... Հը՛...»:

— Ճշմարիտ, ես պատմելու բան չունեմ, թանկագին Մաքսիմ Մաքսիմիչ... Սակայն մնաք բարով, իմ գնալու ժամանակն է... ես շտապում եմ... Շնորհակալ եմ, որ շեք մոռացել... — ավելացրեց նա՝ Մաքսիմ Մաքսիմիչի ձեռքը բռնելով:

Տերուվը հոնքերը կիտեց... Նա տիտր էր և բարկացած, թեպետ ջանում էր թաքցնել այդ: «Մոռանա՛լ, — մրիմրթաց նա, — ե՞ս որ ոչինչ չեմ մոռացել... Է՞հ, աստված ձեզ հիտ... Ես այսպիս չէի ուզում ձեզ հանդիպել...»:

— Դե բա՛վ է, բա՛վ է, — ասաց Պելորինը, բարեկամաբար գրկախառնվելով նրա հետ, — մի՞թե ես նույնը չեմ... ի՞նչ արած... յուրաքանչյուր մարդ իր ճանապարհն ունի... Կհաջողվի՞ արդյոք նորից հանդիպել իրար—աստված գի-

տե... — Այս ասելիս, նա արդեն նստած էր կոլյասկայում, և կտուալանն արդեն սկսել էր երասմանները քաշել:

— Կա՛ց, կա՛ց, — բղավեց հանկարծ Մաքսիմ Մաքսիմիչը, ձեռքը զցելով կոլյասկայի դռնակին, — քիչ էր մնացել բուրովին մոռանայի... Զեր թղթերն ինձ մուտ են մնացել, Գրիգորի Ալեքսանդրովիչ... Ես հետո ման եմ ածում... կարծում էի՛ ձեզ Վրաստանում կտանեմ, բայց աշա թե որտեղ աստուծու կամեցողությամբ տեսնվեցինք... Այդ թղթերն ի՞նչ անեմ...

— Ինչ կուզեք, — պատասխանեց Պելորինը: — Մնաք բարով...

— Ուրիշն դուք Պարսկաստան հ՞ք գնում... իսկ ե՞ր կվերադառնաք... — բղավեց նրա հոտից Մաքսիմ Մաքսիմիչը...

Կոլյասկան արդեն հնոու էր, բայց Պելորինը ձեռքով մի նշան արեց, որ հետեւյալ կերպ կարելի էր թարգմանել՝ հազի՞վ թե և ինչի՞ համար...

Արդեն վաղուց էր, որ չեր լսվում ոչ զանգակի ձայնը, ոչ էլ անխների թխոցը քարքարու ճանապարհին, իսկ խնեղն ծներուիը դեռ կանդած էր նույն տեղում՝ խոր մտածմունքի մեջ ընկած:

— Հը՛մ, — վերջապես ասաց նա, ջանալով անտարեր տեսք ընդունել, թեև սրտնեղության արցունքը ժամանակ առ ժամանակ փայլում էր նրա արտևանունքների վրա. — Ի՞արկե, մինք մտերիմ ծանոթներ էինք, բայց գե մտերիմ ծանոթներն ի՞նչ են ներկա դարսում... Ես նրա համար ի՞նչ եմ: Ես հարուստ չեմ, բարձրաստիճան մարդ չեմ ու հենց տարիքովն էլ բոլորովին նրա զույգը չեմ... Տեսնո՞ւմ ես, ինչ պճնամուն է զարձել՝ հինց որ նորից է եղել Պետերբուրգում... Ի՞նչ կույսկա է... ինչքա՞ն ծանրոց կա վրան... ու լարեյն էլ այնպի՞ս հպարտն է... — Այս խոսքերն արտասանվեցին հեգնական ժպիտով: — Ասեք, — շարունակեց նա՝ ինձ զամալով, — Հը՛, սրա մասին ի՞նչ կարծիքի եք... Դե, ի՞նչ սատանա է նրան հիմա Պարսկաստան քշում... Միծաղելի է, աստված վկա, ծիծաղելի է... Ասենք հս միշտ գիտեի, որ նա թեթևութիկ մարդ է, որի վրա չի կարելի հույս զնել... Բայց, աղնիվ խոսք, ափառն, որ նա վատ վախճան է ոմնենալու..., ասենք, ուրիշ կերպ չի էլ կարող լինել... Ես միշտ ասել եմ, որ հին

բարեկամներին մոռացողից օգուտ չկա...— Այստեղ նա երեսը շրջեց, որպսզի իր հուզմունքը թաքցնի, ու սկսեց երթեւկել բակում, իր սալլակի մոտ, ցուց տալով, իր թե անիվներն է զննում, այն ինչ աշքերը բռպի առ բռպի արցունքով էին լցվում:

— Մաքսիմ Մաքսիմի՛չ, — ասացի ես, նրան մոտենալով, — իսկ այդ ի՞նչ թղթեր է ձեզ թողել Պետրինը:

— Ասովա՛ծ դիտե դրան. ինչ-որ հիշատակարան...

— Դուք դրանք ի՞նչ եք անելու:

— Ի՞նչ; Ես կկարգագրեմ գործադրել փամփուշտներ շինելու համար:

— Ավելի լավ է ինձ տաք:

Նա զարմանքով նայեց ինձ, ինչ-որ բան մըթմրթաց տուամիների արանքով և սկսեց փնտրել ճամպրուկում: Աշա նա մի տեսրակ հանեց և արհամարհանքով զետին նետեց. հետո երկրորդը, երրորդը և տասներորդը նույն բախտն ունեցան. նրա սրտնեղության մեջ ինչ-որ մանկական բան կարդացած էր, և ես խղճացի նրան...

— Ահա՛, այս է բոլորը, — ասաց նա. — շնորհավորում եմ ձեր գյուտը...

— Եվ ես ինչ ուզեմ, կարող եմ անե՞լ սրանք:

— Թեկուզ լրագրերում տպեցեք: Իմ ի՞նչ գործն է... Ի՞նչ է, ես մի՞թե նրա բարեկամն եմ կամ ազգականը... Ճիշտ է, մենք երկար ժամանակ մի ժամկետ տակ ենք ապրել... Բայց ես րիշ մարդու հետ եմ ապրել:

Ես շտապ վերցրի թղթերը և շուտով տարա, վախճառով, որ շտարս-կապիտանը կզջա: Շուտով եկան մեզ հայտնելու, որ մի ժամից օկազիան կշարժվի. ես կարգադրեցի իմ կառքը լծել: Շտարս-կապիտանը սենյակ մտավ այն ժամանակ, երբ ես արդին գդակու էի զնում. նա, թվում էր, չէր պատրաստվում մեկնելու. նա ինչ-որ շինծու, սառը տեսք ուներ:

— Իսկ դո՞ւք, Մաքսիմ Մաքսիմիշ, մի՞թե չեք մեկնում:

— Ո՛չ:

— Այդ ինչո՞ւ:

— Այսր ես զեռ պարետին շեմ տեսել, այնինչ, ես պետք է մի քանի պետական իրեր հանձնեմ...

— Բայց չէ՞ որ դուք եղաք նրա մոտ:

— Եղա, իշարկե, — ասաց նա, կմկմալով... — բայց նա տանը չէր... իսկ ես չապահեցի:

Ես նրան հասկացա, խեղճ ծերովլը, թերևս առաջին անգամ իր կյանքում, թողիլ էր ծառայության գործերը՝ սեփական կարիքների համար՝ գրագրության լեզվով ասած, և ինչպէս վարձատրվեց դրա համար:

— Շա՞տ ափսոս, — ասացի ես նրան, — շա՞տ ափսոս, Մաքսիմ Մաքսիմի՛չ, որ մենք ժամանակից առաջ ստիպված ենք բաժանվել իրարից:

— Մենք, անկիրթ ծերովկներս, ինչպէս կարող ենք ձեր ետևից համանել... Դուք բարձր հասարակության պատկանող, հպարտ երիտասարդներ եք. քանի դեռ չերքեղների զնդակների տակ ենք, զուք էլի ոչինչ... իսկ երբ հետո հանդիպենք, կամաշեք նույնիսկ ձեռք մեկնել մեզպեսներին:

— Ես այդպիսի կշտամբանքների արժանի շեմ, Մաքսիմ Մաքսիմիշ:

— Ես, գիտեք, չնց այնպիս, տեղն եկավ, ասացի, սակայն, ցանկանում եմ ձեզ ամեն երջանկություն և ուրախ ժամփորդություն:

Մենք բավական շոր հրաժեշտ տվինք իրար: Բարի Մաքսիմ Մաքսիմիշը դարձել էր համառ, փնթինթացող շտարս-կապիտան: Եվ ինչո՞ւ: Որովհետեւ Պետրինը՝ ցրվածությունից, թե այլ պատճառով՝ ձեռք մեկնեց նրան այն ժամանակ, երբ նա ցանկանում էր Պետրինի վզովն ընկնել: Տիսուր բան է, երբ տեսնում ես, որ երիտասարդը կորցնում է իր լավագույն հոլուսերն ու անուրջները, երբ նրա աշքերի առջևից ետ են քաշում վարդագույն ֆլյորը⁵⁹, որի միջով էր նա նայում մարդկային գործերին ու զգացմունքներին, թեև հույս կա, որ նա հին մոլորությունները կփոխարինի նորերով, որոնք պակաս անցողիկ չեն, բայց դրա փոխարեն պակաս քաղցր էլ չեն... Բայց դրանք ինչո՞վ փոխարինես Մաքսիմ Մաքսիմիշի տարիքում: Ակամայից սիրոտ կշորանա ու հոգի կփակիվի...

Ես մենակ մեկնեցի:

ՊԵՉՈՐԻՆԻ ՕՐԱԳԻՒՅԾ

ԱՌԱՋԱԲԱՆ

Նորերս և իմացա, որ Պարսկաստանից վերադառնարով, Պեշորինը մեռել է: Այդ լուրն ինձ շատ ուրախացրեց. դա ինձ իրավունք էր տալիս տպագրելու այս նոթերը, և ևս առիթից օգուզեցի իմ անունը զնելու ուրիշի գրվածքի ճակատին: Տա՛ աստված, որ ընթերցողները չպատժեն ինձ այսպիսի անմեղ կեղծարարության համար:

Այժմ ևս ուետք է փոքր-ինչ բացատրեմ այն պատճառները, որոնք ինձ դրդեցին հասարակությանը հանձնել սրտի դադանիքները մի մարդու, որին ևս երբեք չեմ ճանաչել: Ուրիշ բան է, եթե ևս գեթ նրա բարեկամը լինեի. Հզմարիտ բարեկամի նենդ անհամեստությունը հասկանալի է յուրաքանչյուրին: Բայց ևս իմ կյանքում միայն մեկ անգամ եմ տեսել նրան մեծ ճանապարհի վրա, հետևարար նրա նկատմամբ շեմ կարող տածել այն անրացատրելի ատելությունը, որ բարեկամության դիմակի տակ ծածկվելով, սպասում է սիրելի առարկայի մահվանը միայն կամ դժբախտությանը, որպեսզի հանդիմանությունների, խորհուրդների, ծաղրի և արգահատանքի զգացմունքի տարափ տեղա նրա գլխին:

Թիրթելով այդ նոթերը, ևս համոզվեցի այն մարդու անկեղծությանը, որն այնպիս անողոք ի ցուց էր դնում սեփական թուլություններն ու արատները: Մարգելային հոգու, թեկուզ և ամենամանը հոգու, պատմությունը հաղիվ թե ավելի հետաքրքրական և ավելի օգտակար չէ, քան ամբողջ մի ժողովով պատմություն, մանավանդ, եթե դա հետևանք է իր իսկ նկատմամբ հասուն ուղեղի կատարած զիտողությունների, և երբ այն գրված է ոչ կարեկցություն կամ գարմանը առաջացնելու սնավառ ցանկությամբ: Թուստի խոստովանությունն⁶⁰ ունի արգեն իսկ այն թիրթյունը, որ նա այն կարդացել էր իր բարեկամներին:

Այսպիս ուրիմն, միայն օգուտ թիրելու ցանկությունն է դրգել ինձ տպագրելու պատահմամբ իմ ձեռքն ընկած այս օրադրի հաւաքածները: Թեափետ ևս փոխել եմ րոլոր հատուկ

անունները, բայց այն մարդիկ, որոնց մասին նրա մեջ խոսվում է, երկի կճանաշեն իրենց և, գուցե, կգոտնին արգարացումն այն արարքների, որոնց մեջ մինչև այժմ մեղագրում էին մի մարդու, որն այսուհետև ընդհանուր ոչինչ այստեղի աշխարհի հետ, մենք համարյա միշտ ներում ենք այն, ինչ համկանում ենք:

Ես այս գրքում զետեղել եմ միայն այն, ինչ վերաբերում է Պեշորինի Կովկասում եղած ժամանակին. իմ ձեռքին մնացել է ևս մի հաստ տետրակ, որտեղ նա իր ողջ կյանքն է պատմում: Երբեք այդ տետրակն էլ կիներկայանա հասարակության դատաստանին. բայց այժմ ևս չեմ համարձակվում իմ վրա վերցնել այդ պատասխանատվությունը բազմաթիվ կարեւոր պատճառներով:

Գուցե ընթերցողներից ոմանք կցանկանան իմանալ իմ կարծիքը Պեշորինի ընավորության մասին: Իմ պատասխանը—այս գրքի վերնագիրն է:— «Բայց այդ շար հեգնանք է»,— կասեն նրանք:— Զգիտեմ:

1

ԹԱՄԱՆԸ

Թամանը Թուսաստանի բոլոր ծովամերձ բազաքներից ամենավատ քաղաքիկն է: Ես այնտեղ քիլ էր մնացել քաղցից մեռնիփ և, ի հավելումն զրա, ինձ ուզում էին դեռ շրահեղձ էլ աներ: Ես այնտեղ հասա փոստի կառքով, ուշ զիշերին: Կառապանը ձիերի հոգնած հոյակը կանգնեցրեց քաղաքի մուտքի մոտ գտնվող միակ քարաշեն տան դարբասի մոտ: Ժամապահը, որ մի սեծովյան կազակ էր, զանգակի ձայնը լսելով, քնաթաթախ բղավեց վայրենի ձայնով. «Ո՞վ է գալիս»: Դուրս եկան ուրյաղնիկն⁶¹ ու տասնապետը⁶²: Ես նրանց բացատրեցի, որ ևս սպա եմ, գործող զորաբաժին իմ գնում պաշտոնական գործով և սկսեցի պետական ընակարան պահանջել: Տասնապետը մեղ ման ածեց բազաքում: Ո՞ր խրճիթին մոտե-

նում էինք՝ զբաղված էր: Յուրա էր, ևս երեք զիշեր չէի քնիւ, տանջիկ էի ու սկսեցի բարկանալ: «Ինձ որևէ տեղ տար, ավագակ՝ թէկուզ սատանայի մոտ, բայց որևէ տեղ», — բզավեցի ես: — «Մի օթախ էլ կա, — պատասխանեց տանապետը, ծուրակը բորելով, — միայն թե ձերդ ազնվությանը⁶³ դուք չի գա, հալալ տեղ չի»: — Վերջին բառի ճշգրիտ իմաստը շատկանալով, ևս նրան հրամայեցի առաջ գնալ, և կեղուս նրանցքներով երկար թափառելուց հետո, — նրանցքներ, որուեց երկու կողմերում ևս տեսնում էի միմիայն խարխուկ ցանկապատեր, մենք կառրով հասանք հենց ծովի ափին գտնվող մի փորբիկ խրճիթի:

Իիալուսինն իր լույսը գցել էր իմ նոր բնակարանի եղեգնյա տանիքին և սպիտակ պատերին. բակում, որը պարսպապատված էր գետաքարից կառուցված պատով, կար մի կողքի խոնարհված մեկ ուրիշ, ավելի խղճուկ խրճիթ, որն առաջինից փոքր էր ու հին: Ափը գահավեժ իշխում էր դեպի ծովի համարյա այդ խրճիթի պատերի մոտ, ու վարն անընդհատ մըրմունքով ճողփում էին մուգ-կապույտ ալիքները: Լուսինը հանդարտ նայում էր անհանդիստ, բայց իրեն հնագանդ տարերքին, և նրա լույսի տակ ևս կարողացա նշմարել ափից հեռու գտնվող երկու նավ, որոնց ուեւ, ոստանի նմանվող պարանասարքը անշարժ նկարվում էին երկնակամարի գունաւեղագի վրա: «Նավահանգստում նավեր կան, — մոտածեցի ես, — վաղը Գելենջիկ կղնամ»:

Ինձ մոտ սպասյակի⁶⁴ պաշտոն էր կատարում պաշտպանողական գծի մի կազակ: Ես նրան հրամայեցի ցած բերել ճամպրուկը և կառապանին ճանապարհ դնել, իսկ ինքս սկսեցի կանչել տանտիրոջը. լուս են, բախում եմ — լուս են... այս ի՞նչ է: Վերջապես նախասենյակից դուրս սողաց մոտ տասնշորս տարեկան մի տղա:

— «Ճանտերն ո՞ւ է»: — Զը-կա: — «Բնշպի՞ս, ամեննեի՞ն շկա»: — «Ամեննեին»: — «Իսկ տանտիրուչի՞ն»: — «Դնաց սլորդիկան»⁶⁵: — «Իսկ դուռն ո՞վ կրանա ինձ համար», — ասացի ես, ոտքով խփելով դռանը: Դուռն ինքը բացվեց. խրճիթից խոնավություն փշեց: Ես վառեցի ծծմբեւ լուցեին և մոտեցրի տղայի թթին. լուցեին լուսավորեց երկու սպիտակ աշբ: Նա

կույր էր, բոլորովին կույր ի րնե: Նա անշարժ կանգնած էր իմ առաջ, և ես սկսեցի դիտել նրա դիմագծերը:

Խոստովանում եմ, ևս ուժեղ նախապաշարմունք ունիմ բոլոր կույրերի, միաշբանիների, խուլերի, համրերի, անոտ, անձիռ, սապատավոր և այլ պակասավոր մարդկանց նկատմամբ: Ես նկատել եմ, որ միշտ ինչ-որ տարօրինակ հարաբերություն կա մարդու արտաքինի և նրա հոգու միշեն, կարծես թե մարմնի որևէ անդամը կորցնելով, հոգին որևէ մի զգացմունք է կորցնում:

Այսպիս ուրիշն, ևս սկսեցի դիտել կույրի դեմքը. բայց ի՞նչ կհրամայեք կարդալ մի դեմքի վրա, որն աշքեր չունի... Ես երկար նայում էի նրան՝ ակամայից նրան խղճալով, երբ հանկարծ հազիվ նկատելի մի ժամկանց ցոլաց նրա նուրբ ըլլընքների վրա և, զգիտեմ ինչու, այդ ժամկան ինձ վրա ամենատշան տպավորությունը թողեց: Իմ գիտում կասկած ծագեց, որ այդ կույրն այնքան էլ կույր չէ, ինչպես թվում է. Իս իզուր էի ջանում համոզել ինձ, որ աշքի փառը կեղծել անհնարին է և ի՞նչ նպատակ կարող է ունենալ: Բայց ի՞նչ արած, ևս հաճախ եմ հակված լինում նախապաշարմունքների...

— «Դու տանտիրո՞շ տղան ես», — վերջապես հարցրի ես նրան: — «Զէ»: — «Հապա դու ո՞վ ես»: — «Որ եմ, խիզ եմ»: — «Իսկ տանտիրուչին զավակներ ունի՞»: — «Զէ. մի աղջիկ ուներ, էն էլ մի թորքի հետ ծովի էն դեօք փախավիճ»: — «Ի՞նչ թուրքի հետ»: — «Սատանին նրան կիտի... դրիմցի թուրք էր, Կեր քաղաքից մի լողիաշի»:

Ես խրճիթ մտա. երկու նստարան, մի սեղան, մեկ էլ մի ահագին սնդուկ վառարանի մոտ. ահա նրա ողջ կաշուրքը: Պատին՝ ո՞չ մի սրբապատկեր, իսկ դա վա՛տ նշան է: Կտորած ապակու միջով ներս էր խուժում ծովային քամին: Ես ճամպրուկից հանեցի մի թերվառով մոմ և, վառելով, սկսեցի դասավորել իրերը՝ թորս ու հրացանս անկյունը դրեցի, ատրճանակներս՝ սեղանի վրա, այժենակաճս փոկեցի նստարանի վրա: Կազակն էլ իրենը փոկեց մյուսի վրա: Տասը բուժեց հետո նա խռափացրեց, բայց ես շպառդացա քնել, իմ առջև մութի մեջ անվերջ պտուղում էր սպիտակ աշքերով տղայի թթին. լուցեին լուսավորեց երկու սպիտակ աշբ:

Այսպես անցավ մոտ մի ժամ: Կուսնի լուսն ընկել էր պատուհանին, և նրա ճառագայթը խաղում էր խրճիթի հողե հատակի վրա: Հանկարծ հատակը հատող պայծառ շերտի վրա մի ստվեր երևաց ու խսկույն չքացավ: Ես կիսաբարձրացա և պատուհանից դուրս նայեցի: ինչոր մեկը երկրորդ անգամ վագելով անցավ պատուհանի մոտով ու անհայտացալ աստված զիսե թե որտեղ: Ես չեի կարող ենթագրել, թե այդ էակը վազեց ծովափի զառիթափով: Մակայն այլ կերպ նա ուր կարող էր դնալ: Ես վեր կացա, հագա բեշմես, գոտին և դաշունը վրաս կապեցի ու կամացուկ խրճիթից դուրս գնացի: իմ գեմհանդիման գալիս էր կույր տղան: Ես պահվեցի ցանկապատի մոտ, և նա հաստատում, բայց զգուշ բայլվածքով անցավ իմ մոտով: Թեի տակ նա ինչոր կապոց էր տառում և, գեակի նավահանգիստը ծովելով, սկսեց ցած իշնել նեղ ու գաճավիժ շավզով: «Եմ օրը համրերը կազաղակեն և կույրերի աշքերը կրացվեն», — մտածեցի ես՝ նրա ետեց գնարով այնպիսի հեռավորության վրա, որ նրան աշքցս բաց չթողնեմ:

Մինչ այդ, լուսինն սկսեց սև ամպեր հագնել, և ծովի վրա մառախուղ բարձրացավ. մառախուղի միջով հազիվ էր առկայծում մոտիկ նավի հետնամասի լապտերը. ծովափի մոտ պալլում էր փրփուրը վաքարերի, որոնք ամեն րոպէ սպառնում էին պոկվել ու ջրատուզ անել նավը: Դժվարությամբ ցած իշներով, ես առաջ էի զնում զառիթափով, և ահա տեսնում եմ. կույրը կանգ առավ, ապա ցածրով ծովեց դեակի աջ. Նա շրին այսքան մոտ էր բայլում, որ թվում էր, թե ալիքը ջիմանրան ծով կրաշի. բայց երեկ դա նրա առաջին վրոսանքը չէր, դատելով այն վատաշությունից, որով նա ոտքերը մի քարից մյուսին էր դնում և խուսափում փոսերից: Վերջապես նա կանգ առավ՝ ասես թե ինչոր բանի ականչ դնելով, նստեց դեսնին և իր մոտը դրեց կապոցը: Ես հետևում էի նրա շարժումներին, թաքնվելով ծովափի դուրս պրծած ժայռի ետևում: Մի բանի բովի անց, հակառակ կողմից երևաց մի սպիտակ կիրապրանք. նա մոտեցավ կույրին և նստեց նրա մոտ: Քամին ժամանակ առ ժամանակ ականչիս հասցնում էր նրանց խոսակցությունը:

«Ճը՝ կույր, — ասաց մի կանացի ձայն, — ուժեղ փոթորիկ է. Յանկոն չի գա»: «Յանկոն փոթորիկց չի վախենում», — պատախանեց կույրը: «Մառախուղը թանձրանում է», — նորից առարկեց կանացի ձայնը, որի մեջ կար տիրության արտահայտություն:

«Մառախուղում ավելի հեշտ է պահակ կանգնած նավերի մոտով անցնել, — եղակ կույրի պատասխանը: — Շիսկ եթե՝ նա խեղդվի»: «Է, ի՞նչ կա որ, կիրակի օրը դու եկեղեցի կոքնաս առանց նոր ժապավեն կապելու»:

Հետեւեց լուսին, սակայն ինձ զարժացրեց մի բան— կույրն ինձ հետ խոսում էր մարդուսական⁶⁶ բարբառով, իսկ այժմ մարուր ուսւերենով էր արտահայտվում:

— Տեսնում ես, ես իրավացի եմ, — նորից ասաց կույրը, ծափ տալով. — Յանկոն չի վախենում ո՛չ ծովից, ո՛չ քամիներից, ո՛չ մառախուղից, ո՛չ ծովափի պահակներից. մի ականչ դի՛ր. այդ ջուրը չի ճողփում, ինձ չես խարի. այդ նրա երկար թիկրն են:

Կինը նստած տեղից վեր թռավ և սկսեց անհանգստություն արտահայտող տեսքով հեռուն նայել:

— Դու զառանցում ես, կույր, — ասաց նա, — ես ոչի՞նչ շեմ տեսնում:

Խոստավանում եմ, որքան էլ ես աշխատում էի մակուցկ հիշեցնող որևէ բան նշանաբեր հեռվում, ապարդյուն էր անցնում: Այդպես անցավ մի տասը բոպե. և ահա ալիքների լինակը միջն երևաց մի սկ կետ. նա մերթ միծանում էր, մերթ փոքրանում: Գանգագորեն բարձրանալով ալիքների կատարը, արագությամբ նրանցից ցած իշնելով, ափին էր մոտենում մի մակուցկ: Խիզախ էր այն նավլորդը, որ համրածակվել էր այսպիսի մի գիշեր նավել նեղուցով քսան վերստ տարածություն, և կարեռը պետք է լիներ նրան այդ բանին դրդող պատճառը: Սյսպիս մտածելով, սրտի ակամա տրոփյունով ես նայում էի խղճուկ մակուցկին. բայց նա, ասես բադ, ջուրն էր սուլվում, և ապա թևերի պես արագորեն թափահարելով իր թիկրը, դուրս էր թռչում անգուսդից՝ փրփուրի ցայտերի մեջ կորած. և ահա ես կարծում էի, թե նա թափ առնելով կզարկվի ափին ու փշուր-փշուր կլինի, բայց նա ճարպկությամբ կողըր

դեպի ավը դարձրեց և անվնաս ներս թուավ փոքրիկ ծովածոցը: Նրա միշտ գուրս եկավ միջահասակ մի մարդ, որ գըլիխն ուներ թուրքական մորթի գողակ. նա ձեռքով նշան արեց, և երեքով սկսեցին ինչ-որ բան գուրս քաշել մակույլից. բեռը այնքան մհծ էր, որ հս մինչև այժմ էլ չեմ հասկանում, թե ինչպես էր, որ մակույլը շրասուող չեր եղեւ: Յուրաքանչյուրը մի կապոց ուսելով՝ նրանք շարժվեցին ափի երկայնքով, և հս շուտով նրանց հետքը կորցրեցի: Պետք էր տուն դառնալ, բայց, խոստովանում էմ, այդ բոլոր տարօրինակություններն ինձ անհանգուացնում էին, և հս ծանր գիշեր լուսացրի:

Իմ կազմկը շատ զարմացավ, երբ արթնանալով ինձ բոլորովին հագնված տևական. սակայն ես նրան դրա պատճառը շասացի: Մի կարճ ժամանակ պատուհանից հիանալով բացկապույտ երկնքով, որ ծածկված էր պատուած ամպիկներով, հիանալով ջրիմի հեռավոր ափով, որը ձգվում է, ասես մանիշակագույն մի շերտ և վերջալորվում մի ժայռով, որի կատարին սպիտակին է տալիս փարսի աշտարակը, ես գնացի ֆանակորիա բերդը, որպեսզի պարետից իմանամ Գելենչիկ մեկնելու ժամը:

Բայց, ավազ, պարետը վճռական ոշինչ շկարողացավ ասել ինձ: Նավահանգստում գտնվող նավերը բոլորն էլ կամ պահականավեր էին, կամ առևտրական նավեր, որոնք դնու չեին էլ սկսել բեռնվել: — «Գուցե մի երեք-չորս օրից փոստատար նավ գա, — ասաց պարետը, — այն ժամանակ կտևնենք»: Մոայլ ու բարկացած ես տուն դարձա: Գուան շեմքում ինձ դիմավորեց իմ կազմկը՝ վախեցած դեմքով:

— Բանը վատ է, ձերդ ազնվություն, — ասաց նա ինձ:

— Հա՛, ախպեր, աստված գիտե, թե երբ մենք այստեղից կմեկնենք:

Այս բանի վրա նա է՛լ ավելի անհանգուացավ և իմ կողմը խոնարհվելով՝ շշնչյունով ասաց.

— Հալալ տեղ չի սա: Ես այսօր պատահեցի սեծովան մի ուրյադնիկի. նա իմ ծանոթն է—անցած տարի մեր դուրքաժնում էր. հենց որ նրան ասեցի, թե որտեղ ենք իշխանել, նա ինձ, թե՝ «Ալյոնեղը, ախպեր, հալալ տեղ չի, ու տան տերերը չար մարդիկ են...»: — Եվ ձիշտ որ, այդ ի՞նչ կույր է...»

ամեն տեղ մենակ է կնում-գալիս. թե՛ շուկա՞ հաց գնելու, թե՛ ջուր բերելու... երևում է, այսուղի արդին դրան վարժմիլ են:

— Բայց ի՞նչ տանտիրության գոնե երեա՞ց...

— Այսօր ձեր բացակայության ժամանակ մի պառավեկավ, հետք՝ իր աղջիկը:

— Ի՞նչ աղջիկ, նա աղջիկ շոնի:

— Աստված գիտե, թե ով է նա, եթե պառավի աղջիկը չի. Հրեն պառավը հիմա նստած է իր խրճիթում:

Ես մտա խրճիթը: Վառարանը⁶⁷ թեժ վառված էր, և նրա մեջ եկվում էր շքավորի համար բավական ճոխ ճաշ: Իմ բոլոր հարցերին պառավը պատասխանում էր, որ ինքը խուզ է, չի լսում: Ի՞նչ անեիր դրա հետո: Ես դարձա զեպի կույրը, որը նստած էր վառարանի առաջ և ցախ էր ավելացնում կրակին: «Հապա՛, կույր դիվուկ, — ասացի ես, նրա ականչից բռնելով, — ասա՛, զիշերը կապոցն առած՝ ո՞ւր էիր քաշ գալիս, հը»: Հանկարծ կույրս լաց եղավ, ճշաց, ախ քաշեց. «Ես ո՞ւր եմ զնացել... ո՞ւ մի տեղ էլ ա չեմ զնացել... կապոցն առա՞ծ... ի՞նչ կապոց»: Պառավն այս անգամ լսեց և սկսեց մրմթիթալ. «Ի՞նչ»՝ ին հնարում, այն էլ այս խեղճ ու կրակի վրա, ինչի՞ համար եք նրան նեղացնում. նա ձեզ ի՞նչ է արելու: Այդ ինձ ձանձրացրեց, և հս դուրս եկա, հաստատալիս որոշելով գտնել այս հանելուկի լուծման բանալին:

Ես փաթաթվեցի ալծենակաճի մեջ ու նստեցի շանկապատի մտտ, բարի վրա՝ հեռուն նայելով. իմ առջև փովել էր դիշերվա փոթորկից ալեկոծված ծովը, և նրա միօրինակ աղմուկը, քուն մտմուռ քաղաքի մրմունջի պես, ինձ հիշեցրեց հին տարիները, իմ մտքերը փոխադրեց հյուսիս, մեր ցուրտ մայրաղաքը⁶⁸: Հուշերն ինձ հուզեցին, ես ինքնամուսացության մից ընկա... Այսպես անցավ մի ժամի շափ, գուցե և ավելի... Հանկարծ երգ հիշեցնող ինչ-որ բան՝ ինձ զարմանք պատճառելով՝ հասավ իմ լսողությանը: Ճիշտ որ այդ երգ էր, և կանացի թարմ ձայն. բայց որտեղի՞ց... Ականջ դրեցի, երգը ներդաշնակ էր՝ մեկ ձգվող ու տխուզ, մեկ արագ ու աշխարյաց: Նայեցի շուրջո՞ւ ոք շկար. նորից ականջ դրեցի. հնչյուններն ասես երկնքից էին ընկնում: Ես հայցքս վեր բարձրացրի. իմ հյուզի կտորին կանգնած էր շերտավոր նախ-

շերով զգեստ հագած հերարձակ մի աղջիկ. իսկական հավերժաւարս Աշքերը ձեռքի ափով արևի ճառագայթներից պաշտպանելով, նա սենում հայցքով նայում էր հեռուն, մերթ ծիծաղում ու ինքնիրեն խոսում, մերթ նորից էր երգում:

Ես միտս պահեցի այդ երգը բառ առ բառ:

Ասես աղատ, ինքնակամ՝
Կահաչ ծովով
Ծառ նավակներ են լողում
Ճյամակառադասաւ:
Այդ նավակների միջև
Իմ մակույկն է գանձում,
Իմ մակույկը՝ տնսարք,
Երկու թիանի:
Թե փոթորիկ փրթի լսե,
Նավակներն այդ հին
Կրաքրացնեն իրենց թե,
Սովոր կցրենու:
Ես ծովին այն ժամ
Խորախոր ողջույն կտամ,
Վերի, ձեռ մի տա, չար ծով,
Դու իմ մակույկին:
Իմ մակույկը տանում է
Երեր թանկ ու թանկադին,
Մութ գիշերով վարում է
Նրան մի խենթ գլուխ տեր»:

Ակամայից իմ գլուխը մի միտք եկավ, որ գիշերը ես նույն այդ ձայնն կմ լսել. ես մի բոպի մտքերի մեջ ընկա և երր նորից կտուրին նայեցի, աղջիկն ալլևս այնտեղ չեր: Հանկարծ նա վագելով անցավ իմ մոտով, ինչ-որ ուրիշ բան երգելով և, մատները շրթացնելով, ներս վագեց պառավի մգու, ու այնտեղ նրանց միջև վեճ սկսվեց: Պառավը բարկանում էր, աղջիկը բրաքրաձայն քրքում: Եվ աշա տեսնում եմ դարձյալ թըռչ կոտելով վագում է իմ ջրահարսը^թ, ինձ համասարիկելով, կանգ առավ և սենուն հայցքով աշքերիս միջը նայեց՝ ասես իմ ներկայությունից զարմացած. Հետո անփութ շուռ եկավ ու կամացուկ զնաց դեպի նավահանդիսոր: Արանով չվերցացավ.

ամբողջ օրը նա պատվեց իմ բնակարանի մոտերքը, երգն ու թոշկոտելը ոչ մի բոպի շդադարեցին: Տարօրինակ է էակ: Նրա դիմքի վրա չկար խելագարության ոչ մի նշան. ընդհակառակը, նրա աշքերն աշխուց թափանցողականությամբ կանգ էին առնում իմ վրա, և այդ աշքերը, թվում էր, թե օժաված էին ինչ-որ մաղնիսական ուժով, ու ամեն անգամ նրանք կարծես թե հարցի էին սպասում: Բայց հենց որ ես սկսում էի խոսել, նա, նենդորին ժպտալով, փախչում էր:

Կորականապես հայտարարում եմ՝ ես երեք նման կին չեի տեսնել նա հեռու էր գեղեցկուհի լինելոց, բայց ես իմ անխափաշարումներն ունեմ նաև գեղեցկության նկատմամբ: Նրա մեջ աղնվատոհմության մեծ արտահայտություն կար... կանանց, ինչպես և ձիերի ցեղականությունը մեծ բան է. այս դրտոք պատկանում է երիտասարդ Ֆրանսիային: Նա, այսինքն ցեղականությունը՝ և ոչ թե երիտասարդ Ֆրանսիան, մեծ մասամբ երեսմ է քաղվածքում, ձեռքերում ու ոտքերում. մանավանդ քիթը շատ մեծ նշանակություն ունի: Կանոնավոր քիթը Ռուսաստանում փոքրիկ տոքից հազվադեպ է պատահում: Թվում էր, թե իմ երգչուհին տասնութ տարեկանից մեծ չէ: Նրա իրանի արտասովոր ճկումությունը, առանձնահատուկ, միայն նրան հատուկ գեխի խոնարհումը, երկար շեկ մազերը, նրա պարանոցի և ուսերի փոքր-ինչ արևատ մորթի ինչոր ոսկուն տվող վայըլը և մանավանդ կանոնավոր քիթը,— այս ամենն ինձ համար հմայիչ էր: Թեակետև նրա շեղ հայցքներում ես ինչ-որ վայրենի և կասկածելի բան էի կարդում, թեպես նրա ժպիտի մեջ կար ինչ-որ անորոշ բան, բայց այդպիս է նախափաշարման ուժը՝ կանոնավոր քիթն ինձ խելքից հանել էր. ես երկակայում էի, թե գաել եմ Գյոթեի Մինյոնը^թ Գյոթեի գերմանական երկայության այդ տարօրինակ ծնունդը. և իրոք, նրանց միջև շատ նմանություն կար. նույն արագ անցումները մեծագույն անհանգստությունից դեպի կատարյալ անշարժությունը, նույն հանելովկային խոսքերը, նույն ցատկուտամները, տարօրինակ երգերը...

Իրիկնադիմին, նրան շեմքի վրա կանգնեցնելով՝ ես նրա հետեւյալ խոսակցությունը բացեցի:

«Ասա խնդրեմ, գեղեցկուհի,— հարցրի ես,— այսօր դու

ի՞նչ էիր անում կտորի վրա»:— «Նայում էի, թե քամին որ կողմիցն է փշում»:— «Քո ինչի՞ն է պետք»: «Որ կողմից քամի, այն կողմից էլ երջանկություն»:— «Եվ ի՞նչ, մի՞թե դու երգով երջանկություն էիր կանչում»:— «Որտեղ երգ է ասվում, այնտեղ էլ բախտ է բացվում»:— «Իսկ եթե՝ հակառակի պես երգով գժբախտություն բերես գլխիդ»: «Դե, ի՞նչ արած. որտեղ ավելի լավ չեղավ, այնտեղ ավելի վատ կլինի, իսկ վատից մինչև լավը նորից հնոու չե»:— «Իսկ այդ երգը քեզ ո՞վ է սովորեցրել»:— «Ու որ էլ չի սովորեցրել. խելքիս վէի. կերպեմ. լսողը կլսի, իսկ ով շպետք է լսի, նա չի հասկանա»:— «Իսկ քո անունն ի՞նչ է, երգութիւն»:— «Ով մկրտել է, նու դիտե»:— «Իսկ ո՞վ է մկրտել»:— «Ես ի՞նչ իմանամ»:— «Ինչ ծածկաժիւն ես. ա՛յ, ես քո մասին որոշ բաներ եմ իմացել» (նրա դեմքի արտահայտությունը չփոխվեց, նա շրթումքները շարժեց կարծես թե խոսքն իր մասին չէր): «Ես իմացել եմ, որ դու երեկ գիշեր ծովափ ես գնացել»:— Եվ այստեղ ես շատ ծանրակշիռ ձևով պատմեցի նրան այն ամենը, ինչ տեսել էի, ցանկանալով շփոթեցնել նրան. բնա՛վ շշփոթվեց: Նա կոկորդովը մեկ քրքչաց: «Ծատ բան եք տեսել, բայց քիչ բան դիտեք, իսկ ինչ էլ դիտեք, կողաքիքի տակ պահեք»: «Իսկ եթե, օրինակ, խելքիս վչի պարեսին հայտնել», — և այստեղ ես դեմքիս տիֆ շատ լուրջ, նույնիսկ խիստ արտահայտություն: Նա հանկարծ թուշեռուց, երգեց ու շրացավ, ինչպես թիֆց խրտնեցրած թռչնիկ: Իմ վերջին խոսքերը բնավ տեղին չեին. այն ժամանակ ես չեի կուանում նրանց կարեռությունը, բայց հետապայում առիթ ունեցա ասածիս համար զղալու

Հենց նոր էր մթնել, ես կարգադրեցի կազակիս թիյնոցը կրակին դնել՝ արջավանքների ժամանակիվ սկս, վառեցի մոմք և նստեցի սեղանի մոտ, ծխելով ճամփորդական ծխամորձն: Ես արդին վերջացնում էի թիյի երկրորդ բաժակը, երբ հանկարծ դուռը ճոռաց, ետեցս լսվեց հագուստի և քայլերի թիթե շրջյուն. ես ցնցվեցի ու ետ նայեցի. այդ նա՛ էր, իմ ջրահարսը: Նա նստեց իմ դիմացը կամացուկ ու լուելայն և վրաս սեղեց իր աշքերը, ու, չփառեմ ինչու, բայց այդ հայցքն ինձ թլաց հիասքանչ-քնքուշ. դա ինձ հիշեցրեց մեկն այն հայցքներից, որոնք վաղուց անցած տարիներում այն-

պես ինքնիշխան խաղում էին իմ կյանքի հետ: Նա, թվում էր, հարցի է սպասում, բայց ես անբացարեկի շփոթմունքով րունված՝ լուս էի: Նրա դեմքը ծածկված էր աղոտ գունատությամբ, որ մատնում էր հոգեկան հուղմունքը. նրա ձեռքն աննպատակ շարժվում էր սեղանի վրա, և ես նկատեցի, որ թիթևակի գողողողում է: Նրա կործքը մերթ խիստ վեր էր բարձրանում, մերթ, թվում էր, թե նա պահում է իր շնչառությունը: Այդ կոմեդիան սկսում էր ինձ ձանձրացնել, և ես պատրաստ էի խզել լուսթունն ամենապրոզայիկ ձևով, այսինքն՝ նրան մի բաժակ թեյ առաջարկել, երբ նա հանկարծ վեր թռավ, գրկեց իմ պարանոցը, խոնավ, բոցեղնեն, հնչեղ համբուլը դրոշմեց իմ շրթունքներին: Իմ աշքերը մինհցին, վկուսս պատրյամ հկավ, ես սեղմեցի նրան իմ գրկում երիտասարդական կրքի ամրուց թափով, բայց նա օձի պես սահեց իմ ձեռքերի միշտ, ականջիս շշնչալով՝ «Այս գիշեր, հենց որ բոլորը քնեն, զուրս արի ծովափ», ու նետի պես զուրս թռավ սենյակից: Նախասինյակում նա դիպավ, շուռ տվեց թիյնոցն ու հատակին դրվագ մոմք: «Ի՞նչ դեպազիկ է», — գոշեց կազակը, որ տեղավորվել էր ծղոտի վրա և երազում էր տաքանակ թիյի մնացորդով: Ես միայն այստեղ ուշքի հկա:

Մի երկու ժամ անց, երբ նավահանգստում ամին ինչ լսեց, ես արթնացրի իմ կազակին: «Եթի ես ատրճանակ կրակիմ, — ասացի նրան, — ծովափ վավիր»: Նա շոեց աշքերը և մերենաբար պատասխանեց. «Ասում եմ, ձերդ ազնվություն»: Ես ատրճանակը գոտիս խորեցի և սենյակից զուրս գնացի: Ազդիկն սպասում էր ինձ վայրէջքի ժայրին. նրա հագուստն ավելի՛ քան բարակ էր, մի փոքրիկ խաս աղլուս գոտերում էր նրա ձկուն իրանը:

— եկեք իմ ետեղից, — ասաց նա, իմ ձեռքը բռնելով, և մենք սկսեցինք իշնել: Չեմ հասկանում, թե ինչպես էր, որ ես վիզս չկոտրեցի. ցածում մենք ծովեցինք աշ և զնացինք հենց նույն ճանապարհով, որով ես երեկ հետեւս էի կուրքին: Լուսինը դեռ գուրս չեր եկել, և միայն երկու աստղիկներ էին փայլում մուգ-կապույտ երկնակամարում, ինչպես երկու փրրկարար փարոս: Մանր ալիքները համաշափ ու հավասար պորվում էին մեկը մյուսի ետեկից՝ հազիվ վեր բարձրացներով

մենավոր մակուցկը, որ մոտեցված էր ափին: «Մակուցկ մտնինք», — ասաց իմ ուղեկցուհին: Ես տատանվում էի. ծովում սանտիմնութալ զրոսանքներ կատարելու սիրահար չեմ ես. բայց նահանջելու ժամանակ չէր: Նա մակուցկ ցատկեց, ես՝ նրա հետեկց, և դեռ ուշք գլուխ չէի հավաքել, երբ նկատեցի, որ մենք նավարկում ենք. «Այս ի՞նչ է նշանակում», — ասացի ես բարկացած: «Այս նշանակում է, — պատասխանեց նա, ինձ նստարանի վրա նստեցնելով և ձեռքերով իրանս գրկելով, — «այս նշանակում է, որ ես քեզ սիրում իմ...»: Աւ նրա այտը սեղմէց իմին, և ես դեմքիս վրա զգացի նրա բոցեղին շնչառությունը: Հանկարծ ինչ-որ բան աղմուկով ջուրն ընկավ. ես ձեռք գոտուա տարա, ատրճանակս լկար: Օ՛, այստեղ սոսկալի կատկած ընկավ իմ սիրու, արյունը զլուխ խփեց: Ետ եմ նայում, մենք ափից մոտ հիսուն սաթենի վրա ենք, իսկ ես լողալ շգիտենի: Ուզեցի նրան ինձնից դեն ջրել, նա կատվի պես բռնել էր հագուստից, և հանկարծ ուժեղ հրումը քիչ մնաց ինձ ծովը զցեր: Մակուցկը երերաց, բայց ես շտկեցի, և մեր մինչև սկսվեց մի կատաղի կոփիլ. կատաղությունն ինձ ուժ էր տալիս, բայց ես շուտով նկատեցի, որ ճարպկության մեջ ես զիջում եմ իմ հակառակորդին... «Դու ի՞նչ ես ուղում», — բղավեցի ես, ամուր հուակ տալով նրա փոքրիկ ձեռքերը. նրա մատները ճկրտացին, բայց նա ձայն շնանց նրա օձային նատուրան դիմացավ այդ տանջանքին:

Դու անսեն ես, — պատասխանեց նա, — դու կմատնե՞ս, — ու գերենական ճիգով ինձ տապալեց մակուցկի կողքին. մենք երկուս էլ մինչև գոտկատեղներս ցած էինք կախվել մակուցկից. նրա մազերը դիպչում էին ջրին. բռպին վճռական էր: Ես ծունկս զեմ տվի մակուցկի հատակին, մի ձեռքով նրա մազերի հյուսքը բռնեցի, մյուսով կոկորդը. Նա բաց թողից իմ հագուստը, և ես վայրկենաբար նրան նետեցի ալիքների մհջ:

Սրդեն բավական մութն էր. նրա զլուխը մի երկու անդամ երևաց ծովային փրփուրի մեջ, և ես այլս ոշինչ շտեսա...

Մակուցկի հատակին ես գտա հին թիի մի կտոր և մի կերպ, երկար ջանքերից հետո, նավահանգիստ հասա: Շուլափով դեպի իմ հյուղն ընթանալիս, ես ակամայից նայում էի դե-

մի այն կողմը, որտեղ երեկ կույրն սպասում էր դիշերվա նավորդին. լուսինն արդեն լողով էր երկնքում, և ինձ թվաց, թի սպիտակ հագնված մեկը նստած է ծովի ափին. հետաքրքրությունից գրգված՝ նո գաղտագոյի մոտեցա և պառկեցի զավեհ ծովափի խոտերի մեջ, զլուխս այնտեղից մի քիչ դորս հանելով, ես կարողացա ժայռի վրայով շատ լավ տեսնել այն ամենը, ինչ կատարվում էր ցածում, և շատ էլ շգարմացա, այլ համարյա ուրախացա, իմ հավերժահարսին ճանաշիռով: Նա ծովային փրփուրն էր քամում իր երկար մազերից, թաց շապիկը գծագրում էր նրա ճկուն իրանը և բարձր կուրծքը: Ծուռով հեռվում մակուցկ երևաց, արագ մոտեցավ. նրա միջից, ինչպես երեկ, դուրս եկավ թուրքական գլակով մի մարդ, բայց նա կաղակի խուզվածք ուներ, և փոկեղին գոտու սակից դուրս էր ցցված մի մեծ դանակի: «Յանկո՛, — ասաց աղջիկը: — ամեն ինչ կորած է»: Հետո նրանց խոսակցությունը շարունակվեց, բայց այնքան կամաց, որ ես ոշինչ շկարողացա լսել: «Իսկ կույրը ո՞ւր է», — ասաց վերջապես Յանկոն՝ ձայնը բարձրացնելով: «Ես նրան ուղարկել եմ»: Եղավ աղջկա պատասխանը: Մի բանի բոպերից հետո հայտնվեց կույրը, շալակած բերելով մի պարկ, որը մակուցկ իշեցրին:

«Ասի՛ր, կույր, — ասաց Յանկոն, — դու լավ պահպանիր այն տեղը... գիտե՞ս, այնտեղ մեծ արժեքի ապրանքներ կան... ասա (անտանը ես լսեցի), որ ես այլևս նրա ծառան շեմ, գործերը վատ են գնում, նա ինձ էլ չի տեսնի. Հիմա վտանգավոր է. գնում եմ ուրիշ տեղ աշխատանք փնտրելու, իսկ նա այս տեսակ զոշաղին էլ չի գտնի: Համ էլ ասա, որ եթի նա ավելի լավ վճարեր աշխատանքների համար, Յանկոն էլ նրան չէր թողնի, իսկ ինձ համար ամեն տեղ ճանապարհ է, ուր քամի է փշում ու ծով աղմկում: — Կարճառն լուսթյունից հետո Յանկոն շարունակեց: — Սա ինձ հետ կա, սա այստեղ մնալ չի կարող, իսկ պառակին ասա, թի ժամանակն է, որ մեռնի, շափից ավելի է ապրել, նամուսն էլ լավ բան է: Իսկ մեզ էլ չի տեսնի»:

— Իսկ ե՞ս — ասաց կույրը աղերսալի ձայնով:

— Դու իմ ինչին ես պետք, — Եղավ պատասխանը:

Մինչ այդ իմ ջրահարսը մակուցկ ցատկեց և ընկերոջը

ձեռքով արավ, վերջինս կույրի ձեռքն ինչ-որ բան զրկց, ասելով. «Ես, կարկանդակ զնիր քեզ համար»: «Միայն այս-քա՞նը», — ասաց կույրը: «Ե՞տ քեզ էի», — ու վայր ընկած դրամը քարին դիմուլով զնգաց: Կույրը զետնից շվերցրեց դրամը: Յանկոն մակույկ նսաեց, քամին ծովափից էր փշում. նրանք փոքրիկ առաջատար քարձրացրին և արագ սլացան: Երկար ժամանակ լուսի տակ սպիտակ առաջաստը երեվում էր մութ ալիքների միջև. կույրը շարունակում էր դեռ նստած մնալ ծովափին, և ա՞տ իմ ականջին հասավ հեկեկան-քի նման մի բան. կույր տղան ասես լախս էր, և երկա՛ր, երկա՛ր... Ես տիրեցի: Եվ ճակատագրի ինչի՞ն էր պետք ինձ գցել ազնիվ մախսանենգների⁷¹ խաղաղ շրջանը: Ինչպես ան-այլայլ շուրջ նետված մի քար, ես վրդովեցի նրանց հանգիս-տը, և քիչ էր մնացել, որ ինքս էլ քարի պես հատակը զնայի:

Ես վերադարձա տուն: Նախասենյակում փայտե ափսեի մեջ ճրթձրթում էր այրված մոմի մնացորդը, և իմ կազակը, ճակատակ ճրամանիս, քնած էր խոր քնով, ճրացանը երկու ձեռքով բռնած: Ես նրան հանդիստ թողեցի, վերցրի մոմը և խրճիթ մտա: Ավա՛ղ, իմ արկղիկը, արծաթապատ թուրս, Դաղստանի դաշույնս, որ բարեկամին նվերն էր, — բոլորն ան-հետացել էր: Այստեղ ա՞տ ես գլխի ընկա, թի ինչ իրեր էր տանում անիծյալ կույրը: Կազակին բավական անքաղաքա-քարի ճրումով զարթնեցելով, ես հայցոյեցի նրան, բարկացա, բայց ի՞նչ կարելի էր անել: Եվ ծիծաղելի չէ՞ր լինի դանգատ-վել իշխանությանը, որ կույր տղան ինձ կողոպտել է, իսկ տասնութ տարեկան աղջիկը քիչ էր մնացել որ զրահեղձ անի՛: Փա՛ռ աստծո, առավոտյան մեկնելու հնարավորություն ներ-կայացավ, և ես թողեցի թամանը: Ի՞նչ եղան պառավն ու խեղճ կույրը — շգիտեմ: Եվ ի՞նչ էլ իմ զործն են մարդկային ուրախություններն ու թշվառությունները, — ի՛մ, թափառող սպայիս, որ, ի համելումն դրան, ուղեթուղթ ունի, թե պաշտո-նական դորձերով է զնում...

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

(ՊԵՉՂԱԲԻՆԻ ՕԲԱԳՐԻ ՎԵՐՋՐ)

II

ԻՇԽԱՆԱԴՈՒՄՏՏՐ ՄԵՐԻ

11-ը մայիսի

Երեկ ես Պյատիգորսկ ժամանեցի, բնակարան վարձեցի քաղաքի ծայրին, ամենաբարձր տեղում՝ Մաշուկի ստորոտի մոտ. մրրկի ժամանակ ամպերը կիշնեն մինչև իմ տանիքը: Այսօր առավոտյան ժամի հնդին, երբ ես լուսամուտը բացեցի, իմ սենյակը լցվեց ցցապատած համեստ պարտեզում բուսած ծաղիկների բույրով: Մաղկած կեռասենիների ճյուղերը հաս-նում են իմ պատուհաններին, և քամին երբեմն իմ զրասե-ղանը ծածկում է նրանց ծաղիկների սպիտակ թերթիկներով: Երեք կողմից իմ բնակարանի առջև բացվում են հիանալի տե-սարաններ: Արևմտյան կողմում հինգ պլիսանի թեշտուն է կապտին տալիս, ինչպես առնցած փոթորկի վերջին սկ ամպով⁷². Հյուսիսակողմում բարձրանում է Մաշուկը, որպես բրդոտ պարսկական գդակ, և ծածկում է երկնակամարի այդ ամբողջ մասը. զիպի արևելք նայելն ավելի ուրախալի է. ներքեն իմ առջևն է խայտաբղետ մարուք, նոր քաղաքիկը, աղմկում են բուժիչ աղբյուրները, աղմկում է բազմակառ ամբոխը, իսկ այստեղ, ավելի դենք, ամֆիթատրոնի պես վեր են դիզանում սարերը, որոնք որքան հեռու, այնքան կա-պուտ ու մառախլապատ են, իսկ հորիզոնի եզրին ձգվում է ձյունապատ գաղաթների արծաթե շղթան, ոկտիելով Կաղրե-կով և վերջանալով երկգլուխ ելքրուտով... Այսպիսի երկրուտ ապրեն ուրախալի է: Ինչ-որ խնդության զգացմունք է լցվել իմ բոլոր երակները: Օդը մաքուր է ու թարմ, որպես մանկան

Համբուլը, արևը վառ է, երկինքը՝ կապուցտ. թվում է, թե սրանից ավելի էլ ի՞նչ է հարկավոր. այսուեղ ինչի՞ են պետք կրենք, ցանկությունները, ափսոսանքները... Սակայն ժամանակ է: Գնամ Ելիզավետյան աղբյուրը. այնտեղ, ասում են, առավոտյան հավաքվում է ամբողջ շրեկ հասարակությունը:

Քաղաքի կենտրոնն իշնելով, ևս գնացի զբոսայիտով, որտեղ հանդիպեցի մի քանի տասուր խմբեր, որոնք զանդաղ սարն էին բարձրանում. այդ մեծ մասամբ տափաստանցի կալվածատերերի ընտանիքներ էին. այդ իսկույն կարելի էր կռահել ամուսինների մաշված հնատարագ սերթուկներից և կանանց ու աղջիկների նրանքաշաշակ շքազգեստից: Երևում է, որ ցըկ բոլոր երիտասարդներին նրանք հականե-հանվանն ճանաշում էին, որովհետև նրանք իմ վրա նայեցին քնքուշ հետաքրքրությամբ. սերթուկիս պետքրուրդյան տարազը նրանց թյուրիմացության մեջ գցեց, բայց շուտով նկատելով հետեւ վաղորայինի ուսադիրներս, նրանք զայրույթով երեսները շուռ տվին:

Տղական իշխանավորների կանայք, չըերի այսպիս ասած տանախրութինները, ավելի բարեհաճ էին. նրանք լոռնետ-ներ⁷³ ունեն, նրանք պակաս ուշադրություն են դարձնում նշանազգեստի⁷⁴ վրա, նրանք ընտելացել են համարակալած կոճակի տակ Կովկասում հանդիպել բոցավառ սիրու և սպիտակ զիսարկի տակ՝ կիրթ ուղեկ: Այս կանայք շատ սիրելի են, և երկա՛ր ժամանակով սիրելի: Ամեն տարի նրանց պաշտողները նորերով են փոխվում, և հենց այս է, թերեւս, նրանց անխոնչ սիրալիրության գաղտնիքը: Նեղ կածանով բարձրանալով գեպի Ելիզավետյան աղբյուրը, ևս հասա քաղաքացիական և զինվորական ծառայության մեջ գտնվող տղամարդկանց մի խմբի, որոնք, ինչպես ես հետո իմացա, ըրից բուժում ակնկալող մարդկանց մի առանձին գասակարգ են կազմում. նրանք խմում են, սակայն ոչ ջուր, քիչ են զրոսնում, հարկանցիորեն են քարշ գալիք կանանց ետևից. նրանք թուղթ են խաղում և գանգատվում ձանձրություն: Նրանք պճնամունք են. իրենց հյուսվածապատ⁷⁵ բաժակները թթու ծծմբաջրի

հորն իշեցնելով, նրանք ակագեմիական⁷⁶ կեցվածքներ են ընդունում. քաղաքացիական ծառայության մեջ գտնվողները բաց-երկնագույն փողկապ են կապում, զինվորականներն օձիքի տակից դուրս են թողնում բրիժի⁷⁷: Նրանք խոր արհամարհանք են տածում դեպի գավառային կանայք և մայրաքաղաքների արհստոկրատիկ հյուրասենյակների կառուտն են քաշում, ուր նրանց ներս շեն թողնում:

Վերջապիս աջա և ջրհորը... Նրա կողքի հրապարակում կառուցված է մի տնակ, որի կարմիր տանիքը կախվում է վաննայի վրա, իսկ փոքրինչ հեռու գալերեան է, որտեղ զբունում են անձրկի ժամանակ: Մի քանի վիրավոր սպաներ, հենակները ետ քաշած, նստել էին նստարանի վրա—գումատ, տիսուր: Մի քանի կին արագ քայլերով ետ ու առաջ էին քայլում փոքրիկ հրապարակում՝ զրի ներգործությանն սպասելով: Նրանց մեջ կային մի քանի գեղեցկաղեմներ: Մաշուկի թիք լանջը ծածկող խաղողի ալեյներում երեխմն երկում էր երկուառվ առաձնանալու սիրահար որևէ կնոջ խայտարդետ զիսարկի,— այսպիս եմ ասում, որովհետև այսպիսի գլխարկի մոտ ես միշտ նկատել եմ կամ զինվորական գլխարկ կամ անձունի կլոր շլապա: Գահավեժ ժայռի վրա, որտեղ կառուցված է էկուլյան տավիդ⁷⁸ կոչվող պավիլիոնը, ցցվել էին տեսարանների սիրահարները և հեռազիտակ էին ուղղում դեպի կլրորուաք. նրանց մեջ կային երկու գովենոյորներ⁷⁹ իրենց սաների հետ, որոնք եկել էին գեղձախտից բժշկվելու:

Ծնշասպատ լինելով՝ ես կանգ առա սարի եղթին, և, հենց վելով տնակի անկյունին, սկսեցի զիտել գեղատեսիլ շրջակայքը, երբ հանկարծ հետեւից լսեցի մի ծանոթ ձայն.

— Պեսո՛րին, վաղո՞ւց է արդյոք, ինչ այստեղ ես: Ետ եմ նայում. Գրուշնիցին է: Մենք զրկախառնվեցինք: Ես նրա հետ ծանոթացել էի գործող զորաբաժնում: Գնդակը վիրավորել էր նրա ոտքը, և նա ինձանից մոտ մի շարաթ առաջ էր ջրերը եկել:

Գրուշնիցին յունկեր⁸⁰ է: Միայն մի տարի է, ինչ նա ծառայության մեջ է. հագնում է սոսկական զինվորի հաստ շինել. այդ էլ հատուկ տեսակի պճնամուլություն է: Նա ունի գեորգիկ հասարակ խաչ⁸¹: Լավ կաղմացքի տեր է,

թիամորթ ուսեաները, արտաքինին նայելով՝ նրան կարելի է համարել 25 տարեկան, թեպետ նա հազիվ թի 21 տարեկան լինի: Խոսնիս գլուխը ետ է տանում և անդադար բեղը ոլորում ձախ ձեռքով, որովհետև աշով կաթնում է հենակին: Խոսում է արագ և շինծու ոճով, նա այն մարդկանցից է, որոնք կյանքի ամեն մի դիպլածի համար ունեն պատրաստի ձոխ ֆրազներ, այն մարդկանցից, որոնց սոսկ գեղեցիկը չի հուզում, և որոնք մհծություն ծախելով՝ արտասովոր դգացմունքներ, վեհ տեհնչեր ու բացառիկ տանջանքներ ունեցողի դիմակ են հազնում: Տպավորություն գործելը նրանց հաճույք է պատճառում: Նրանք խելագարեցնելու աստիճան դուք են դայիս գավառական ուժանատիկ կանանց: Ծերության մատենալով՝ նրանք դառնում են կամ խաղաղ կալվածատերեր, կամ հարբեցողներ: Երբեմն՝ այս էլ, այն էլ: Նրանց հոգին ունենում է շատ բարի հատկություններ, բայց ոչ մի գորշի պոեդիա: Գրունիցկին արտասանելու սիրահար էր: Հենց որ խոսակցությունը դուրս էր գալիս սովորական հասկացողությունների սահմաններից, նա ձեզ խոսքակոխ էր տնում: Ես երբեք չեի կարողանում նրա հետ վիճել: Նա ձեր առարկություններին չի պատասխանում, նա ձեզ չի լսում: Հենց որ դուք գաղար եք առնում, նա սկսում է երկար տիրապել⁸², որն ըստ երեսոյթին ինչ-որ կապ ունի այն բանի հետ, ինչ դուք ասացիք, բայց իրոք միայն շարունակությունն է նրա սեփական խոսքի:

Նա բավական սրամիտ է: Նրա էպիպրամները⁸³ հաճախ զվարճալի են, բայց երբեք դիմուկ և շարամիտ շեն լինում: Նա երբեք որևէ մեկին մի խոսքով չի սպանի: Նա չի ճանաշում մարդկանց և նրանց թուլ լարերը, որովհետև իր ամբողջ կյանքի ընթացքում զրազվել է միմիայն իրենով: Նրա նպատակն է վեպի հերոս դառնալ: Նա այնքան հաճախ է աշխատել հավատացնելու որիշներին, թե ինքն աշխարհի համար ստեղծված էակ չի և դատապարտված է ինչ-որ գաղտնի տանջանքների, որ ինքն էլ համարյա համոզվել է դրան: Դրա համար է այնպիսի հապատությամբ կրում հասարակ զինվորի իր հաստ շինելը: Ես նրան հասկացել եմ, և այդ պատճառով նա ինձ չի սիրում, թեպետ արտաքուստ ամենաբարեկամական հարաբերությունների մեջ ենք: Գրունիցկին հայտնի քաջ

անում է հանել, ես նրան տեսել եմ պատերազմում: Նա թափահարում է թուրք, բղավում է և առաջ նետվում՝ աշքերը կկոցելով: Դա ոռւսական քաջովիյան նման չի...»

Ես էլ նրան չեմ սիրում, ես զգում եմ, որ երբեք մենք ընդհարվելու ենք ներ ճանապարհի վրա, և մեղանից մեկնումեկի բանը վատ է լինելու:

Նրա Կովկաս գալը նույնպես նրա ուրմանտիկական ֆանատիկոսության հետևանք է: Ես հավատացած եմ, որ հայրական գյուղից մեկնելու նախօրյակին նա մոռալ տեսքով ասելիս կլիներ որևէ սիրուն հարեւանուռու, որ ինքը հենց ալիսկեան սոսկ ծառայելու չի գնում, այլ մահ է վինարում, որովհետեւ... այստեղ նա, երեխ աշքերը ձեռքով ծածկելով, շարունակելիս կլինի ալյասին՝ «Ոչ, գուք (կամ դու) այս շահետք է իմանաք: Զեր մաքուր հոգին կսարսուա՛: Եվ ինչի՞ համար: Ես ի՞նչ եմ ձեղ համար: Արդյոք դուք ինձ կհասկանա՞ք... և այն:

Նա ինքն էր ինձ ասում, որ այն պատճառը, որը դրդել էր նրան Կ. գունդը մտնել, հավիտենական գաղտնիք կմնա իր և երկնիք միջև:

Սակայն այն րոպեներին, երբ Գրունիցկին զեն է նետում տրապիկ մանտիան⁸⁴, նա բավական սիրելի է և զվարճացնող ինձ համար հետաքրքրական է նրան տեսնել կանանց շրջանում: այստեղ, ես կարծում եմ, նա շատ հունդ կթափի:

Մենք հանդիպեցներ որպես հին բարեկամներ: Ես սկսեցի շարցուփորձ անել նրան չքերում տիրող կենցաղավարության և աշքի ընկնող անձնավորությունների մասին:

— Մենք բավական պրովայիկ կյանք ենք վարում,— ասաց նա՝ հոգոց հանելով: — Առավոտը չուր խմողները թույլ են, ինչպես բոլոր հիմանդները, իսկ երեկոյան զինի խմողները՝ անտանելի, ինչպես բոլոր առողջները: Կանանց հասարակություններ կան, բայց նրանց պատճառած միխիթությունը փոքր է, նրանք վիստ⁸⁵ են խաղում, վատ հազնվում և խոսում են սոսկալի ֆրանսերենով: Այս տարի Մոսկվայից միմիայն իշխանութիւն կիզովակայան է եկել իր աղջկա հետ: Բայց ես նրանց հետ ծանոթ չեմ: Հասարակ զինվորի իմ շինելն ասես մերժվածի կնիք լինի, նրա առաջ բերած կարեկցությունը ողորմության պես ճնշող է:

Այդ րոպեին մեր կողքով գեղի ջրհոր գնացին երկու կաշայք՝ մեկը տարիքով, մյուսը՝ երիտասարդ, բարեկազմ։ Ծլապանները խանգարեցին ինձ տեսնելու նրանց գեմքերը, բայց նրանք հագնված էին լավագույն ճաշակի խիստ կանոնների համաձայն. ոչ մի ավելորդ բան։ Երկրորդը հագել էր gris de perles* փակ օձիք հագուստ. մետաքսի թեթև զլխաշորը փաթաթվել էր նրա ճկուն պարանոցի շուրջը։ Couleur rose** կոշիկները կոճերի մոտ այնպես սիրում էին սեղմել նրա նիշար տոտիկը, որ նույնիսկ գեղեցկության դաղսնիքներին անիրազեկ մարդը նայելիս անպայման բացագանչություն կարձակեր՝ թեկուզ հենց զարմանքից։ Նրա թեթև, բայց ազնվական քայլվածքն ուներ ինչ-որ կուսական բան, որ դժվար է բնորոշել, բայց հայցքի համար հասկանալի է։ Երբ նա անցավ մեր մոտով, նրանից բոլորց այնպիսի անբացատրելի բուրմունք, ինչպիսին երբեմն արձակում է նազելի կոնց երկտողը։

— Ահա իշխանութիւնի կիզովակայան, — ասաց Գրուշնիցին։ — Կ հետք՝ իր գուստը Մերին, ինչպես իշխանութիւն անվանում է նրան անդիմական ձեռվուն Միայն երեք օր է, ինչ նրանք այստեղ են։

— Սակայն դու արդեն գիտե՞ս նրա անունը։

— Այո՛, ես պատահմամբ լսեցի, — պատասխանեց Գրուշնիցկին՝ կարմրելով։ — Խոստովանում եմ, ես չեմ ցանկանում նրանց հետ ծանոթանալ։ Այդ հպարտ մեծունիները մեղ, բանակայիններիս վրա նայում են, ինչպես վայրենիների։ Եվ նրանց ի՞նչ գործն է, համարակալված գլխարկի տակ՝ խելք և հաստ շինելի տակ՝ սիրու կա՛, թե ոչ։

— Եհ՛ դժ շինել, — ասացի ես՝ թմբիծաղ տալով։ — Իսկ ո՞վ է այն պարոնը, որ մոտենում է նրանց և այնպիս ծառացիւում պատրաստ՝ բաժակ է մատուցում նրանց։

— Օ՛, այդ՝ մոսկվացի պճնամոլ Ռայենին է։ Նա խաղամու է... այդ իսկույն երեսում է ահազին ոսկի շղթայից, որ դաշտովում է նրա երկնակառյան ժիշետի վրա։ Իսկ ի՞նչ հաստ

* Դորշագում, մարդարտագույն (Փր.)։

** Եագանակագույն (Փր.)։

ձեռնափայտ է, ասես Ռոբինզոն Կրուլոյինը լինի։ Ասենք, մորուքն էլ համապատասխան է, սանրվածքն էլ՝ և լուսույթ։
— Դու գագաղած ես ողջ մարդկային ցեղի դեմ։
— Եվ պատճառներ կան։
— Օ՛, իսկապե՞ս։

Այդ պահին կանայք հեռացան ջրհորից և հավասարվեցին մեղ։ Մինչ այդ Գրուշնիցկին կարողացավ հենակի օդիությամբ դրամատիկ կեցվածք ընդունել և բարձրածայն պատասխանեց ինձ ֆրանսերեն։

— Mon cher, je hais les hommes pour ne pas les mépriser, car autrement la vie serait une farce trop degoûtante**.

Միրունիկ իշխանադուստը շրջվեց և հետաքրքրվողի երկարատև հայացք պարզեց հոեստորին։ Այդ հայացքի արտահայտությունը շատ անորոշ էր, բայց ծաղրական չէր, և այդ առթիվ ես ներքուստ ի սրտե շնորհավորեցի Գրուշնիցկուն։

— Այդ իշխանադուստը Մերին շատ լավիկն է, — ասացի ես նրան։ — Նա ունի այնպիսի թավշահայցք աշքեր, իսկ և իսկ՝ թավշահայցք. ես քեզ խորհուրդ եմ տալիս յուրացնել այս արտահայտությունը, երբ գու նրա աշքերի մասին խոսելիս լինես. վարի և վերի թերթերունքներն այնքան երկար են, որ արեի ճառագայթները շեն ցոլանում նրա բիբերի մեջ։ Ես սիրում եմ առանց փայլի այդ աշքերը. նրանք այնքան մեղմ են, նրանք ասես շոյում են քեզ... Սակայն կարծեմ նրա գեմքի մրա լավը հենց միայն ա՞յդ է... Իսկ ինչպե՞ս է, նրա ատամները սպիտակ են։ Դա շատ կարևոր է. ափսո՞ս, որ քո փարթամբ դարձվածքին նա շժապտաց։

— Միրունիկ կոնց մասին գու խոսում ես, ինչպես անպիկական ձիու մասին։ — Պայտույթով ասաց Գրուշնիցկին։

— Mon cher, — պատասխանեցի ես նրան, աշխատելով նմանվել նրա տոնին. — յե տéprise les femmes pour ne pas les aimer, car autrement la vie] seraît un mélodrame trop ridicule***.

* Մուժեկալվարի, գեղշկունակ (Փր.)։

** Միրելիս, ես առում եմ մարդկանց, որպեսզի նրանց չարհամարտեմ, որովհետ այլ կերպ կլաները չտիպազն գորշելի մի ֆարս կիմեր (Փր.)։

*** Միրելիս, ես արհամարհում եմ կանանց, որպեսզի նրանց լսիրեմ, որովհետ այլ կերպ կլաները խիստ ծիծաղարժ մելոդրամա կիմեր (Փր.)։

Ես շուռ եկա և հեռացա նրանից: Ես կես ժամի չափ գրոսնեցի խաղողի ալեյներով, կրաքարե ժայռերի և նրանց միջև կախկիված թփերի մեջ: Շոփն սկսվում էր, և ես տուն շուապեցի: Թթու ծծմբազրի աղբյուրի մոտով անցնելիս, ես կանգ առա ծածկած գալերեի մոտ, որպեսզի նրա ստվերում շունչ առնեմ, և այդ ինձ առիթ ընձեռեց վկա լինելու բավական հետաքրքրական մի տեսարանի: Գործող անձինք ահա թի ինչ դիրք ունեին: Իշխանութիւն՝ մոսկվացի պանամովի հետ նստած էր ծածկած գալերեում, նստարանի վրա, և երկուսն էլ զրադշած էին կարծեմ լուրջ խոսակցությամբ: Իշխանագուստը, երկի արդեն վերջին բաժակը խմել, վերջացրել էր ու մտադրադ անում շրջորի մոտ: Գրուշնիցկին կանգնած էր հենց շրջորի մոտ: Յրապարակում այլևս ոչ ոք չկար:

Ես մոտ գնացի ու թաքնվեցի գալերեի անկյունի հունում: Այդ րոպեին Գրուշնիցկու ձեռքից բաժակն ընկավ զետին, ավազի վրա, և նա ճիգ էր թափում կոանալ՝ բաժակը վերցնելու: Վիրավոր ուսքը նրան խանգարում էր: Խեղճ մարդ, ինչ հնարներ էր գործադրում հենակին կոթնած՝ բաժակը վերցնելու, և բոլորն իզուր: Նրա արտահայտիչ դեմքն խկապես տանջանք էր արտահայտում:

Իշխանագուստը Մերին այդ բոլորն ինձանից լավ էր տեսնում:

Թունակից ավելի թեթև մոտ ցատկեց նա, կոացավ, վերցրեց բաժակը և տվեց նրան մարմնի այնպիսի շարժումով, որ լի էր անսակի գրավվությամբ, ապա նա սաստիկ կարմրեց, ետ նայեց գալերեին և, համոզվելով, որ իր մայրիկը բան շտեսավ, կարծեմ իսկույն հանգստացավ... Երբ Գրուշնիցկին թերանը բացեց, որպեսզի նրան շնորհակալություն հայտնի, նա արդեն հեռու էր: Մի բոպեից հետո նա դուրս եկավ գալերեից իր մոր և պանամովի հետ, բայց Գրուշնիցկու մոտով անցնելիս այնպիսի զուսպ ու լուրջ տեսք ընդունեց, նույնիսկ շուր շեկավ, նույնիսկ շնկատեց նրա կրորու հայացքը, որով նա երկար ժամանակ հետևում էր իրեն, մինչև որ սարից իշնելով ծածկից զրոսայգու լորիների հունում... Բայց ահա աղջկա շլյապան երեաց փողոցի մյուս կողմում, իշխանագուստը վա-

զելով զնաց, ներս մտավ Պյատիգորսկի լավագույն տներից միկի զարբասով: Նրա հետեւց մտավ իշխանութիւն, և դարբասի մոտ հրաժեշտ ավեց Ռայմիշին:

Միայն այդ ժամանակ խեղճ կրբավառ յունկերը նկատեց իմ ներկայությունը:

— Դու տեսա՞ր,— ասաց նա, ամուր հուապ տալով իմ ձեռքը,— զա ուղղակի հրեշտակ է:

— Ինչո՞ւ,— զարցրի ես, ամենախսկական պարզամտի տեսք ընդունելով:

— Միթե դու չտեսա՞ր:

— Ո՞չ, տեսա, նա զետնից վերցրեց քո բաժակը: Եթե այդտեղ պահապան լիներ, նա նույնը կաներ և ավելի փութով՝ օղու փող ստանալու հույսով: Բայց շատ հասկանալի է, որ իշխանադուստը խղճաց քեզ: քո դեմքն այնպես սարսափելի ծամածովեց, երբ դու մարմնիդ ծանրությունը վիրավոր ուսքիդ վրա դցեցիր...

— Եվ դու բոլորովին չհուզվեցի՞՞ նայելով նրա վրա այն բոպեին, երբ հոգին շողում էր նրա դեմքին...

— Ո՞չ:

Ես ստում էի. բայց ես ցանկանում էի նրան կատաղեցնել: Ես ունեմ հակառակ ընթանալու բնածին հակում, իմ ամբողջ կյանքը սրտին և բանականությանը հակասելու տխուր և անհաջող ճիգերի մի շղթա էր լոկ: Էնտուզիաստի ներկայությունը ջրօրհնեքի ցրտի ^թ ազգեցություն է գործում ինձ վրա, և ես կարծում եմ, որ հաճախակի շփումը տարտամ ֆլեգմատիկի հետ ինձ կյարձներ թունդ երազով: Մի բան էլ եմ խոստովանում: այդ վայրկյանին մի տհաճ, բայց ծանոթ զգացում թեթևակի անցավ իմ սրտով. այդ զգացումը նախանձն էր, ևս համարձակ ասում եմ՝ «նախանձ», որովհետև սովոր եմ ամեն ինչ խոստովանել ինքս ինձ. և հազիվ թե գտնվի մի երիտասարդ, որը, հանդիպելով մի սիրուն կնոշ, որն իր վրա է ընելու նրա պարապ ուշադրությունը, հանգարծ նրա ներկայությամբ ակնհայտ կերպով նախապատվություն տա իրեն նույնիսկ անծանոթ մեկ ուրիշին, հազիվ թե, ասում եմ, գտնվի այդպիսի մի երիտասարդ (հասկանալի է, ընտիր հասարակու-

թյան մեջ ապրած և իր ինքնասիրությանը երես տալու սովոր երիտասարդ), որին տհաճորեն շաղշեցնի այդ:

Լուս, Գրուշնիցկու հետ միասին, իշանք սարից և անցանք զբոսալգով, այն տան պատուհանների մոտով, որտեղ ծածկվել էր մեր գեղեցկուհին: Նա նստած էր պատուհանի առաջ: Գրուշնիցկին, իմ ձեռքը քաշելով, նրա վրա գցեց մեկն այն պղտոր-քնքուզ հայացքներից, որոնք այնքան քիչ են պղտում կանանց վրա: Ես լոռնետս ուղղեցի դեպի այդ աղջիկը և նկատեցի, որ նա ժպտաց Գրուշնիցկու հայացքից, և որ իմ հանդուզն լոռնետը բավական բարկացրեց նրան: Եվ իրոք, կովկասյան բանակայինն ինչպես է համարձակվում ապա- կի ուղղել դեպի մոսկվացի իշխանադուստրը...

13-ը մայիսի

Այսօր առավոտյան ինձ այցելեց մի բժիշկ. նրա անունը Վեռներ է, բայց նա ուստի է: Այստեղ զարմանալու ի՞նչ կա: Ես ճանաչում էի մի Խլանովի, որը գերմանացի էր:

Վեռները երևելի մարդ է շատ պատճառներով: Նա սկեպ- տիկ է և մատերիալիստ, ինչպես համարյա բոլոր բժիշկ- ները, իսկ դրա հետ մեկտեղ նաև պոկտ է և լրջորեն. գոր- ծով պոկտ՝ միշտ, իսկ խոսքով՝ հաճախ, թեպետ իր կրան- քում երկու ոտանափոր էլ չի գրել: Նա ուսումնասիրում էր մարդկային սրտի բոլոր կենդանի լարերը, ինչպես ուսում- նասիրում են դիակի երակները, բայց երբեք չէր կարողանում իր զիտությունից օգտվել. այսպես, երբեմն հիանալի անառո- միկը չի կարողանում չե՛րմ բուժել: Սովորաբար Վեռները զաղտագողի ծաղրում էր իր հիմնադներին. բայց ես մեկ անդամ տեսա, թի նա ինչպես էր լաց լինում մեռնող դիմուրի վրա... Նա չքավոր մարդ էր, միլիոններ էր երազում, իսկ փո- ղի համար ավելորդ մի քայլ էլ չէր անի. Նա մեկ անդամ ինձ ասաց, որ ավելի շուտ շնորհ կանի թշնամուն, քան բարե- կամին, որովհետ այդ կնշանակեր ծախիլ իր բարեկործու- թյունը, մինչդեռ ատելությունը միայն կուժեղանա՝ հակառա- կորդի մեծահոգությանը համապատասխան: Նա շար լեզու ուներ. նրա էպիգրամի ցուցանակի տակ շատ բարի մարդիկ

գոեցիկ հիմարի անուն են Հանել. նրա ախոյանները՝ Հան- քային չըկրի նախանձու բժիշկները լուր էին տարածել, թե իրը նա իր հիմնադների ծաղրանկարներն է նկարում, հի- մանդները փրփրել էին, համարյա բոլորը հրաժարվել էին նրա մոտ բժշկվելուց: Նրա բարեկամները, այսինքն՝ Կովկասում ծառայած բոլոր իսկապես կարգին մարդիկ, իզուր էին ջանում վերականգնել նրա ընկած վարկը:

Նրա արտաքինն այնպիսիններից էր, որոնք առաջին հա- յացքից տհաճ կերպով զարմացնում են, բայց դուր են գալիս հետագայում, երբ աշքը սովորում է անկանոն գծերի մեջ կար- դայի փորձված և բարձր հոգու գորշմբ: Դեպքեր են եղել, որ կանայք խելազարության աստիճան սիրահարվել են այսպիսի մարդկանց և չէին ցանկանա նրանց այլանդակությունը փո- խանակել ամենաթարմ և վարդերս էնդիմիոնների⁸⁷ գեղեցկու- թյան հետ. Հարկավոր է ընդունել կանանց արգարացի լինելը. նրանք ունեն հոգեկան գեղեցկությունը ճանաչելու բնագո- գուցեց զրանից է, որ Վեռների նման մարդիկ այնքան բուռն են սիրում կանանց:

Վեռները կարձահասակ էր և նիշար ու թույլ՝ ինչպես երե- խա. նրա մի ուռքը, Բայրոնի ուռի պես, կարճ էր մյուսից: Մարմնի հետ համեմատած, նրա զլուխն ահապին էր թվում. նա մազերը տակից խուզել էր տալիս, և նրա զանգի անհար- թությունները, որոնք այսպիսով մերկանում էին, կապշեցնեին ֆրենոլոգին⁸⁸ Հակասական Հակումների տարօրինակ հյուս- վածքով: Նրա փոքրիկ սև աշքերը, որոնք միշտ անհանգիստ էին, աշխատում էին թափանցել ձեր մարերի մեջ: Նրա հա- գուստի մեջ նկատելի էր ճաշակ և մարքանիրություն. նրա վտիտ, զղուած և փոքրիկ ձեռքերը գեղեցիկ էին բաց-գեղին ձեռնոցներում: Նրա սերթումկը, փողկապը և միլիար միշտ սև գույնի էին: Երիտասարդությունը նրան անվանել էր Մեֆիս- տոֆի⁸⁹: Նա այնպես էր ցույց տալիս, թի բարեկանում է այդ մականվան Համար, բայց դա իրոք շոյում էր նրա ինքնասի- րությունը: Մենք միմյանց շուտով հասկացանք և մոտիկ ծա- նոթներ դարձանք, որովհետև ես բարեկամության ընդունակ չեմ. երկու բարեկամներից մեկը միշտ մյուսի սարումն է, թեպետ հաճախ նրանցից ոչ մեկն էլ այդ չի խոստվանում

իրեն. ստրուկ լինել ես չեմ կարող, իսկ հրամայելն այս դեպքում հոգնեցնող աշխատանք է, որովհետև դրա հետ մեկտեղ Հարկավոր է նաև խարել, բացի դրանից, ես ունեմ թե՛լաքեյներ, թե՛ փող: Աչա թե ինչպես մենք մոտիկ ծանոթներ դարձանք. վեռներին ես հանդիպեցի Ա.-ում, մեծաթիվ և ազմկող երիտասարդության շրջանում. երեկոյի վերջում խոսակցությունն ընդունեց փիլիսոփայական-մետաֆիլիկական ուղղություն, խոսում էին համոզմունքների մասին, ամեն մեկը համոզված էր մի առանձին բանում:

— Ինչ վերաբերում է ինձ, ապա ես համոզված եմ միայն մի բանում...— ասաց բժիշկը:

— Այդ ինչո՞ւմ,— հարցրի ես, ցանկանալով իմանալ կարծիքը մի մարդու, որը մինչ այդ լուր էր:

— Նրանում,— պատասխանեց նա,— որ վաղ թե ուշ, մի գեղեցիկ առավոտ ես կմեռնեմ:

— Ես ձեզանից հարուստ եմ,— ասացի ես, բացի դրանից, ունեմ ևս մի համոզմունք—հենց այն, որ ես մի ամենապարզելի երեկո գերախտություն եմ ունեցել ծնվելու:

Եղուրը դատան, որ մենք դատարկ բան ենք ասում, բայց հավատացնում եմ, նրանցից ոչ մեկն ավելի խելոք բան չէր ասել: Այդ բովեց սկսած մենք ամբոխի մեջ զանազանեցինք միմյանց: Մենք հաճախ էինք հանդիպում իրար և երկուսով շատ լուրջ խոսում էինք վերացական նյութերի մասին, մինչև որ երկուս էլ նկատում էինք, որ իրար ձեռ ենք առնում: Այն ժամանակ, նշանակալից նայելով միմյանց աշքերի մեջ, ինչպիս, Ցիցերոնի⁹⁰ ասելով, հոռմեական ավգուրներն⁹¹ էին անում, մենք սկսում էինք բրջալ և կուշտ բրջալուց հետո, մեր երեկոյից գոհ՝ բաժանվում էինք իրարից:

Ես պառկած էի բազմոցի վրա՝ աշքերս առաստաղին ուղղած և ձեռքերս ծոծրակիս տակ դրած, երբ իմ սենյակը մտավ Վեռները: Նա նստեց բազկաթոռի վրա, ձեռնափայտն անկյունը դրեց, հորանջեց և հայտարարեց, որ դուրս շոգն սկսվում է: Ես պատասխանեցի, որ ինձ ճանձերն են անհանգստացնում, և երկուս էլ լոեցինք:

— Նկատեցեք, սիրելի բժիշկ,— ասացի ես,— որ առանց հիմարների, աշխարհում շատ ձանձրալի կլինիկ... Տիսի՛ք,

ահա մենք երկուսս էլ խելոք մարդիկ ենք. մենք վազօրոք գիտենք, որ ամեն ինչի մասին կարելի է անվերջ վիճել, ուստի և շենք վիճում. մենք գիտենք միմյանց համարյա բոլոր գաղտնի մտքերը. մի խոսքը մեզ համար մի ամբողջ պատմություն է. մեր յուրաքանչյուր զգացումի միջուկը տեսնում ենք երեքտակ կեղելի տակից: Տիսուրը մեզ համար ծիծաղելի է, ծիծաղելին՝ տիսուր, իսկ առհասարակ, ճշշտը որ ասենք, մենք բավական անտարբեր ենք գեպի ամեն ինչ, բացի մեզանից: Այսպիս ուրեմն, զգացումների և մտքերի փոխանակություն մեր միջեւ չի կարող լինել. մենք միմյանց մասին գիտենք բոլորը, ինչ ցանկանում ենք իմանալ, և ավելին իմանալ չենք ցանկանում. մնում է մի միջոց՝ նորություններ պատմել: Գե, որում նորություն ասիք ինձ:

Երկար խոսքից հոգնած, ես աշքերս փակեցի ու հորանջեցի:

Նա պատասխանեց փոքր-ինչ մտածելուց հետո.— Բայց ձեր բանդագուշանքի մեջ մի իդիա կա:

— Երկուսը,— պատասխանեցի ես:

— Ասեք ինձ մեկը, ես ձեզ կասեմ մյուսը:

— Լա՛վ, սկսեցեք, — ասացի ես, շարունակելով դիտել առաստաղը և ներքուստ ժպտալով:

Դուք ուզում եք որևէ մանրամասնություն իմանալ հանքային ջրերը ժամանած մեկն ու մեկի մասին, և ես արդեն կրահում եմ, թե ո՞ր մեկի մասին է ձեր ուզածը, որովհետեւ ձեր մասին այստեղ արգեն հարցորել են:

— Բժի՛շկ, ուզզակի մենք անկարող ենք խոսակցել. մենք կարդում ենք միմյանց հոգին:

— Հիմա մյուսը...

— Մյուս իդիան այս է. ես ուզում էի հարկադրել ձեզ որևէ բան պատմելու. նախ այն պատճառով, որ լսելը նվազ հոգնեցուցիչ է. երկրորդ, անկարելի է բերնից բան թցնել. երրորդ, կարելի է իմանալ ուրիշի գաղտնիքը. չորրորդ, այն պատճառով, որ այնախուի խելոք մարդիկ, ինչպես դուք եք, ունկնդիրներին ավելի են սիրում, քան պատմողներին: Այժմ ի գործ հշխանուժի կիգովսկայան ձեզ ի՞նչ է ասել իմ մասին:

— Դուք շա՞տ եք հավատացած, որ այդ իշխանութիւն էր...
և ոչ թե իշխանադուստրը...

— Միանգամայն համոզված եմ:

— Որովհետև իշխանադուստրը Գրուշնիցկու մասին է հարցրել:

— Դուք զիսի ընկնելու մեծ շնորհք ունեք: Իշխանադուստրն ասաց. թե ինքը հավատացած է, որ զինվորի շինել հագած այդ երիտասարդին աստիճանագործի են արել և զինվոր գարձրել մինամարտի⁹² պատճառով:

— Հուսով եմ, որ դուք նրան թողեցիք այդ հաճելի մոլորովիլան մեջ:

— Հասկանալի է...

— Հանգույցը կա, — բացագանձեցի ևս՝ հիացած. — այդ կոմիդիայի հանգույցի լուծման համար մենք ջանք կթափենք: Ակներեաբար բախտը հոգ է տանում, որ ևս չձանձրանամ:

— Ես նախազգում եմ, — ասաց բժիշկը, — որ խեղճ Գրուշնիցկին ձեր զոհն է լինելու...

— Շարունակեցեք, բժիշկ...

— Իշխանութիւն ասաց, որ ձեր զիմքն իրեն ծանոթ է: Ես նրան նկատել ամի, որ հավանաբար նա ձեզ հանդիպել է Պետրովորդում, որևէ տեղ բարձր գասին պատկանող հասարակության մեջ... Ես ասացի ձեր անոնքը: Այդ նրան ծանոթ էր: Կարծեմ այնուհետ ձեր զիմքն եկածը մեծ աղքուկ է հանած եղել... Իշխանութիւն սկսեց պատմել ձեր արկածների մասին, երեք հասարակության մեջ եղած բամբասանքին ավելացնելով իր զիտողությունները: Աղջիկը հետաքրքրությամբ լսում էր: Վերջինիս երեկայության մեջ դուք դարձաք նոր ճաշակի վեպի հերոս... Ես չհականակեցի իշխանություն, թեև զիտեի, որ նա դատարկ բան է ասում:

— Արժանավոր բարեկամս, — ասացի ևս՝ ձեռքս նրան մեկնելով: Բժիշկն զգացված սեղմեց այն և շարունակեց.

— Եթե ցանկանում եք, ես ձեզ կներկայացնեմ:

— Ե՞նչ եք ասում, — ասացի ևս՝ ձեռքերս իրար զարկելով, — մի՞թե հերոսներին ներկայացնում են: Նրանք այլ

կերպ շնորհանում, բայց եթե անխուսափելի մահից իրենց սիրեցյալին փրկելով:

— Եվ դուք իսկապես ցանկանո՞ւմ եք քարշ զալ իշխանադուստր ետևից:

— ԲնդՀակառակը՝ միանգամայն հակառակը... Բժիշկ, վերջապես ես հաղթանակեցի, զուր ինձ չհասկացա՞ք: Ասենք այդ ինձ վշտացնո՞մ է, բժիշկ, — շարունակեցի ես՝ բովեական լությունից հետո, — ես երբեք ինքս բաց չեմ անում իմ գաղանիքները, այլ անշափ սիրում եմ, որ դրանք գուշակեն, որովհետև այսպիսով ես միշտ կարող եմ առիթը եկած զեպքում դրանցից հրաժարվել: Սակայն դուք սկետք է նկարագրեք ինձ մայրիկին և իր աղջկան: Ե՞նչ մարդկիկ են նրանք:

— Նախ՝ իշխանութիւն մոտ 45 տարեկան կին է, — պատասխանեց Վեռները, — նրա ստամոքսը հիանալի վիճակում է, բայց արյունը փշացած է, այտերին կարմիր բծեր կան: Իր կյանքի վերջին կեսը նա Մոսկվայում է անցկացրել և այդտեղ հանգստավիճա ապրելուց հաստացել է: Նա սիրում է զայթակղիշ անեկտողներ և ինքն էլ երբեմն անվայիլուշ բաներ է ասում, երբ աղջիկը սենյակում չի լինում: Նա ինձ հայտարարեց, որ իր աղջիկն աղավնու պիս անմեղ է: Իմ ի՞նչ գործն է... Ես ուզում էի նրան պատասխանել, որպեսզի նա հանգիստ լինի, որ ես այդ ոչ ոքի չեմ ասի: Բշխանութիւն լուշկվում է ուժմատիզմից, իսկ աղջիկը՝ տառված զիտի թե ինչից, ես երկուսին էլ կարգադրեցի օրական երկուական բաժակ թիու ծծմբաջոր խմել և շարաթթ երկու անգամ լողանալ հանքաջրին հասարակ ջուր խառնած վաննայում: Իշխանութիւն կարծեմ շրամայելու սովոր չեմ. Նա հարգանք է տածում իր աղջկա խելքին ու զիտելիքներին մի աղջիկ, որն անգիրեն է կարդացել Բայրոնը և հանրահաշիվ զիտի. Մոսկվայում, ինչպես երկում է, օրիորդները զիտության են ձգտում և լավ էլ անում են, աղնիվ խոսք: Մեր տղամարդիկ առնասարակ այնպես անսիրալիր են, որ նրանց հետ կոկետություն անելը խելոք կնոց համար պիտք է որ անտանելի լինի: Իշխանութիւն շատ է սիրում երիտասարդ տղամարդկանց. իշխանագուստը որոշ արհամարհանքով է նայում նրանց վրա. մոսկվյան սովո-

բությունը՝ նրանք Մոսկվայում միմիայն քառասնամյա սրահուսներով են սնվում:

— Իսկ դուք Մոսկվայում եղել եք, բժիշկ:

— Այո՛, ես այնտեղ որոշ պրակտիկա եմ ունեցել:

— Ես կարծեմ բոլորն ասացի... Հա՛, ես մի բան, իշխանադուստրը, կարծեմ, սիրում է զատողություններ անել զգացմունքների, կրբերի մասին և այլն... նա մի ձմեռ եղել է Պետերբուրգում, և Պետերբուրգը նրան դուք չի եկել, մանավանդ՝ այնտեղի հասարակությունը, նրան երեխ սառն են ընդունել:

— Դուք այսօր նրանց մոտ ոչ ոքի շտեսա՞ք:

— Բնդշակառակը. կար մի համհարպ⁹³, մի ձգված գվարդիական⁹⁴ և ինչ-որ մի նորեկ տիկին, որ իշխանությունու ազգականութին է՝ շատ *սիրունիկ, բայց, կարծեմ շատ հիվանդ մի կին: Արդյոք դուք նրան ջրհորի մոտ շհանդիպեցի՞ք. նա միշտահասակ է, խարայաշ, կանոնավոր դիմագծերով, երեսի գույնը թոքախտափորի է, իսկ աշ այսին սև խալ ունի. նրա դեմքը ինձ զարմացրեց իր արտահայտչությամբ:

— Խա՛, — շշնչացի ես ատամներիս արանքով... — Մի՞թե:

Թժիշկը նայեց ինձ և ձեռքը սրտիս զնելով, հանդիսավոր ասաց. «Դուք ծանոթ եք նրան»... իմ սիրու, ճիշտ որ, սովորականից ավելի ուժեղ էր բարախում:

— Հիմա հաղթանակող հանդիսանալու հերթը ձերն է, — ասացի ես, — բայց ես վստահ իմ ձեր վրա՝ դուք ինձ շեք դավաճանի: Ես նրան գեռ շեմ տեսել, բայց հավատացած եմ, ձեր նկարագրածով հանաշեցի մի կնոջ, որին հնում սիրել եմ... Նրան իմ մասին ոչ մի խոսք չասեք, եթի նա հարցնի, իմ մասին վատ արտահայտվեցեք:

— Խնդրեմ, — ասաց Վեռները՝ ուսերը թոթվելով:

Երբ նա զնաց, սոսկալի մի վիշտ նեղեց իմ սիրու, Արդյոք հակատագի՞րն է նորից հանդիպեցնում մեզ Կովկասում, թե նա գիտմամբ է այստեղ եկել, իմանալով, որ ինձ կհանդիպի... և ինչպես կհանդիպենք մենք... և ապա, արդյո՞ք այդ նա է... իմ նախազգացումներն ինձ երբեք չեն խա-

րել: Աշխարհում չկա մի մարդ, որի վրա անցյալն այնպիսի իշխանություն ձեռք-բերած լինի, ինչպիս իմ վրա: Անցած տիրության կամ ուրախության ամեն մի հիշեցում ցավագնորեն զարկում է իմ հոգուն և նրանից կորզում նույն նախկին հնչումները: Ես հիմար կերպով եմ ստեղծված, ոչի՞նչ չեմ մուանում, ոչի՞նչ:

Ճաշից հետո ժամի մոտավորապես վեցին ես զբոսայգի գնացի, այնտեղ բազմություն էր հավաքվել. իշխանուհին և իշխանադուստրը նստած էին նստարանի վրա. նրանց շրջապատել էր երիտասարդությունը, որն անընդհատ սիրակիր զրուցով էր զբաղեցնում նրանց: Ես տեղավորվեցի փոքր-ինչ հեռու գտնվող մի նստարանի վրա, կանգնեցրի երկու ծանոթ դ... սպաների և սկսեցի նրանց ինչ-որ բան պատմել. երեկ պատմածս ծիծաղելի բան էր, որովհետև սպաները գժի պես բրջում էին: Հետաքրքրությունն իմ կողմը զրավեց իշխանագստերը շրջապատողներից մի բանիսին. կամաց-կամաց բոլորն էլ թողեցին նրան ու միացան իմ խմբակին: Ես չեի լուսիմ, իմ անեկողողները հիմար լինելու աստիճան խելացի էին, իմ ծաղը մեր առջելով անցնող օրիգինալ մարդկանց նկատմամբ՝ մոլեգնության աստիճան չար... Ես շարունակեցի ուրախացնել հասարակությունը մինչև արելի մայրամուտը: Իշխանադուստրը, մորք թևանցովկ արած, մի քանի անգամ անցավ իմ մոտով, ուղեկից ունենալով մի ինչ-որ կաղ ծերուկի. իշխանադուստրը հայացքը, իմ վրա ընկնելով, մի քանի անգամ դժգոհություն արտահայտեց, ջանալով արտահայտել անտարբերությունը:

— Նա ձեզ ի՞նչ էր պատմում, — հարցրեց նա այն երիտասարդներից մեկին, որ քաղաքավարությունից դրդված՝ նրա մոտն էր վերադարձել. — Երեկ շատ զվարճալի պատմություն իր քաջազործությունները մարտերում: — Նա բավական բարձրածայն ասաց այդ, և երեկի ինձ խալթելու միտումով: «Բնդ՛, — մտածեցի ես, — դուք լուրջ բարկանում եք, սիրելի իշխանադուստր, սպասեցի՞ք, դեռ ինչե՞ր են լինելու»:

Գրուշնիցկին հնակում էր նրան գիշատիչ գաղանի պիս և աշքերը նրանից շեր հեռացնում: Գրակ եմ զալիս, որ վազը

նա կիսնդրի, որպեսզի մեկն ու մեկն իրեն ներկայացնի իշխանություն: Իշխանութիւն շատ ուրախ կլինի, որովհետեւ ձանձրանում է:

16-ը մայիսի

Երկու օրվա ընթացքում իմ գործերը սաստիկ առաջ են գնացել: Իշխանադուստրը ատելով ատում է ինձ. ինձ արդեն պատմել են իմ հասցեին ուղղած երկու-երեք էպիգրամի բովանդակությունը. Էպիգրամներ, որոնք բավականաշափ խայթիչ են, բայց միաժամանակ ինքնաստրությունը շատ շոյող: Նրա համար շատ տարօրինակ է, որ ևս սովոր լինելով լավ հասարակության, մոտիկից ծանոթ լինելով իր պետքրության հորիզորու ու մորաքրոջ աղջիկներին և մորաքրոյներին, շեմ աշխատում իր հետ ծանոթանալ: Մենք ամեն օր հանդիպում ենք իրար ջրհորի մոտ, զրոսայգում. և իմ բոլոր ուժերը դորձ եմ դուսմ, որպիսզի նրանց պոկիմ իր պաշտողներին՝ փայլուն համհարզներին, դարւուկ մոսկվացիներին և ուրիշներին, և ինձ համարյա միշտ հաջողվում է: Ես միշտ ատել եմ ինձ մոտ հյուրեր ունենալը. այժմ իմ տունն ամեն օր լիբո՞ն է. Հաշում են, ընթրում, թուղթ խաղում, և, ավաղ, դուրս է զալիս, որ իմ շամպայնը նրա աշխիների մաղնիսական ուժից զորել է:

Երեկ ես նրան հանդիպեցի Զելյախովի խանությում. նա մի հիանալի պարսկական զարդ էր սահմարդում: Իշխանադուստրն ադաշում էր մայրիկին ժլատություն շանել, — այդ գորդն այնպիս կզարդարեր իր առանձնասենյակը... ես 40 ուուրի ավելի վճարեցի և գնիսի գործը. դրա համար նա վարձահատուց եղավ մի հայացքով, որի մեջ փայլում էր ամենասրան-շելի կատաղությունը: Ծաշի մոտերը ևս կարգադրեցի դիտմամբ նրա պատուհանների մոտով անցկացնել այդ գործով ծածկած իմ շերքեղական ձին: Վեռներն այդ միջոցին նրանց մոտ է եղել և ինձ ատում էր, որ այդ ահսարանը խիստ զրամատիկ էֆեկտ է առաջացրել: Իշխանադուստրն ուղում է աշխարհազրո՞ց քարոզել իմ դեմ, ևս նույնիսկ նկատել եմ, որ արդեն երկու համհարզ նրա ներկայությամբ ինձ շատ շոր են բարեւմ, սակայն ամեն օր ինձ մոտ են հաշում:

Գրուշնիցկին խորհրդավոր տեսք է ընդունել, շրջում է՝ ձեռքերը ետեր զրած ու ոչ ոքի ծանոթություն չի տալիս. նրա ուրիշն անակնկալ կերպով առողջացել է. նա հաղիկ նկատելի կաղում է: Նա առիթ է գտել խոսակցության բռնվելու իշխանություն և հետ և ինչ-որ կոմպլիմենտ ասելու իշխանադուստրին. իշխանությին, ինչպիս երեսով է, շատ էլ բժամնդիր չէ, որովհետեւ զրանից հետո Գրուշնիցկու բարեկին պատասխանում է ամենասիրալիր ժպիտով:

— Դու բացարձակապես չե՞ս ուզում ծանոթանալ Լիպովսկայաների հետ, — ասաց նա ինձ երեկ:

— Բացարձակապես:

— Ի՞նչ ես ասում. ամենահաճելի տունն է այս ջրերում: Այստեղի ողջ լավագույն հասարակությունը...

— Բարեկա՞մս, ինձ ոչ-այստեղին էլ սոսկալի ծանձրացրել է: Իսկ դու նրանց մոտ լինո՞ւմ ես:

— Դեռևս ոչ. ես մի-երկու անգամ և՛ ավելի խոսել եմ իշխանագուտեր հետ, բայց, զիտես, երեսի զոռով մարդու տուն ընկնելն անհարմար է, թեպես այդ այստեղ կիրառվում է... Ուրիշ բան է, եթե ես էպոլետներ կրեի:

— Ի՞նչ ես ասում. դու այսպիս շա՞տ ավելի հետաքրքրական ես: Դու պարզապես չես կարողանում օգտվել քո շահեկան դրությունից... Այս զինվորի շինելը հերոս և տառապյալ է դարձնում քեզ ամեն մի զգայուն օրիորդի աշքում:

Գրուշնիցկին ինքնարվական ժպտաց:

— Դատարկ բան ես ասում, — ասաց նա:

— Ես հավատացած եմ, — շարունակեցի ես, — որ իշխանադուստրն արգեն իսկ սիրահարված է քեզ:

Նա մինչ ականջները կարմրեց ու փրփեց:

Օ՛ ինքնասիրություն, դու այն լժակն ես, որով Աբքիմեղը⁹⁶ կամենում էր երկրագումզը բարձրացնել...

— Դու միշտ կատակում ես, — ասաց նա, ցույց տակով, իբր թե բարկանում է. — Նախ նա դեռ ինձ այնքան քիչ է ճանաշում...

— Կանայք սիրում են միայն նրանց, ում չեն ճանաշում:

— Նրան դուր դալու հավակնություն ես բնավ ել չունեմ.

ևս պարզապես ուզում եմ ծանոթանալ հանկի տան հետ, և շատ ծիծաղելի կլիներ, եթե ես որիէ հոլյուբը ունենայի... Այ, գուք, օրինակ, այդ ուրիշ բան է, գուք՝ պետերության հաղթողներդ, նայում եք թե չէ, կանայք հաշում են... իսկ դու գիտե՞ս, Պելորին, թե իշխանագուստը բո մասին ինչ է ասել...

— Ինչպե՞ս, նա արդեն իմ մասին բան է ասե՞լ քեզ...

— Բայց մի՛ ուրախանաւ: Ես մեկ անգամ պատահմամբ խոսակցության մեջ մտա նրա հետ ջրհորի մոտ. նրա երրորդ խոսքը եղավ՝ «Ո՞վ է այդ պարոնը, որ այլպիսի տհաճ, ծանր հայացք ունի. նա ձեզ հետ էր այն ժամանակ...»: Նա կարծրեց և չէր ուզում տալ այն օրվա անունը, չիշելով իր սիրալիք վարժունքը:— Կարիք չկա, որ գուք օրն ասեք, — պատասխանեցի ևս նրան. Նա հավերժ հիշելի կլինի ինձ համար...— Բարեկա՞մս, Պելորին, ես քեզ չեմ շնորհավորում, դու նրա մոտ վատ համարում ունես... Բայց ձշմարիտ, ափսո՞ս, որովհետև Մերին շատ սիրելի է:

Հարկավոր է նկատել, որ Գրուշնիցկին այն մարդկանցից է, որոնք, խոսելով մի կնոջ մասին, որին հազիվ ծանոթ են, անվանում են նրան իմ Մերի, իմ Sophie*, եթե նա բախտ է ունեցել նրանց գուք գալու...

Ես լուրջ տեսք ընդունեցի և պատասխանեցի նրան.

— Այո՛, նա տգեղը չէ: Միայն թէ զգուշացի՛ր, Գրուշնիցկի Ռուս օրիորդները մեծ մասամբ պլատոնական⁹⁷ սիրով են սնվում, առանց ամռանության միտք խառնելու դրան. իսկ պլատոնական սերն ամենաանհանդիսան է: Իշխանակուստը կարծիմ այն կանանցից է, որոնք ցանկանում են, որ իրենց զգարձացնեն. եթե երկու բոսկ իրար վրա նա քո մոտ ձանձրանա, դու անդարձ կորած ես. քո լուսությունը պետք է գրգռի նրա հետաքրքրությունը, քո խոսակցությունը երբեք շահետք է լիովին բավարարի այդ հարցասիրությունը, դու պետք է ամեն բռնկ անհանգստացնես նրան. նա հրապարակով քեզ համար տասն անգամ կարծամարհի կարծիքները և այդ գո-

* Սոֆի, Սոֆիա (ֆր.).

հարաբերություն կանվանի ու, դրա փոխարեն իրեն վարձատրելու համար՝ կսկսի քեզ առնչել ու հետ պարզապես կասի, թե ինքը քեզ տանել չի կարող, եթե դու իշխանություն ձեռք լրերս նրա նկատմամբ, ապա նրա առաջին համբույրն անգամ երկրորդի իրավունք չի տա քեզ. նա քեզ հետ սիրուն ուզածի շափով կոկետություն կանի, իսկ մի-երկու տարուց հետո, մայրիկին հնագանդ լինելու հետևանքով, մարդու կգնա որևէ մի այլանդակի և կասի քեզ հավատացնել, թե ինքը գգրախտ է, թե ինքը միայն մի մարդու է սիրել, այսինքն՝ քեզ, բայց երկինքը չի կամեցել իրեն միացնել այդ մարդու հետ, որովհետեւ նրա հագին գորշ շինել է եղել, թեպես այդ հաստ գորշ շինելի տակ տրոփել է մի կրավառ և աղնիվ սիրտ...

Գրուշնիցկին բռունցքը խփեց սեղանին և սկսեց ետ ու առաջ քայլել սենյակում:

Ես ներքուստ քրքացի և նույնիսկ մի երկու անգամ ժպանցի, բայց նա, բարեկախտարար, այդ չնկատեց: Ակընհայտ է, որ նա սիրահարված է, որովհետև առաջվանից ամելի դյուրահավատ է դարձել. նրա մասին մինչև իսկ արծաթի մատանի է երկացել՝ այսաեղ շինված, սևանախչ մատանի, որն ինձ կասկածելի թիւց... Ես սկսեցի տնտղել այդ մատանին, և ի՞նչ... Մերի անունը փոքր տառերով քանդակված էր նրա ներսի կողմում և զրա կողքին՝ այն օրվա թիվը, երբ Մերին գետնից վերցրեց նշանավոր բաժակը: Ես թաքցրի իմ գյուտը, ես չեմ ուզում նրա բերանից զոռով խոստվանություն կորզել. ես ուզում եմ, որ նա ինքն ինձ հավատարմատարն ընտրի, և ահա այդտեղ է, որ հս կհրճվեմ...

Այսօր ես ուշ վերկացաւ. գալիս եմ ջրհորի մոտ. արդեն ոչ ոք չկա: Շոդն սկսվում է: Սպիտակ թավ ամբերն արագ փախչում էին ձյունապատ սարերից՝ խոստանալով մրրիկ. Մաշուկի գլուխը ծխում էր, ինչպես հանգցրած չա՞;. նրա շուրջը ոլորվում և օձերի պես սողում էին ամպերի գորշ պատաներ, որոնց ընթացքը կասեցրել էին և որոնք կարծես կպել էին Մաշուկի փշոտ թիւերից: Օդը հաղեցած էր էլեկտրականությամբ: Ես մտա խաղողենու ալելի խորը. ալել, որ տանում է զեպի քարանձավը. Ես տիտուր էի: Ես

մտածում էի այսին խալ ունեցող այն երիտասարդ կնոջ մասին, որի մասին ինձ պատմել էր բժիշկը... Ինչո՞ւ է նա այստեղ: Եվ նա՝ է արգյուք: Եվ ևս ինչո՞ւ եմ կարծում, թե նա է, և ինչո՞ւ նույնիսկ այսքան հավատացած եմ դրան: Այսերին խալեր ունեցող քի՞չ կանայք կան: — Այսպիս խորհրդածելով, ևս մոտեցա բուն քարանձավին: Տեսնեմ՝ նրա կամարի զովար ստվերով, քարե նստարանի վրա նստած է մի կին՝ ծղոտե շլյապա դրած, ու շալով փաթթված, գլուխը կրծքին կախած. շլյապան ծածկում էր նրա դեմքը: Ես ուզում էի արդին հատ դառնալ, որպեսզի շխանգարեմ նրա անբջանքը, երբ նա ինձ նայեց:

— Վերա՛, — ակամա բացականչեցի ևս:

Նա ցնցվեց ու գունատվեց: — «Ես գտեի, որ դուք այստեղ եք», — ասաց նա: Ես նստեցի նրա մոտ և բռնեցի նրա ձեռքը: Այդ սիրելի ճայնի հնչունը լսելով՝ վաղուց մոռացված դողն անցավ իմ երակներով. Նա իմ աշքերի մեջ նայեց իր խոր և հանգիստ աշքերով, նրանց մեջ կար անվտաշություն և հանդիմանության նման մի արտահայտություն:

— Վաղուց է, որ մենք չենք տեսնվել, — ասացի ևս:

— Վաղուց, և երկուս էլ շա՞տ բանով ենք փոխվել:

— Ուրիշն դու այլևս ինձ չե՞ս սիրում:

— Ես ամուսնացած եմ... — ասաց նա:

— Դարձյա՞լ: Սակայն մի քանի տարի առաջ այդ պատմարը դարձյալ դոյլություն ուներ, այնինչ...

Նա իր ձեռքը դուրս քաշեց իմ ձեռքի միջից, և նրա այտերը բռնկվեցին...

— Գուցե դու սիրո՞ւմ ես քո երկրորդ ամուսնուն...

Նա շպատասիմնեց և երեսը շուր տվեց:

— Թե՞ նա շատ խանդուն է:

Լուսիյուն:

— Ե՞նչ: Նա երիտասարդ է, գեղեցիկ, մանավանդ երևի հարուստ, և դու վախենո՞ւմ ես... — Ես նայեցի նրան ու վախեցա: Նրա դեմքն արտահայտում էր խոր հուսահատություն, աշքերում արցունքներ էին փայլում:

— Ասա՛ ինձ, — վերջապես շշնչաց նա, — քեզ շա՞տ է ուրախացնում ինձ տանջելը: Ես պետք է որ ատեի քեզ! Այն

օրից, ինչ մենք իրար ճանալում ենք, որ ինձ տանջանքներից բացի, ոչինչ չես տվել... — Նրա ձայնը դողաց, նա թեքվեց իմ կողմը և գլուխը խոնարհեց կրծքիս:

«Միգուցե, — մտածեցի ևս, — դու հենց դրա համար էլ սիրել ես ինձ. ուրախությունները մոռացվում են, իսկ վշտերը՝ երբեք...»:

Ես ամուր գրկեցի նրան, և մենք ալզպիս երկար մնացինք: Վերջապես մեր շրթունքները մոտեցան և միացան բոցավոր, արբեցնող համբույրով. նրա ձեռքերը սառուցի պես սառն էին, գլուխն ալրվում էր: Այսող մեր միջև սկսվեց մեկն այն խոսակցություններից, որոնք թղթի վրա առնվելով՝ իմաստ չեն ունենում, որոնք չի կարելի կրկնել և չի կարելի մինչև իսկ միտք պահել. հնչունների նշանակությունը փոխարինում է բառերին և լրացնում նրանց իմաստը, ինչպես խոտական օպերայում:

Նա բացարձակապես շի ուզում, որ ևս ծանոթանամ իր ամուսնու հետ — այն կադ ծերուկի, որին ես հարևանցիորեն տեսա զրուայգում. Վերան ամուսնացել էր դրա հետ իր որդու համար: Վերայի ամուսինը հարուստ է և ունատիզմով հիվանդ: Ես ոչ մի ծաղր թույլ չտվի նրա հասցեին. Վերան հարգում է նրան հոր պես և կխարի նրան՝ որպես իր ամուսնու... Տարօրինա՞կ րան է մարդկային սիրոն ընդհանրապես և, կոնցը՝ մանավանդ:

Վերայի ամուսինը՝ Սեմյոն Վասիլիկի Գ...վը, իշխանութիւնով կապովսկայայի հեռավոր աղդականն է: Նա ապրում է իշխանությունու հարհանությամբ: Վերան հաճախ է լինում իշխանությունու մոտ, ևս խոսք տվի Վերային ծանոթանալ լիգովսկայայի հետ և քարշ գալ իշխանադատեր հետեւից, որպեսզի ամուսնու ուշադրությունը հեռացնեմ Վերայից: Այսպիսով իմ ծրագրերը բուրովին շքանդեցին, և ես ուրախ ժամանակ կանցկացնեմ...

Ուրա՛խ... Այս՛, ես արդեն անցել եմ հոգեկան կյանքի այն շրջանը, երբ միայն երջանկություն են փնտրում, երբ սիրութ մնկնումնելին ուժեղ ու կրուտ կերպով սիրելու անհրաժեշտություն է զգում. այժմ ես միայն ցանկանում եմ սիրված լինել, այն էլ շատ քշերի կողմից. մինչև անդամ ինձ թիւում է, թե

մի մնայուն կապն էլ ինձ համար բավական կլինի —սրտի մի սղործելի սովորություն...

Մի բան ինձ միշտ տարօրինակ է թվացել՝ ևս երեք սիրած կնոջ սորությունը չեմ դարձել. ընդհակառակը, ևս միշտ անհաղթահարելի իշխանություն եմ ձեռք բերել նրա կամքի և սրտի նկատմամբ՝ բոլորովին դրա համար չոգ տարած մինելով: Ինչի՞ց է այդ. արդյոք նրանի՞ց, որ ես երեք ոչ մի բան շատ չեմ ախտուել, և որ նրանք ամեն բռպե վախսեցի են ինձ ձեռքից բաց թողնել, թե՝ այդ ուժեղ օրգանիզմի մագնիսական ազդեցություն է. թե՝ ինձ պարզապես չի հաջողվել համառ կամքի տեր կնոջ հանդիպել:

Պետք է խոստովանել, որ ես, իսկապես, շեմ սիրում ուժեղ բնավորության տեր կանանց. ի՞նչ նրանց բանն է այդ ուժեղ բնավորությունը...

Ճիշտ է, հիմա հիշեցի. մեկ անգամ, միայն մեկ անգամ ես սիրել եմ ուժեղ կամք ունեցող մի կնոջ, որին երբեք չեմ կարողացել հաղթել... Մենք բաժանվել ենք որպես թշնամիներ, սակայն, իմ ես նրան մի հինգ տարի ուշ պատահեի, այդ անգամ էլ գուցե մենք այլ կերպ բաժանվեինք...

Վերան հիվանդ է, շատ հիվանդ, թեպետև այդ չի խոստովանում. Ես վախենում եմ, որ նրա հիվանդությունը թոքախալինի կամ այն հիվանդությունը, որ անվանում են նենց lente⁹⁰, մի հիվանդություն, որ բոլորովին ոռուական չէ, և որ մեր լեզվում իր անունը չունի:

Փոթորիկը վրա համավ այն ժամանակ, երբ մենք քարանձավում էինք, և մի ավելորդ կես ժամ էլ պահեց մեզ այստեղ: Վերան ինձ շարկագրեց երդվել, որ համատարիմ կմնամ իրեն, չարցրեց, արդյոք մեր բաժանվելուց հետո ուրիշներին սիրել եմ ես, թե ոչ... Նա նորից անձնատուր եղավ ինձ նախկին անհոգությամբ, և ես նրան չեմ խարի. Նա աշխարհում միակ կինն է, որին ես անկարող կլինելի խարի: Ես գիտեմ, մենք շուտով նորից կանչառվենք և, գուցե, առհավետ. երկուս էլ տարբեր ճանապարհներով կփնանք մինչև գերեզման. բայց նրա հիշատակն անխախտ կմնա իմ հոգու մեջ, ևս այս միշտ կրկնել եմ նրան, և նու ինձ համատում է, թեպետև հակառակն է ասում:

Վերջապես մենք բաժանվեցինք. ևս երկար հետեւեցի նրան հայացքով, մինչև որ նրա շլապան ծածկվեց թիերի և ժայռերի ետևում: Իմ սիրուր ցավագնորեն սեղմվեց, ինչպես առաջին բաժանման ժամանակ: Օ՛, ես ինչպես ուրախացա այս զգացմունքի համար: Չլինի՝ թե երիտասարդությունս է ուզում վերագանակ իր բարերար փոթորիկներով, թե՝ այդ լոկ նրա հրաժեշտի հայացքն է, վերջին նվերը —ի հիշատակի... Բայց ծիծաղելի է մտածել, որ արտարինով ես գեռ երիխա եմ. դեմք թեև գունաա է, բայց զեռ թարմ է, մարմնիս անդամները ճկուն են և բարեկազմ, խիս գանգուրներս ոլորուն են, աշքերս՝ բոցավառ, արյունս եռում է...

Տուն վերագանակով, ևս ձի նստեցի և տափաստան սլացա. ևս սիրում եմ կրակոտ ձի նստած՝ սուրալ բարձր խոտի միջով, անապատային քամու դիմաց, ագաշությամբ կուլ եմ տալիս բուրսումնալից օգը, և հայացքս ուղղում կապույտ հեռվին՝ ջանալով որսալ առարկաների մշուշապատ ուրվագծերը, որոնք ավելի ու ավելի են պարզանում: Ինչ վիշտ էլ որ ծանրացած լինի սրտիս, ինչ անհանգստություն էլ շարշարելիս լինի միտքս, — բոլորը բռպեապես ցնդում է. Հոգիս թեթեանում է, մարմնիս հոգնածությունը հազմում է մտքիս անհանգստությանը: Չկա այնպիսի կանացի հայացք, որ ես շմոռանամ՝ հարավային արեով լուսազարդված գանգուր սարեր, կապույտ երկնինք տեսնելիս, կամ ժայռից-ժայռ գահավիժող վտակի աղմուկին ունկնդրելիս:

Ես կարծում եմ, որ իրենց գիտանոցներում հորանչող կազակները, ինձ առանց անհրաժեշտության և առանց նպատակի սուրալիս տեսնելով, երկար են տանչվել այդ հանելուկից, որովհետեւ հագանորեն հագուստից նրանք ինձ շերքեզի տեղ են դրել: Ինձ իրոք ասում էին, որ շերքեզական հագուստով ձի նստած ժամանակ ես ավելի եմ նման կարարդացու, քան կարարդացիներից շատերը: Եվ ճիշտ որ, ինչ վերաբերում է այդ ազնիվ մարտական հագուստին, ևս կատարյալ գենդի⁹¹ եմ — ոչ մի ավելորդ տրեկ. Թանկարժեք զենքս ունի պարզ զարդարանք, գդակիս մորթու մասը ոչ շատ երկար է, ոչ շատ կարճ, սոնապաններս և քոշերս կարված են ճիշտ և ճիշտ իմ ոտքերի շափով. բիշմես սպիտակ է, շերքեղկամ՝ մուգ գոր-

շագույն: Ես երկար իմ ուսումնասիրել լեռնցիների կեցվածքը ձիու վրա: Ոչ մի բանով իմ ինքնասիրությունն այնպես չեք շոյի, ինչպես կովկասյան ձևով ձի քշելու իմ վարպետությունն ընդունելով: Ես չորս ձի իմ պահում՝ մեկն՝ ինձ համար, երեք՝ բարեկամներիս, որպեսզի դաշտերով քարշ գալս ձանձրալի վինի. նրանք հաճույքով են վերցնում իմ ձիերը և երբեք ինձ հետ միատեղ շնո՞քում:

Սրբեն երեկոյան ժամի վեցն էր, երբ ես հիշեցի, որ ճաշելու ժամանակ է: Չիս հոգնաբեկ էր եղել. ես դուրս եկա այն ճանապարհը, որ Պյատիգորսկից տանում է դեպի գերմանական գաղութը, որ հանքաջրերի հասարակությունը հաճախ գնում է ու րիպենուք*: Ճանապարհը գալարվում էր թփերի միջով, իշնելով փորքիկ ձորակներ, որտեղ բարձր խոտերի հովանու տակ աղմկոտ գետակներ են հոսում. շուրջը, ամֆիթատրոնի ձևով, բարձրանում են թեշտուի, Օձասարի, Երկաթասարի և ձաղատ սարի կապույտ հսկա զանգվածները. Այստեղի բարբառով բալկա կոշլող այգախիսի ձորակներից մեկն իշնելով, ես կանգ առաջ ձին ջրելու. այդ առաջին ճանապարհին երկաց աղմկոտ և փայլուն մի հեծելախումը—կանայք ու ու երկնագույն ամազոններով¹⁰⁰, տղամարդիկ չերժեզականի և Նիմեի-Նովգորոդի հագուստների խառնուրդ հանդիսացող զգեստներով. առօնից ձիով գնում էր Գրուշնիցին՝ իշխանադուստր Մերիի հետ:

Հանքային ջրեր եկող կանայք դեռևս հավատում են, թե շերքեզներն օրը ցերեկով հարձակումներ են գործում. երեխ այդ պատճառով է, որ Գրուշնիցին իր սոսկական զինվորի շինելի վրայից թուր և մի գույգ էլ առոճանակ է կապել. նա բավական ծիծաղելի էր իր այդ հերոսական զգեստավորմամբ: Բարձր թուփը ծածկում էր ինձ նրանցից, բայց նրա տերեների միջով ես կարողաց տեսնել ամեն ինչ և նրանց դիմքի արտահայտությունից գուշակել, որ խոսակցությունը սանսիմենտալ բնույթ ունի: Վերջապես նրանք մոտեցան վայրէջին.

* (Փր.) պիկնիկի — զվարճակի խմբական զբոսանքի և նախաճաշի բաղադրից դուրս:

Գրուշնիցին իր ձեռքն առավ իշխանադստեր ձիու սանձը, և այն ժամանակ ես լսեցի նրանց խոսակցության վերջը.

— Եվ դուք ձեր ամբողջ կյանքն ուզո՞ւմ եք անցկացնել Կովկասում: — ասաց իշխանադուստրը:

— Ռուսաստանի ի՞նչ է ինձ համար, — պատասխանեց նրա կավալերը. — մի երկիր, որտեղ հաղարավոր մարդիկ արհամարհանքով պիտի նայեն իմ վրա, որտեղնետև իրենք ինձանցից հարուստ են, մինչդեռ այստեղ — այստեղ այս հաստ շինելը շխանգարեց, որ ես ծանոթանամ ձեզ հետ...

— Քննչակառակը... — ասաց իշխանադուստրը՝ կարմրելով:

Գրուշնիցիու դիմքը հաճույք արտահայտեց: Նա շարունակեց:

— Այստեղ իմ կյանքն աղմկոտ, աննկատելի և արագ կանցնի վայրենիների զնդակների տակ, և եթե աստված ամեն տարի ինձ ուղարկի մի պայծառ կանցի հայացք, մեկը՝ նման այն հայացքին...

Այդ պահին նրանք հավասարվեցին ինձ. ես մտրակեցի ձիու և դուրս եկա թփի ետևից...

— Mon dieu, un circassien!...* բացագանձեց սարսահած իշխանադուստրը:

Նրան բոլորովին հակառակն ապացուցելու համար, ես փրանսուերեն պատասխանեցի, թեթևակի կունալով.

— Ne craignez rien, madame, je ne suis pas plus dangereux que votre cavalier**.

Իշխանադուստրը շփոթվեց, բայց ինչից. իր սխալից, թե այն բանից, որ իմ պատասխանը նրան հանդուն թիւցաւ: Ես կուպեի, որ իմ վերջին ենթադրությունը ճիշտ լիներ: Գրուշնիցին դժուն հայացք գցեց իմ վրա:

Ուշ երեկոյան, այսինքն՝ ժամի մոտ տասնմեկին, ես դանցի լորիների ալեյն զբոսնելու: Քաղաքը բնած էր, միայն մի բանի պատուհաններից լուսեր էին երևում: Երեք կողմից սկին տալիս ժայռերի կատարները, Մաշուկի ճյուղավո-

* Աստված իմ, չերքեզը (Փր.):

** Մի՛ վախեցեք, տիրուժի, ես ավելի վտանգավոր չեմ, բայց ձեր կավալերը:

րումները, որի գագաթին շարագույժ ամպ կար, արևելքում բարձրանում էր լուսինը. Հեռվում արծաթի ծովերի պես շողում էին ձյունապատ սարերը: Ժամապահների կանչերը և զիշերը բաց թողած տաք ազդյուրների ջրի ազմուկը հաջորդում էին իրար: Եղրեմն փաղոցում լսվում էր ձիու ոտքերի հնչեղ դոփյուն, որին ուղեկցում էր նողայական սայլի ճռոցը և թաթարական թափծոս երգի կրկնակը: Ես նստեցի նստարանի վրա և ընկա մտքերի մեջ... Ես անհրաժեշտություն էի զգում մտքերս արտահայտելու բարեկամական մի խոսակցության մեջ... բայց ո՞ւմ հետ... «Հիմա ի՞նչ է անում Վերան», — մտածում էի ես... Ես թանկ կվճարեի, եթե կարողանայի այս բուպեին սեղմել նրա ձեռքը:

Հանկարծ լսեցի արագ և անհավասար քայլերի ձայն... Երեմի Գրուշնիցին է... Այդպիս է, որ կա:

— Որտեղից:

— Իշխանութիւնի կիովսկայայի մոտից, — ասաց նա խիստ ծանրակշիռ տոնով: — Ինչպես է երգում Մերին...

— Գիտե՞ս ինչ, — ասացի ես նրան, — գրագ եմ գալիս, որ նա չգիտի, թե դու յունկեր ես. Նա կարծում է, թե դու աստիճանից զրկված սպա ես...

— Կարող է պատահել: Ինձ ի՞նչ... — ցրված ասաց նա:

— Ոչ, ես այս հենց այնպես եմ ասում...

— Իսկ գիտե՞ս, որ դու այսօր նրան սաստիկ բարկացրիր: Նա գտավ, որ այդ լսված հանդգնություն է, ես հազիր կարողացա նրան համոզել, որ դու այնքան լավ ես դաստիարակված և այնպես լավ ես ճանաչում բարձր հասարակությունը, որ նրան վիրավորելու մտադրություն ունենալ չէիր կարող: Նա ասում է, թե դու կտի հայացք ունիս, թե դու երեխ ամենաբարձր կարծիքի ես քո մասին:

— Նա չի սխալվում... Իսկ դու չե՞ս՝ կամենում արդյոք նրան պաշտպանել:

— Ես ափսոսում եմ, որ դեռ այդ իրավունքը չունեմ...

«Օ-հո՛, — մտածեցի ես, — սա, երեխ, արդեն հույսեր ունի»...

— Սակայն, ավելի վատ քեզ համար, — շարունակեց Գրուշնիցին: — Հիմա քեզ համար դժվար է նրանց հետ ծա-

նոթանալ, բայց ափսո՞ս. Ինձ ծանոթ բոլոր տներից սա ամենահաճելին է...

Ես ներքուստ մատացի:

— Ինձ համար ամենահաճելի տունը հիմա՝ իմ տունն է, — ասացի ես՝ հորանչելով ու ոտքի ելա, որպեսզի գնամ:

— Բայց խոսապվանիք, որ դու զզում ես:

— Ի՞նչ անհեթեթություն, եթե ես ցանկանամ, վաղը երեկոյան նեթ կլինեմ իշխանություն մոտ...

— Կուսնե՛նք...

— Մինչև իսկ՝ քեզ հաճույքը պատճառելու համար՝ կըսկսեմ քարշ կատ իշխանադսեր ետեից...

— Հա՛, եթե նա ցանկանա քեզ հետ խոսել...

— Ես կսպասեմ միայն այն բոպեին, երբ քո խոսակցությունը նրան կձանձրացնի... Յտեսություն...

— Իսկ ես կերպամ թափառելու—հիմա ես ոչ մի կերպ քնել չեմ կարող... Լսիր, ավելի լավ է արի գնանք ուստորացիա¹⁰¹, այնտեղ թուղթ են խաղում... Այժմ ինձ ուժիղ զգայություններ են հարկավոր...

— Ցանկանում եմ, որ տանով տաս...

Ես տուն գնացի:

21-ը մայիսի

Համարյա մի շաբաթ է անցել, իսկ ես դեռ չեմ ծանոթացել կիովսկայաների հետ: Հարուստ դեպքի եմ սպասում: Գրուշնիցին ստվերի պես ամենուրեք հետեւում է իշխանադսերը. նրանց խոսակցություններն անվերջ են. Գրուշնիցին ե՞րբ է վերջապես ձանձրացնելու նրան... Մայրը զրաւաշդրություն չի դարձնում, որպէսէտ Գրուշնիցին վեսացու չէ: Ահա՝ մայրերի տրամաբանությունը ես նկատել եմ երկու երեք քնքուշ հայացք, — պետք է դրան վերջ գնել:

Երեկ առաջին անգամ զրհորի մոտ երևաց Վերան... Այն օրից, ինչ մենք հանդիպեցինք քարանձավում, նա տնից դուրս չի եկել: Մենք միաժամանակ ցած իշեցրինք բաժաներս և կուանալիս նա շշնչաց:

— Դու չե՞ս ուզում ծանոթանալ կիովսկայաների հետ... Մենք միայն այնտեղ կարող ենք տեսնվել...

Կշտամբա՛նք... ձանձրալի՛ է: Բայց ևս արժանի եմ
դրան...

Ի գեպ՝ վաղը վաղօրոր ցուցակազրկած մարդկանց պա-
րահանդես է ուստորացիայի դահլիճում, և ես մազուրկա եմ
պարելու իշխանադստեր հետ:

22-ը մայիսի

Ուստորացիայի դահլիճը վերածվել է ազնվականների
ժողովարանի (ակումբի, քարզմ.) դահլիճի: Ժամի 9-ին բռնոր
Հավաքվեցին: Իշխանութիւն իր աղջկա հետ վերջին ելողներից
էր: Շատ կանայք նախանձով ու շարակամությամբ նայեցին
նրան, որովհետև իշխանադստեր Մերին ճաշակով է հագ-
նրվում: Նրանք, ովքեր իրենց այստեղի արհստոկրատությունը
են համարում, նախանձը թաքցնելով, նրան հարեցին: Ի՞նչ
անել: Այստեղ, ուր կա կանաց հասարակություն, այստեղ
իսկույն հանդես կգան բարձր և ցածր շրջաններ: Պատուհանի
տակ խոնված հասարակության մեջ կանգնած էր Գրուշ-
նիցկին՝ երեսը ապակուն սեղմած և հայացքն իր դիցուուց
շնորացնելով, վերջինս, նրա մոտով անցնելով, հազիվ նկա-
տելի դլխի շարժումով բարեկեց նրան: Գրուշնիցկու դեմքն արեի
պես փայլեց... Պարերն սկսվեցին լեհական պարով: ապա՝
վալս նվազեցին: Խթանները զնդզնդացին, քղանցքները բարձ-
րացան ու ֆրուացին:

Ես կանգնած էի վարդագույն փետուրներով հովանավոր-
ված մի հաստ կնոջ ետևում. նրա հագուստի ճոխությունը
հիշեցնում էր ֆիֆմերի¹⁰² ժամանակները, իսկ նրա անհարթ
ժաշկի խայտարդեսությունը՝ սև տափտալից պատրաստվող
մուշկաների¹⁰³ երջանիկ դարաշրջանը: Նրա պարանոցի ամե-
նամեծ գորտուովը ծածկված էր մանյակի ճարմանդով: Նա
ասում էր իր կավալեր՝ դրագունի կապիտանին:

— Այդ իշխանադստեր լիգովսկայայն անտանելի աղջկա
մեկն է, երևակայեցիք, հրեց ինձ և ներողություն շինդրեց ու
դեռ ես էլ դարձավ ու լոռնետով նայեց ինձ... C'est impay-
able!... Եվ ինչո՞վ է հպարտանում: Արժեր դրան մի խրատել...

* Այս գվարճալի է (ֆր.):

— Այդ դժվար րան չէ, — պատասխանեց հաճոյակատար
կապիտանը և գնաց մյուս սենյակը:

Ես իսկույն մոտեցա իշխանադստեր և հրավիրեցի նրան
վալս պարելու, օգտվելով այստեղի սովորությունների
ազատությունից, որոնք թույլ են տալիս անծանոթ կանաց
հետ պարել:

Նա հազիվ կարողացավ հարկադրել իրեն շժպտալու և
թաքցնելու իր հրձվանքը. սակայն նրան բավական շուտ հա-
ջողվեց ընդունել միանգամայն անտարբեր և մինչև իսկ խիստ
տեսքի նա անփութորեն ձեռքն իջեցրեց իմ ուսին, գլուխը
փոքրինչ մի կողմ խոնարհեց, և մենք սկսեցինք: Ավելի հեշ-
տալիք ու ձկուն իրան ևս չեմ պատահել: Նրա թարմ շունչն
առնում էր իմ երեսին. երբեմն վալսի փոթորկում իր ընկեր-
ներից բաժանված մի խոպոպ սահում էր իմ այրվող այտի
վրայով... Ես կատարեցի երեք տուր¹⁰⁴: (Նա զարմանալի լավ
է վալս պարում): Նա հեռում էր, աշքերը մթնել էին, կիսա-
րաց շրթունքները հազիվ կարողացան շշնչալ անհրաժեշտ
«merci monsieur»-ն*:

Մի քանի բոպի տևող լուսիթյունից հետո ևս ասացի նրան՝
ամենահնագանդ տեսք ընդունելով.

— Ես միել եմ, իշխանադստեր, որ ձեզ բոլորովին ան-
ծանոթ լինելով, ևս արդեն դժբախտություն եմ ունեցել ձեր
անրարիհաճությանն արժանանալու... որ դուք ինձ հանդուզն
եք համարել... Մի՞թե այդ ճիշտ է...

— Եվ դուք ճիշտ կուղենայիք, որ այդ կարծիքը հաս-
տատվի՝ իմ մեջ, — պատասխանեց նա հեղինական ծամածու-
թյամբ, որ սակայն շատ է սազում նրա շարժուն զեմքին:

— Եթե ևս հանդություն եմ ունեցել որևէ բանով վիրա-
վորելու ձեզ, ապա թույլ տվեր ինձ ձեզնից ներողություն
խնդրելու ավելի մեծ հանդմանությունն ունենալ... Եվ, անկենծ
եմ ասում, ևս շատ կուղենայի ապացուցել ձեզ, որ դուք իմ
նկատմամբ սիսալված եք եղել...

— Ձեզ համար այդ բավական դժվար կլինի...

— Ինչո՞ւ...

— Որովհետեւ դուք մեղ մոտ չեք լինում, իսկ այս պարա-
հանդմաները երեմի հաճախ չեն կրկնվի:

* Ենորհակալություն, պարոն (ֆր.):

Այդ նշանակում է, մտածեցի ես, որ նրանց դռներն առավելու փակ են լինելու ինձ համար:

— Քիտեք, իշխանադուստր,— ասացի ես որոշ դժկամությամբ,— երբեք չպետք է մերժել մեզա եկող հանցավորին. Հուսահատությունից նա կարող է կրկնակի հանցագործ դառնալ... և այն ժամանակ...

Մեզ շրջապատողների քրքիջն ու քշիչոցը հարկադրեցին ինձ շրջվել և բնդշատել իմ ֆրազը: Ինձանից մի քանի քայլ հնու կանփնած էին մի խումբ տղամարդիկ, և նրանց թվում դրագունի կապիտանը, որը թշնամական մտադրություններ էր հայտնել նազելի իշխանադստեղ գեմ. նա ինչ-որ քանից շատ էր զո՞, ձեռքերն էր շփում, քրքում և ակնարկներ փոխանակում ընկերների հետ: Հանկարծ նրանց շրջանից բաժանվեց ֆրակը հագին մի պարոն՝ երկար բեղերով ու կարմիր քիթումութով և իր անհաստատ քայլերն ուղղեց ուղղակի իշխանադստեր կողմը. նա հարրած էր: Շփոթված իշխանադստեր դիմացը կանգ առնելով և ձեռքերը ետեր դրած, նա իշխանադստեր վրա հանց իր ադառո-գորշ աշքերի հայացքը և խոպոտ դիսկանտով արտասանեց.

— Պերմեակ*... էի, էլ ես ինչ ասեմ... պարզապես հրավիրում եմ ձեզ մազուրկա պարելու ինձ հետ...

— Ի՞նչ եք կամենում,— արտասանեց իշխանադուստրը դոդոզուն ձայնով, շուրջը ադերսող հայացք զցելով: Ավա՞զ, նրա մայրը հեռու էր, իսկ իր ծանոթ կավալերներից իր մոտ ոչ ոք չկար, միայն համշարզն էր, կարծեմ, այս բոլորը տեսնում, բայց նա էլ ամբոխի ետևն էր թաքնվել, որպեսզի իրեն տհաճ պատմության մեջ շխառնեն:

— Հը՞—, — ասաց հարբած պարոնը, աչքով անելով դրագունի կապիտանին, որը նշաններով խրախուսում էր նրան.— մի՞թե ձեզ հաճելի չե՞... ես զարձյալ պատիւլ ունեմ հրավիրելու ձեզ քուց տաշւե*^{**} Դուք, զուցե, կարծում եք, թե ես հարբած եմ: Այդ ոչի՞նչ... Շատ ավելի ազատ կարող ինք զգալ մեզ, կարող եմ վստահեցնել ձեզ...

* Թույլ ավելք (ֆր.).

** Մազուրկա պարելու (ֆր.).

Ես տեսնում էի, որ իշխանադուստրը վախից ու գայրութից քիչ է մնում ուշաթափվի:

Ես մոտեցած զարրած պարոնին, բավական ամուր բռնեցի նրա ձեռքը և, շեշտակի նրա աչքերին նայելով, ինպրեցի հեռանալ, որովհետեւ, ավելացրի ես, իշխանադուստրը վաղուց արգեն խոստացել է մազուրկան ինձ հետ պարել:

— Է՞զ, ինչ արած... Մեկ ուրիշ անգամ,— ասաց նա ծիծագելով, և հեռացավ գեալի իր ամութահար եղած ընկերները, որոնք խսկուն նրան տարան մյուս սենյակը:

Ես վարձատրվեցի խոր, սրանչելի հայացքով:

Իշխանադուստրը մոտեցավ իր մորր և բոլորը պատմեց նրան, մայրը գտավ ինձ ամբոխի մեջ և շնորհակալություն հայտնեց: Նա հայտարարեց ինձ, որ ճանաչելիս է հղել մորս և բարեկամական հարաբերությունների մեջ է մոտ կես դյուժին մորաքույր-հորաքույրներիս հետ:

— Ես զգիտեմ, ինչպես է պատահել, որ մենք մինչև այժմ ձեզ հետ ծանոթ չենք,— ավելացրեց նա, — բայց խոստովանեցեք, այս բանում միակ մեղավորը դուք եք, դուք այսպես եք խրոշում բոլորից, որ ուղղակի անթույլատրելի է: Ես հուսով եմ, որ իմ հյուրասրահի օղը կցրի ձեր սպլինը¹⁰⁶... Այնպես չէ՞:

Ես ասացի նրան մեկն այն ֆրազներից, որ ամեն ոք պատրաստ պիտի ունենա նման դեպքի համար:

Կազրիլները սոսկալի երկար տեսեցին:

Վերջապես նվազականից դասից թնդաց մազուրկան. ես և իշխանադուստրը նստեցինք:

Ես ոչ մի անգամ ակնարկ շարեցի ո՛չ հարբած պարոնի, ո՛չ իմ նախկին վարչունքի, ո՛չ Գրունիցկու մասին: Տհաճ տեսարանի նրա վրա գործած տապալորությունը փոքր առ փոքր ցրվեց. նրա փոքրիկ դեմքը փթթեց, նա շատ նազելի էր կատակում. նրա խոսակցությունը սուր էր՝ առանց սրամտության հավակնության, աշխույժ էր և ապատ. նրա դիտողությունները երբեմն խորն էին... Շատ խճճված ֆրազով ես նրան զգալ տվեցի, որ ինքը վաղուց դուք է գալիս ինձ: Նա դուստր խոնարհեց և թեթեակի կարմրեց:

— Դուք տարօրինակ մարդ եք, — ասաց նա դրանից

Հետո, իր թափիշե հայացքը իմ վրա բարձրացնելով և բռնագրուիկ ծիծաղելով:

— Ես չեմ ուզում ձեզ հետ ծանոթանալ, — շարունակեցի իս, — որովհետեւ ձեզ շրջապատում է երկրպագուների շատ հոգ բազմովիլուն, և ես վախենում էի բոլորովին կորչել այդ ամբոխի մեջ:

— Դուք իզուր էիք վախենում: Նրանք բոլորն էլ իմստ ձանձրալի են...

— Բոլո՞րը: Մի՞թե բոլորը:

Նա շեշտակի նայեց ինձ, իբր թե ջանալով ինչ-որ բան վերհիշել, հետո նորից կարմրեց և վերջապես վճռարար արտասանեց՝ բոլո՞րը:

— Անգամ իմ բարեկամ Գրուշնիշկին:

— Իսկ նա ձեր բարեկամն է, — ասաց Մերին, որոշ կասկած ցույց տալով:

— Այո՞:

— Նա, իշարկե, ձանձրալիների կարգին չի պատկանում...

— Բայց անբախտների կարգին պատկանում է, — ասացի ես ծիծաղելով:

— Իշարկե: Իսկ ձեզ համար ծիծաղելի՞ է: Ես կցանկանալի, որ դուք նրա տեղը լինեք...

— Ի՞նչ կա որ, մի ժամանակ ես ինքս էլ յունկեր եմ եղել և, ճիշտն ասած, այդ իմ կյանքի ամենալավ ժամանակն էր:

— Իսկ նա մի՞թե յունկեր է... — ասաց նա արագ ու հետո ավելացրեց, — իսկ ես կարծում էի...

— Դուք ի՞նչ էիք կարծում...

— Ոչինչ... Ո՞վ է այդ կինը:

Այստեղ խոսակցությունը փոխեց իր ուղղությունը և այդ նյութին այլևս չվերադարձավ:

Աշա մազուրկան վերջացավ, և մենք հրաժեշտ տվինք իրար՝ մինչև նոր տեսակցություն: Կանայք զնացին իրենց տները... Ես գնացի ընթրելու և հանդիպեցի Վեռներին:

— Ընդ՛, — ասաց նա, — դուք այդպիս եք, հա՞: Դեռ ուղղում էիք ձանոթանալ իշխանակատեր հետ ոչ այլ կերպ, բայց եթե անխուսափելի մահից նրան փրկելուց հետո:

— Ես ավելի լավ բան արեցի, — պատասխանեցի նըրան: — Փրկեցի նրան պարահանդեսում ուշաթափելուց...

— Այդ ինչպես, պատմեցեք...

— Ոչ, կուհեցեք, օ՛, դո՞ւք, աշխարհիս երեսին ամեն ինչ կուհողը:

23-ը մայիսի

Մոտավորապես երեկոյան ժամի յոթին ես զրոսնում էի զրոսայգում: Գրուշնիցկին, ինձ հեռվից տեսնելով, մոտեցավ. ինչ-որ ծիծաղելի հրձվանք էր փայլում նրա աշքերում: Նա ամուր սեղմեց իմ ձեռքը և տրագիկ ձայնով ասաց.

— Շնորհակա՞լ եմ քեզանից, Պեչորին... Դու ինձ հականո՞ւմ են...

— Ո՛չ. բայց համենայն դեպս՝ շնորհակալության շարժե, — պատասխանեցի ես, ոչ մի բարեկարություն արած չլինելով:

— Ինչպես, իսկ երե՞կ, դու մի՞թե մոռացել ես... Մերին բոլորը պատմել է ինձ...

— Ի՞նչ է որ... մի՞թե ձեզ համար հիմա արդեն ամեն ինչ բնդհանուր է. նաև շնորհակալությո՞ւնը...

— Լսի՛ր, — ասաց Գրուշնիցկին շատ ծանրակշեռ տուով, — խնդրում եմ, իմ սերը կատակի մի ենթարկիր, եթե ցանկանում ես իմ բարեկամը մնալ... Տեսնում ես, ես խելագարության աստիճան սիրում եմ նրան... և ես կարծում եմ, ես հուսով եմ, որ նա նույնպես սիրում է ինձ... Ես քեզնից մի խնդրը ունեօ՞ այսօր երեկոյան դու նրանց մոտ ես լինելու. խոսուցիր ինձ ամեն ինչ նկատել. ես գիտեմ, դու այդ բաներում փորձած ես, դու ինձանից ավելի լավ ես հանաշում կանանց... Կանա՞լք, կանա՞լք. ո՞վ նրանց կհասկանա: Նրանց ժպիտները հակասում են հայացքներին, նրանց խոսքերը խոստանում են և հրապուրում—կանչում, իսկ նրանց ձայնի հնչումը վանում է... Մեկ նրանք բոպեապես թափանցում են և կուհում մեր ամենազատնի միտքը, մեկ շեն հասկանում ամենապարզ ակնարկները... Ա՛յ, թեկուզ իշխանադպուտը, երեկ նրա աշքերը կրօով էին վառվում՝ իմ վրա կանգ

առնելիս, այսօք նրանք աղուտ են ու նրանց հայացքը՝ սառը...

— Այդ, գուցե, զբերի ներդործության հետևանք է, — պատասխանեցի ես:

— Դու ամեն ինչում՝ վատ կողմն ես տեսնում... նյութապաշտ ես, — ավելացրեց նա արհամարհանքով: — Սակայն, նյութը փոխենք, — և վատ կալամբուրից գոհ նա ուրախացավ:

Իններորդ ժամին մենք միասին գնացինք իշխանությունում:

Վերայի պատուհանների մոտով անցնելիս, ես նրան տեսա պատուհանի մոտ: Մենք թուուցիկ հայացք նետեցինք միմյանց: Մեղանից քիչ հետո նա մտավ Լիգովսկայաների Հյուրասինյակը: Իշխանուհին ինձ ներկայացրեց Վերային՝ որպես իր աղքականություն: Սկսեցինք թիջ իմել, շատ ջուրեր կային, խոսակցությունն ընդհանուր էր: Ես աշխատում էի գուր գալ իշխանություն, կատակում էի, հարկադրեցի նրան մի քանի անգամ ի օրտե ծիծաղել. իշխանադուսարը ևս քանից ուզում էր քրքչալ, բայց իրեն զապեց՝ իր դերից դուրս շգալու համար. նա գտնում է, ոռ խոնջությունն իրեն սազում է, և, գուցե, չի սխալվում: Գրաւնիցիկն կարծեմ շատ ուրախ է, որ իմ ուրախությունը Մերիին չի վարակում:

Թելից հետո բոլորս գնացինք դահլիճ:

— Արդյո՞ք գու իմ հնագանդությունից գոհ ես, Վերա՛, — ասացի ես, նրա մոտով անցնելիս:

Նա ինձ նետեց մի հայացք, որ լի էր սիրով ու շնորհակալությամբ: Ես սովորել եմ այդ հայացքներին, բայց մի ժամանակ դրանք իմ երանությունն էին: Իշխանուհին աղջկան նստեցրեց զաշնամուր նվագելու: Բոլորը խնդրեցին իշխանադասերն որևէ քան երգել, ես լուռ էի և, իրարանցումից օգտվելով, դեպի լուսամուտը քաշվեցի Վերայի հետ, որը երկուսի համար էլ շատ կարևոր մի քան էր ուզում ասել ինձ... Դուքս եկավ, որ գատարկ քան էր...

Մինչդեռ իշխանագանձարը դժգոհություն էր պատճառում իմ անտարերերությունը, ինչպես ես կարողացա զլիի ընկնել նրա մի քարկացած, շողացայտ հայացքից... Օ՛, ես զարմա-

նալի լավ եմ հասկանում այդ խոսակցությունը, որը համբ է՝ բայց արտահայտիչ, կարճ՝ բայց աղդու...

Նա սկսեց երգել, նրա ձայնը վատը չէ, բայց նա վատ է երգում... ասենք իս չեի լուսում: Բայց դրա փոխարհն Գրունիցին, նրա զիմացը դաշնամուրին կոթնած, աշքերով լափում էր նրան և ամեն րոպե ասում էր կիսածայն՝ «charmant! délicieux!»

— Լսի՛ր, — ասում էր ինձ Վերան, — ես չեմ ուզում, որ դու ծանոթանաս իմ ամռունու հետ, բայց դու պետք է անպայման զոր գաս իշխանություն. քեզ համար այդ հեշտ է. դու կարող ես անել ամենը, ինչ կցանկանա: Մենք այստեղ միայն տեսնվելու հնք...

— Միա՞յն...

Նա կարմրեց և շարունակեց.

— Դու զիտես, որ ես քո սարուկն եմ. ես երբեք չեմ կարողացել քեզ հակառակվել... և ես դրա համար պատժվելու հմայ զու կցագարես ինձ սիրելուց: Ես ուզում եմ զոնե վարկս պահպանել... ո՛չ ինձ համար, զու այդ շատ լավ զիտես... Օ՛, ես խնդրում եմ քեզ՝ առաջվա պես ինձ մի տանջիր դատարկ կասկածներով ու կեղծ սառնոթյամբ. ես գուցե շուտով մեռնեմ, ես զգում եմ, որ օր-ավուր թուզանում եմ... Ե շնայած դրան, ես չեմ կարող մտածել ապագա կյանքի մասին, ես մտածում եմ միայն քո մասին... Գուրք, տղամարդիկ, չեք հասկանում հայացքի, ձեռք սեղմելու պատճառած հաճույքը... Իսկ ես, երգում եմ քեզ, ես, քո ձայնին ունկնդեմով, այնպիսի խոր, տարօրինակ երանություն եմ զգում, որ ամենաալոր համբույրները չեն կարող դրան փոխարինել:

Մինչ այդ, իշխանագուսար Մերին դադարեց երգել: Գովիստների շատով լսվեց նրա շուրջը. ես ամենից վերջը մոտեցա նրան և քավական անփույթ կերպով ինչ-որ քան ասացի նրա ձայնի մասին:

Նա ծամբածուց դեմքը, ներքեւ շրթունքն առաջ մղելով և շատ ծաղրալիք ծունկ խոնարհելով¹⁰⁶:

* Հիանալի է, սրանշելի (ֆր.):

— Այդ ինձ համար է՛լ ավելի շոյիշ է, — ասաց նա, — որովհետև դուք ինձ բոլորովին չէիք լուսն. բայց դուք, գոյք, երաժշտություն չեք սիրում...»

— Ընդհակառակը... մանավանդ ճաշից հետո:

— Գրուշնիցկին իրավացի է, երբ ասում է, որ դուք ունեք խիստ պրովայֆիկ ճաշակ... և ես տեսնում եմ, որ դուք երաժշտությունը սիրում եք գաստրոնոմիական տեսակետով...

— Դուք զարձրալ սիրում եք. ես ամենեին գաստրոնոմ չեմ: Ես գարշելի մարսողություն ունեմ: Բայց երաժշտությունը ճաշից հետո ննջեցնում է, իսկ ճաշից հետո քենըն առողջարար է, հետեւարար ես երաժշտությունը սիրում եմ բժշկական տեսակետով: Իսկ երեկոյան՝ ընդհակառակը, երաժշտությունը սաստիկ գրգռում է ներվերս՝ ես կամ խիստ շատ եմ տիրում կամ խիստ շատ ուրախանում: Թե՛ մեկը և թե՛ մյուսը հոգնեցուցիչ է, երբ չկա տիրելու կամ ուրախանալու դրական պատճառ, մանավանդ որ տիրությունը հասարակության մեջ ծիծաղելի է, իսկ շափից շատ ուրախությունը՝ անքաղաքավարություն:

Նա մինչև վերջը շլսեց, հեռացավ ինձանից, նստեց Գրուշնիցկու մոտ, և նրանց միջև սկսվեց ինչ-որ սենտիմենտալ խոսակցություն. կարծեմ իշխանագուստը նրա իմաստուն զարձլածքներին բավական ցրված և անհաջող էր պատասխանում, թեպես ջանում էր ցույց տալ, թե ուշադիր է լսում նրան. այս եզրակացության եկա այն հիման վրա, որ Գրուշնիցկին երեմն զարմանքով էր նայում նրան՝ ջանալով կունել պատճառն այն ներքին հուզմունքի, որ երեմն արտահայտվում էր իշխանագուստիր անհանդիսությացը...

Բայց ես հասկացած եղ, սիրելի իշխանագուստը, զգուշացե՞ք: Դուք ցանկանում եք ինձ վճարել նույն զրամուլ, դիպչել իմ ինքնասիրությանը, ձեզ չեզողիք, և եթե դուք ինձ պատերազմ հայտարարեք, ապա ես անողոք կլինեմ:

Երեկոյի ընթացքում ես մի քանի անգամ դիտմամբ աշխատեցի խառնվել նրանց խասակցությանը, բայց իշխանագուստը բավական չոր ընդունեց իմ դիտողությունները, և ես կեղծ զգուհությամբ վերջապես հեռացա: Իշխանագուստը քրծվում էր. Գրուշնիցկին նույնակես: Հրճիցե՛ք, իմ բարեկամ-

նե՛ր, շտապեցե՛ք... Զեր հրճվանքը երկար չի՛ տևի... ինչպէ՞ս վարդիկ: Ես նախազգացում ունեմ... կոչող հետ ծանոթանալիս, ես միշտ անսխալ գուշակել եմ, սիրելու է նա ինձ, թե ոչ...

Երեկոյի մնացած մասը ես անցկացրի վերայի կողքին և կուշտ խոսակցեցի անցած-զնացածի մասին... Ինչի՞ համար է նա ինձ այդպես սիրում, ճիշտն ասած՝ չգիտեմ: Մանավանդ որ գա միակ կինն է, որն ինձ հասկացել է լիովին՝ իմ բոլոր մանր թուլություններով, իմ վատ կրթերով հանդերձ... Մի՞նչ շարն այդքան զրավիչ էս...

Ես դուքս եկա Գրուշնիցկու հետ. փողոցում նա ինձ թեանցուկ արակ և երկար լուսվյունից հետո՝ ասաց.

— Հը՛, ի՞նչ կասես:

«Դու հիմար ես», — ուզում էի պատասխանել նրան, բայց զսպեցի ինձ և միայն ուսերս թոթվեցի:

29-ը մայիսի

Բոլոր այս օրերին ես ոչ մի անգամ իմ սիստեմից չնահանցեցի: Իշխանագուստն իմ զրուցն սկսում է դուք գալ. ես պատմեցի նրան իմ կյանքի մի քանի տարօրինակ դեպքերը, և նա սկսում է արտասովոր մարդ տեսնել իմ մեջ: Ես ծիծառում եմ աշխարհի ամեն բանի վրա, մանավանդ զգացմունքների. սա սկսում է վախեցնել նրան: Իմ ներկայությամբ նա չի համարձակվում սանտիմենտալ վիճաբանություններ բանալ Գրուշնիցկու հետ, և արդեն մի քանի անգամ ծաղրական Փակտով է պատասխանել նրա վարմունքին, բայց ամեն անգամ, երբ Գրուշնիցկին մոտենում է նրան, ես հեզ մարդու տեսք եմ ընդունում և նրանց երկուսին միասին եմ թողնում: առաջին անգամ գա ուրախացրեց իշխանագուստը կամ նա ինքն աշխատեց այդպես ձևացնել. երկրորդ անգամ բարեկացավ իմ վրա, երրորդ անգամ՝ Գրուշնիցկու վրա:

— Դուք շատ քիչ ինքնասիրություն ունեք, — ասաց նա ինձ երեկ. — ինչո՞ւ եք կարծում, թե ես Գրուշնիցկու հետ ալեւի ուրախ եմ լինում:

Ես պատասխանեցի, որ բարեկամիս երջանկությանը զոհում եմ իմ հաճուկքը...

— Եվ իմը, — ավելացրեց իշխանագուստը:

Ես ունեում Հայացքով նայեցի նրան և լուրջ տեսք ընդունեցի: Հետո ամբողջ օրը նրա հետ ո՛չ մի խոսք շնուսեցի... Երեկոյան իշխանադուստրը մտախո՞ էր, այսօր առավոտյան շրջորի մոտ ավելի մտախո՞: Երբ ես մոտեցա նրան, նա մտացիր լսում էր Գրուշնիցկուն, որը, կարծեմ, բնությամբ էր հիանում. բայց իշխանադուստրն ինձ տեսավ թե չէ, սկսեց քրքալ (շատ անտեղի), ցույց տալով, իբր թե ինձ չի նկատում: Ես փոքր-ինչ հեռու գնացի և սկսեցի գաղտագողի հետեւ նրան, իշխանադուստրը երեսը շուռ տվեց իր զրուցակից և մի երկու անգամ հորանցեց: Գրուշնիցկին ուղղակի ձանձրացրել է նրան: Դեռ երկու օր էլ իշխանադուստր հետ շպետք է խոսեմ:

3-ը նունիսի

Ես հաճախ եմ Հարցնում ինձ, ինչո՞ւ եմ այդպես համառորեն ձգտում երիտասարդ աղջկա սիրուն, որին գայթակղեցնել ես չեմ ցանկանում, և որի հետ երեք չեմ ամուսնանա: Ինչի՞ համար է այս կանացի կոկետությունը: Վերան ինձ ավելի է սիրում, քան իշխանադուստր Մերին երբեմ կսիրի: Եթե նա ինձ անհաղթելի գեղեցկու՞նի թվար, ապա, գուցե թե ինձ հրապուրեք ձեռնարկման դժվարությունը...

Բայց բնա՞վ էլ այդպիս չէ: Հետևաբար, սա ոչ թե սիրու այն անհանգիստ պահանջն է, որ մեզ տանցում է երիտասարդության առաջին տարիներին, մի կնոջից դեպի մյուս կինը նետում մեզ, մինչև որ մենք կգտնենք մի այնպիսին, որը մեզ տանել չի կարող: Այստեղ կակսվի մեր հաստատակամությունը, իսկական, անսահման կիրքը, որ մաթեմատիկորեն կարելի է արտահայտել որպես տվյալ կետից դեպի տարածություն իջնող գիծ. այդ անսահմանության գաղտնիքն այն է միայն, որ նպատակի, այսինքն վախճանի՝ հասնելն անհնարին է:

Հապա ես ինչո՞ւ եմ գլուխ ցավեցնում: Գրուշնիցկուն նախանձելո՞ւց: Խե՞ղճ մարդ—նա բոլորովին արժանի չէ դրան: Թե՞ գա հետևանք է այն վատ, բայց անհաղթելի գացմունքի, որը մեզ հարկադրում է ոչնչացնել մեր մերձավորի քաղցր մոլորությունները, որպեսզի, երբ որ նա հուսահատ

հարցնի՝ թե ինչի՞ն պետք է հավատա, մենք մանր հաճույք ունենանք ասելու.

— Բարեկա՞մս, ինձ հետ այդ նույնն է պատահել. և զուտեանում ես, սակայն, որ ես ճաշում եմ, ընթրում և ամենայն հանգստությամբ քնում ու հուսով եմ, որ կկարողանամ մեռնել առանց ճիշ արձակելու և արցունքներ թափելու:

Բայց չէ՞ որ անսահման հաճույք կա երիտասարդ, Հաղիկ փթթած հոգուն տիրանալու մեջ: Նա նման է մի ծաղկի, որի լավագույն բուրմունքը շողիանում է՝ դիմավորելով արևի առաջին ճառագայթին. նրան պետք է քաղել այդ իսկ բոպեին, և, կուշտ ծծելով նրա բույրը, ցցել ճանապարհի վրա,— գուցե թե մեկնումեկը գետնից վերցնի: Ես զգում եմ իմ մեջ այդ անհագուրդ աղահությունը, որը կլանում է այն ամենը, ինչ պատահում է իր ճանապարհին. ուրիշների տառապանքներին և ուրախություններին ես նայում եմ, մեկնակետ ընդունելով միայն իմ անձը, որպես մի կերակրի, որը պահպանում է իմ հոգեկան ուժերը: Ես ինքս այլևս անընդունակ եմ կրքի ազդեցության տակ խնդիրություններ անելու: Իմ փառասիրությունը ճնշել են հանգամանքները, բայց այն արտահայտվել է ուրիշ ձևով: Որովհետև փառասիրությունը ոչ այլ ինչ է, բայց եթե իշխանության ծարավ, իսկ իմ առաջին բավականությունն է — իմ կամքին ենթարկել այն ամենը, ինչ շրջապատում է ինձ. սիրո, նվիրվածության և անհի զգացմունք զարթեցնել գեղազի իր անձը — արդյոք սա իշխանության առաջին հատկանիշն ու մեծագույն հաղաթանակը չէ: Մեկնումեկի համար տառապանքների և ուրախությունների պատճառ լինել, այդ բանի համար ոչ մի դրական իրավունք չունենալով, արդյոք սա մեր հապարտության ամենաքաղցր սնունդը չէ: Իսկ ի՞նչ է երջանկությունը: Հպարտության հագեցում: Եթե ես բոլորից լավ, հզոր համարեի ինձ աշխարհիս երեսին, ես երջանիկ կլինեի. Եթե բոլորն ինձ սիրեին, ես մեջս սիրո անսպառ աղյուրներ կգտնեի: Չարիքը շարիք է ծնում. առաջին տառապանքը հասկացողություն է տալիս ուրիշն տանջելու հաճույքի մասին. շարիք գաղափարը չի կարող մարդու զլուխը մտնել առանց այն բանի, որ նա ցանկանա այն կիրառել իրականության նկատմամբ. գաղափարները օրգանական

ստեղծվածքներ են, ասել է մի մարդ. նրանց ծնունդն արդեն իսկ ձև է տալիս նրանց, և այդ ձեզ գործողություն է. ում գլխում ավելի շատ գաղափարներ են ծնվում, նա ուրիշներից ավելի է գործում. այդ պատճառով շինովնիկական սեղանին դամփած հանճարը պետք է մեռնի կամ խելագարվի, ճիշտ այնպես, ինչպես որ հզոր կազմվածք ունեցող մարդը, նստակյաց կյանք և համեստ վարք ու բարք ունենալու դեպքում, մեռնում է կաթվածահարությունից:

Կրքերը ոչ այլ ինչ են, բայց եթե իրենց առաջին զարգացման փուլն ապրող գաղափարներ. նրանք երիտասարդ սրտի պատկանելիքն են, և հիմար է նա, ով մտածում է իր ամբողջ կյանքում դրանցով հուզվել. շատ հանգիստ զիտեր սկսվում են որպես աղմկող ջրվեժներ, բայց ոչ մեկը ցատկուելով ու փրփրալով չի գնում մինչև ծով: Սակայն այդ հանգստությունը հաճախ նշան է մեծ, թեպես և թաքնված ուժի. զգացմունքների և մտքերի լեցունությունն ու խորությունը չեն թույլատրում կատաղի պոռթկումներ. տառապելով ու հաճույք վայելելով, հոգին ամեն ինչի նկատմամբ հաշիվ է տալիս իրեն և համոզվում է, որ այդպես պետք է լինի. նա դիտե, որ եթե ամպրոպները շինեն, արեկ մշտական տառը կշորացնի իրեն. նա տողորդում է իր սիփական կյանքով, գորգուրում և պատժում է իրեն, որպես սիրած մանկան: Միայն ինքնանանաշաղության այս բարձր վիճակում մարդս կարող է զնահատել աստծու արդարադատությունը:

Այս էջը վերընթեռնելով, ես նկատում եմ, որ շատ եմ շեղվել իմ առարկայից... Բայց ի՞նչ վնաս... Չէ՝ որ այս օրագիրը ես գրում եմ ինձ համար և, հետևապես, բոլորը, ինչ կնետեմ նրա մեջ, ժամանակին թանկագին հիշողություն կդառնա ինձ համար:

Եկավ Գրուշնիցկին և վզովս ընկավ, նրան սպայի աստիճան են տվել: Մենք շամպայն խմեցինք: Բժիշկ Վեռները ներս մտալ նրանից անմիջապես հետո:

— Ես ձեզ շեմ շնորհավորում, — ասաց նա Գրուշնիցկուն: — Ինչո՞ւ:

— Որովհետեւ հասարակ զինվորի շինելը ձեղ շատ է

սաղում ն, խոստովանեցեք, որ այստեղ հանքային ջրերում կարփած հետեւապրական նշանազգեստը ձեզ ոչ մի հետաքրքրության չի տա... Գրուշնի ինչ, զուրք մինչև այժմ բացառություն էիք, իսկ հիմա ընդհանուր կանոնի տակ կընկնեք:

— Ճառեցե՞ք, ճառեցե՞ք, բժիշկ, զուրք ինձ չեք խանգարի ուրախանակ: Նա զփառե, — ավելացրեց Գրուշնիցկին՝ ականջիս շշնչալով, — թե ինչքան հույսեր տվին ինձ այս ուսագիրները... Օ՛, ուսագիրներ, ուսագիրներ, ձեր աստղիկները ուղեցույց աստղիկներ են... Ո՛չ, ես հիմա կատարելապես երշանիկ եմ:

— Դու մեզ մոտ գալի՞ս ես վիճի մոտ զբոսնելու, — հարցրի ես նրան:

— Ե՞ս. ոչ մի գնով շեմ երեա իշխանադստերը, մինչև որ նշանազգեստ պատրաստ վիճի:

— Կէրամայի՞ս հայտնել նրան քո ուրախության մասին...

— Ու, խնդրում եմ շասիս... ես ուզում եմ նրան զարմացնել...

— Բայց ասա՛ ինձ, գործերդ նրա հետ ինչպե՞ս են:

Նա շփոթվեց և մտածմունքի մեջ ընկավ. նա ուզում էր պարծենակ, ստել, և ամաշում էր. միաժամանակ ամոթ էր և ճշմարտությունը խոստովանելը:

— Ի՞նչ ես կարծում՝ նա քեզ սիրո՞ւմ է...

— Սիրո՞ւմ է արդյոք: Լսի՛ր, Պելորին, այդ ի՞նչ հասկացողություններ ունես զու... ինչպե՞ս կարելի է այսպես շուստ... եթե մինչև անգամ սիրում էլ է, կարգին կինը հո այդ շի ասի...

— Լա՛վ: Եվ, երկի, քո կարծիքով, կարգին մարդը նույնպես պետք է լոփ իր զգացմունքի մասի՞ն...

— Է՛, ախարես, ամեն բան իր հանգն ունի, շատ բան ու թե ասկում է, այլ կոսհվում է...

— Այդ ճշմարիտ է... Միայն թե այն սերը, որ մենք կարգում ենք կնոջ աշքերում, նրան ո՛չ մի բանի շի պարուավորեցնում, այնինչ խոսքերը... Զգուշացի՛ր, Գրուշնիցկի, նա քեզ խարում է...

— Նա՞... — պատասխանեց Գրուշնիցկին, աշքերը երկինք բարձրացնելով և ինքնարավական ժպտալով. — Ես քեզ խղճում եմ, Պելորին...

Գրուշնիցկին գնաց:

Երեկոյան բազմամարդ հասարակությունը ոտքով գնաց դեպի վիճը:

Այստեղի գիտնականների կարծիքով այդ վիճը ոչ այլ ինչ է, բայց եթե Հանգած Հրարիսի բերան, նա գտնվում է Մաշուկի զառիվայրին, քաղաքից մի վերստ հեռավորության վրա: Դեպի այդ տեղը տանում է թփերի և ժայռերի միջով անցնող մի նեղ կածան, սար բարձրանալիս, ես թևս տվի իշխանական բերք, և նա բաց շնողեց այն գրուանքի ամբողջ ընթացքում:

Մեր խոսակցությունն սկսվեց շարախոսությամբ. ես սկսեցի հերթով հիշատակել մեր բոլոր ներկա և բացակա ժանոթներին. սկզբում ցույց էի տալիս նրանց ծիծաղելի, իսկ հետո՝ վատ կողմերը. Խմ մաղձը բորբոքվեց, ես սկսեցի կատակով ու վերջացրի անկեղծ շարությամբ: Սկզբում դա նրան զվարձացնում էր, իսկ հետո վախեցրեց:

— Դուք վտանգավոր մարդ եք,— ասաց ինձ,— ես ավելի լավ կհամարեի անտառում մարդասպանի դանակի հարվածի հանդիպել, քան ձեր լեզվի խայթոցին... ես ձեզ լուրջ խնդրում եմ. երբ ձեր մտքով անցնի իմ մասին վատ խոսել, ավելի լավ կանեք դանակը վերցնեք և ինձ մորթեք, ես կարծում եմ, այդ ձեզ համար շատ դժվար չի լինի:

— Մի՞թե ես նման եմ մարդասպանի. . .

— Դուք ավելի վատթար եք...

Ես մի բոպե մտքով տարիկցի և ապա խորապես զգացվածի տեսքը ընդունելով՝ ասացի:

— Այս', այդպիս է եղել իմ բախար՝ բուն մանկությունից սկսած: Բոլորն իմ դեմքի վրա կարդում էին գոյություն չունեցող, բայց ենթադրվող վատ հատկությունների նշաններ, և դրանք ծնվեցին: Ես համեստ էի. ինձ մեղադրում էին խորամանկության մեջ, և ես ծածկամիտ դարձա: Ես խորապես զգում էի բարին ու շարը. ոչ ոք ինձ չեր փաղաքշում, բոլորը վիրավորում էին, և ես շարահուշ դարձա. ես մուայ էի, մյուս երեխաները ուրախ ու շատախոս. ես զգում էի, որ նրանցից բարձր եմ, իսկ ինձ նրանցից ցածր էին դասում: Ես նախանձու դարձա: Ես պատրաստ էի սիրելու ողջ աշխարհը:

Ինձ ոչ ոք չհասկացավ. և ես ատել սովորեցի: Իմ անգույն երիտասարդությունն անցավ իմ և հասարակության դեմ մղած պայքարով: Մաղրից վախենալով՝ ես իմ լավագույն դգացմունքները թաղում էի սրտիս խորքում. նրանք այնտեղ էլ մեռան: Ես ճշմարտություն էի ասում, ինձ չեին հավատում. ես սկսեցի խաբել հասարակությանը և նրա զսպանակներին լավ ծանոթանալով՝ վարպետաց կյանքի գիտության մեջ ու տեսնում էի, թե ինչպես ուրիշները երջանիկ են տառնց արվեստի օգնության դիմելու, ճրիարար օգտվելով այն առավելություններից, որոնց ես այնպիս անդուի կերպով ձգտում էի: Եվ այն ժամանակ իմ սրտում ծնունդ հուահատությունը. ո՛չ այն հուսահատությունը, որ բժշկում են ատրճանակի փողարերանով, այլ պաղարյուն, անզոր հուսահատություն, սրողված սիրալիքությամբ ու բարեհոգի ժպիտով: Ես բարոյական հաշմանդամ գարձա. իմ հոգու մեկ կեսը գոյություն չուներ. նա ցամաքեց, շողիացավ, մեռավ, ես այն կտրեցի ու դեն ցցեցի, մինչդեռ մլուրը շարժվում և ապրում էր՝ պատրաստ սպասավորելու ամեն մեկին. այդ կա ոչ ոք չնկատեց, որովհետև կործանված կեսի գոյության մասին ոչ ոք չգիտեր. բայց զուրք շիմա իմ մեջ արթնացրի նրա հուշը, և ես կարդացի ձեզ համար նրա տապանագիրը: Շատերին առհասարակ բոլոր տապանագրերը ծիծաղելի են թվում, բայց ինձ՝ ոչ, մանավանդ, երբ հիշում եմ, թե նրանց տակ ինչ է հանգչում: Սակայն ես ձեզ շեմ խնդրում իմ կարծիքին համամիտ լինել. եթե իմ այս արարքը ծիծաղելի է թվում ձեզ— խնդրեմ, ծիծաղեցե՛ք. նախազգուշացնում եմ ձեզ, որ այդ ինձ ընավ չի վշտացնի:

Այդ բոպեին իմ աշքն ընկալ նրա աշքերին— նրանցում արցունքներ էին վազում. իմ ձեռքին կոթնած նրա ձեռքը դողում էր. այտերը վառվում էին. նա խղճո՛ւմ էր ինձ: Կարեկցությունը, — մի զգացմունք, որին այնպիս հեշտ հնազանդվում են բոլոր կանայք— իր մագիլները խրեց նրա անփորձ սրտի մեջ: Զբոսանքի ամբողջ ընթացքում նա ցրված էր, ոչ ոքի հետ կոկետություն չեր անում, իսկ այդ մեծարժե՛ք նշան է:

Մենք հասանք վհին. կանայք թողեցին իրենց կավա-

լերներին, բայց նա իմ թկը բաց շթողեց: Տեղական դենդիների սրախոսությունները նրան շէին ծիծաղեցնում: Խիստ զափիվայրությունը վհի, որի առաջ նա կանգնած էր, նրան շէր վախեցնում, մինչդեռ մնացած օրիորդները ծղրտում և փակում էին իրենց աշքերը:

Վերապարձի ճանապարհին ես չնորոգեցի մեր տիսուր խոսակցությունը. բայց իմ դատարկ հարցերին և կատակներին նա պատասխանում էր կարճ ու մտացիր:

— Դուք երբեք սիրե՞լ եք արդյոք,— վերջապես հարցրի նրան:

Նա սեղուն հայացքով նայեց ինձ, գլուխը տարուքերեց ու նորից մտախոհ դարձավ. պարզ էր, որ նա ինչ-որ բան է ուզում ասել, բայց չգիտեր, թե ինչից սկսի. նրա կուրծքն այեկոծվում էր. Ի՞նչ անել. մարմաշե (քիսիի) զգեստի թևը թույլ պաշտպանություն է, և էլեկտրական կայծն իմ ձեռքից հոսեց, անցավ նրա ձեռքին. Համարյա սիրո բոլոր զգացմունքներն այսպես են սկսվում, և մենք ինքներս հաճախ ենք խարում մեզ, կարծելով, թե կինը մեզ սիրում է մեր ֆիզիկական կամ բարոյական արժանիքների համար. իհարկե, դրանք նախապատրաստում, տրամադրում են նրա սիրուը՝ սրբազն կրակն ընդունելու, բայց, այնուամենայնիվ, գործը վճռում է առաջին շփումը:

— Ես այսօր շատ սիրալիր էի, այնպես չէ՞,— ասաց ինձ իշխանադուստրը բռնազրուիկ ժպիտով, երբ մենք զրուանքից վերապարձանք:

Մենք հրաժեշտ տվինք իրար:

Նա զժփո՞ն է իրենից. նա իրեն մեղադրում է սառնության մեջ... Օ՛, այդ առաջին, գլխավոր հաղթանակն է: Վաղը նա կցանկանա վարձատրել ինձ: Ես այդ բռլորն արդեն անդիր գիտեմ,— ահա թե ինչն է ձանձրալի:

4-ը հունիսի

Այսօր ես տեսա վերացին: Նա ինձ տանջեց իր խանդով: Կարծեմ իշխանադստեր խելքին վշել է վստահել նրան իր սրտի գաղտնիքները. պետք է խոստովանել—հաջո՞ղ ընտրություն է:

— Ես կուա՞նում եմ, թե այս բոլորը դեպի ինչ է տանում,— ասում էր ինձ Վերան, — ավելի լավ կանես՝ պարզ ասես ինձ հիմա, որ դու նրան սիրում ես:

— Իսկ եթե ես նրան չե՞մ սիրում:

— Հապա էլ ի՞նչ կարիք կա նրան հետապնդել, անհանգուստացնել, բորբոքել նրա երևակայությունը... Օ՛, ես քեզ լավ եմ ճանաշում: Լսի՞ր, եթե դու ուզում ես, որ քեզ հավատամ, ապա մի շաբաթից հետո եկ կիսովողակ— վաղը չէ մյուս օրը մենք այստեղ ենք փոխադրվում: Իշխանու՞ին ավելի երկար է մնալու այստեղ: Բնակարան վարձիր մեր կողքին. մենք բնակվելու ենք աղբյուրի մոտ գտնվող մեծ տան մեզոնինում¹⁰⁸. մեր տակի հարկում իշխանու՞ին կիսովակայան է, իսկ նրա կողքին նույն տանտերը ունի մի տուն, որը դեռ զբացեցրած չէ... Կզա՞ս...

Ես խոստացա և նույն օրը մարդ ուղարկեցի այդ բնակարանը վարձելու:

Գրուշնիցկին եկավ ինձ մոտ երեկոյան ժամի վեցին և հայտնեց, որ վաղն իր նշանազգեստը պատրաստ կլինի ու հենց պարահանդեսին կհասնի:

— Վերջապես ես ամբողջ երեկոն նրա հետ կպարեմ... Ա՛յ թե կուշտ կխոսեմ,— ավելացրեց նա:

— Իսկ պարահանդեսը ե՞րբ է:

— Վաղը. մի՞թե շփտես: Մեծ տոն է, և այստեղի իշխանությունը ինքն է հանձն առել սարքելու այն:

— Գնանք զրոսայգի:

— Ո՛չ մի դեպքում՝ այս գարշելի շինելը հագիս:

— Ինչպե՞ս, դու դադարեցիր այն սիրե՞լ...

Ես մենակ գնացի և, իշխանադստր Մերիին հանդիպելով՝ մազուրկայի կանչեցի նրան: Նա զարմացած և ուրախացած թվաց:

— Ես կարծում էի, թե դուք միայն անհրաժեշտությունից դրված եք պարում, ինչպես անցյալ անդամ,— ասաց նա՝ շատ սիրալիր ժպտալով:

Նա, կարծեմ, բնավ չի նկատում Գրուշնիցկու բացակայությունը:

— Վաղը ձեզ մի բան հաճելի գարմանք կպատճառի, —
ասացի նրան:

— Ի՞նչ բան...

— Այդ գաղտնիք է... պարահանդեսում ինքներդ կկռահեք:
Երեկոն ևս վերջացրի իշխանություն մոտ. Հյուրներ շիային,
բացի Վերայից և մի շատ զվարճալի ծերուկից. Տրամադրու-
թյունն տեղն էր, իմպրովիզացիա¹⁰⁹ արեցի զանազան արտա-
սովոր պատմություններ. իշխանադրստրը նստած էր իմ դի-
մացը և իմ գատարեկախոսությունն այնպիսի խոր, լարված,
նույնիսկ քնրուշ ուշադրությամբ էր լսում, որ իմ խիղճը տան-
ցեց: Ուր մնացին նրա աշխատությունը, նրա կոկետությունը,
նրա քմահաճությունները, նրա դեմքի հանդուզն արտահայ-
տությունը, արհամարհական ժպիտը, ցրված հայացքը...

Վերան այդ բոլորը նկատեց. նրա հիվանդուս դեմքի վրա
խոր տիրություն էր պատկերվել. լայն բազկաթոռի գիրկն ըն-
կըզմված՝ նա նստել էր պատուհանի մոտ, ստվերում... ևս
խղճացի նրան...

Այն ժամանակ ևս պատմեցի իմ և Վերայի ծանոթության,
մեր սիրո ամբողջ գրամատիկ պատմությունը — հասկանալի
է, այդ բոլորը սրողելով հորինված անուններով:

Ես այնպես կենդանի պատկերեցի իմ քնքությունը, իմ
անհանգստությունը, հրճվանքները. ևս այնպես շահեկան
լույսով ցուցադրեցի նրա վարմունքը, բնավորությունը, որ նա
ակամայից պետք է ներեր ինձ իմ կոկետությունն իշխանա-
դրուեր հետ:

Նա վեր կացավ, նստեց մեզ մոտ, աշխատացավ... և
մենք միայն դիշերվա ժամի երկուսին հիշեցինք, որ բժիշկնե-
րը հրահանդում են տասնմեկին պատկել բնելու:

5-ը հունիսի

Պարահանդեսից կես ժամ առաջ Գրուշնիցին եկալ ինձ
մոտ՝ հետևազորային նշանազգեստի ողջ փայլով:

Երրորդ կոճակից կախված էր բրոնզե փորիկ շղթա, իսկ
դրանից՝ կրկնակ լոռնետ. արտասովոր մեծության էպոլետ-
ների կողքերը վեր էին ծոված, ասես ամուրի¹¹⁰ թեկներ. նրա կոշիկները ճոճուում էին, ձախ ձեռքին բռնած ուներ դարչ-

նագույն լայքի ձեռնոցները և ֆուրաժկան, իսկ աշ ձեռքով
ամեն բռպի վեր էր բարձրացնում ոլորած և մանր գանգուրնե-
րի վերածած մազերի փունջը: Նրա դեմքի վրա պատկերացած
էին ինքնարավականությունն և միաժամանակ որոշ անվտա-
հություն. նրա տոնական արևաքինը, նրա հզպարտ քայլված-
քը ինձ կհարկագրեին քրջալու, եթե այդ համապատասխաներ
իմ մտադրություններին:

Նա ֆուրաժկան ձեռնոցների հետ մեկտեղ սեղանին նե-
տեց ու սկսեց ձգել իր փեշերը և իրեն կարգի բերել հայելու
առաջ. ահագին սև թաշկինակը, որ նա փաթաթել էր չափա-
զանց բարձր ենթափողկապին, որի խոզանին էր կոթնած նրա
կզակը, կես վերշոկի շափ գուրս էր պրծել օձիքի տակից.
Նրան այդ քիչ թվաց, նա այդ թաշկինակը վեր քաշեց մինչև
իր ականջները. այս գժվար աշխատանքից — որովհետև նշա-
նազգեստի օձիքը շատ էր նեղ և անհանգստացնող, — արյունը
նրա երեսը տվեց:

— Դու, ասում են, այս օրերը սոսկալի քարշ ևս եկել իմ
իշխանազուտեր հետեւից, — ասաց նա բավական անփույթ և
առանց ինձ նայելու:

— Մեզ, հիմարներիս, ով է այնքան շնորհի տվել, որ կա-
րողանանք թիյ խմել, — պատասխանեցի նրան, կրկնելով
Պուշկինի երրեմնի գովերգած՝ անցյալ ժամանակի ամենա-
ճարակիլ ստահակներից մեկի սիրած ասացվածքը:

— Ասա տեսնեմ, նշանազգեստը վրաս լավ նստո՞ւմ է...
Օ՛ք, նղոված շնուր... թեատրակերս ինչպես են կտրում...
Օծանելիք չունե՞ս արդյոք:

— Տնաշեն, էլ ի՞նչ ևս ուզում, քեզանից առանց այդ էլ
վարդի պոմադի հոտ է փշում...

— Ոչինչ: Մի դեսը տուր...

Նա մի կես բաժակ լցրեց իր փողկապի տակը, թաշկի-
նակի վրա, թեքերին:

— Դու պարելու ես, — հարցրեց նա:

— Չեմ կարծում:

— Ես վախենում եմ, որ ստիպված լինեմ իշխանադրստեր
հետ սկսել մազուրկան, իսկ ևս համարյա ոչ մի ֆիգուր շեմ
իմանում...

— Իսկ դու նրան մազուրկայի կանչե՞լ ես:

— Դեռ ոչ...

— Տե՛ս, որ հանկարծ քեզ շկանխեն...

— Իսկապէ՞ս, — ասաց նա, ձեռքն իր ճակատին խփելով: — Յուսություն... զնամ՝ շքադռան մոտ նրան սպասեմ... — Նա արագ վերցրեց ֆուրաժկան ու դուրս վազեց:

Կես ժամից հետո ես էլ գնացի: Փողոցը մութն էր և դատարկ: Ժողովարանի կամ պանդոկի շուրջը, — ինչպես կուպեր՝ անվանեք, — հասարակություն էր խոնված: Նրա պատուհանները լուսավորված էին: Պնդի երաժշտության հնչյուններն ականջիս հասցնում էր երեկոյան քամին: Ես դանդաղ գնում էի տիսուր էի... Մի՞թե, մտածում էի ես, իմ միակ զերն է երկրիս վրա՝ կործանել ուրիշների հույսերը: Այն ժամանակից ի վեր, ինչ ես ապրում ու գործում եմ, բախտն ինչ-որ կերպով ինձ միշտ բերել է ուրիշների դրամաների լուծման, կարծեն թե առանց ինձ ոչ ոք չեր կարողանա ոչ մեռնել, ոչ հուսահատության հասնել: Ես հինգերորդ գործողության անհրաժեշտ անձ եմ եղել. ակամացից ես իսաղացել եմ դաշնի կամ դավաճանի ողորմելի դեր: Դրանով ի՞նչ նպատակի է ձգտել ճակատագիրը... Զինի՞ն նա ինձ բաղենիսական սղբերգություններ և ընտանեկան ուժաններ հորինող է նշանակել, կամ, օրինակ, «Библиотека для чтения»-ի համար վիճակիներ մատակարարողի աշխատակից... Ի՞նչ իմանաս... Քի՞շ մարդիկ կան, որոնք իրենց կյանքն սկսելիս՝ մտածում են վերջացնել այն որպես Մեծն Ալեքսանդր¹¹¹: կամ լորդ Բայրըն, մինչդեռ իրենց ամբողջ կյանքում մնում են տիտղոսավոր խորհրդական¹¹²...

Դահլիճ մտնելով, ես թաքնվեցի տղամարդկանց ամբոխի մեջ և սկսեցի դիտել: Գրուշնիցին կանգնած էր իշխանադստեր մոտ և մեծ ոգևորությամբ ինչ-որ բան էր ասում, իշխանադուստը նրան ցրված էր լսում, այս ու այն կողմ նայում՝ հովհարը շրմունքներին դրած: Նրա դեմքին անհամբերություն էր պատկերվում, աշքերն ինչ-որ մեկին էին փնտրում իր շուրջը: Ես կամացով մուտեցա նրանց հետեւից, որպեսզի ծածուկ լսեմ նրանց խոսակցությունը:

— Դուք ինձ տանջում եք, իշխանադուստը, — ասում էր

Գրուշնիցին: — Դուք սաստիկ փոխվել եք այն օրից, ինչ ես ձեզ չեմ տեսել...

— Դուք էլ եք փոխվել, — պատասխանեց իշխանադուստը, նրա վրա նետելով մի արագ հայացք, որի մեջ Գրուշնիցին չկարողացավ նկատել զաղտնի ծաղրը:

— Ե՞ս, ես փոխվե՞լ եմ... Օ՛, երբե՞ք: Դուք գիտեք, որ այդ անհնարին է, Ով ձեզ մեկ անգամ տեսել է, նա հավետ իր հետ կտանի ձեր աստվածային պատկերը...

— Դադարիցե՞ք...

— Իսկ ինչո՞ւ դուք այժմ չեք կամենում լսել այն, ինչին դեռ մոտ օրերս, և այնպես հաճախ, ունկնդրում էիք բարեհաճ կերպով...

— Որպէսնու ես կրկնություններ շեմ սիրում, — պատասխանեց իշխանադուստը՝ ծիծաղելով...

— Օ՛, ես շարաշար սխալվել եմ... Ես, խելագարս, կարծել եմ, թե գոնե այս ուսագիրներն իրավունք կտան ինձ հուսալու... Ո՛չ, ավելի լավ էր ես հավետ մնայի սոսկական զինվորի այն ատելի շինելով. գուցե ես նրան էի պարտական ձեր ուշադրությունը...

— Իսկապես, շինելը ձեզ շատ ավելի է սազում...

Այդ պահին ես մոտեցա և բարեկցի իշխանադուստերը. Նա մի քիչ կարմրեց և արագ ասաց.

— Ճիշտ չէ*, մայո* Պելորին, որ գորշ շինելը շատ ավելի է սազում մայո Գրուշնիցիուն:

— Ես ձեզ հետ համաձայն շեմ, — պատասխանեցի ես. — Նշանապեսովով նա է՛լ ավելի մատաղատես է երեսում:

Գրուշնիցին չդիմացավ այս հարվածին. ինչպես բոլոր իրեխանները, նա ծեր լինելու հավակնություն ունի. Նա կարծում է, թե կրեքի խոր հետքերը, որոնք նկատվում են իր դեմքի վրա, փոխարինում են տարիների կնիքին: Նա կատաղի հայացք նետեց իմ վրա, ուաքը զետնին խիեց ու հեռացավ մեղանից:

— Խոստովանեցե՞ք, — ասացի ես իշխանադուստերը, — որ թեպետ նա միշտ էլ շատ ծիծաղելի է եղել, բայց դեռ նորիրս ձեզ հետաքրքրական էր թվում... իր գորշ շինելով...

* Պարոն (Փր.).

Նա աշքերը կախեց և շպատասխանեց...

Գրուշնիցկին ամրողջ երեկոյի ընթացքում հետապնդում էր իշխանադառները, պարուժ էր կամ նրա հետ կամ նրան ՎԻՏ-Ա-ՎԻՏ*. նա աշքերով ուսում էր իշխանադառները, ախ էր քաշում և նրա գլուխը տանում իր աղերսանքներով ու հանդիմանություններով։ Երրորդ կազրիլից հետո իշխանադուստրն արդեն ասում էր նրան։

— Ես այդ չեի սպասում քեզանից, — ասաց նա, մռահենալով ինձ և ձեռքս բռնելով։

— Ի՞նչ։

— Դու նրա հետ մազուրկա ես պարելո՞ւ, — հարցրեց նա հանդիսավոր ձայնով։ — Նա ինձ խոստովանեց...

— Ե՛, ի՞նչ կա որ։ Իսկ մի՞թե դա գաղտնիք է։

— Հասկանալի է... Ես պետք է այդ բանն սպասեի այդ անպիտան աղջկանից... այդ կոկետութուց... Բայց ես վրեմբ կհանեմ։

— Գանգատվիր քո շինելից կամ քո ուսադիրներից, իսկ նրան ինչո՞ւ ես մեղադրում։ Նա ինչո՞վ է մեղավոր, որ դու նրան այլևս դուր չես գալիս։

— Իսկ ինչո՞ւ էր հույսեր տալիս։

— Իսկ դու ինչո՞ւ էիր հույս դնում։ Ցանկալ և ձգտել որիէ բանի։ Ես հասկանում եմ, բայց ո՞վ է հույս դնում։

— Դու գրացը տարար, միայն թե ոչ բոլորովին, — ասաց նա՝ շարությամբ ժպտալով։

Մազուրկան սկսվեց։ Գրուշնիցկին ընտրում էր միայն իշխանադառները, մյուս պարողներն էլ ամեն րոպի նրան էին ընտրում։ Դա ակներե դավադրություն էր իմ գեմ։ ավելի լավի իշխանադուստրը ցանկանում է խոսել ինձ հետ, նրան խանգարում էն. Նա կրկնապատիկ ավելի կցանկանա։

Ես մի երկու անգամ սեղմեցի իշխանադառներ ձեռքը երկրորդ անգամ նա իր ձեռքը դուրս քաշեց՝ առանց մի խոսք անգամ ասելու։

— Ես այս զիշեր վատ կքնեմ, — ասաց նա ինձ, երբ մազուրկան վերջացավ։

— Դրա մեղքը Գրուշնիցկունն է։

— Ո՞, ո՞չ։ — Եվ նրա դեմքն այնպիս մտածելու դարձավ, այնպիս տխուր, որ ես խոսք տվի ինձ այդ երեկո անպայման համբուրել նրա ձեռքը։

Սկսեցին ցրվել Խշանադառները կառեթ նստեցնելիս՝ ես արագորեն շրթումքներիս սեղմեցի նրա փոքրիկ ձեռիկը։ Մութն էր, ու ոչ ոք չէր կարող այդ տեսնել։

Ես դահլիճ վերադարձա՝ ինքու ինձանից շատ գոհ։

Մեծ սեղանի շուրջը ընթրում էր երիտասարդությունը, նրանց մեջ էր նաև Գրուշնիցկին։ Երբ ես ներս մտա, բոլորը լուցին. երևում էր, որ իմ մասին էին խոսում։ Անցյալ պարահանդեսից ի վեր շատերն են ինձանից դժգոհ, մանավանդ դրագունի կապիտանը, իսկ հիմա, կարծեմ, բացարձակապես թշնամական շաշկա է կազմակերպվում իմ դիմ Գրուշնիցկու հրամանատարությամբ։ Նա այնպիսի՝ հպարտ և քաջարի մարդու տեսք ունի...»

Շատ ուրախ եմ. ես սիրում եմ թշնամիներին, թեսկետ ոչ-քրիստոնեաբարք։ Նրանք ինձ զվարճացնում են, հուզում են իմ արյունը։ Միշտ զգաստ լինել, որսալ ամեն մի հայացք, ամեն մի բառի նշանակություն, կոաչել հակառակորդի մտադրությունը, քանդել դավադրությունները, խաբված ձևանալ և հանկարծ մի հարվածով խորտակել խորամանկություններից ու դիտավորություններից կառուցված ահապին և մեծ աշխատանքով ստեղծված ողջ շենքը, — ահա թե ինչն եմ ես կյանք անվանում։

6-ը հունիսի

Այսօր առավոտյան վերան իր ամուսնու հետ Կիսլովոդսկ մեկնեց, ես հանդիպեցի նրանց կառեթին, երբ զնում էի իշխանուհի Լիգովսկայալի մոտ։ Վերան ինձ գլխով արավնորա հայացքի մեջ կշտամբանք կար։

Իսկ ո՞վ է մեղավոր, նա ինչո՞ւ չի ուզում առանձնության միջ իր հետ տեսնվելու հնարավորություն տալ ինձ։ Սերը կրակի նման է, սնունդ շտանալով, մարում է։ Գուցե խանդնանի այն, ինչ շկարողացան անել իմ խնդրանքները։

* Դեմառեմ (Փր.)։

Ես մի ամբողջ ժամ նստեցի իշխանուհու մոտ: Մերին գուրս չեկավ. հիվանդ է: Երեկոյան նա զրուայգի չեկավ: Նոր կազմված շայկան, որի անդամները զինված էին լորնետներով, իրոք որ ահեղ տեսք էր ընդունել: Ես ուրախ եմ, որ իշխանադուատրը հիվանդ է. Նրանք իրենց որևէ հանդմտթյուն թույլ կտային նրա նկատմամբ: Գրուշնիցկու սանրվածքն անխնամ է և տեսքը հուսահատի: Նա, կարծեմ, իրոք որ վշտացած է, մանավանդ նրա ինքնասիրությունն է վիրավորված: Բայց չէ որ կան մարդիկ, որոնց մեջ հուսահատությունն անգամ զվարճալի է...»

Տուն գառնալով, ես նկատեցի, որ ինձ ինչ-որ բան է պակասում: Ես իշխանադուատրը շտեսա: Նա հիվանդ է: Չլինիթե ես իրոք սիրահարվել եմ... Ի՞նչ անհեթիթություն:

7-ը հունիսի

Առավոտյան ժամի 11-ին, այն ժամին, երբ իշխանուհի իփովսկայան սովորաբար քրտնում է երմոլովյան վաննայում, ես անցնում էի նրանց տան մոտով: Իշխանադուատրը մտախոհ նստած էր պատուհանի մոտ. ինձ տեսնելով, արագ ոտքի կանգնեց:

Ես նախասենյակ մտա, ծառաներից ոչ ոք չկար, և ես առանց գեկուցման, այստեղի բարքերի ազատությունից օգտվելով, հյուրասինյակ անցաւ:

Եղուն դալկություն էր պատել իշխանադուատրը հաճելի դեմքին: Նա կանգնած էր դաշնամուրի մոտ, մի ձեռքով բաղկաթողի թիկունքին կոթնած. այդ ձեռքը հազիվ նկատելի դուռմ էր, ես կամացուկ մոտեցա նրան և ասացի:

— Դուք ինձանից նեղացա՞ծ եք:

Նա ինձ վրա բարձրացրեց մի հոգնատաց, խոր հայացք և գլուխն օրորեց, նրա շրթունքներն ուզում էին ինչ-որ բաշասել և չկարողացան: Նրա աշքերն արցունքով լցվեցին: Նա կամացուկ նստեց բազկաթողին ու ձեռքերով ծածկեց երեսը:

— Զեղ ի՞նչ պատհեց, — ասացի ես՝ նրա ձեռքը բռնելով:

— Դուք ինձ չե՞ք հարգում... 0°, թողե՞ք ինձ...

Ես մի քանի քայլ արեցի... Նա շակվեց բազկաթողում, նրա աշքերը փայլատակեցին...

Դուն ունկը բռնելով՝ հս կանդ առա և ասացի.

— Երեկցեք ինձ, իշխանադուատր: Ես խելացնորի պես վարվեցի... մյուս անգամ այսպիսի բան չի պատահի. ես իմ միջոցները ձեռք կառնեմ... Զեր ինչի՞ն է պետք իմանալ այն, ինչ մինչև այժմ կատարվել է իմ հոգում: Դուք այդ երբեք չեք իմանա, և ավելի լավ ձեզ համար: Մնաք բարով:

Երբ ես հեռանում էի, ինձ թվաց, թե հս լսեցի, որ նա լալիս է:

Ես մինչև երեկո ոտքով թափառեցի Մաշուկի շրջակայրում, սոսկալի հոգնեցի և, տուն գալով, բոլորովին ուժասպառնեկա անկողնու վրա:

Ինձ այցելեց վեռները:

— Արդյո՞ք ճիշտ է, — հարցրեց նա, — որ դուք ամուսնանում եք իշխանադուատր Լիդովսկայայի հետ:

— Ի՞նչ կա որ:

— Ամբողջ բազաքն է ասում. իմ բոլոր հիվանդներն զբաղված են այդ լուրով, իսկ հիվանդներն, արդեն հայտնի է, թե ինչ մարդիկ են՝ ամեն ինչ զիտեն:

«Դա Գրուշնիցկու սարքածն է», — մտածեցի ես:

— Որպեսզի ապացուցեմ ձեզ, բժիշկ, այդ լուրերի ստույյունը, գաղտնաբար հայտնում եմ ձեզ, որ վազը ես Կիսլովոդսկի հմ փոխադրվում...

— Եվ իշխանադուատրը նույնպես...

— Ոչ, նա գեռ մի շաբաթ էլ մնալու է այստեղ...

— Ուրեմն դուք չե՞ք ամուսնանում...

— Բժիշկ, բժիշկ, հապա ինձ նայեցի՞ք. մի՞թե ես նման եմ փեսացուի կամ որևէ նման բանի:

— Ես այդպիսի բան չեմ ասում... Բայց դուք գիտեք, կան գեպքեր... — ավելացրեց նա, խորամանկ գլխառով, — Երբ ազնիվ մարդը պարտավոր է ամուսնանալ, և կան մայրիկներ, որոնք գոնե շեն կանխում այդ գեպքերը... Այսպես ուրեմն՝ ես, որպես ձեր մտերիմ ծանոթը, խորհուրդ եմ տալիս ձեզ ավելի զգույշ լինել... Սյուտեղ, զրերում օդը շափազանց վտանգավոր է, քանի-քանի սքանչելի երիտասարդներ եմ տեսել ես,

որոնք արժանի էին լավագույն վիճակի, բայց այստեղից ուղղակի պսակվելու են մեկնել... Նույնիսկ, կհավատաք, ի՞նձ են ցանկացի ամուսնացնել: Այդ մի գավառական մայրիկ էր, որի աղջիկը շատ գումատ էր: Ես դժբախտություն ունեցաւ ասելու, որ զեմքի գույնը կիվերադառնա հարսանիքից հետո. այն ժամանակ նա շնորհակալության արցունքներն աշքերին առաջարկեց ինձ իր աղջկա ձեռքը և իր ամրող կարողությունը, հիան շոնէ¹¹³, կարծեմ: Բայց ես պատասխանեցի, որ ես դրան անընդունակ եմ...

Վեռները գնաց՝ լիովին համոզված լինելով, որ ինձ նախադպուշացրեց:

Նրա խոսքերից ես նկատեցի, որ իմ և իշխանադստեր մասին քաղաքում արդեն զանազան վատ լուրեր են տարածել. դա Գրուշիկուն էժան չի՝ նստի

10-ը հունիսի

Արդեն երեք օր է, ինչ ես Կիսլովդսկում եմ: Ամեն օր տեսնում եմ Վերային ջրհորի մոտ և զբունելիս: Առավտյան արթնանում եմ, նստում պատուհանի մոտ և լուսնեսու նրա պատշաճրի կողմն ուղղում. նա վաղուց արդեն հագնված է և սպասում է պայմանական նշանին. մենք հանդիպում ենք, իրը թե պատշարար, այն այգում, որը մեր տների մոտից ձգվում է զեպի ցած, ուր ջրհորն է: Կենարար լեռնային օդը վերադարձրել է նրա դեմքի գույնը և ուժերը: Չուր չէ, որ նարզանը¹¹⁴ դյուցազնական աղբյուր է կոչվում: Այստեղի բնակիչները պնդում են, որ Կիսլովդսկի օդը սիրելու է տրամադրում, որ այստեղ տեղի են ունենում հանգույցների լուծումները բոլոր այն ոռուանների, որոնք երբեմէ սկսված են եղել Մաշուկի ստորոտի մոտ: Եվ իսկապիս, այստեղ ամեն ինչ առանձնության բույր ունի. այստեղ ամեն ինչ խորհրդավոր է. թե՛ լորիների ալեյների թանձր հովանիները, որոնք խոնարհվում են հեղեղատի վրա, որ աղմուկով ու փրփրադեղ՝ սալաբարից-սալաբար գահավիժելով, հանապարհ է բացում իր համար կանաչ սարերի միջև. թե՛ կիրճերը, որոնք լի են մշուշով ու լուսությամբ, և որոնց ճյուղավորումներն այստեղից

արածվում են բոլոր կողմերը. թե՛ թարմությունը բուրումնալից օդի, որը ծանրացած է հարավային բարձր խոտերի և սպիտակ ակացիայի արձակած արտաշնչումներով. թե՛ մշտական, քաղցրօրոր աղմուկը սառնորակ վտակների, որոնք հովտի ծայրին միմյանց հանդիպելով, աշխույժ վազում են՝ առաջարկուելով անելով և, վերջապես, Պողկումոկ գետը նետվելով: Այս կողմից կիրճն ավելի լայն է և դառնում է մի կանաչ լեռնագոգ. այստեղով է ուղրվում փոշոտ հանապարհը: Ամեն անգամ, երբ ես նայում եմ այդ հանապարհին, ինձ թվում է, թե այնտեղով կառեթ է գալիս, իսկ կառեթի պատուհանից գուրս է նայում վարդագույն մի գեմք: Արդեն շատ կառեթ է անցել այդ հանապարհով, իսկ նա դեռ չկա: Քերդի ետևում գանվող արվարձանը մարդարնակ է դարձել. իմ բնակարանից մի քանի քայլ հեռավորության վրա, բլուրի վրա կառուցված ճաշարանում երեկոներն սկսում են լուսեր առկայթել բարդիների կրկնակի շարքերի միջով. բաժակների աղմուկն ու զնդոցը լսվում է մինչև ուշ դիշեր:

Ոչ մի տեղ այնքան շատ կախեթի գինի և հանքային ջուր չեն խմում, որքան այստեղ:

Но смешивать эти два ремесла
Есть тьма охотников—я не из их числа.

(Բայց այս երկու արհեստները շփոթելու բյուրամբը
սիրահարներ կան. ես նրանց թվին չեմ պատկանում):

Գրուշնիցին իր շայկայի հետ ամեն օր պանդոկում սաստիկ աղմուկ է բարձրացնում և համարյա չի բարնում ինձ:

Նա միայն երեկ է եկել, այնինչ արդեն կովել է երեք ժեր մարդկանց հետ, որոնք իրենից առաջ են ցանկացել վաննամաներ. բացարձակապես կարելի է ասել, դժբախտությունները մարտական ոգի են զարգացնում նրա մեջ:

11-ը հունիսի

Վերջապես նրանք եկան: Ես նստած էի պատուհանի մոտ, երբ լսեցի նրանց կառեթի թխթիսկոցը. սիրաս հանկարծ արագ տրոփեց... Այս ի՞նչ բան է: Մի՞թե ես սիրահարված եմ: Ես

այնպես հիմքը եմ ստեղծված, որ այդ ինձանից կարելի է սպասել:

Ես նրանց մոտ ճաշեցի: Խշխանուհին իմ վրա շատ քնոքուէ է նայում և աղջկանից չի հեռանում . . . , այդ վատ է: Բայց զրա փոխարեն Վերան խանդում է ինձ իշխանազստեր նկատմամբ. ի՞նչ բարեկեցություն եմ ձեռք բերել ես: Կիրն ի՞նչ չի անի՞ր ախոյանին վշտացնելու համար: Ես հիշում եմ, մի կիր ինձ սիրեց այն պատճառով, որ ես մեկ որդիշին էի սիրում: Կնոջ խելքից ավելի պարագորսալ¹¹⁵ բան չկա: կանանց որևէ բանում համոզելը դժվար է, պետք է նրանց մինչև այն տեղը հասցնել, որ նրանք իրենք համոզեն իրենց: ապացուցների կարգը, որոնցով նրանք ուշացնում են իրենց կանխակալ կարծիքները, շատ օրիգինալ է, նրանց դիալեկտիկան սովորելու համար հարկավոր է սկիտական ուղեղում շուր տալ տրամարանության բոլոր գպրոցական կանոնները: Օրինակ, վեցնենք արամարանելու մի սովորական եղանակ.

Այս մարդը սիրում է ինձ, բայց ես մարզու գնացած կին եմ. Հետևաբար, նրան չպետք է սիրեմ:

Կանանց Հատուկ եղանակն է.

Ես նրան չպետք է սիրեմ, որովհետև ևս մարդու գնացած կին եմ. բայց նա ինձ սիրում է, հետեւաբար...

Սրան Հետևում է մի քանի կետ, որովհետև բանականությունն այլևս ոչինչ չի ասում, այլ մեծ մասամբ խոսում են լեզուն, աշխարհ և, դրանց Հետևից, սիրութ, իմեւ այն գոյությունը ունի:

Ի՞նչ կպատահի, եթե երբեք այս օրագիրը որևէ կնոց աշ-
քին ընկնի : — Զրպարտություն — կպչի նա զայրություն :

Այն օրից ի վեր, ինչ պուետները գրում են և կանայք նրանց գրածը կարդում (որի համար ամենախորին շնորհակալություն նրանց), նրանց այնքան են հրեշտակ անվանել, որ նրանք, իրոք, իրենց պարզամտության շնորհիվ, հավատացել են այդ կորպուլիմենտին, մոռանալով, որ նույն պուետները փողի համար ներուին¹¹⁶ մեծարեկով՝ կիսաստված էին կոշում...

Ինձ չեմ վայելի նրանց մասին ուստիսի շարությամբ խոսել, ի՞նձ, որը բացի նրանից, ոչինչ չի սիրում աշխարհում, ի՞նձ, որը միշտ պատրաստ է եղել նրանց համար զոհա-

բերելու իր հանդիսաւր, փառասիրությունը, կյանքը... Բայց չէ որ ևս գեղո՞ւության ու վիրավորված ինքնասիրության բարնկաման բաղեին չէ, որ ջանում եմ ևս բաշել նրանց գեմքից այն կախարդական բողը, որի միջով միայն սովոր հայացքն է թափանցում: Ա՛չ, այն բոլորը, որ ևս ասում եմ նրանց մասին, միայն հետեանք է

Ума холодных наблюдени

И сердца горестных замет

(Խելքի սառն դիտողությունների Եվ սրտի դառն նկատանքների)՝¹¹⁷

Կանայք պետք է որ ցանկանան, որպեսզի բոլոր տղամարդիկ էլ նրանց նույնքան լավ ձանաշին, որքան ես եմ ձանաշում, որովհետեւ ես նրանց հարյուրապատիկ ավելի եմ սիրում այն ժամանակից ի վեր, ինչ նրանցից չեմ վախենում և հաւաքացել եմ նրանց մանը թուլությունները:

Ի դեպք՝ Վեռուները միքանի օր առաջ կանանց համեմատում էր այն կախարդված անտառի հետ, որի մասին պատմում է Տասոսն¹¹⁸ իր «Ազատազրված Երուաղեմ»-ում: «Բավական է, որ մոտենաս, — ասում էր նա, — որպեսզի բոլոր կողմերից վրադ թափկեն այնպիսի սարսափներ, որ աստված ազատի՝ պարտականություն, հպարտություն, բաղաքավարություն, ընդհանուր կարծիք, ծաղր, արհամարհանք... Միայն պետք է դրանց չնայես, այլ ուղղագիծ առաջ գնաս. այդ դեպքում փոքր առ փոքր Հրեշները կանցնետանան, և քո առաջ կրացվի խաղաղ ու լուսավոր մի բացատ, որտեղ կանաչ մրտենին է ծաղկում: Բայց վայր տարել է քեզ, եթե առաջին իսկ քայլերից սիրտով գողա ու ետ նայես»:

Այսօրվա երեկոն հարուստ էր պատահարներով: Կիսլո-
վոզսկից մոտ երեք վերստ հեռավորության վրա, կիրճում,
որտեղ Պոդկումոկ գետակն է հոսում, կա մի ժայռ, որ
կոլցո (օղ. թարգմ.) է կոշըլում. դա մի դուռ է, որ բնությունն
է գոյացրել այդ դուռը գտնվում է բարձր բլրի վրա, և մայր

մտնող արեգ նրա միջով իր վերջին, բոցավառ հայացքն է պցում աշխարհի վրա: Մի բազմամարդ հեծելախումք գնում էր այդտեղ՝ քարե պատուհանի միջով արեկ մայրամուսր դիտելու օհիտն ասած, մեղանից ոչ ոք արեկ մասին չէր մտածում: Ես և իշխանադուստրը գնում էինք կողք-կողքի. տուն վերադառնալիս՝ գետանցով պիտի անցնեինք Պողկումոկը: Ամենասակալաջուր լիոնային գետակները վտանգավոր են հատկապես նրանով, որ նրանց հատակը կատարյալ կալելդոսկով¹¹⁹ է, ալիքների ճնշումից նա ամեն օր փոխվում է. այնտեղ, որտեղ երեկ քար էր, այսօր փոս է: Ես բռնեցի իշխանադստեր ձիու սանձը և ձին քաշեցի գետի ջուրը, որը ծնկներից վեր չէր. մենք կամացուկ սկսեցինք շեղակի առաջ շարժվել հոսանքի դեմ: Հայտնի է, որ արադաշոս գետակներ անցնելիս ջրին չպետք է նայել, որովհետև իսկույն գլուխներդ կպատուի: Ես մոռացա այս մասին նախազգուշացնել իշխանադուստր Մերիին:

Մենք արդեն գետի մեջտեղին էինք հասել, ամենասրբնթաց տեղին, երբ իշխանադուստրը հանկարծ օրորմեց թամբի վրա: «Ուշքս գնո՞ւմ է», — արտասանեց նա թույլ ձայնով... Ես արագ կուցա նրա կողմը, ձեռքով օղակեցի նրա ճկուն իրանը:

— Վերև նայեցեք, — շշնչացի նրան, — այդ ոչինչ, միայն թե մի վախեցեք. ես ձեղ հետ եմ:

Նա սկսեց իրեն լավ զգալ. Նա ուզեց ազատվել իմ ձեռքից, բայց ես ավելի ամուր օղակեցի նրա քնքուշ, փափուկ իրանը, իմ այտը համարյա դիպում էր նրա այտին, նա ասես թե բոց էր շնչում:

— Այդ ի՞նչ եք անում ինձ... աստված իմ...

Ես ուշազրություն չեի զարձնում նրա դողալոն ու շփոթմունքին, և շրթունքներս դիպան նրա քնքուշ այտին. Նա ցնցվեց, բայց ոչինչ շասաց. մենք գնում էինք մյուսների ետեցից, այդ ոչ ոք շտեսավ: Երբ մենք ափ դորս եկանք, բոլորն էլ արագ քշեցին ձիերը: Իշխանադուստրն իր ձին ետ պահեց. ես մնացի նրա կողքին. երեսում էր, որ իմ լուսիունը նրան անհանգստացնում է, բայց ես երդվեցի, հետաքրքրու-

թյունից գրգված, ոչ մի խոսք շասել: Ես ուզում էի տեսնել, թե նա ինչպես է դուքս գալու այդ դժվար դրությունից:

— Դուք կամ արհամարհում եք ինձ, կամ շատ եք սիրում, — վերջապես ասաց նա այնպիսի ձայնով, որի մեջ արցունք կար: Գուցե դուք ուզում եք ինձ ձեռք առնել, հոգեկ իմ հոգին ու հետո թողնել... Դա այնքան անարդ, ստոր բան կլիներ, որ լոկ այդպիսի ենթադրությունը... Օ՛, ո՛չ այնպես չէ, — ավելացրեց նա քնքուշ վստահություն արտահայտող ձայնով. — այնպես չէ, իմ մեջ ոչ մի այնպիսի բան չկա, որը բացառեր հարգանքը: Զեր հանդուպն վարմունքը... Ես պետք է, պետք է ներեմ ձեզ, որովհետև թույլ տվի... Պատասխանցեցի քեզ, էլի՛, ես ուզում եմ լսել ձեր ձայնը... — Վերջին խոսքերում կար այնպիսի կանացի անհամբերություն, որ ես ակամա ժամանակիցի: Բարեբախտաբար, մութն ընկնում էր... Ես ոչինչ շպատասխանեցի:

— Դուք լոռ՝ ամ եք, — շարունակեց նա, — դուք գուցե ուզո՞ւմ եք, որպեսզի ես առաջինն ասեմ, որ սիրում եմ ձեզ... Ես լուր էի...

— Արդյոք ուզո՞ւմ եք այդ, — շարունակեց նա, արագ շուր գալու իմ կողմը... Նրա հայացքի և ձայնի վճռականության մեջ ինչ-որ սարսափելի բան կար...

— Ինչի՞ համար, — պատասխանեցի հսկ ուսերս թոթվելով:

Նա մտրակեց իր ձին և ամբողջ թափով առաջ սլացակ նեղ, վտանգավոր ճանապարհով. դա այնպես արագ կատարվեց, որ ես հազիվ կարողացաւ հասնել նրան, այն էլ այն ժամանակ, երբ նա արդեն միացել էր մյուս հասարակությանը: Մինչև տուն հասնելը նա շարունակ խոսում և ծիծաղում էր: Նրա շարժումների մեջ ինչ-որ տեսդային բան կար. ոչ մի անգամ չնայեց ինձ: — Բոլորը նկատեցին այդ արտասովոր ուրախությունը: Եվ իշխանուհին ներքուատ ուրախանում էր՝ իր աղջկան նայելով. իսկ աղջկերը պարզապես չղային տագնապի մեջ էր. նա զիշերն անքուն կանցկացնի և լաց կլինի: Այս միտքն ինձ անսահման հանույք է պատճառում. կան բուպեներ, երբ ես հասկանում եմ վամպիրին¹²⁰: Եվ զիս բարի մարդու անուն ունեմ ու ձգո՞ւմ եմ այդ անվան:

Զիերից իշնելով, կանայք մտան իշխանություն տունը. ևս հուզված էի ու սլացա սարերը՝ գլխումս խոնված մտքերը քամուն տալու Յողաթաթախ երեկոն արբեցնող դովություն էր շնչում: Լուսինը բարձրանում էր մութ գագաթների ետևից: Իմ շպայտած ձիռ ամեն մի քայլը խուզ հնչյուն էր արձակում կիրճերի լուսիթյան մեջ. ջրվեժի մոտ ևս ջրեցի ձիս, մի-երկու անգամ ագահաբար ներս ծծեցի հարավային գիշերվա թարմ օդը և գարձի ճամփան բռնեցի: Ես գնում էի արվարձանով: Լուսերը պատուհաններում սկսում էին մարել բերդի պարսպաթմրի ժամապահները և մերձակա պահակաների պահակ կազակները ձիգ ձայնարկում էին իրար...

Արվարձանի տներից մենում, որ կառուցված էր ձորի բերանին, ևս նկատեցի արտակարս լուսավորություն. ժամանակ առ ժամանակ հնչում էին աններդաշնակ խոսակցություն և կանչեր, որոնք հատնում էին վինվորական քիֆի գոյությունն այցուեց: Ես իջա ձիուց և գաղտափողի մոտեցա պատուհանին. վեղը, որ կիալ չէր ծածկված, հնարավորություն տվեց ինձ տեսնելու քիֆ անողներին և լսելու նրանց խոսքերը: Իմ մասին էին խոսում:

Դրագունի կապիտանը, գինուց տաքացած, բռունցքը խփեց սեղանին՝ ուշադրություն պահանջելով.

— Պարոնա՛յք, — ասաց նա, — սա անհանդուրժելի է. Պելորինին պետք է խրատել Այդ պետերը բռությունը նորափետրիկները միշտ մեծամտանում են, մինչև որ նրանց քիֆն խփես: Նա կարծում է, թի միայն ինքն է ընտիր հասարակության մեջ ապրել, որովհետեւ միշտ մաքուր ձեռնոցներ ու սրբած կոշիկներ է հագնում:

— Եվ ի՞նչ գոռող ժամիտ ունի: Այնինչ, ևս հավատացած եմ, որ նա վախկուտ է, այս՝ վախկուտ:

— Ես նույն եմ կարծում, — ասաց Գրուշնիցին: — Նա սիրում է կատակի տալով օձիքն ազատել: Ես մեկ անգամ նրան այնպիսի բաներ ասացի, որ եթե որիշը լիներ, ինձ տեղնուածեղը կտոր-կտոր կաներ, իսկ Պելորինը բռուրը կատակի տվեց: Ես, հասկանալի է, նրան չկանչեցի¹²¹, որովհետեւ այդ նրա գործն էր. ասենք՝ հետք գուլիս դնել էլ շէի ցանկանում...

— Գրուշնիցին շարացած է Պելորինի վրա այն պատճառով, որ նա իշխանադատերը խլել է սրա ձեռքից, — ասաց ի՞նչ-որ մեկը:

— Ինչե՞ր եք հնարում: Ես, արդարեն, մի քիչ քարշ եմ եկել իշխանադատեր ետևից, բայց իսկույն պոկ եմ եկել, որովհետև ամուսնանալ չեմ ուզում, իսկ աղջիկ վարկարեկելու սովորություն չունիմ:

— Այս՝, ես ձեզ հավատացնում եմ, որ նա առաջնապույն վախկուտն է, այսինքն Պելորինը և ոչ թե Գրուշնիցին. իսկ Գրուշնիցին կտրիճ է և միաժամանակ իմ անկեղծ բարեկամը, — ասուց դարձյալ դրագունի կապիտանը: — Պարոնա՛յք, այստեղ նրան ոչ ոք չի՝ պաշտպանում: Ոչ ո՞ք, ավելի՝ լավ: Ուզո՞ւմ եք նրա քաջությունը փորձել: Այդ ձեզ կզվարճացնի...

— Ցանկանում ենք. միայն թի՝ ինչպե՞ս:

— Ա՛յ, լսեցի՞ք: Գրուշնիցին նրանից առանձնապես նեղացած է. առաջին գերը նրան: Նա որևէ հիմար բան պատրիակ կրոնի ու Պելորինին մենամարտի կկանչի... Կացի՞ք. բանը հենց այս է... Մենամարտի կկանչի. լա՞վ: Այս բոլորը մենամարտի կանչելը, պատրաստությունները, պայմանները որքան կարելի է հանդիսավոր ու սարսափելի կլինեն. Ես այդ իմ վրան եմ վերցնում. Ես քո սեկունդանատը¹²² կլինեմ, իմ խե՞ղճ բարեկամ: Լա՞վ: Սակայն ահա թի ինչ խորամանկություն կրանեցնենք. ատրճանակների մեջ մենք գնդակ չենք զնի: Գլխովս պատասխանատու եմ, որ Պելորինը կլախենա. վեց քայլի վրա կկանչեցնեմ սրանց իրար գեմ, սատանա՛ն տանի: Համաձա՞յն եք, պարոննե՞ր:

— Հիանալի՛ է մտածված... համաձայն ենք... ինչո՞ւ շամաձայնենք, — լսեց բոլոր կողմերից:

— Իսկ զո՞ւ, Գրուշնիցիի՛:

Ես սրտի գողով էի սպասում Գրուշնիցիու պատասխանին. սառը զայրույթ տոգորեց ինձ, երբ մտածեցի, որ եթե շիներ այս դիսվածը, ապա այս հիմարները կարող էին ծաղը ու ծանակի առարկա դարձնել ինձ: Եթե Գրուշնիցին համաձայներ, ես նրա վզովք կընկնեի: Բայց կարճառև լուսիթյունից հետո նա վեր կացավ իր տեղից, ձեռքը մեկնեց կապիտանին և շատ ազգու ձևով ասաց. «Լա՞վ, ես՝ համաձայն եմ»:

Դժվար է նկարագրել այդ ամբողջ հարդ կամպանիայի հրճանքը:

Ես տուն դարձա. ինձ փոթորկում էին երկու տարրեր զգացմունքներ: Առաջինը՝ տիսրությունն էր: Դրանք բոլորն ինչո՞ւ են ինձ ատում, — մտածում էի ես: — Ինչի՞ համար: Արդյո՞ք վիրավորել եմ մեկնումեկին: Ո՞չ! Մի՞թե ես պատկանում եմ այն մարդկանց թվին, որոնց լոկ տեսքն անբարյացակամություն է առաջ բերում: Եվ ես զգացի, որ թունալի շարությունը կամաց-կամաց լցնում է իմ հոգին: — Զգուշացե՞ք, պարուն Գրուշնեցի, — ասում էի ես, ետ ու առաջ քայլելով սենյակում: — Ինձ հետ այդպես կատակել չի կարելի: Դուք կարող եք թանկ վճարել ձեր հիմար ընկերների հավանությանն արժանանալու ձեր ցանկության համար: Ինձ խաղալիք չկարծե՞ք:

Ոչ զիշերը ես չքննիցի: Առավոտյան դեմ ես նարնջի պես դեղնած էի:

Առավոտը շրջորի մոտ ես հանդիսացի իշխանադստերը:

— Դուք հիշա՞նդ եք, — ասաց նա՝ սկսուն հայացքով ինձ նայելով:

— Գիշերը չեմ քննել:

— Ես նույնպես... ես ձեզ մեղադրում էի... գուցե անտեղի: — Բայց, բացատրվեցիք, ես կարող եմ ամեն ինչ ներել ձեզ...

— Արդյո՞ք ամեն ինչ...

— Ամե՞ն ինչ... միայն թե ճշմարտությունն ասեք... միայն թե շուտով... Գիտե՞ք, ես շատ եմ մտածել, շանալով բացատրել, արդարացնել ձեր վարմունքը. գո՞ւցե գուք երկուող եք կրում արդելքներից, որոնք կարող են հարուցվել իմ հարազատների կողմից... այդ ոչի՞նչ. երբ նրանք իմանան... (նրա ձայնը դողաց) ես կիսնդրեմ, կառնեմ նրանց համաձայնությունը: Թի՞ ձեր սեփական զրությունը... Բայց իմացած եղիք՝ ես ամեն ինչ կարող եմ զոհաբերել նրան, ում սիրում եմ... Օ, շուտով պատասխանեցե՞ք, խղճացե՞ք... Դուք ինձ չե՞ք արհամարհում, այնպես չե՞ք:

Նա բռնեց իմ ձեռքը:

Իշխանուշին վերայի ամուսնու հետ գնում էր մեր առջեցից

և ոչինչ չտեսավ, բայց մեզ կարող էին տեսնել զբունող հիվանդները՝ բոլոր հետաքրքրասերների մեջ ամենահետաքրքրասեր այդ բամբասողները, և ես արագ ազատեցի իմ ձեռքը նրա կրքու սեղմումից:

— Ես ձեզ կասեմ ամբողջ ճշմարտությունը, — պատասխանեցի իշխանադստերը, — չեմ աշխատի արդարանալ, ոչ էլ վարմունքս բացատրել. ես ձեզ չեմ սիրում:

Նրա շրթունքները թիթեակի գունատվեցին...

— Թողե՞ք ինձ, — ասաց նա հազիվ լսելի ձայնով:

Ես թոթիւցի ուսերս, շուր եկա և զնացի:

14-ր հանիսի

Ես երբեմն արհամարհում եմ ինձ... դրանից չի՞ արդյոք, որ ես արհամարհում եմ նաև ուրիշներին... Ես անընդունակ եմ դարձել ազնիվ մղումների. ես վախենում եմ ինքս իմ աշբում ծիծաղելի թվալ: Իմ տեղ ուրիշը կառաջարկեր իշխանադստերը son coeur et sa fortune*. բայց ամուսնալ բառն ինչ-որ կախարդական իշխանություն ունի ինձ վրա. ես որքան էլ բուռն սիրեմ որեւէ կնող, եթե նա լոկ զգալ տա ինձ, որ ես պետք է նրա հետ ամուսնանամ. մնա՞ս բարով, սե՞ր. իմ սիրտը քար կկտրի, և նրան այլևս ոչինչ նորից չի տաքացնի: Ես պատրաստ եմ բոլոր զոհողություններին, բացի սրանից. բան անգամ իմ կյանքը, մինչև անգամ պատիվս վտանգի կենթարկեմ..., բայց իմ աղատությունը չեմ ծախի: Ինչո՞ւ եմ այսպիս թանկ գնահատում այդ պատությունը. այն իմ ինչի՞ն է պետք. ինչի՞ եմ պատրաստում ինքս ինձ. ի՞նչ եմ սպասում ապագայից... Ճիշտն ասած, ուզզակի ոչինչ: Դա ինչ-որ բնածին ահ է, մի անմեկնելի նախազգացում... Չէ որ կան մարդիկ, որոնք առանց գիտակցելու թե ինչու՝ վախենում են սարդերից, ուտիճներից, մկներից... Խոստվանե՞մ... Երբ ես մասնուկ էի, մի պառակ կին մորս համար գուշակեց իմ բախտը. Նա ինձ գուշակեց մահ շար կնոջ երեսից: Այն ժամանակ այդ

* Եթ սիրտը և կարողությունը (ամուսնանալու փոխարերական առաջարկություն) (Ֆր.)

ինձ խորապես զարմացրեց. իմ հոգում ծնունդ առավ մի անշաղթահարելի զգվանք դեպի ամուսնությունը... Մինչդեռ, ինչոր բան ինձ ասում է, թե նրա գուշակությունն իրականանալու է. գոնե ես ջանք կթափեմ, որպեսզի այդ որքան կարելի է ուշ իրականանա:

15-ը նունիսի

Երեկ այսուհեղ եկավ ձեռնածու Ապֆելբաումը: Շաշարանի դուների վրա երևաց մի երկար ափիշ, որն ազգարարում էր ամենապատվելի հասարակությանը, որ վերոհիշյալ զարմանալի ձեռնածուն, լարախաղացը, քիմիկոսը և օպտիկը պատիվ կունենա այսօր երեկոյան ժամի 8-ին շքեղ ներկայացում տալու աղնվականների ժաղովարանի դաշվճում (այլ խոսքով՝ ճաշարանում). տոմսերի գները երկու մասնեթ ու կես:

Բոլորը պատրաստվում են գնալ զարմանալի ձեռնածուին տեսնելու, մինչև իսկ իշխանութիւնի կիբովսկայան, չնայած որ իր աղջիկը հիվանդ է, իր համար տոմս է վերցրել:

Այսօր ճաշից հետո ես անցնում էի Վերայի պատուհանների մոտով. նա մենակ նստած էր պատշզամբում. իմ ոտքերի տակ ընկավ մի երկտող.

«Այսօր երեկոյան ժամի տասին ինձ մոտ եկ մեծ սանդուղքով. ամուսինս Պյատիգորսկ է մեկնել և կվերադառնամիայն վաղը առավոտյան: Իմ ծառաները և սպասուհիները տանը չեն լինի. ես նրանց բոլորին տոմսեր եմ բաժանել, նույնպես և իշխանութու ծառաներին: ես սպասում եմ քեզանայման եկու:

— ԲՀՇ', — մտածեցի ես, — վերջապես իմ ասածովը եղավ:

Ժամի ութին ես գնացի ձեռնածուին տեսնելու: Հաւարակությունը հավաթից ժամի ինը լրանալու ժամանակ. ներկայացումն սկսվեց: Աթոռների վերջին շարքերում ես ճանաչեցի Վերայի և Իշխանութու լաքիյներին ու սպասուհիներին: Առանց բացառության բոլորն այդտեղ էին: Գրուզնիցկին՝ լոռնեան առած նստել էր առաջին շարքում: Ձեռնածուն նրան

էր դիմում ամեն անդամ, երբ իրեն թաշկինակ, ժամացույց, մատանի և այլ բան էր պետք գալիս:

Արդեն մի քանի ժամանակ է, ինչ Գրուզնիցկին ինձ չի բարեւում, իսկ այսօր մի-երկու անդամ բավական հանդուպն նայեց ինձ: Այս բոլորը ես նրան կհիշեցնեմ, երբ հաշիվներս մաքրելու կլինենք:

Ժամի տասը լրանալու մոտ ես վեր կացա ու դուրս դնացի:

Գուրսն այնքան մութն էր, որ մատդ մարդու աչք կուխե, իր, չեր տեսնի: Մանր, ցրտաշունչ ամպեր էին դիզված շրջակա սարերի գագաթներին. միայն երեխն-երեխն մեռնող քամին խշացնում էր ճաշարանը շրջապատող բարդիների կատարները. ճաշարանի պատուհանների մոտ բազմություն էր խոնված: Ես իշա սարից և, դեպի գարբասը ծովելով, արագացրի քայլերս: Հանկարծ ինձ թվաց, թե մեկը գալիս է իմ հետեւց: Ես կանգ առա և շուրջս նայեցի: Մթնում ուինչ չէր կարելի շոկել, սակայն գգուշության համար՝ ես պատեցի տան շուրջը, իրը թե զրունում էի: Իշխանադստեր պատուհանների մոտով անցնելիս, ես նորից քայլերի ձայներ լսեցի իմ հետեւց: Չինելի մեջ փաթաթված մի մարդ վակելով անցավ իմ կողքով: Դա ինձ անհանգատացրեց. սակայն ես գաղտապողի մոտեցա մուտքին և վակելով՝ բարձրացա մութ սանդուղքի վրա: Դուռը բացվեց, մի փոքրիկ ձեռք բռնեց իմ ձեռքը...

— Քեզ ոչ ոք չտեսա՞վ, — շշնչաց Վերան՝ ինձ սեղմելով:

— Ոչ ո՞ք:

— Հիմա գու հավատո՞ւմ ես արդյոք, որ ես քեզ սիրում իմ: Օ՛, ես երկար ժամանակ տատանվում էի, երկար տանջվեցի... Բայց դու ինձ դարձնում ես այն, ինչ որ ցանկանում ես:

Նրա սիրուն ուժգին բարախում էր, ձեռքերը սառցի պիս պաղ էին: Սկսվեցին խանդից առաջացող կշտամբանքները, գանգատները. նա ինձանից պահանջում էր, որ ես ամեն ինչ խոստովանեմ իրեն, ասելով, որ ինքը հեղությամբ կտանի իմ զավաճանությունը, որովհետեւ իր միակ ուզածն իմ երջանկու-

թյունն է: Ես դրան հավատում էի ոչ լիովին, բայց նրան հանգստացրի երդումներով, խոստումներով և այն:

— Ուրիշն դու շե՞ս ամուսնանում Մերիի հետ, նրան չե՞ս սիրում... Խսկ նա կարծում է... զիտես արդյո՞ք, նա խելագարության աստիճան սիրահարված է քեզ, խե՞ղճ աղջիկ...

Գիշերվա ժամի երկուսին մոտ ես բացեցի պատուհանը և, երկու շալ իրար կապելով, վերին պատշգամբից ցածինն իջա՞ սյունից բռնելով: Խշխանադաներ սենյակում լույսը դեռ վառվում էր: Մի բան մղեց ինձ դեպի այդ լուսամուտը: Վարագույրն իջեցրած էր ոչ ամբողջովին, և ես կարողաց հետաքրքրասերի հայացք ցեղ սենյակի ներսը: Մերին նստած էր իր անկողնու վրա՝ ձեռքերը խաշածե ծալած ծնկներին. նրա խիտ մազերը հավաքված էին գիշերվա գլխանոցում, որի շուրջը ժանյակ էր կարած. մեծ վառ-կարմիր շալը ծածկում էր նրա սպիտակ ուսիկները, խսկ փոքրիկ տոտիկները թաքնված էին խայտարդետ պարսկական բոշերի մեջ: Նա նստած էր անշարժ, գլուխը կրծքին խոնարհած. նրա առջև փոքրիկ սեղանի վրա մի բաց գիրք կար, բայց նրա անբացատքելի վշտով լի և անշարժ աշքերը, թվում էր, թե հարյուրերորդ անդամ միևնույն էջն էին կարդում, մինչդեռ մտքերը հեռու էին...

Այս բռպեին թիի ետևն ինչ-որ մարդ շարժվեց: Ես պատշգամբից ցատկեցի ճմի վրա: Անտես մի ձեռք բռնեց իմ ուսը: «Ծը՛, — ասաց մի կոպիտ ձայն: — բռնվեցի՛ր... գիշերներն իշխանադանութերի մոտ գնա՞լ ցուց կտամ քեզ...»:

— Պի՛նդ բռնիր դրան, — բղավից անկյունի ետևից դուրս պրծած մեկ ուրիշը:

Այդ Գրունիցկին և դրագունի կապիտանն էին:

Ես բռուցքով խփեցի վերցինիս գլխին, ցած գլորեցի և նետվեցի դեպի թիերը: Մեր աների առջև փռվող զառիթափը ծածկող այգու բռլոր կածաններն ինձ ծանոթ էին:

— Գողե՛րը, օգնեցե՞ք... — կանչում էին նրանք: Խսկեց հրացանի կրակոց, ծխացող փուրծը (փիլթան)¹²³ ընկալ համարյա իմ ոտքերի մոտ:

Մի բռպե անց՝ ես արդեն իմ սենյակումն էի. շորերս հանցի և պառկեցի: Իմ լաքեյը հապիվ էր գուրը կողպել, երբ դուս թակել սկսեցին Գրունիցկին և կապիտանը:

— Պեշո՛րին, գուր քնա՞ծ եք, գուր տա՞նն եք... — կանչեց կապիտանը:

— Քնած եմ, — բարկացած պատասխանեցի ես:

— Վեր կացե՛ք, գողեր... շերեպներ են երևացել...

— Ես հարրուխ ունեմ, — պատասխանեցի ես, — վախենում եմ՝ մրսեմ:

Նրանք գնացին: Ես իզուր պատասխանեցի նրանց կանչին. նրանք դեռ մի ժամի չափ էլ կփնտրեին ինձ պարտիզում: Մինչ այդ, տագնապը սոսկալի գարձավ: Բերդից շտապով ձիավոր կազակ եկավ, Բոլորը շարժվեցին տեղերից. սկսեցին շերքեզներ վնտրել բռլոր թիերի տակ, և, հասկանալի է, ոչինչ չըստան: Բայց շատերը, հալանորեն, մնացին այն հաստատ համոզմունքին, որ եթե կայազորը ցուց տար ավելի մեծ քաջություն և փութացանություն, գոնե մի երկու տասնյակ գիշատիչ գետին կփռվեին:

16-ը Խոնիսի

Այսօր առավոտյան ջրհորի մոտ խուսակցության միակ առարկան շերքեզների գիշերվա հարձակումն էր: Սահմանված քանակությամբ նարզան խմելուց, մի տասն անգամ լորիների երկար ալեյով ետ ու առաջ քայլելուց հետո, և հանդիպեցի Վերայի ամուսնուն, որ հենց նոր էր եկել Պյատիգորսկից: Նա ինձ թևանցով արավ, և մենք ճաշարան գնացինք՝ նախաճաշելու. նա սոսկալի անհանգստանում էր իր կնոջ համար: Վերան ինչպե՞ս է վախեցել այս գիշեր, — ասում էր նա, — կարծես հակառակի պես՝ այդ բանը պետք է պատահեր հեռ հենց այն ժամանակ, երբ ես բացակայում էի»:

Մենք նախաճաշելու նստեցինք այն դուն մոտ, որը տանում էր դեպի ճաշարանի անկյունի սենյակը. այնտեղ կային մոտ տասը երիտասարդներ, որոնց թվում էր և Գրունիցկին: Բախտը երկրորդ անգամ ինձ առիթ ընձեռեց ծածկարար լսելու մի խոսակցություն, որը պեսք է վճռեր Գրունիցկու

բախտը: Նա ինձ չէր տեսել և, հետեաբար, ես չէի կարուղ կասկածել, թե նա հետին մտքով է անում այդ բայց դա միայն ավելացնում էր նրա մեղքն իմ աշբում:

— Բայց մի՞թե իսկապես դրանք չերքեզներ էին, — ասաց մի մարդ, — մեկն ու մեկը նրանց տեսել է:

— Ես ձեղ կպատմեմ ամբողջ ճշմարտությունը, — պատանիսանց Գրուշնիցկին, — միայն թե, խնդրում եմ, ինձ շմատնեք. ահա թե բանն ինչպես է պատահել. երեկ մի մարդ, որի անունը ես ձեզ շեմ ասի, գալիս է ինձ մոտ և պատմում, որ երեկոյան ժամի տասին տեսել է, թե ինչպես մեկը գաղտադողի թափանցել է Լիգովսկայանների տուքը: Դուք պետք է նկատի առնեք, որ իշխանութիւն այստեղ էր, իսկ իշխանագուստը՝ տանը: Ահա ես և այդ մարդը գնացինք պատուհանների մոտ, որպեսզի երջանիկին բռնենք:

Խոստովանում եմ, ես վախիցա, թեպետ իմ գրուցակիցը շատ էր զբաղված իր նախաճաշով. նա կարող էր իր համար բավական անախորդ բաներ լսել, եթե հանկարծ Գրուշնիցկին կուհած լիներ ճշմարտությունը. բայց, խանդից կորպացած՝ նա այդ ճշմարտության գոյությունն իսկ չէր երեսակայում:

— Այդպես ուրեմն, — շարունակեց Գրուշնիցկին, — մենք դնացինք, հետներս վերցնելով սնամեջ փամփուշտ լցրած հրացան՝ հենց այնպես, վախիցնելու համար: Մինչև յարի երկուսը սպասեցինք պարաեզրում: Վերջապես նա հայտնվեց. էլ աստված դիտե թե որտեղից, միայն թե ոչ լուսամուտից: Որովհետեւ այն չէր էլ բացվել, այլ հավանաբար սյունի ետեղ դոնվող ապակե գոնով գուրս գալով, վերջապես, ասում եմ ես, մենք տեսանք, որ մեկն իջնում է պատշամքից... Ո՞նցն է իշխանադուստը, Հը՛: Ա՛յ թե արարածներ են այդ մոսկ վացի օրիորդները, Հա՛: Սրանից հետո էլ ինչի՞ կարելի է հավատալ: Մենք ուզում էինք այդ մարդուն բռնել, բայց նա դուրս պրծավ մեր ձեռքից ու նապաստակի պես դեպի թփերը նետվեց, այստեղ ես կրակեցի նրա վրա:

Գրուշնիցկու շուրջը լսվեց անվտանգություն արտահայտող շնորհուն:

— Դուք շե՞ք հավատում, — շարունակեց նա, — պատվո, աղնովության խոսք եմ տալիս ձեզ, որ այս բոլորն իսկա-

կան ճշմարտություն է և որպես դրա ապացույց, ես, ինչ արած, կտամ այդ պարոնի անունը:

— Ասա՛, ասա՛ ո՞վ է նա, — լսվեց բոլոր կողմերից:

— Պեղորինը, — պատասխանեց Գրուշնիցկին:

Այս բոպեին նա բարձրացրեց իր հայացքը. ես կանգնած էի դռան շեմքին, իր դիմացը. նա սոսկալի կարմրեց: Ես մոտեցա նրան և ասացի դանդաղ ու հստակ լսելի կերպով.

— Ես շատ եմ ափսոսում, որ ես ներս մտա այն բանից հետո, երբ դուք աղնիվ խոսք տվիք՝ հաստատելու ամենանողկալի զրաբարտությունը: Իմ ներկայությունը ձեզ կաղատեր ամբելորդ ստորությունից:

Գրուշնիցկին իր տեղից վեր թռավ և ուզեց տաքանալ:

— Խնդրում եմ ձեզ, — շարունակեցի ես նույն տոնով, — ձեզ խնդրում եմ այս իսկ բոպեին Հրաժարվել ձեր խոսքերից. դուք շատ լավ գիտեք, որ այդ հերթուրանք է: Ես շեմ կարծում, թե կնոջ անտարբերությունը գեպի ձեր փայլուն արժանիքներն արժանի է այդպիսի սոսկալի վրեժի: Լա՛վ մտածեցեք. ձեր կարծիքը պաշտպանելով, դուք կկորցնեք աղնիվ մարդու անուն կրելու իրավունքը և վտանգի կենթարկեք ձեր կյանքը:

Գրուշնիցկին կանգնած էր իմ առաջ՝ հայացքը խոնարհած, խիստ հուզված վիճակում: Բայց խղճի պայքարն ինքնամիրության դեմ կարծատե եղավ: Նրա մոտ նստած դրագունի կապիտանն արմունկով հրեց նրան. Գրուշնիցկին ցընցվեց և առանց հայացքը վեր բարձրացնելու, արագ պատասխանեց ինձ.

— Հարգելի պարոն, երբ ես որևէ բան ասում եմ, ես այդպես էլ մտածում եմ ու պատրաստ եմ կրկնելու... Ես ձեր սպառնալիքներից շեմ վախենում և պատրաստ եմ ամեն ինչի:

— Վերջինը դուք արդին ապացուցեցիք, — պատասխանեցի նրան սառը կերպով, և, դրագունի կապիտանին թևանցուկ անելով, սինյակից դուրս եկա:

— Ի՞նչ եք կամենում, — հարցրեց կապիտանը:

— Դուք Գրուշնիցկու մտերիմ ծանոթն եք և, հալանաբար, նրա սեկունդանուը լլինե՞ք:

Կապիտանը շատ ծանրորեն գլուխ տվեց ինձ:

— Դուք կուհեցիք, — պատասխանեց նա, — ես նույնա-

իսկ պարտավոր եմ նրա սեկունդանտը լինել, որովհետև նրան հասցրած վիրավորանքն ինձ էլ է վերաբերում, երեկ զիշեր ես նրա հետ էի, — ավելացրեց կապիտանը, շտկելով իր փոքրինչ կոր իրանը:

— Ա՛, որին այնպես անձարպիկ կերպով ես ձե՞ր գըլ-խին խփեցի...

Նա դեղնեց, կապտեց. թաքցրած շարսրություն պատկերացավ նրա գեղքի վրա:

— Ես պատիվ կունենամ այսօր իմ սեկունդանտն ուրարկելու ձեղ մոտ, — ավելացրի ես՝ ի նշան հրաժեշտի, շատ քաղաքավարի գլուխ խոնարհելով և ցուց տալով, իբր թե ուշադրություն շեմ դարձնում նրա կատաղության վրա:

Ճաշարանի մուտքի մոտ ես համդիպեցի Վերայի ամուսնուն: Կարծեմ, նա ինձ էր սպասում:

Նա արագ բռնեց իմ ձեռքը մի զգացմունքով, որ հիացմունքի էր նման:

— Ազնի՞վ երիտասարդ, — ասաց նա, արցոնքին աշքերին. — Ես բոլորը լսեցի. ի՞նչ զարշելին էր, անշնորհակալը... Սրանից հետո արի ու դրան կարդին տուն ընդունիր: Փա՛ռք աստծո, ես աղջիկներ չունեմ: Բայց ձեզ կպարզեատրի նա՛, ում համար ձեզ կյանքն եք ոխսկի հնթարկում: Վստահ եղեք, որ ես համեստ կլինեմ մինչև պատշաճ ժամանակը, — շարունակեց նա. — Ես ինք էլ երիտասարդ եղել եմ և զինվորական ժառայության մեջ գտնվել. զիտեմ, որ այդ գործերին չպետք է խառնվել: Ցտեսություն:

Խե՞ղճ մարդ. ուրախանում է, որ աղջիկներ չունի...

Ես դնացի ուղղակի վեռների մոտ, նրան տանը գտա և պատմեցի բոլորը. իմ հարաբերությունները Վերայի և իշխանակատեր հետ և իմ լսած խոսակցությունը, որից իմացել եմ այդ պարոնների մտագրությունը՝ ինձ հիմարացնել, ստիպելով սնամեջ գնդակ լցրած ատրճանակով մենամարտել: Բայց այժմ գործը կատակի սահմաններից դուրս էր գալիս. նրանք, հավանաբար, հանգույցի ալսպիսի լուծման չէին սպասում:

Թժիշկը համաձայնեց իմ սեկունդանտը լինել. Ես նրան մի բանի խրատ տվի մենամարտի պայմանների վիրաբեր-

մամբ. Նա պիտք է պնդեր, որ գործը որքան կարելի է գաղտնի մնա, որովհետև ես թեպետ ամեն ժամանակ պատրաստ եմ ինձ մահվան հնթարկել, բայց բնավ որամադիր չեմ առմիշտ վլացնել իմ ապագան այս աշխարհում:

Դրանից հետո ես տուն գնացի: Մի ժամից հետո բժիշկը վերադարձավ իր էքսպերիցիալից:

— Զեր զեմ, իսկապես, զավարություն կա, — ասաց նա, — Գրուշնիցկու մոտ ես տեսա դրագունի կապիտանին և էլի մի պարոնի, որի ազգանունը չեմ հիշում: Ես մի բոպի կանգ առա նախասենյակում, որպեսզի կոկնակոշիկներս հանեմ: Նրանք սոսկայի աղմուկ հանելով՝ վիճում էին:

«Ոչ մի գնով չեմ համաձայնի, — ասում էր Գրուշնիցկին. — Նա ինձ հրապարակով է վիրավորել. այն ժամանակ բոլորովին ուրիշ բան էր»... — «Քո ի՞նչ բանն է, — պատասխանեց կապիտանը, — Ես բոլորն իմ վրա եմ վերցնում: Ես հինգ մենամարտում սեկունդանտ եմ եղել և արդեն դիտեմ, այդ ինչպես սարքել: Ես բոլորը մտածել ու գտել եմ: Խնդրում եմ, միայն թե ինձ մի խանգարիր: Մի քիչ վախեցնելը վատ չէ: Եսկ ինչո՞ւ քեզ վասնգի հնթարկես, եթե կարելի է ազատվել...»: Այդ բոպեին ես ներս մտա: Նրանք հանկարծ լուցին: Մեր բանակցությունները բավական երկար տևեցին. վերջապես մենք ահա թե ինչ որոշեցինք. այստեղից մի հինգ վերստ հեռավորության վրա մի խուզ կիրճ կա. Նրանք այնտեղ կղնան վազր, առավոտյան ժամի չորսին, իսկ մենք նրանցից մի կես ժամ ուշ դուրս կդանք. իրար վրա կկրակեք վեց քայլ հեռավորությունից. ինքը Գրուշնիցկին պահանջեց այդ: Ըստ պահվածին չերքեզների հաշվին կդրենք¹²⁴: Հիմա ես ահա թե ինչ կասկածներ ունեմ: Նրանք, այսինքն՝ սեկունդանտները, հավանորեն փոքր-ինչ փոխել են իրենց նախկին պլանը, և ուզում են գնդակ դնել միմիայն Գրուշնիցկու ատրճանակի մեջ: Սա մի քիչ նման է սպասության, բայց պատերազմի ժամանակ, և մանավանդ ասիսկան պատերազմում, խորամանկությունները թույլատրվում են. միայն թե Գրուշնիցկին, կարծիք, իր ընկերներից աղնիվ է: Դուք ի՞նչ եք կարծում, մենք պետք է ցուց տանք նրանց, որ գլխի ենք ընկել:

— Ո՞ւ մի զեպքում, բժիշկ. դուք հանգիստ եղեք, ևս նրանց խարկանքին չեմ հնթարկվի:

— Իսկ ի՞նչ եք ուզում անել:

— Այդ իմ գաղտնիքն է:

— Տեսե՛ք, ծովակ շընկնե՞ք... ախր կրակելու եք վե՛ց քայլ հեռավորությունից:

— Բժի՛շկ, ևս ձեզ սպասում եմ վաղը ժամի շորսին. ձիե՞րը պատրաստ կինեն... Ցտեսություն:

Ես մինչև երեկո տանը նստեցի՝ սինյակում փակվելով: Իշխանուհու լաքերը եկավ ինձ նրա մոտ կանչելու. ևս կարդաղրեցի ասելու, որ հիվանդ եմ:

Գիշերվա ժամի երկուսն է... քունս չի տանում... Իսկ քնել հարկավոր է, որպեսզի վաղը ձեռքս չդողա: Ասենք վեց քայլի վրա դժվար է վրիպել: Ա՛, պարոն Դրուշնի՛ցի, ձեր միստիֆիկացիան ձեղ չի հաջողվի... մենք դերերս կփոխենք: Այժմ ես պետք է ստիպված լինեմ ձեր գունատ գեմքի վրա գաղտնի ահի նշաններ փնտրել: Ինչո՞ւ դուք ինքներդ նշանակեցիք այդ ճակատագրական վեց քայլը: Դուք կարծո՞ւմ եք, թի ևս առանց վիճելու ձեր գնդակի առաջ կրոնեմ իմ ճակատը... բայց մենք վիճա՞կ կցցենք... և այն ժամանակ... այն ժամանակ... իսկ եթե՝ նրա բախտի նժարը ծանր լինի. եթի՞ իմ աստղը վերջապես դավաճանի ինձ... եվ զարմանալի էլ չէ. այդ աստղը երկար է հավատարմությամբ ժառայել իմ քմահաճույքներին. երկնքում ավելի շատ հաստատուն հավատարմություն չկա, քան երկրի վրա:

Ի՞նչ արած. եթե մենակու է, կմեռնե՞նք, աշխարհի համար մեծ կորուստ չէ. ասենք ես էլ արդեն բավական ձանձրացել եմ: Ես նման եմ պարահանգեսում Հորանջող մարդու, որը քնելու չի գնում միայն այն պատճառով, որ իր կառեթը դեռ չի եկել: Բայց կառեթը պատրաստ է... մնաք բարո՞վ...

Հիշողության մեջ թերթում եմ իմ ամբողջ անցյալը և ակամա հարցնում եմ ինքս ինձ՝ ի՞նչ եմ ապրել, ի՞նչ նպատակի համար եմ ծնվել... Իսկ նպատակ, հավանորեն, եղել է, և, հավանորեն, ինձ բարձր կոչում է սահմանված եղել, որովհետեւ հոգում մեջ անընդդրկելի ուժեր եմ դգում... Բայց

ես չկուահեցի այդ կոչումը, ես տարվեցի դատարկ և անշնորհակալ կրբերի հրապություներով: Նրանց բովլից ես զուրս եկա ամուր և պաղ, ինչպես երկաթ, բայց առհավետ կորցրի աղնիվ ձգտումների բուռն ցանկությունը՝ կյանքի լավագույն ծաղիլը: Եվ այդ ժամանակից ի վեր ես քանիցս կացնի զեր եմ կատարել ճակատագրի ձեռքին: Որպես մահապատճի զենք, ես իշել եմ դատապարտված զոհերի գլխին, հաճախ առանց շարամտության, միշտ առանց ափսոսանքի... Իմ սերը ոչ ոքի երջանկություն չի բերել, որովհետեւ ես ոչինչ չեմ զուհարերի նրանց համար, ուն սիրել եմ. ես սիրել եմ ի՞նձ համար, իմ սեփական բավականության համար. ես միայն բավարարել եմ սրտիս տարօրինակ պահանջը, ագահությամբ կլանելով նրանց զգացմունքները, նրանց քնքշությունը, նրանց ուրախություններն ու տանջանքները և երբեք չեմ կարողացել հաղինալու Այդպես քաղցից տառապողն ուժասպառ քնում է և իր առաջ տեսնում է ճոխ ուտելիքներ ու փրփրալից զինիներ, նա հրճավանքով լափում է երևակայության ընծայած օդիղեն պարզեները և թեթևություն է զգում. բայց հենց որ արթնանում է, երազը անհետանում է... մնում է կրկնապատկված քաղցը և ըուսահատությունը:

Եվ գուցե ես վազը մեռնե՞մ... ու երկրի վրա շմնա ինձ լիովին հասկացող ո՛չ մի էակ: Ոմանք ինձ ավելի վատ են համարում, մյուսներն ավելի լավ, քան ես իրոք կամ... Ոմանք կասեն՝ նա բարի մարդու մեկն էր, մյուսները թե՛ սրիկա էր: Թե՛ մեկը, թե՛ մյուսը սխալ կլինի: Սրանից հետո արժե՞արդյոք աշխատանք թափել ապրելու համար: Բայց դարձյալ ապրում ես՝ հետաքրքրությունից դրդված, ինչ-որ նոր բանի ես սպասում... Ծիծաղելի է և ցավալի՛:

Ահավասիկ արդեն մեկ և կես ամիս է, ինչ ես Ն բերդումն եմ. Մաքսիմ Մաքսիմիլյան որսի է զնացել... ևս մենակ եմ. նստած եմ պատուհանի մոտ. գորշ ամպերը ծածկել են սարերը՝ մինչև նրանց ստորոտը, մշուշի միշից արեւ դեղին թիժ է թվում: Ցուրտ է, քամին սուլում է և տարութերում փեղկերը... Զանձրալի՛ է... Շարունակեմ օրագիրս, որ ընդհատվեց այնքան տարօրինակ անցքերի պատճառով:

Վերընթեռնում եմ վերջին էջը, ծիծաղելի՞՝ է: Ես մտադիր էի մեռնել, այդ անկարելի էր. ես դեռ չեի քամել տառապանքների բաժակը, և այժմ զգում եմ, որ դեռ երկար եմ ապրելու...

Ողջ անցյալն ինչպե՞ս պարզ և որոշակի է կազապարմել իմ հիշողության մեջ: Ժամանակը չի չնշել ո՛չ մի գիծ, ո՛չ մի երանգ:

Ես հիշում եմ, որ մենամարտին նախորդող գիշերը ես ու մի բոպե չքննցի: Երկար ժամանակ ես գրել չկարողացա. մի դաշտնի անհանգստություն էր տիրել ինձ: Մոտ մի ժամ ես երթևեկցի սենյակում, հետո նստեցի և բացեցի վալտեր Սկոտտի¹²⁵ վեպը, որ դրված էր սեղանիս վրա, այդ՝ «Ծոտլանդական Մաքրակըռնները» գիրքն էր. սկզբում ես ճիգով էի կարդում, հետո կախարդական հորինվածքով տարվելով՝ մոռացության մեջ ընկա... Մի՛թե շոտլանդական գրողին այն աշխարհում չեն վճարում յուրաքանչյուր հաճելի բոպեի համար, որ պարզեւում է նրա գիրքը...

Վերջապես լուսացավ: Ներվերս հանգստացել էին: Ես հայելուն նայեցի, աղոտ գունատություն էր պատել տանջող անքնության հետքերն իր վրա պահած երեսս. բայց աշքերս, թիկետն դարչնագույն ստվերով եղերված, փայլում էին հպարտ ու անողոք փայլով: Ես ինձանից գոհ մնացի:

Կարգադրելով ձիերը թամբել, ես հագնվեցի ու վազեցի դեպի լողարանը: Նարդանի պղպջացող պաղ ջրի մեջն ընկղմը-վելով, ես զգացի, թե ինչպիս մարմնական և հոգիկան ուժերս վերադառնում են: Վաննայից ես գուրս եկա թարմ ու առույգ, ասես պատրաստվում էի պարահանդես գնալ: Սրանից հետո ասացե՞ք, թե հոգին մարմնից կախված չի...

Վերադառնալով, ես բժշկին գտա իմ բնակարանում: Նա հաղել էր գորշ ուելտուկ¹²⁶, արխալուզ և դրել չերքեղական գդակ: Ես քրջացի՝ այդ փոքրիկ կերպարանքն ահապին թափամազ գդակի տակ տեսնելով, նրա գեմքը բնավ ուազմատեն մարդու գեմք չէ, իսկ այս անգամ սովորականից ավելի երկարություն էր:

— Դուք ինչո՞ւ եք այդպես տխուր, բժի՛շկ, — ասացի ես նրան: — Մի՛թե դուք հարյուր անգամ մարդ չեք ուղարկել

այն աշխարհը մեծագույն անտարբերությամբ: Ենթադրեցեք, թե ես մաղձատենդ ունեմ. ես կարող եմ առողջանալ, կարող եմ և մեռնել. թե մենքը, թե մյուսը — բնական բան է. աշխատեցեք նայել ինձ վրա որպես մի պացիենտի¹²⁷, որ տառապում է տակալին ձեզ անծանոթ մի հիվանդությամբ, և այն ժամանակ ձեր հաստիքը բարեհ կարող է մի վրանի կրորոքվի. դուք այժմ կարող եք իմ վրա մի քանի կարևոր փիզիոդիմական դիտողություն անել... Բոնի մահվան սպասումն արդեն իսկ իսկական հիվանդություն չէ՝ արդյոք:

Այս միտքն ապշեցրեց բժշկին, և նա ուրախացավ:

Մենք ձի նստեցինք. Վեռները երկու ձեռքով պինդ բռնեց սանձը, և մենք սուրացինք, մի ակնթարթում բերդի մոտով անցանք արլարձանով ու մտանք կիրճը, որտեղ ոլորվում էր կիսով շափ բարձր խոտով ծածկված ճանապարհը. այդ ճանապարհն ամեն բոպե կարում էր աղմկալի մի գետակ, որը պետք էր անցնել գետանցով ի մեծ հուսահատություն բժշկի, որովհետև նրա ձին ամեն անգամ ջուր մտնելիս կանգ էր առնում:

Ալելի երկնագույն ու զով առավոտ ես չեմ հիշում: Արևը հապիվ էր երևացել կանաչ գագաթների ետևից, և ճառագյենների առաջին տաքության միաձուլվելը զիշերված մեռնող զովությանը բոլոր զգացմունքների վրա ինչ-որ քաղցր խոնջանք էր բերում. նորածագ արկի ուրախ ճառագայթը գեռ չէր թափանցել կիրճը. նա սոկեզօծում էր երկու կողմից մեր զիմին կախված ժայռերի վերին մասերը միայն. նրանց խոր ճեղքվածքներում բուած տերևախիտ թփերը քամու ամենաթեթև շնչից արծաթի անձրև էին շաղ տալիս մեր վրա: Ես հիշում եմ, այդ անգամ ես բնությունն ավելի էի սիրում, քան երբեմ առաջ: Ի՞նչ հետաքրքրությամբ էի նայում խաղողի լայն տերևի վրա գողացող և միլիոնավոր ծիածանագույն ճառագայթներ ցոլացնող յուրաքանչյուր ցողիկի. իմ հայցքն ի՞նչ ազահությամբ էր ջանում թափանցել մշուշապատ հեռաստանի խորքը: Այստեղ ուղին ավելի ու ավելի էր նեղանում, ժայռերն ավելի ու ավելի կապույտ և ահավոր էին դառնում, և վերջապես, թվում էր, թե միանում, անթափանցելի պարիսպ էին կազմում: Մենք լուռ առաջ էինք գնում:

— Զեր կտակը գրեցի՞ք արդյոք, — հանկարծ հարցրեց
վեռները:

— Ո՞չ:

— Իսկ եթե սպանվե՞ք...

— Ժառանգներն իրենք հրապարակ կդան:

— Մի՞թե դուք չունեք այնպիսի մտերիմներ, որոնց
կամենալիք ձեր վերջին հրաժեշտն ուղարկել...

Ես օրորեցի զուսու:

— Մի՞թե աշխարհիս երեսին չկա մի կին, որին դուք
կամենալիք որևէ բան հիշատակ թողնել...

— Արդյոք ցանկանո՞ւմ եք, բժիշկ, — պատասխանեցի
նրան, — որ ես բանամ ձեր առաջ իմ հոգին... Գիտե՞ք, ես
անցրել եմ այն տարիքը, երբ մեռնում են՝ իրենց սիրածի
անունն արտասանելով և իրենց բարեկամին կտակելով պո-
մադ քսած կամ չքսած մազերի մի փնջիկ: Մոտալուս և
հնարավոր մահվան մասին մտածելիս՝ ես միմիայն ի՞չ
մասին եմ մտածում. ոմանք այդ էլ չեն անում: Մտերիմներ,
որոնք վաղն իսկ ինձ կմոռանան կամ, ավելի վատ, իմ վրա,
աստված դիտե, ինչ չեղած բաներ բարդեն. կանայք, որոնք,
ուրիշին գրկելիս՝ կծիծաղեն ինձ վրա, որպեսզի նրա մեջ
խանդ չզարթեցնեն զեպի հանգուցյալը. աստված նրանց
հետ: Կյանքի փոթորկից ես դուրս եմ բերել միայն մի քա-
նի գաղափար և ո՛չ մի զգացմունք վաղուց է, ինչ ես ապ-
րում եմ ոչ թե սրտով, այլ գլխով: Ես կշռում և քննում եմ
սեփական զզացմունքներս ու վարմունքներս խստագին հե-
տաքրքրությամբ, բայց առանց կարեկցության: Իմ մեջ երկու
մարդ կա. մեկն ապրում է այս բառի լրիվ իմաստով, մյուսը
խորհում է դատում է նրան: Առաջինը գուցե մի ժամկից հետո
հավիտենապես հրաժեշտ տա ձեզ և աշխարհին, իսկ երկրոր-
դը... երկրո՞րդը... Նայեցի՞ք, բժիշկ, տեսնո՞ւմ եք, ժայռի
վրա, աջակողմում, սեխն են տալիս երեք կերպարանքներ:
Այդ, կարծեմ, մեր հակառակորդներն են...

Մենք ձիերը քշեցինք վարդուն ընթացքով:

Ժայռի ստորոտի մոտ, թիերում, կապված էին երեք ձիեր,
մենք մեր ձիերը նույն այդ տեղում կապեցինք, իսկ ինքներս
նեղ կածանով բարձրացանք փոքրիկ հարթակը, որտեղ մեռ

սպասում էր Գրուշնիցկին՝ դրագունի կապիտանի և իր մյուս
սեկունդանտի հետ, որի անունն իվան իգնատենիլ էր. նրա ազ-
գանունը ես երբեք չեմ լսել:

— Վաղուց է, ինչ մենք սպասում ենք ձեզ, — ասաց
դրագունի կապիտանը հեգնական ժամանուկ:

Ես հանեցի ժամացուցս և ցույց տվի նրան:

Նա ներողություն խնդրեց, ասելով, որ իր ժամացուցն
առաջ է վազում:

Մի քանի րոպէ շարունակվեց դժվարին կացություն ար-
տահայտող լուսնումը, վերջապես բժիշկն ընդհատեց այն,
Գրուշնիցկուն դիմելով.

Ինձ թվում է, — ասաց նա, — որ, դուք երկուսդ էլք
մինամարտելու պատրաստակամություն ցույց տալով և դրա-
նով պատվի պայմաններին ձեր պարտքը հատուցանելով, կա-
րող էքք, պարունայք, բացատրվել և այս գործը փոխադարձ
համաձայնությամբ վերջացնել:

— Ես պատրաստ եմ, — ասացի հա:

Կապիտանն աշբով արեց Գրուշնիցկուն, և սա, կարծելով,
թե ես վախենում եմ, հպարտ տեսք ընդունեց, թեպետ մինչ
այդ աղոտ գունատություն էր պատել նրա այտերը: Մեր
գալուց հետո՝ նա առաջին անգամ հայացքն իւ՞ վրա բարձ-
րացրեց, բայց նրա հայացքում ինչ-որ անհանգստություն կար,
որ մատնում էր նրա ներփին պայքարը:

— Բացատրեցք ձեր պայմանները, — ասաց նա, — և
այն ամենը, որ ես կարող եմ անել ձեզ համար, հավատա-
ցած եղեք...

— Ահա իմ պայմանները, դուք այսօր ևեթ հրապարակով
կհրաժարվեք ձեր զրպարտությունից և ինձանից ներողություն
կինդրեք...

— Հարգե՛լի պարոն, ես զարմանում եմ, թե դուք ինչպես
եք համարձակվում այդպիսի բաներ առաջարկել ինձ...

— Սրանից բացի, ես ուրիշ էլ ի՞նչ կարող եի առաջար-
կել ձեզ...

— Կրակե՛նք միմյանց վրա:

Ես թոթվեցի ուսերս:

— Խնդրե՛մ, միայն մտածեցե՛ք, որ մեզանից մեկնումեկն անպայման կսպանվի:

— Ես ցանկանում եմ, որ այդ դուք լինեք...

— Իսկ ես այնպե՞ս համոզված եմ, որ հակառակն է լինելու...

Նա շփոթվեց, կարմրեց, հետո բռնազրութիկ քրքչաց:

Կապիտանը նրան թևանցուկ արավ և մի կողմ տարավ. նրանք երկար քշիչում էին: Ես այստեղ եկել էի բավական խաղաղաներ տրամադրությամբ, բայց այս բոլորն սկսում էր ինձ կատաղեցնել:

Բժիշկը մոտեցավ ինձ:

— Լսե՛ք, — ասաց նա ակներև անհանգստությամբ. — դուք երեխ մոռացե՞լ եք նրանց դավադրության մասին... Ես ատրճանակ լցնել չգիտեմ, բայց այս դեպքում... Դուք տարօրինա՞կ մարդ եք: Ասացեք նրանց, որ դուք գիտեք նրանց դիտավորությունը, և նրանք չեն համարձակվի... Ի՞նչ հաճուք է. ձեզ թոշունի պես կդնդակահարեն...

— Խնդրում եմ, մի՛ անհանգստացեք, բժիշկ, և համբերիցե՛ք... Ես ամեն ինչ այնպես կսարեմ, որ նրանց կողմը ոչ մի առավելություն չի լինի: Թողեք նրանք քշիչան...

— Պարոնա՛յը, այդ սկսում է ձանձրալի դառնալ, — բարձրաձայն ասացի ես նրանց. — Թե մենամարտում ենք, եկեք մենամարտենք. դուք երեկ խոսելուց կշտանալու ժամանակ ունեիք...

— Մենք պատրաստ ենք, — պատասխանեց կապիտանը: — Զեր տեղերը գրավեցեք, պարոնա՛յը... Բժիշկ, հաճեցեք վեց բայց շափել...

— Տեղուրդ գրավեցե՛ք, — կրկնեց իվան իդնատեկը ճղճան ձայնով:

— Կացե՛ք, — ասացի ես. — Ես մի պայման. որովհետեւ մենք մահու կովով ենք կովում, ուստի պարտավոր ենք անել բոլոր հնարավորը, որպեսզի սա դադանիք մնա, և որպեսզի մեր սեկոնդանտները պատասխանատու չդառնան: Արդյոք դուք համաձայն եք...

— Միանդամայն համաձայն ենք:

— Այսպիս ուրեմն, ահա թե ինչ եմ մտածել ես: Այն

ուղղահայաց ժայռի կատարին, աջակողմում՝ տեսնո՞ւմ եք մի նեղիկ հարթակ կա, այստեղից մինչև գետինը մոտ երեսուն սաժեն կլինի, եթե ոչ ավելի. ցածրում ուրեք քարեր են: Երկուսս էլ պետք է կանգնենք հարթակի բուն եղրին, այդպիսով անգամ թեթև վերքը մահացու կլինի. սա պետք է որ համապատասխանի ձեր ցանկովիանը, որովհետև դուք ինքներգ եք վեց բայլ նշանակել: Վիրավորվողն անպայման ցած կղզորվի և շարդուփշուր կլինի. գնդակը բժիշկը կհանի, և այն ժամանակ այս արագահաս մահը կարելի կլինի բացատրել նրանով, որ ժեռածը ցատկելու անհաջող փորձ է արել: Մենք մինչակ կզցինք, թե առաջինն ով պետք է կրակի: Ի վերջո հայտարարում եմ ձեզ, որ այլ կերպ ես չեմ մենամարտի:

— Համեցե՛ք, — ասաց կապիտանը արտահայտիշ հայցքով նայելով Գրուշնիցկուն, որը ի նշան համաձայնության՝ զլիսով արավ: Նրա դեմքի արտահայտությունն ամեն ըստեք փոխվում էր: Ես նրան դրել էի գժվարին կացության մեջ: Սովորական պայմաններում կրակելիս, նա կարող էր նշան բռնել իմ ոտքին, ինձ թեթևակի վիրավորել և այդպիսով բավարարել իր վրեժը, շատ շծանրարենելով իր խիզճը. բայց ճիմա նա կամ պետք է օդի մեջ կրակեր, կամ մարդասպան դառնար, կամ, վերջապես, թողներ իր պոոր մտադրությունը և ինձ հետ հավասար վտանգի ենթարկելու:

Այս բոպեին ես չեի ցանկանա նրա տեղը լինել: Նա կապիտանին մի կողմ տարավ և սկսեց մեծ եռանդով ինչ-որ բան ասել նրան. ես տեսնում էի, թե նրա կապտած շրթումքներն ինչպես էին գողում. բայց կապիտանն արհամարհական ժամանով երես դարձրեց նրանից: — «Դու ճիմար ես, — ասաց նա Գրուշնիցկուն բավական բարձր ձայնով, — ոչի՞նչ չես հասկանում... Դե՛ գնանք, պարոնա՛յը»:

Նեղ կածանը թիերի միջով տանում էր գետի դառիվայր. ժայռերի բեկորներն այս բնական սանդուղքի երերուն աստիճաններն էին կազմում. թիերից բռնելով, մենք սկսեցինք մազցիկ: Գրուշնիցկին առջեկց էր գնում, նրա հետեկը՝ իր սեկոնդ դասները, իսկ հետո՝ ես և բժիշկը:

— Ես դարձացած եմ ձեր վրա, — ասաց բժիշկը, պինդ սեղմելով իմ ձեռքը: — Տվիկ ձեր զարկերակը տեսնեմ... Օհո՛,

տենդայի՞ն է... բայց գեմքերիդ վրա ուինչ՝ չի նկատվում...
միայն ձեր աշքերն են սովորականից պայծառ փայլում:

Հանկարծ մանր քարերն աղմուկով գլորվեցին մեր ոտքերի տակ: Այս ի՞նչ է: Գրուշնիցկին սալթաքել էր, այն ճյուղը, որին նա ձեռք էր զցել, կոտրվել էր, և Գրուշնիցկին ցած կզլորվեր մեջքի վրա, եթե նրա սեկունդանտները լրոնեին նրան:

— Զուշացե՛ք,— բղավեցի ես նրան,— վաղաժամ մի՛ ընկնեք, դա վատ նշան է: Հուլիս Կեսարին¹²⁸ հիշեցե՛ք:

Ահա մենք բարձրացանք դուրս պրօճած ժայռի կատարը. հարթակը ծածկված էր մանր ավազով, ասես դիտմամբ մենամարտի համար: Շուրջը, առավոտվա ոսկի մշուշում կորչելով, իրար էին սեղմվում սարերի գաղաթները, ասես անթիվ անասունների հոտ, և կերպուր հարավում ցցվել էր հսկայական սպիտակ զանգվածի պես, վերջափակելով սառցապատ գագաթների շղթան, որոնց միջև արգեն թափառում էին արեելքից եկած թել-թել ամպերը: Ես մոտեցա հարթակի եզրին և ցած նայեցի, գլուխս քիչ մնաց պատվեր. թվում էր, թե այնտեղ, ներքենում, գերեզմանի պես մուին է և ցուրտ. մամուպատ ատամները ժայռերի, որոնց ցած էին զցել փոթորիկն ու ժամանակը, իրենց որսին էին սպասում:

Հարթակը, որտեղ մենք պետք է մենամարտեինք, պատկերացնում էր համարյա ուղիղ եռանկյունի: Դուրս պրօճած անկյունից հաշվեցինք վեց քայլ և որոշեցինք, որ նա, ում կվիճակի առաջին հերթին դիմավորել թշնամու կրակը, կկանգնի բռն անկյունում՝ թիկոնքը դեպի անդունքը, եթե նա շսպանվի, հակառակորդները միմյանց հետ կփոխեն իրենց աեղքերը:

Ես վճռեցի բոլոր առավելությունները տրամադրել Գրուշնիցկուն, ես ուզում էի նրան փորձել. նրա հոգու մեջ կարող էր մեծահոգության կայծ զարթնել, և այն ժամանակ գործը կարող էր լավագույն վախճան ունենալ. բայց ինքնասիցությունը և կամքի թուլությունը պետք է հաղթանակին... Ես ուզում էի լիակատար իրավունք տալ ինձ շխնայելու նրան, եթե բախտը ողորմած լինի դեպի ինձ: Այսպիսի պայմաններ ո՞վ չի կապել իր խղճի հետ:

— Վիճակ պցե՛ք, բժի՛շկ,— ասաց կապիտանը: Բժիշկն իր գրպանից հանեց մի արծաթե զրամ և վեր բարձրացրեց:

— Գի՛րը,— բղավից Գրուշնիցկին շտապով, բարեկամական հրումից հանկարծ արթնացած մարդու նման:

— Արծի՛վը¹²⁹,— ասացի ես:

Դրամը վեր ալացավ ու ընկալվ՝ զնգալով. բոլորս նետվեցինք դեպի դրամը:

— Դուք բախտավոր եք,— ասացի ես Գրուշնիցկուն: առաջինը դուք եք կրակելու: Բայց հիշեցեք, որ եթե դուք ինձ չսպանեք, ապա ես չեմ վրիպի, ազնիվ խոսք եմ տալիս ձեզ:

Նա կարմրեց. նա ամաչում էր անզին մարդ սպանել, և աևեռուն հայացքով նայեցի նրան. մոտ մի բոաք ինձ թվաց, թե նա իմ ոտքերը կրնկնի, թողություն խնդրելով. բայց ժարդն ինչպես սխոստովանի, որ այդպիսի սառը միտում է ունեցել: Նրան մի միջոց էր մնում՝ օդի մեջ կրակել. ես հավատացած էի, որ նա օդի մեջ կկրակի: Մ՛ր բան կառոլ ե՛ռ դրան խանգարել՝ այն միտքը, որ ես երկրորդ մենամարտ կպահանջիմ:

— Ժամանակն է,— շշնչաց բժիշկն իմ ականջին, թերաքաշելով.— Եթե դուք հիմա շասեք, որ մենք գիտենք նրանց ժտադրությունը, ապա ամեն ինչ կորած է: Նայեցե՛ք, նա արդեն լցնում է... Եթե դուք ոչինչ շասեք, ապա ես ինքս...

— Ո՛չ մի դեպքում, բժի՛շկ,— պատասխանեցի ես, չո՞ս ձեռքից բռնելով և նրան ետ պահելով.— Դուք ամեն ինչ կփշացնեք. դուք ինձ խոսք տվիք շնանգարել... Զեր ի՞նչ բանն է: Գուցե ես ցանկանում եմ սպանվիլ...

Նա զարմանքով նայեց ինձ:

— Ո՛, այդ ուրիշ բան է... միայն թե այն աշխարհում ինձանից չգանգատվե՛ք...

Մինչ այդ՝ կապիտանը լցրեց ատրճանակները, մեկը տվեց Գրուշնիցկուն՝ ժպիտը դեմքին ինչ-որ բան շշնչալով նրան, մյուլը՝ ինձ:

Ես կանգնեցի հարթակի անկյունում, ձախ ոտքս ամուր

Հենելով քարին և մի քիչ առաջ կուսալով, որպեսզի թեթև վերը ստանալու դեպքում ետ շշրջվիմ:

Գրուշնիցկին կանգնեց իմ դիմացը և, տրված նշանի համաձայն, սկսեց ատրճանակը բարձրացնել: Նրա ծնկները դողում էին: Նա նշան էր բռնել ուղղի իմ ճակատին...

Անբացատրելի կատաղություն փրփրեց իմ կրծքում:

Հանկարծ նա ցած իշեցրեց ատրճանակի փողաբերանը և, սփրթնելով ինչպես քաթան, շուր եկավ դեպի իր սեկոմանարը.

— Զե՞մ կարող, — ասաց նա խուզ ձայնով:

— Վախկո՞ւ, — պատասխանեց կապիտանը:

Հնչեց կրակոցը: Գնդակը քերծեց իմ ծունկը: Ես ակամայից մի քանի քայլ առաջ եկա, որպեսզի շուտով հեռանամեղրից:

— Դե՞մ, եղբայր Գրուշնիցկի, ափսո՞ս, որ վրիպեցիր, — ասաց կապիտանը. — Հիմա քո հերին է, տոեղդ գրավիր: Նախ գրկիր ինձ. մենք այս չենք տեսնվի: — Նրանք գրկախառնվեցին. կապիտանը հազիվ էր կարողանում իր ծիծառը զսպել: — Մի՛ վախենա, — ավելացրեց նա, — խորամանկորեն նայելով Գրուշնիցկուն. — աշխարհում ամեն ինչ դատարկ բան է... Բնությունը հիմար է, բախտը՝ հնդուհավ, իսկ կյանքը՝ կոպեկանոց:

Պատշաճ ծանրակշռությամբ ասված այս տրագիկ դարձվածքից հետո, նա ետ քաշվեց իր տեղը: Իվան Իվանատիկը՝ արցունքն աշքերին՝ նույնպես գրկեց Գրուշնիցկուն, և ահա նա մենակ մնաց իմ դիմացը:

Ես մինչև հիմա էլ աշխատում եմ բացատրել ինձ, թե այն ժամանակ ինչ տեսակի զգացմունք էր եռում իմ կրծքում. այդ թե՛ վիրավորված ինքնասիրության դժկամություն էր, թե՛ արշամարհանք, թե՛ շարություն, որ ծնվում էր իմ մեջ, երբ մտածում էի, թե այդ մարդը, որ հիմա այդպես վստահ, այդպիսի հանգիստ հանդգնությամբ է նայում ինձ, երկու բոպե առաջ իրեն ո՛չ մի վտանգի շենթարկելով ուզում էր շան պես սպանել ինձ, որովհետեւ եթե մի քիչ ավելի ծանր վիրավորվեի ոտքից, ես անպայման կպորվի ժայուից:

Ես մի քանի բոպե սկսեռում հայացքով նրա երեսին նա-

յեցի, չանալով զողման գեթ մի թեթև նշան նկատել: Բայց ինձ թվաց, թե նա զսպում է իր ժպիտը:

Եյն ժամանակ ես նրան ասացի.

— Ես ձեզ խորհուրդ եմ տալիս ձեր մահից առաջ աղոթել աստծուն:

— Իմ հոգու մասին ավելի հոգ մի տանեք, քան ձեր սեփականի մասին: Չեղ մի բան եմ խնդրում՝ շուտով կրակեցե՛ք:

— Եվ դուք չե՞ք հրաժարվում ձեր զրապատությունից. ինձանից ներողություն չե՞ք խնդրում..., կա՛վ մտածեցեք. ձեր խիղճը ձեղ որևէ բան չի՛ ասում:

— Պարոն Պելորին, — բողավեց զրագունի կապիտանը. — դուք այստեղ նրա համար չեք եկել, որպեսզի խոստովանեցնեք, թույլ տվեք զիտողություն անելու ձեղ... Շուտ վերջացնենք. Հանկարծ մեկն ու մեկը կանցնի կիրճով և մեղ կտեսնի:

— Լա՛վ: Բժի՛շկ, մոտ եկեք:

Բժի՛շկը մոտ եկավ: Խե՞զ բժի՛շկ, նա ավելի գունատ էր, քան Գրուշնիցկին մի տասը բոպե առաջ:

Հետեւյալ բառերը ես դիտմամբ արտասանեցի հատ-հատ, բարձրածայն և պարզորոշ, ինչպես մահվան դատավճիռն են կարդում:

— Բժի՛շկ, այս պարոնները, հավանաբար շտապելուց, մոռացել են զնդակ դնել իմ ատրճանակի մեջ, խնդրում եմ ձեղ նորից լցնելու ատրճանակը և լա՛վ լցնել:

— Զի՞ կարող պատահել, — գոշեց կապիտանը, — չի՛ կարող պատահել, ես երկու ատրճանակն էլ լցրել եմ. գոյցի ձեր ատրճանակից գնդակն ընկել է. դա իմ մեղքը չէ՛: Իսկ դուք վերստին լցնելու իրավունք շունեք..., ո՛չ մի իրավունք... գա բոլորովին հակառակ է կանոններին. ես թույլ չե՞մ տա...

— Լա՛վ, — ասացի ես կապիտանին. — Եթե այդպես է, ապա ես և դուք կմինամարտենք միենային պայմաններով...

Նա շփոթվեց:

Գրուշնիցկին կանգնած էր պուխը կրծքին խոնարհած, շփոթված ու մոռյալ:

— Բո՞ղ նրանց, — վերջապես ասաց նա կապիտանին,

որն ուզում էր իւլել իմ ատրաճանակը բժշկի ձեռքից...— ԶԵ՞
որ ինքդ էլ գիտես, որ նրանք իրավացի են:

Կապիտանն իզուր էր նրան զանազան նշաններ անում,
Գրուշնիցկին նայել էլ շցանկացավ:

Մինչ այդ բժիշկը լցրեց ատրաճանակը և ինձ տվեց:

Այս տեսնելով, կապիտանը թքից և ոտքը գետնին խփեց.
«Ճիմա՞րն իս դու, ախտերս,— ասաց նա.— Նվաստ հիմար...
Քանի որ վստահել ես ինձ, ամեն ինչում ինձ լսիր... այդ քեզ
տեղն է. սատկի՛ր ճանճի պես...»: Նա երեսը շուռ տվեց և,
հեռանալով, քրթմնչաց. «Այսուամենայնիվ դա միանգամայն
գեմ է կանոններին»:

— Գրուշնի՛ցկի, — ասացի ես.— դեռ ժամանակ կա.
Հրաժարվոր քո զրաքարտությունից, և ես քեզ ամեն ինչ կներիմ: Քեզ շաջողութեց ինձ հիմարացնել, և իմ ինքնասիրությունը
բավարարված է. վերճիշի՛ր, մենք մի ժամանակ բարեկամներ էինք...

Նրա գեմքը կարմրտակեց, աշքերը փայլեցին:

— Կրակեցե՛ք, — պատասխանեց նա.— Ես ինձ արհամարհում եմ, իսկ ձեզ՝ ատում: Եթե դուք ինձ շսպանեք, ես
ձեզ գիշերով գաղտագողի կմորթիմ: Երկրի վրա մեզ երկուախս
համար տեղ չկամ...

Ես կրակեցի:

Երբ ծուխը ցրվեց, հարթակի վրա Գրուշնիցկի շկար:
Միայն փոշին էր թիթեւ սյունի պես դեռ ոլորվում գառիթա-
փի եղրին:

Բոլորը միաբերան ճիշ արձակեցին:

— Finita la comedia!*, — ասացի ես բժշկին:

Նա շպատասխանեց և սոսկումով երեսը շուռ տվեց:

Ես ուսերս թոթլեցի և պլասրկ հանելով՝ հրաժեշտ տվի
Գրուշնիցկու սեկունդանտներին:

Կածանով ցած իշնելով, ժայռերի ճեղքերում ես նկատեցի Գրուշնիցկու արյունաթաթախ դիակը: Ես ակամա փակեցի աշքերս...

Չիս արձակելով՝ ես զանդաղաքայլ գնացի դեպի տուն:

* Կատակերգությունը վերջացած է (Խոտալ.)

Սրտիս վրա քար էր ծանրացել: Արեգ աղոտ էր թվում, նրա
ճառագայթներն ինձ չեին տաքացնում:

Արվարձանին շնասած՝ ես դեպի աջ դարձրի ձին և գնացի կիրճով: Մարդու կերպարանք տեսնելն ինձ համար ծանր էր, ես ուզում էի մենակ մնալ: Սանձը բաց թողած, գլուխս կրծքիս խոնարհած՝ ես երկար զնացի, վերջապես տեսա, որ ընկել եմ ինձ բոլորովին անծանոթ մի տեղ. ես շուռ տվի ձիուս գլուխը և սկսեցի ճանապարհ փնտրել, արեն արդեն մայր էր մոնում, երբ ես մոտեցա կիսլովորսկին՝ տանջված ձիու վրա, ինքս էլ տանջված:

Իմ լաքեյն ինձ ասաց, որ այցելության է եկած եղել վեռները, և տվեց ինձ երկու տոմս՝ մեկը վեռներից, մյոււթը... Վերայից:

Ես բաց արի առաջին տոմսը. Նա հետեւյալ բովանդակությունն ուներ.

«Ամեն ինչ որքան կարելի է լավ է սարքած, մարմինն
այլակերպված են բիրել, զնդակը կրծքից հանված է: Բոլորը
հավատացած են, որ մահվան պատճառը դժբախտ պատահար է. միայն պարետը, որին, հավանորեն, հայտնի է ձիր
կոված լինելը, օրորեց զլուխը, բայց ոչինչ չասաց: Ոչ մի
պացցոյց չկա ձեր դեմ, և դուք կարող եք հանգիստ քննել...
եթե կարող եք... Յտեսություն»...

Ես երկար ժամանակ շեի համարձակվում երկրորդ տոմսը բաց անել... Վերան ի՞նչ կարող էր գրած լինել ինձ... Ծանր
նախագացումն ալեկոծում էր իմ հոդին:

Ահա նա՝ այդ նամակը, որի ամեն մի բառն անջնջելի
դրոշմվել է իմ հիշողության մեջ.

«Ես գրում եմ քեզ՝ լիովին հավատացած լինելով, որ
մենք այլևս երբեք չենք տեսնելի: Մի քանի տարի սրանից
առաջ, քեզանից բաժանվելիս՝ ես նույնն էի կարծում, բայց
երկնքին հանելի եղավ երկրորդ անդամ փորձել ինձ. Ես
չդիմացա այդ փորձությանը, իմ թույլ սիրտը նորից հնա-
գանդվեց ծանոթ ձայնին... ողու ինձ դրա համար չե՞ս արհա-
մարհի, այնպես չե՞ս: Այս նամակը միաժամանակ լինելու է
հրաժեշտ և խոստովանություն. Ես պարտավոր եմ ասել քեզ

բոլորը, ինչ կուտակվել է իմ սրտում այն օրից, ինչ նա քեզ սիրում է; ես քեզ չեմ մեղադրի, դու ինձ հետ վարվեցիր, ինչպես կվարվեր ամեն մի ուրիշ տղամարդ. դու ինձ սիրում էիր որպես սեփականություն, որպես փոխադարձարար իրար հաջորդող հաճույքների, տաղնապների և տիրությունների աղբյուր, առանց որոնց կյանքը ձանձրալի է և միօրինակ: Ես այդ հասկացա սկզբից ևեթ... Բայց դու զբախտ էիր, և ես ինձ զոհաբերեցի, հուսալով, որ դու երբեք կզնահատես իմ զոհաբերությունը, որ դու երբեք կհասկանաս իմ խորին քնքությունը, որ ոչ մի պայմանից կախված չեմ: Դրանից հետո շատ ժամանակ անցավ. ես թափանցեցի քո հոգու բոլոր գաղտնիքների մեջ... և համոզվեցի, որ այդ գույք հույս էր: Դա՞ռն էր ինձ համար: Բայց իմ սերը հյուսվել էր իմ հոգուն. մթնեց, սակայն շմարեց:

Մենք բաժանվում ենք առհավետ. սակայն դու կարող ես հավատացած լինել, որ ես երբեք ուրիշին չեմ սիրի. իմ հոգին քո վրա սպառեց իր բոլոր գանձերը, իր արցոններն ու հույսերը: Ով մեկ անգամ քեզ սիրեց, էլ չի կարող առանց որոշ արհամարհանքի նայել մյուս տղամարդկանց. ոչ այն պատճառով, որ դու նրանցից լավն ես, օ՛, ո՛չ. բայց քո բնության մեջ կա ինչ-որ առանձնահատուկ, մենակ քեզ հատուկ, բան, ինչ-որ հպարտ ու խորհրդավոր բան. քո ձայնի մեջ՝ ինչ էլ որ դու ասելիս լինե՞մ՝ կա անհաղթահարելի իշխանություն. ոչ ոք չի կարող այգանս միշտ ցանկալ սիրված լինել, ոչ ոքի մեջ չարն այդպես գրավիչ չէ, ոչ մեկի հայացքն այդքան երանություն չի խոստանում, ոչ ոք չի կարող ավելի լավ օգուվել իր առավելություններից, և ոչ ոք չի կարող այնպես ճշմարիտ դժբախտ լինել, ինչպես դու, որովհետեւ ոչ ոք այնքան չի աշխատում զրա համոզել իրեն:

Այժմ ես պետք է բացարեմ քեզ իմ շտապ մեկնումի պատճառը. այդ կարող է քեզ անկարենոր թվալ, որովհետեւ մենակ ինձ է վերաբերում:

Այսօր առավոտյան իմ ամուսինը մտավ ինձ մոտ և պատմեց ինձ քո կոփվը Գրուշնիցկու հետ: Երկի իմ դեմքի արտահայտությունը շատ փոխվեց, որովհետեւ նա երկար և սեհուն հայացքով նայեց իմ աշքերի մեջ. ես հաղիվ ուշա-

թափ վայր լընկա, երբ մտածեցի, որ դու այսօր պետք է մենամարտես, և որ զրա պատճառը ես եմ. ինձ թվում էր, թե ես կիելագարվեմ... Բայց այժմ, երբ ես կարող եմ դատել, ես հավատացած եմ, որ դու կենդանի կմնաս. անհնար է, որ դու առանց ինձ մեռնես, անհնար'ք: Իմ ամուսինը երկար երթինեկում էր սենյակում. ես չփառեմ, թե նա ինձ ինչ էր ասում, չեմ հիշում, թե ես նրան ինչ եմ պատասխանել... Հավանաբար ես նրան ասել եմ, որ ես սիրում եմ քեզ: Հիշում եմ միայն, որ մեր խոսակցության վերջում նա ինձ վիրավորեց սոսկալի խոսքով ու դուրս գնաց: Ես լսեցի, թե ինչպես նա կարգադրեց կառիթը լծել... Ահա արգեն երեք ժամ է, որ ես պատռանի մոտ նստած՝ քո վերաբարձին եմ սպասում... Բայց դու կենդանի ես, դու չե՞ս կարող մեռնել... Կառիթը համարյա պատրաստ է... Մնաս բարո՞վ, մնաս բարո՞վ... Ես կորած եմ, բայց ի՞նչ հոգս... Ուր էր, թե կարողանայի հավատացած լինել, որ դու ինձ միշտ կհիշես, էլ չեմ ասում՝ կսիրես, ո՛չ, միայն կհիշես... Մնաս բարո՞վ, գալիս են... ես պետք է թաքցնեմ նամակը...

Դու չե՞ս սիրում Մերիին, այնպես չե՞մ. դու նրա հետ չե՞ս ամուսնանա: Լսի՛ր, դու այդ զոհաբերությունը պետք է անես ինձ համար. ես քեզ համար ամեն ինչ կորցրի աշխարհում...»:

Ես խելագարի պես դուրս թռա տանից, շտապ նստեցի իմ Զերքեզ ձին, որին ման էին ածում բակում, և ամբողջ ուժով սլացա Պյատիկորսկ տանող ճանապարհով: Ես անզուքաբար քշում էի իմ հոգնարեկ ձիուն, որը փնչացնելով և փրփուրի մեջ կորած՝ սլացնում էր ինձ բարոտ ճանապարհով:

Արեն արդեն թաքնվել էր արևմտյան սարերի ողնաշարին հանգստացնդ սև ամպի մեջ. կիրճը մթնեց ու խոնավացավ: Պողկումներ, քարերի վրայով անցնելով, խուզ ու միօրինակ մոնշում էր: Ես սրաշավ առաջ էի գնում՝ անհամբերությունից շնչահեղձ լինելով: Այն միտքը՝ որ ես կարող եմ նրան Պյատիկորսկում շնչանել, մորճի պես խփում էր իմ սրտին: Մի բոպե, ես մի բոպե տեսնել նրան, հրաժեշտ առաջ, սեղմել նրա ձեռքը... Ես աղոթում էի, անիծում, լալիս, ծիծաղում...

ո՛շ, ո՛չ մի բան չի արտահայտի իմ անհանգստությունը, հուսահատությունը... Վերային առհավետ կորցնելու հնարավորությունը աշխարհում ամեն ինչից թանկ դարձրեց նրան ինձ համար՝ կյանքից, պատվից, երջանկությունից թանկ. Աստված դիտե, թե ի՞նչ տարօրինակ, ի՞նչ կատաղի մտքեր էին խոնվում իմ զլխում... Եվ, սակայն, ես անընդհատ առաջ էի սլանում, անողոք քշելով ձին: Եվ ահա, ես սկսեցի նկատել, որ ձիս սկսում է ավելի ժանր շնչել. Նա արգեն մի երկու անգամ սայթաքել էր հարթ տեղում... Մնում էր հինգ վերստ մինչև էսենտուկին՝ կապակարնակ այդ ստանիցան, որտեղ ես կարող էի ուրիշ ձի վերցնել:

Կմեն ինչ փրկված կլիներ, եթե իմ ձիու ուժերը բավականանային ես մի տասը բռպի: Բայց հանկարծ մի փոքր փոսից վեր բարձրանալիս, լեռներից գուրս բերող կտրուկ ոլորանում նա գետին դրժիաց: Ես արագությամբ ցած թռա թամբից, ուզում էի նրան վեր հանել, սանձից էի ձգում. իղութ. Հազիվ լսելի թառանչ դուրս պրծալ նրա սեղմած ատամների արանքից, մի քանի բռպից հետո նա ստոկեց: Ես տափաստանում մնացի մենակ, վերցին հույս կորցնելով. փորձեցի հետիուն դնալ, ծնկներս ծալվեցին. օրվա անհանգստությունից ու անքնությունից հոգնարեկ, ես ընկա թաց խոտի վրա և մանկան պես լաց եղա:

Եվ ես երկար ժամանակ պառկած էի անշարժ ու դառնորին լալիս էի, շաշխատելով զսպել արցունքներս ու հեկեկանքս. ես կարծում էի, թե կուրծքս կպատովի. իմ ամրող ամրությունը, ամրող սառնարտությունը ծիսի պես շրացել էին. Հոդիս ուժասպառ էր եղել, բանականությունս՝ լոկել, և եթե այդ բռպեին մեկն ու մեկն ինձ տեսներ, արհամարհանքով երս կպարձներ:

Երբ գիշերվաց ցողը և լինային քամին թարմացրին իմ այրվող գլուխը, և մտքերս սովորական կարգի եկան, ես հասկացա, որ խորտակված երջանկության հետևից վազելու անօդուս և անմիտ բան է: Էլ ի՞նչ է հարկավոր ինձ, նրան տեսնե՞լ. ինչո՞ւ, մի՞թե մեր միջն ամեն ինչ վերջացած չէ: Հրաժեշտի մի հատիկ դառը համբույրը չի հարստացնի իմ հիշողու-

թյունները, իսկ այդ համբույրից հետո մենք միայն ավելի գժվարությամբ կրաժանվենք իրարից:

Սակայն ինձ հաճելի է, որ ես կարողանում եմ լաց լինել: Ասենք, գուցե դրա պատճառը խանգարված զղերս են, անքուն անցկացրած գիշերը, երկու բրակ ատրճանակի փողարքերանի առաջ կանգնելը ու գատարի ստամոքս:

Ամեն ինչ զեպի լավն է տանում: Այս նոր տանջանքը, զինվորական ոճով ասած, իմ մեջ երջանիկ դիվերսիա¹⁹⁰ առաջ բերից: Լաց լինեն առողջարար է, և հետո, երկի, եթե ես ձիով ճամփորդած շինեի ու ստիպված շինեի վերադարձին տասնեհինգ վերստ ուղրով քայլել, ապա այս գիշեր էլ քունն աշքերս չէր փակի:

Ես կիսովողուկ վերադարձա առավոտյան ժամի հնդին, ընկա անկողնուս վրա և քնեցի՝ ինչպես նապունենը Վաթիությից¹⁹¹ հետո:

Երբ ես արթնացա, դուրս արգեն մութն էր: Ես նստեցի բաց պատուհանի առաջ, արձակեցի արխալուղիս կոճակները, և լեռնային քամին ղովացրեց իմ կուրծքը, որին հոգնածության ծանր քունը գեռ չէր հանգստացրել: Հեռվում, դիսի մյուս ափին, գետին հովանի անող լորիների խիտ գագաթների միջով առկայծում էին բերդի և արվարձանի շենքերի լույսերը: Մեր բակում ամեն ինչ խաղաղվել էր. իշխանությունը մութն էր:

Ներս մտավ բժիշկը, նրա ճակատը կնճոռուվել էր. սովորականին հակառակ՝ նա ինձ ձեռք շմեկնեց:

— Որտեղից եք գալիս, բժիշկ:

— Իշխանութիւնի կիովսկայայի մոտից. նրա աղջիկը հիվանդ է, զղերի թուղացում ունի... Բայց բանն այդ չէ. այլ ահա թե ինչը. իշխանությունը զիսի է ընկնում, և թեպետ բացարձակապես ոչինչ չփ կարելի ապացուցել, սակայն ես ձեզ խորհուրդ եմ տալիս զգովշ լինել: Իշխանութիւն այսօր ինձ ասաց, թե ինքը զիսի, որ դուք իր աղջկա համար եք մենամարտել: Նրան ամեն ինչ այն բերուն է պատմել... Ինչպես է նրա անունը: Նա վկա է եղել ձեր և Գրուշնիցկու ընդհարմանը ճաշարանում: Ես եկա ձեզ նախազգուշացնելու: Մնաք բարով: Գուցե մենք այլևս շտեսնվենք, ձեզ այսուղից որեւ տեղ կը են:

Շեմքի վրա նա կանգ առավ. նա ուզում էր իմ ձեռքը սեղմել... և եթե ես ցուց տայի նրան, որ այդ բանի թեկող ամենափոք ցանկություն ունեմ, նա իմ վզովք կընկներ. բայց ես քարի պես սառը մնացի, և նա գուրս զնաց:

Զարմանալի՝ մարդիկ են, նրանք բոլորն էլ այդպես են. վաղօրք գիտեն վարմունքի բոլոր վատ կողմերը, օդում, խորհուրդ են տալիս, մինչև իսկ հավանություն են տալիս՝ ուրիշ միջոցի անհնարինությունը տեսնելով, իսկ հետո ձեռքիր ըլմանում են և զայրությով երես դարձնում նրանից, ով համարձակություն է ունենում իր վրա վերցնելու պատասխանատվության ամբողջ ծանրությունը: Նրանք բոլորն ել այդպես են. մինչև իսկ ամենաբարիները, ամենախելոքները...

Մյուս օրն առավոտյան, Ա բերդը մենքնելու հրաման ստանալով բարձր իշխանությունից, ես մտա իշխանությունու մոտ՝ հրաժեշտ տալու:

Նա զարմացավ, երբ իր հարցին՝ արդյոք իրեն որիէ հատկապես կարենոր բան ունեմ տաելու, թե ոչ, ես պատասխանեցի, որ երջանկություն եմ ցանկանում իրեն և այլու: — Իսկ ես կուպենայի ձեզ հետ շատ լուրջ խռուեւ:
Ես լուս նստեցի:

Ակներե էր, որ նա չգիտեր, թե ինչից սկսի. նրա դեմքը կաս-կարմիր էր կտրել, փափլիկ մատները սեղանն էին ձեռում. վերջապես նա ընդհատվող ձայնով այսպես սկսեց.

— Լսեցի՞ք, մայո Պետրին, ես կարծում եմ, որ դուք աղնիվ մարդ եք:

Ես դուխ տվեցի:
— Ես մինչև իսկ հավատացած եմ դրանում, — շարունակեց նա, — թեզեան ձեր վարմունքը փոքր-ինչ կասկածելի է. ուայց դուք կարող եք ունենալ պատճառներ, որոնք ես չգիտեմ, և այդ պատճառներն են, որ դուք հիմա պետք է վստահեք ինձ: Դուք սկաշտապաննել եք, իմ աղջկան վրապարությունից. նրա համար մենամարտել եք, — հետեաբար, ձեր կյանքը վտանգի եք երթարկել... Մի պատասխաներ, ես գիտեմ, որ դուք այդ չեք խռոտվանի, որովհետև Պրուշնիցին ուստանվել է (նա խաչակնքեց իր երեսը): Աստված թողություն կտա նրան և, հուսով եմ, որ ձեզ նույնպես... Այդ ինձ չի վերաբե-

րում... Ես չիմ համարձակվի ձեզ դատապարտել, որովհետի իմ աղջիկը, թեզիտ և անմեղ տեղը, բայց վրա պատճառն է եղել: Նա ինձ բոլորն ասել է... ես կարծում եմ՝ բոլորը. դուք ձեր սերն եք խռոտվանել նրան... Նա իր սերն է խռոտվանել ձեզ (այսաեղ իշխանությունը ծանր հոգոց քաշեց): Բայց նա հիվանդ է, և ես հավատացած եմ, որ այդ հասարակ հիվանդություն չէ: Գաղտնի վիշտն սպանում է նրան. Նա չի խռոտվանում, բայց ես հավատացած եմ, որ դուք եք դրա պատճառը... Լսեցի՞ք, գուցե դուք կարծում եք, թե ես բարձրաստիճան, ահազին հարատություն ունեցող եմ փնտրում. Թողեք այդ կարծիքը, ես միայն աղջկանս երջանկությունն եմ ցանկանում: Զեր այժմյան դրությունն աննախանձելի է, բայց այն կարող է լավանալ. դուք կարողության տեր մարդ եք. ձեզ սիրում է իմ աղջիկը. նա այնպես է գաստիարակված, որ ամուսնուն կերշանկացնի: Ես հարուստ եմ, նա իմ միակ զավակն է... Սահե՞ք, ի՞նչն է ձեզ ետ պահում... Տեսնում եք, այս բոլորը ես շպեար է ասեի ձեզ, բայց ես վստահում եմ ձեր սրտին, աղնվությանը. Հիշեցի՞ք, ես մի՛ աղջիկ ունեմ... մի՛ հատիկլ...

Նա լաց եղավ:

— Իշխանություն, — ասացի ես, — ես անկարող եմ պատասխանել ձեզ. Թույլ տվեք ինձ առանձին խռուելու ձեր աղջրկա հետո...

— Երբե՞ք, — բացադանչեց նա՝ խիստ հոգված վեր կենալով աթոռից:

— Ինչպես կկամենաք, — պատասխանեցի ես, պատրաստվելով հեռանալ:

Նա մտածմունքի մեջ ընկավ, ձեռքով ինձ նշան արավ, որ սպասեմ, ու դուքս զնաց:

Անցավ մի հինգ րոպե. իմ սիրուն ուժգին բարախում էր, բայց մտքերս հանդիսաւ էին, գլուխս սառը. որքան էլ եռ կրծքումս որոնեցի սիրս զեթ մի կայծ դեպի նազելի Մերին, իմ չանքերն ապարդյուն անցան:

Աշա դուռը բացվեց, և Մերին ներս մտավ: Աստված իմ, ինչպես է փոխվել վերջին անգամ իմ տեսնելուց հետո, իսկ շատ ժամանակ է անցել:

Սենյակի մեջտեղին հասնելով, նա երերաց. ևս վեր թռա
տեղիցս, ձեռքս տվեցի նրան և հասցրի բազկաթոռին:

Ես կանգնած էի նրա դիմաց: Երկար ժամանակ մենք
լուր էինք. անրացատրելի թախիծով լի նրա մեծ աշքերը
թվում էր, թե իմ աշքերի մեջ հույս տվող որևէ բան էին
փնտրում. նրա գունատ շրթունքներն իզուր էին աշխատում
ժպտալ. նրա քնքուշ ձեռքերը, որ նա դարսել էր ծնկներին,
այնքան վտիտ էին ու թափանցիկ, որ ես խղճացի նրան:

— Իշխանադր՝ տար, — ասացի ես նրան, — դուք դիտե՞ք,
որ ես ծիծաղում էի ձեզ վրա... Դուք պետք է արհամար-
չեք ինձ:

Նրա այտերի վրա հիվանդու կարմրություն երեաց:

Ես շարունակեցի. — Հետևապես, դուք ինձ սիրել չեք
կարող...

Նա շուր եկավ, արմունկները սեղանին հենելով՝ ձեռքով
ծածկեց աշքերը, և ինձ թվաց, թե նրա աշքերի մեջ արցունք-
ներ փայլեցին:

— Աստված իմ, — արտասանեց նա հազիվ լսելի
ձայնով:

Այդ անտանելի էր դառնում. ևս մի բոպե, և ես նրա ոտ-
քերը կընկնեի:

— Այդպես ուրիմն, ինքներդ տեսնում եք, — ասացի ես՝
որքան կարող էի հաստատ ձայնով ու շինծու քմծիծաղով, —
ինքներդ եք տեսնում, որ ես չեմ կարող ձեզ հետ ամուսնա-
նալ, Եթի դուք այժմ նույնիսկ ցանկանալիք այդ, շուտով կը-
զգայիք: Իմ խոսակցությունը ձեր մայրիկի հետ հարկադրեց
ինձ այսպես անկեղծ ու կոպիտ բացատրվել ձեզ հետ. ես հու-
սով եմ, որ նա մոլորության մեջ է. դուք դուրսությամբ կարող
եք հակառակը համոզել նրան: Դուք տեսնում եք, ձեր աշքում
ես ամենառորմելի և դարշելի դեր եմ խաղում, և մինչև անգամ
խոստվանում եմ այդ. ահա այն բոլորը, որ ես կարող եմ
անել ձեզ համար ինչպիսի վատ կարծիք էլ որ ունենաք իմ
մասին, ես վազորոք հնազանդվում եմ... ես ձեզ համար ստոր
մարդ եմ, չէ՞: Եթի դուք ինձ մինչև իսկ սիրում էիք, ապա այս
բոպեից կարհամարհեք, այնպես չէ՞...

Նա երեսը դարձրեց իմ կողմը. մարմարի պես գունատ
էր, միայն աշքերն էին հրաշալի կերպով շողշողում:

— Ես ատում եմ ձեզ... — ասաց նա:

Ես շնորհակալություն հայտնեցի, հարգալիր գլուխ տվի
ու դուրս գնացի:

Մի ժամից հետո ճեղքնթաց եռածի կառքը սլանում,
տանում էր ինձ կիւլովողսկից: Էսենտուկուց մի քանի վերստ
հեռավորության վրա ես տեսա իմ քաշարշավ ձիու դիակը.
թամբը հանել էին, երկի որևէ անցորդ կազակ, և թամբի
փոխարեն նրա մեջքին երկու ագռավ էին նստած: Ես հոգվոց
հանեցի ու շուր տվի երևսս...

Եվ հիմա այստեղ, այս ձանձրալի բերդում, մտքով անց-
յալը թերթելով՝ ես համախ հարցնում եմ ինձ՝ ինչո՞ւ ես
շցանկացա ուրք զնել այն ուղին, որ բախտը բացել էր իմ
առաջ և որտեղ ինձ սպասում էին խաղաղ ուրախություններ
ու հոգու անդորրություն... Ո՛չ, ես այդ վիճակը չէի տանի:
Ես նման եմ ծովահեններին նաևի տախտակամածի վրա ծնված
ու մեծացած նավաստու. Նրա հոգին ընտելացել է մրրիկներին
ու մարտերին և, նա, ափ նետվելով, կձանձրանա ու կտանշվի,
որքան էլ հրապուրի նրան ստվերաշատ պուրակը, որքան էլ
շողա նրա համար խաղաղ արեք. Նա ամբողջ օրը կշրջի մերձ-
ափնյա ավագի վրա, ականջ կդնի զեպի ափ վազող ալիքների
միօրինակ ճողվյունին և հայացքը կհառի մշուշապատ հեռ-
վին՝ կապուր հորձանուտը գորշ ամպերից բաժանող այն
գունատ սահմանագծի վրա չի՝ երևա արդյոք ցանկալի առա-
գաստ, սկզբում նման ծովային որորի թևի, որ փոքր առ
փոքր բաժանվի գլաքարերի փրփուրից և հավասար վազքով
մոտենա ամայի նավահանգստին...

III

ՖԱՏՈՒԻՆՏԸ¹³²

Այնպես պատահեց, որ ես մեկ անգամ երկու շաբաթ
ապրեցի կազակների ստանիցայում, որ գոնվում էր ուազ-
մագի ձախ թևում. այդտեղ էր կայանած և հետևակների մի
գումարտակ. սպաները հերթով միմյանց մոտ էին հավաքվում,
երեկոները թուղթ խաղում:

Մեկ անգամ, բոստոնից¹³³ ձանձրանալով ու խաղաթղթեք-քը սեղանի տակը զցելով, մենք շատ երկար նստեցինք, մայոր Ս***-ի մոտ. խոսակցությունը, սովորականի հակառակ, զբա-ղեցնող էր: Խոսում էինք այն մասին, որ մահմեղականների այն հավատալիքը, թե իբր մարդու ճակատագիրը դրված է երկնքում, մեր՝ քրիստոնյաներիս շրջանում էլ շատ երկրպա-գուներ է գտնում. ամեն մեկն այս կամ այն արտասովոր դեպքն էր պատմում քո կամ *contra**.

— Այդ բոլորը, պարոնայք, ոչինչ չի ապացուցում,— ասաց ծեր մայորը.— չէ՞ որ ձեզանից ոչ ոք ականատես չի եղել այն տարօրինակ դեպքերին, որոնցով դուք հաստատում եք ձեր կարծիքները:

— Իհարկե, ո՞չ ոք,— ասացին շատերը,— բայց մենք լսել ենք վստահելի մարդկանցից...

— Այդ բոլորը դատարկ բան է,— ասաց մեկը.— ո՞րտեղ են այդ վստահելի մարդիկ, որոնք տեսել են այն ցուցակը, որտեղ նշանակված է մեր մահվան ժամը... Եվ երբ իրոք կա նախասահմանություն, ապա էլ ինչո՞ւ է մեզ տրված կամքը, բանականությունը. մենք ինչո՞ւ պետք է հաշիվ տանք մեր արարքների համար:

Այդ ժամանակ մի ապա, որ նստած էր սենյակի անկյու-նում, վեր կացավ և, դանդաղ մոտենալով սեղանին, հանգիստ ու հանդիսավոր հայացրով դիտեց բոլորին: Նա ծագումով սերը էր՝ ինչպես նրա անունից էր երեսում:

Պորուչիկ Վուլիչի արտաքինը լիովին համապատասխա-նում էր նրա բնավորությանը: Բարձր հասակը և դեմքի թուփ գույնը, սև մազերը, սև ներթափանց հայացքը, մեծ, բայց կանոնավոր քիթը, որ նրա ազգի պատկանելիքն է, տիսուր և պաղ ժաղիտը, որ մշտապես խաղում էր նրա շրթումներին,— այս բոլորը կարծես ներդաշնակվել էր, որպեսզի նրան տա առանձնահատուկ էակի տեսք, որն անընդունակ է իր մտքերին և տենչերին հաղորդակից դարձնելու այն մարդկանց, որոնք ճակատագրի կամքով ընկեր էին դարձել նրան:

Նա քաջ էր, խոսում էր քիչ, բայց կտրուկ. ոչ ոքի չէր

* Բեր կամ դեմ (լատին.):

Հայտնում իր հոգեկան և ընտանեկան գաղտնիքները. զինի համարյա բնավ չէր խմում. երիտասարդ կազմակուհիների հետեւից,— որոնց հրապույրը գժվար է ըմբռնել, առանց նրանց տեսնելու, — նա երբեք քարշ չէր գալիս: Սակայն ասում էին, թե գնդապետի կինն անտարբեր չէ դեպի նրա արտա-հայտիչ աշբերը. բայց Վուլիչը լուրջ բարկանում էր, երբ այդ ակնարկում էին:

Կար միայն մի կիրք, որ նա չէր թաքնում. թղթախաղի կիրքը: Կանաչ սեղան նստելիս նա մոռանում էր ամեն ինչ և սովորաբար տանով էր տալիս. բայց մշտական անհաջողու-թյունները միայն գրգում էին նրա համառությունը: Պատ-մում էին, որ մեկ անգամ, արշավանքի ժամանակ, գիշերը նա բարձի վրա բանկ¹³⁴ էր բռնում. բախտը նրան խիստ բերում էր: Հանկարծ կրակոցներ լավեցին, տագնապ հնչեցրին, բո-լորը ոտքի թռան ու գեղի զենք նետվեցին: Ուկա-րանկ գնացած¹³⁵, — գուշց Վուլիչն ամենաթունդ խաղացողներից մե-կին՝ առանց տեղից վեր կենալու— իմը յոթնոց է,— պատաս-խանից վերջինս, դուրս վազելով: Չնայած ընդհանուր իրա-րանցմանը, Վուլիչը մինչև վերջ հասցրեց թալիան. դուրս գնացողի թռվլթը տարավ:

Երբ Վուլիչը գորազդա հասավ, այնտեղ արգեն եր-կուստեկ ուժեղ հրաձգություն էր բացվել: Վուլիչի հոգը չէին ոչ գնդակները, ոչ էլ շեշենների թրերը: Նա գնտրում էր իր բանկի զեմ գնացած բախտավոր խաղացողին:

— Յոթնոցը տարավ,— բղավից նա, վերջապես տեսնե-լով այդ մարդուն առաջամարտիկների շղթայում; որոնք սկսում էին անտառից գուրս մղել թշնամուն, և մոտիկ գնա-լով, հանեց իր քսակն ու դրամապանակը և դրանք տվեց բախտավորին, չնայելով վճարման անտեղիության մասին արվող առարկություններին: Այդ տհաճ պարտականությունը կատարելուց հետո՝ Վուլիչն առաջ նետվեց, իր հետեւից տա-րավ դինվորներին ու մինչև կուլի վերջն ամենայն սառնա-սրտությամբ կրակով պատասխանեց շեշենների կրակոցին:

Երբ պորուշիկ Վուլիչը սեղանին մոտեցավ, բոլորը լոե-ցին՝ նրանից որևէ օրիգինալ արարք սպասելով:

— Պարոնա՛յք,— ասաց նա (նրա ձայնը հանգիստ էր,

թեպետև սովորականից մի խաղ ցածր).— պարոնա՛յք, ինչի՞
համար են դատարկ վեճերը: Դուք ապացուցներ եք ուզում:
Ես առաջարկում եմ մեր վրա՝ փորձել՝ կարող է արդյոք
մարդս ինքնակամ տնօրինել իր կյանքը, թե մեզանից ամեն
մեկի համար վագորոք նշանակված է ճակատագրական բո-
պե... Ո՞վ է ցանկանում:

— Ո՛չ ես, ո՛չ ես,— լսվեց բոլոր կողմերից.— ա՛յ քեզ
տարօրինակ մարդ. ի՞նչ է խելքին վշել...

— Առաջարկում եմ գրադ գալ,— ասացի ես կատակով:
— Ինչի՞ վրա:

— Պնդում եմ, որ նախասահմանություն չկա, — ասացի
ես, սեղանին թափելով մի երկու տասնյակ ոսկի տասը ուուր-
լիանոց, այն բոլորը, որ կար իմ գրպանում:

— Ընդունում եմ,— պատասխանեց Վուլիչը խոլ ձայ-
նով:— Մայոր, դուք մեր դատավորը կլինեք. ահա տասնհինգ
հատ ոսկի տասանոց. մնացած հինգը դուք ինձ պարտք եք և
բարի կլինեք ավելացնելու սրանց:

— Կա՛վ, — ասաց մայորը. — միայն թե, ճիշտն ասած,
ես շեմ հասկանում, թե բանն ինչո՞ւմն է և ինչպե՞ս եք լուծե-
լու այս վեճը...

Վուլիչը լսելայն գնաց մայորի ննջարանը. մենք հետևե-
ցինք նրան: Նա մոտեցավ այն պատին, որից զենքեր էին
կախված, և առանց ընտրություն կատարելու՝ տարբեր տրա-
մաշափեր ունեցող փշտովներից մեկը ցած բերեց մեխից: Մենք դեռևս չեինք հասկանում նրա մտադրությունը. բայց երբ
նա փշտովի շնիկը քաշեց և վառողի տեղը վառող լցրեց,
շատերն ակամա ճիշ արձակելով՝ բռնեցին նրա ձեռքերը:

— Դու այդ ի՞նչ ես ուզում անել: Լսի՛ր, այդ խելազարու-
թյո՞ւն է, — գոռացին նրան:

— Պարոնա՛յք, — ասաց նա դանդաղ, իր ձեռքը դուրս
քաշելով նրանց ձեռքերից. — ո՞վ է ցանկանում քան տասա-
նոց դին տալ ինձ:

Բոլորը լուցին ու հեռացան:
Վուլիչը գնաց մյուս սենյակն ու նստեց սեղանի մոտ.
Բոլորը գնացին նրա հետեւից: Նա նշանացի ճրավիրեց մեզ իր
շուրջը նստել: Լսելայն հնազանդվեցինք նրան. այս բոպեին

նա ինչ-որ խորհրդավոր իշխանություն էր ձեռք բերել մեղ-
վրա: Ես սեռուն հայացքով նրա աշքերի մեջը նայեցի. բայց
նա իմ փորձող հայացքին պատասխանեց հանգիստ ու ան-
շարժ հայացքով, և նրա դալով շրթունքները ժպատացին: Սա-
կայն, չնայած նրա պաղարյունությանը, ինձ թվաց, թե ես
մահվան կնիք տեսա նրա գոնատ դեմքին: Ես նկատել էի, և
հին ուզմիկներից շատերը հաստատում էին իմ նկատանքը,
որ հաճախ այն մարդու դեմքին, որը մի քանի ժամից հետո
պետք է մեռնի, անխուսափելի ճակատագրի ինչ-որ տարօրի-
նակ դրոշը է լինում, այնպես որ սովոր աշքերը դժվար թե
սխալվեն:

— Դուր այսօր մենոնելո՞ւ եք, — ասացի ես նրան:
Նա արագ շրջվեց իմ կողմը, բայց պատասխանեց դան-
դող ու հանգիստ.

— Գուցի այո՛, գուցի և ո՞չ...
Ապա, դառնալով մայորին, հարցրեց՝ արդյոք փշտովը
լցված է:

Մայորը շփոթմունքից լավ չէր հիշում:
— Դե՛, բավական է, Վուլիչ, — գոշեց ներկաներից մե-
կը. — անշուշտ լցված կլինի, եթե ոլլավերեն էր կախած,
այդ ինչ կատակելու սեր է...

— Ճիմա՛ր կատակ է, — վրա բերեց մեկ ուրիշը:
— Գրաղ հմ գալիս հիսուն ուրեմնի հնդի դեմ, որ փշտո-
վը լցված չէ, — գոշեց երրորդը:

Նոր գրաղ եկան:
Ինձ ձանձրացրեց այդ երկար արարողությունը: «Լսե՛ք, —
ասացի ես, — կամ ինքնասպան եղեք կամ փշտովն առարվան
տեղը կախեք ու գնանք քնիլուա:

— Իհարկե՛, — բացագանձեցին շատերը, — դնանք
քնիլուա:

— Պարոնա՛յք, ես ձեզ խնդրում եմ տեղերիցդ շշարժ-
վել, — ասաց Վուլիչը՝ փշտովի փողարերանը ճակատին դեմ
անհելու:

Բոլորը կարծես քարացան:
— Պարոն Պետրին, — հարեց նա, — մի խաղաթուղթ
վերցրեք ու վերև նետեք:

ինչպես այժմ հիշում եմ, ես վերցրի սեղանից փռսիկի¹³⁶ ասը¹³⁷ ու վերև նետեցի. բոլորի շնչառությունը կանգ առավ- բոլոր աշխերը ա՞և և ինչ-որ անորոշ հետաքրքրություն արտա- հայտելով՝ փշտովից արագորեն դեպի ճակատագրական ասն էին դառնում, որը, օդում թրթուլով, դանդաղ ցած էր իշնում. այն բոպեին, երբ ասը սեղանին հասավ, Վուլիչը սեղմեց շնիկը... փուտ անցավ:

— Փա՛ռ ասուծու,— կանչեցին շատերը,— լցված չէր:

— Տեսնե՛նք, սակայն,— ասաց Վուլիչը: Նա նորից շնի- կը քաշեց, նշան բռնեց պատուհանի վերև կախած զլիսար- կին. Հնչեց, կրակոցը, ծովսը լցրեց սենյակը: Երբ ծովսը ցրվեց, զլիսարկը ցած բերին. զլիսարկը ծակված էր ուղիղ մեջտեղից, և գնդակը խորը մտել էր պատի մեջ:

Մի երեք բոպե ոչ ոք չկարողացավ ոչ մի բառ արտա- սանել. Վուլիչն ամենայն հանգստությամբ իր քսակը լցրեց իմ ոսկի տասանոցները:

Ակսվեցին դատողություններ այն մասին, թե փշտովն ինչու առաջին անգամ չկրակեց, ոմանք պնդում էին, թե երեք վառողատեղն էր աղբոտած, մյուսները շշնչալով ասում էին, թե առաջ վառողը խոնավ էր և թե Վուլիչը հետո թարմ վա- ռող ավելացրեց. բայց ես պնդում էի, որ վերջին ենթադրու- թյունն անարդարացի է, որովհետև ամբողջ ժամանակ ես աշ- քերս փշտովից չեմ հեռացնում:

— Խաղի մեջ դուք բախտավո՞ր եք,— ասացի ես Վու- լիչին...

— Ծնածս օրից առաջին անգամն է,— պատասխանեց նա, ինքնագո՞ւ ժպտալով. — Աս բանկից ու շտոսից¹³⁸ լավ է:

— Բայց փոխարենը՝ մի քիչ ավելի վտանգավոր է:

— Հը՞՝ Դուք սկսեցի՞ք հավատալ նախասահմանու- թյանը:

— Հավատում եմ. միայն թե հիմա շեմ հասկանում, թե ինչու էր ինձ թվում, իբր թե դուք այսօր անպատճառ պետք է մեռնեք...

Սակայն այդ մարդը, որ քիչ առաջ ամենայն հանգստու- թյամբ նշան էր բռնել իր ճակատին, այժմ՝ հանկարծ բռնկեց ու շփոթվեց:

— Դե, բավական է,— ասաց նա, ոտքի ելնելով. — Ճեր- գրազը վերջացավ և հիմա ձեր նկատողությունները, ինձ թվում է, տեղին չեն...— Նա դդակն առավ ու գնաց: Այդ ինձ տար- օրինակ թվաց—և իգոր չեր:

Շուտով բոլորն իրենց տները ցրվեցին, տարբեր կերպով խոսելով Վուլիչի տարօրինակությունների մասին և, երեխ, միաբերան ինձ հսամոլ անվանելով, որովհետև ես դրազ էի բռնել մի մարդու դեմ, որը ցանկանում էր ինքնասպան լինել. կարծես թե ես որ Ամինեի, նա չէ՞ր կարող հարմար առիթ գտնել:

Ես տուն էի դառնում ստանիցայի դատարկ նրբափողոց- ներով. լուսինը՝ լրման հասած ու կարմիր, ինչպես հրդեհի շառայլը, սկսեց երեալ տների ատամնավոր հորիզոնից. աստ- ղերը խաղաղ պսպղում էին մուգ-կապույտ երկնակամարում, և ինձ ծիծաղ պատճառեց, երբ ես վերջիշեցի, որ մի ժամանակ եղել են իմաստնագույն մարդիկ, որոնք կարծել են, թե երկ- նային լուսատունները մասնակցում են մի կտոր հողի կամ ինչ- որ հնարովի իրավունքների համար մեր բացած վեճերին: Եվ ի՞նչ. այդ կանթեղները, որ, նրանց կարծիքով, վասել էին մի- միայն նրա համար, որպեսզի լուսավորեն նրանց մարտերն ու տոնախմբությունները, վառվում են նախկին փայլով, իսկ այդ մարդկանց տենչերն ու հույսերը՝ նրանց հետ միասին՝ վաղուց հետեւ մարել են, ինչպես անտառի եղրին անհոգ թափառականի վառած կրակ: Բայց կամքի ի՞նչ ուժ էր տալիս նրանց այն հավատը, թե ողջ երկինքը, իր անթիվ բնակիչների հետ միասին, դրանց է նայում թեպետև համբ, բայց ան փոփոխ կարեկցությամբ... Իսկ մենք, նրանց ողորմելի հետ նորդներս, որ թափառում ենք երկրի երեսին առանց համո- զումների ու հպարտության, առանց վայելքի ու ահի, բացի այն ակամ երկյուղից, որ սեղմում է սրտներս անխուսափելի վախճանի մասին մտածելիս, — մենք այլևս ընդունակ չենք ո՞չ մարդկության բարօրության, ո՞չ էլ մինչեւ անգամ մեր սեփական երջանկության համար մեծ զոհաբերություններ անելու, որովհետև գիտենք նրա անհնարինությունը և ան- տարրեր՝ կասկածից-կասկած ենք անցնում, ինչպես մեր նախնիները մի մոլորությունից դեպի մյուսն էին նետվում,

չունենալով սակայն ոչ նրանց հույսերը, ոչ էլ նույնիսկ այն անորոշ, բայց իսկական հաճույքը, որ գտնում է հոգին մարդկանց կամ ճակատազրի դեմ մղած ամեն մի պայքարում...

Եվ շատ նման մտքեր էին ժագում իմ գլխում, ևս դրանք մտքում չեի պահում, որովհետեւ չեմ սիրում որևէ վերացական մտքի վրա կանգ առնել, և ի՞նչ մի լավ արդյունքի է հասցնում այդ որ...

Իմ երիտասարդության առաջին շրջանում ես երազող էի. ես սիրում էի փայտայի մերթ մռայլ, մերթ վարդագույն պատկերները, որ նկարում էր անհանդիստ ու ագահ երևակայություն: Բայց ինձ դրանք ի՞նչ մնաց. միայն հոգնածություն, որ նման է ուրվագանի հետ ունեցած դիշերային կովի առաջացրած հոգնածության, և ափսոսանքներով լի մի աղոտ հուշ: Այդ ապարդյուն կովում ես սպառեցի թե՛ հոգու կրակը, թե՛ կամքիս անհողողգությունը, որն անհրաժեշտ է իրական կյանքի համար, և ոտք դրի այս կյանքը, մտովի արդեն ապրած-արձած լինելով այն, և ես ձանձրացա ու գարշանք զգացի, ինչպես այն կղզա մի մարդ՝ իրեն վազուց ծանոթ մի գրի վատ նմանությունը կարդալիս:

Այս երեկոյի գեաքը բավական խոր տպավորություն գործեց ինձ վրա և գրողեց ջղերս: Վստահաբար շգիտեմ, արդյոք այժմ հավատում եմ նախասահմանությանը թե ոչ, բայց այդ երեկո ես դրան հաստատ հավատում էի. ապացուցն ապշշցուցիչ էր, և ես, չնայած այն բանին, որ ծիծաղեցի մեր նախնիքների և նրանց ծառայություն մատուցելու պատրաստ աստղագուշակության¹³⁹ վրա, ակամա նրանց շավիլը բռնեցի. բայց ես ժամանակին ստիպեցի ինձ այդ վտանգավոր ճանապարհի վրա կանգ առնել և, կանոն ունենալով բացարձակապես ոչինչ շժիտել ու կուրորեն ոչնչի շնավատալ, մետաֆիզիկան մի կովմ նետեցի և սկսեցի ոտքերիս տակը նայել: Նման նախագուշությունը շատ տեղին էր. ես թիւ էր մնացել վայր ընկնելի, դիալեկտով ինչ-որ մի հաստ և փափուկ, բայց, ըստ երևույթին, անկենդան բանի, Կոռացա. լուսինն արդեն իր լուսար գցել էր ուղղակի ճանապարհին. և ի՞նչ, իմ առջև ընկած էր թրուլ մեջտեղից կիսած մի խող... ես հազիվ էի լավ դիտել խողը, որ քայլերի ձայն լսեցի. երկու կազակ

վազում էին նրբափողոցից. մեկը մոտեցավ ինձ և հարցրեց՝ արգո՞ք խող հալածող հարրած կազակ չեմ տեսել: Ես ասացի նրանց, որ կազակի չեմ հանդիպել ու ցուց տվի նրա անզուապ քաջության դժբախտ զոհը:

— Ի՞նչ ավազակն է, — ասաց երկրորդ կազակը, — Հենց որ չիսիր (զինի. ծ. թ.) է խմում, սկսում է կտոր-կտոր անել այն ամենը, ինչ պատահում է: Գնանք նրան գտնենք, երմեցին. Հարկավոր է նրան կապել, ապա թիւ ու...

Նրանք հեռացան, իսկ ես շարունակեցի ճանապարհս ավելի՝ մեծ զգուշությամբ ու, վերջապես, հաջողությամբ բնակարանս հասաւ:

Ես ապրում էի մի ծեր ուրյադիկի մոտ, որին սիրում էի իր բարության և մանավանդ սիրունիկ՝ աղջկա՝ նաստյալի պատճառով:

Նաստյան; ըստ սովորականին, սպասում էր ինձ դռնակի մոտ, մուշտակի մեջ փաթաթված. լուսինը լուսավորել էր նրա նազելի շրթունքները, որոնք գիշերվա ցորից կապտել էին: Ինձ ճանաշելով, նա ժպտաց, բայց ես նրանով զրազվելու տրամադրություն չունեի: «Յտեսություն, նա՛ստյա», — ասացի ես նրա կողքով անցնելով: Նա ուղեց ինչ-որ պատասխան տալ, բայց միայն հոգոց քաշեց:

Իմ սենյակը մտնելով, ես զուրը ծածկեցի, մոմ վառեցի ու ընկա անկողնուա վրա. սակայն քոմն այս անդամ ստիպեց սովորականից ավելի երկար սպասել իրեն: Արենելքն արդեն սկսում էր գունատվել, երբ ես քնեցի. բայց, երկի, երկնքում գրված էր, որ այս գիշեր ես պետք է քոմն շառնեմ: Առավոտյան ժամի շորսին երկու բռննցք թակեցին իմ պատուհանը: Ես վեր թռա՛ ի՞նչ է պատահել... Ովեր կաց, հաֆնը-վիր», — կանչեցին ինձ մի քանի ձայներ: Ես շտապով հագնը-վիրը ու գուրս գնացի: «Գիտես, ի՞նչ է պատահել», — միարերան ասացին ինձ երեք սպաներ, որոնք իմ ետելից էին եկել. նրանք մահվան պիս գունատ էին:

— Ի՞նչ:

— Վովիշին սպանել են:

Ես քար կարեցի:

— Այո՛, սպանել են,— շարունակեցին նրանք.— շուտ դնանք:

— Ախր ո՞ւր, է՞ւ

— Ճանապարհին կիմանաս:

Մենք գնացինք: Նրանք պատմեցին ինձ ամենը, ինչ պատահել էր՝ դրան խառնելով զանազան դիտողություններ այն տարօրինակ նախասահմանության մասին, որը մահվանից կես ժամ առաջ նրան փրկեց անխուսափելի մահից: Վովկը մենակ գնացիս է լինում մութ փողոցով. նրան դեմ է գալիս խողին թրով կիսած հարբած կազակը, որը գուցե և նրա մոտով անցներ՝ առանց նրան նկատելու, իթե Վովկը, հանկարծ կանգ առնելով, շասեր. «Է՛յ, ախաբերացո՛ւ, ո՞ւմն ես փընտրում»:— Քե՛զ, — պատասխանում է կազակը, նրան թրով հարվածելով, և կտրում է ուսից համարյա մինչև սիրտը... Ինձ հանդիպած և մարդասպանի հետեւց գնացած. երկու կազակները վրա են հասնում, բարձրացնում են վիրավորին, բայց նա արդեն վերջին շնչումն է լինում և ասում է միայն երեք բառ՝ «Նա իրավացի է»:— Միայն ես էի հասկանում այդ բառերի մութ իմաստը. զրանք ինձ էին վերաբերում. ես ակամայից նախագուշակել էի խեղճի ճակատագիրը. իմ բնազդն ինձ չէր խարել. ես ասես թե տիսել էի նրա այլափոխված դեմքի վրա մոտալուս վախճանի կնիքը:

Մարդասպանը մտել էր ստանիցայի ծայրին գտնվող դատարկ խրճիթը և դուրս փակել. մենք այնտեղ էինք գնում: Բազմաթիվ կանայք՝ լաց լինելով՝ նույն այդ կողմն էին վաղում. երբեմն-երբեմն ուշացած մի կազակ փողոց էր դուրս թռչում՝ շտապ-շտապ դաշուլնը կապելով և վաղելով՝ մեղանից առաջ էր անցնում: Սոսկալի իրարանցում էր:

Ահա, վերջապես, մենք տեղ հասանք. տեսնենք՝ խրճիթի շուրջը, որի դուրս ու վեղկերը ներսից փակված էին, ամբոխ է կանգնել: Սպաներն ու կազակները իրար հետ տաքտաք խոսացում էին. կանայք ունում էին սուր ու շիմանով: Նրանց մեջ իմ աչքով ընկալ մի պառավի նշանավոր դեմք, որը խելագար հուսահատություն էր արտահայտում: Նա նըստած էր հաստ գերանի վրա, արմունկները հենած ծնկներին, իսկ գլուխը՝ ձեռքերին. այդ մարդասպանի մայրն էր: Նրա

շրթունքները ժամանակ առ ժամանակ շարժվում էին... արդյո՞ք աղոթք էին մրմնջում, թե անհծոք:

Այնինչ հարկավոր էր որևէ վճռական քայլ անել և բռնել հանցագործին: Սակայն ոչ ոք չէր համարձակվում առաջինը նետվել:

Ես մոտեցա պատուհանին և փեղկի արանքից ներս նայեցի. նա ղծգույն պառկած էր հատակին, փշտովն աջ ձեռքին բռնած. արյունոտ սուրն ընկած էր նրա կողքին: Նա սոսկաւիրեն պտտեցնում էր իր արտահայտիչ աչքերը. երբեմն նա ցնցվում էր ու ձեռքերով բռնում գլուխը, կարծիս թի՛ աղոտ կերպով մտաբերելով երեկվա պատահարը: Ես մեծ վճռականություն կիրարացի այդ անհանգիստ հայացքի մեջ և ասացի մայրին, թե նա իգուր չի հրամայել կազակներին գուրը շարդել և այնտեղ նետվել, որովհետև ավելի լավ է այդ անել հիմա, քան հետո, երբ կազակը բոլորովին ուշքի եկած կլինի:

Այդ միջոցին ծեր եսավուզ մոտեցավ դռանը և տվեց մարդասպանի անունը. սա պատասխանեց.

— Մեղք ես գործել, եղբա՛յր Եֆիմիչ, — ասաց եսավուզ, — Է՛ս, էլ ինչ կարող ես անել, հնազանդվի՛ր:

— Չե՛մ հնազանդվի, — պատասխանեց կազակը:

— Աստծոց վախեցի՛ր. դու Հո նկովյալ շեշեն շես, այլ ապնիվ քրիստոնյա: Դե, եթե մեղքը քեզ իր ցանցն է գցել, ճար չկա. ճակատագրիցդ շես փախչի:

— Չե՛մ հնազանդվի, — բղավեց կազակն ահեղաբար, և լսեց թե ինչպես լրթաց ոտիք քաշած շնիկը:

— Է՛յ, մորաքո՛ւր, — ասաց եսավուզ պառավին. — Խոսիր որդուր հետ, գուցե քեզ լսի... Ախր սա մենակ կնշանակի աստծուն բարկացնել: Մեկ էլ, տե՛ս, պարոններն էլ արդեն մի երկու ժամ է, ինչ սպասում են:

Պառավը սենուուն հայացքով նրան նայեց ու գլուխն օրորեց:

— Վասիլի Պետրովիչ, — ասաց եսավուզ՝ մայրին մոտենալով. — նա անձնատուր չի լինի, ես նրան գիտեմ. իսկ եթե դուրս շարդենք, մերոնցից շատ մարդ կկոտրորի: Ավելի լավ չի արդյոք հրամայեք նրան սպանել, փեղկի ճեղքը լայն է:

Այդ բոպեին իմ գլխով մի տարօրինակ միտք անցավ:
Վուլիչի պես, և էլ մտածեցի բախտս փորձել:
— Կացե՛ք, — ասացի ևս մայորին, — ևս նրան ողջ-ողջ
կրոնեմ:

Եսավովին կարգադրեցի, որ նրա հետ խոսակցություն
բաց անի, դռների մոտ կանգնեցրի երեք կազակ, որոնք պատ-
րաստ պետք է լինեին դուռը ջարդելու և ինձ օգնության նետ-
վելու, հենց որ նշան տայի, ապա ինքս պտտվեցի խրճիթի
շուրջը և մոտեցա ճակատագրական պատուհանին. սիրոս
ուժգին բարախում էր:

— Այս դո՞ւ, նզովյալ, — դոչեց եսավովը, — դու մեզ
վրա ծիծաղում ես, ի՞նչ է. թե՝ կարծում ես, որ չենք կարող
հախիցդ գալ: — Նա սկսեց ամբողջ ուժով բախել դուռը... և,
աշքս ճեղքին գեմ արած, հետևում էի կազակի շարժումներին,
որն այս կողմից հարձակման շեր սպասում. ևս հանկարծ
պոկեցի փեղկը և պատուհանից գլխիվայր ներս նետվեցի:
Պայթյունը հնչեց հենց ականջիս տակ, գնդակը պոկեց ուսա-
դիրս: Բայց ծովար, որ լցրել էր սենյակը, խանգարեց իմ հա-
կոռակորդին՝ գտնելու իր կողքին ընկած սուրբ: Ես բռնեցի
նրա ձեռքերը. կազակները ներս թափվեցին, և մի երեք բոպի
չանցած՝ հանցագործին արդեն կապկապել էին և ուղեկցորդով
տարել: Ժողովորդը ցնցվեց՝ սպասները շնորհավորեցին ինձ,
և իսկապես՝ արժեր շնորհավորել:

Այս բոլորից հետո, ասում ես, մարդ ինչպես ֆատալիստ
չէառնա: Բայց ո՞վ ստույգ դիմու, նա որեւէ բանի համոզված
է, թե ոչ... եվ ինչքա՞ն հաճախ մենք համոզման տեղ ենք բն-
դունում զգացմունքների խարկանքը կամ բանականության
վրիսումը... Ես սիրում եմ կասկածի ենթարկել ամեն ինչ.
մտածողության այս կառուցվածքը չի խանդարում բնավորու-
թյան վճռականությունը. ընդհակառակը, իմ վերաբերմամբ
պետք է ասեմ, որ ես միշտ ավելի համարձակ եմ առաջ գնում,
երբ չգիտեմ, թե ինձ ինչ է սպասում: Չէ՝ որ մահից վատ ոշինչ
չի պատահի, իսկ մահից չես խուսափի:

Բերդ վերագառնալով, ևս պատմեցի Մաքսիմ Մաքսիմի-
շին այն ամենը, ինչ պատահել էր ինձ և ինչին ականատես
էի եղել, ու ցանկացա իմանալ նրա կարծիքը նախասահմա-

նության մասին: Նա սկզբում չէր հասկանում այդ բառը, բայց
ես բացարեցի այն, ինչպես կարող էի, և այն ժամանակ նա
ասաց՝ մեծանշանակ կերպով գլուխն օրորելով.

— Այո՛, ի՞նչ՝ թկե: Դա բավակա՞ն խրթին բան է: Բայց
ճրագենի այդ ասիական շնիկները հաճախ են փուատ տալիս,
եթե վատ են յուղված կամ երբ մտածով բավականաշափ ամուր
չես սեղմում: Խոստովանում եմ, ես չերքեղական հրացաններն
էլ չեմ սիրում. դրանք մի տեսակ վայել չեն մեկ. Կոթը կարճ
է, մեկ էլ տեսար վառողը քիթդ վառեց... Բայց նրանց թրերը
ուղղակի հրանալի են:

Ապա նա ասաց՝ փոքր-ինչ մտածելոց հետո.

— Հա՛, ի՞նչ մարդ... Բայց ի՞նչ սատանա էր ասում
նրան՝ հարբածի հետ գիշերով խոսել... Սակայն երկի նրա
ճակատին էլ այդ էր գրված...

Ես այնու ոշինչ շկարողացա դուրս քաշել նրա քերանից.
Նա առհասարակ մետաֆիզակական բանալիճել ցի սիրում:

1838—1839

Ա Ե Յ Զ

Լերմոնտովին սկսել է աշխատել «Մեր ժամանակի հերոսի» վրա 1838 թվականին և ավարտել է 1839-ին: «Թեևա»-ն, «Յատայիստ»-ը և «Թաման»-ը նախօրոք տպվեցին «Օтечественные Записки» ամսագրում, որպես առանձին վիպակիներ: «Օтечественные Записки»-ի խմբագրությունը, տպագրելով «Յատայիստ»-ը, տեղեկացնում էր բնիքը դիմումի հերին: «Առանձին հաճույքով օգտվում ենք առիթից՝ հայտնելու, որ Մ. Ֆու. Լերմոնտովի կարծիքանակից կհրատարակի իր թիվ՝ տպագրված, թիվ՝ անհարա վիպակիների ժողովածուն: Դա մի նոր, սրանցին նվիր կլինի ուսու գրականությանը»: Ուրեմն ընթերցողներն սպասում էին ոչ թե վեպի, այլ վիպակների ժողովածուի լույս տեսնելուն: Սակայն Լերմոնտովի ի մի հավաքված և որոշ ձևով զանազան վիպակները լույս տեսան հատուկ վիրնագրով՝ ոչ թե որպես ժողովածու, այլ մի ամբողջական «Երեկ» (այսպես էր տպված շապկի վրա), բաժանված երկու մասին—«Բեւլա»-ն, «Մարտիմիլ»-ը և «Թաման»-ը կազմում էին առաջին մասը, իսկ «Եշխանադուստը Մերի»-ն և «Յատայիստ»-ը՝ երկրորդը: Միայն առաջին երկու գործերը պատճենած են Հեղինակի կողմից, մնացած երեքը Պելորինի պահած «օրբագրի հատվածներն» են: Դրանով էլ վիպակների ժողովածուն «լերածիւց Պելորինի կյանքը նկարագրող վիպակին:

«Մեր ժամանակի հերոս»-ի ընթերցողի Համար Պետրինը մի նոր դեմք էր, առաջին անգամն էր հայտնվում Նրանց. բայց Լերմոնտովի Համար նու արդեն նախապատրաստված էր 1836 թվին սկսված «Իշխանուհի Լիդովիկայա» վեպով, մասամբ էլ և «Երկու եղբայր» դրամայով, որ գրված էր նույն տարում։ «Իշխանուհի Լիդովիկայա»-յի մեջ արդեն կա Գրիգորի Ալեքսանդրովի՝ Պետրինը՝ Պետրորուսում ապրող գվարդիական երիտասարդ սպան։ «Մեր ժամանակի հերոս»-ի Պետրինը նույն անձնավորությունն է, առկան առեղափոխած այլ տեղ և այլ ժամանակ։

* «ՍԵր ժամանակի հերոս»-ի հայերն թարգմանության ծանոթագրությունները կազմել է թարգմանիչը — «Ս. Թ.» Նշում ունեցող ծանոթագրությունները՝ ինքնուրույնարար, այդ նշումը շնուրողները՝ բատ ելանբառմի Հայեր, նրան, խմբ.

Վիպակները, որոնցից կազմված է «Մեր ժամանակի հերոս», դասավորված են առանձին հետևողականությամբ, որը կապված է ոչ թե հերոսի, այլ Հեղինակի հետ—Մաքսիմ Մաքսիմիլիչ հետ ունեցած նրա հանդիպումից՝ մինչև Պեշորինի պատմությունը, պատմությունից մինչև պատահական հանդիպումը նրա հետ, Հանդիպումից մինչև նրա օթրագիրը», որից հատվածներ է հրատարակուել Հեղինակը, Վեպի շարժումն ընթանաւմ է ոչ թե հիմնական (հերոսի կյանքը), այլ երկրորդական (Հեղինակի ու հերոսի ժանությանը պատմությունը) փաստերի հաջորդականությամբ։ Այս կառուցվածքը հետեւանք է ՅԵ-ական թվականների ուսու գրականության համար սովորական սյուժետային սկզբունքների, որոնց մեջ կարևոր դեր է խաղաւում Հեղինակի ու հերոսի հարաբերությունները Այդ հարաբերությունների և Հեղինակի շարունակ վիպումին միջամտելու վրա է կառուցված և Պուշկինի «Եվգենի Օնեգին»։ «Մեր ժամանակի հերոս»-ի մեջ նկատի է առնված այս փորձը, բայց ոչ միայն հաշվի է առնված, այլև շարունակված է, փոխանակ հնդինակի կախողորիկ միջամտության (լիրիկական կամ փիլիսոփայական շեղումների ձևով), տեսնում ենք մի ամրակուռ և պատճառարանված սիստեմ։ Հեղինակը, որ հանդես է դայխու նախ որպես «Բելա»-ի առաջին էջերը), աստիճանաբար իր տեղը զիջում է իսկական հերոսին «Բելա»-ի մեջ ընթերցողը հեղինակի հետ իմանում է Պեշորինի ժամանքին Մաքսիմ Մաքսիմիլիչ խոսքերից, կողմնակի մի մարդուց, որը լավ չի հասկանում իր նախկին բարեկամի հոգեբանությունը «Մաքսիմ Մաքսիմիլիչը» վիպակում հեղինակն ինքն է Հանդիպում Պեշորինին ու հաջորդում ընթերցողին իր զննումները, դրանով էլ հերոսն ավելի մոտիկ ու հասկանալի է դառնում։ Վերջապես ընթերցողին առաջարկվում է «Պեշորինի օրագիրը», որի շնորհիլ ընթերցողի ու հերոսի միջև հաստատվում են արդին անմիջական հարաբերություններ։ Այդ «Օրագիրը» կազմող վիպակները դասալորված են նույնպես ոչ պատահարար, այլ աստիճանաբար խորացման սկզբունքով։ «Թամանք» հերոսի վարիգեղողությունը ցոյց տվող, սակայն նրա ներքին հոգեկան աշխարհի մասին գաղափար շտկող նովել է, «Խշանադուար Մերին» մի օրագիր է, որ բաց է անում այդ հոգեկան կյանքը և առաջին անգամ հաղորդում անցյալի մի քանի փաստեր ու պարումներ, «Ֆատալիստը» մի յուրահատուկ վերջարաբան է, որ նախապատրաստում է հերոսի սպանվելու մի ուրիշ սպանվելու օրինակով. Վուլիչը Պեշորինի լուրջինակ կրկնակն է։

Նկարագրելով իր թառցիկ ծանօթությունը Պետրինի հետ (Պարսկաստան մեկնելուց առաջ), Լեռմոնտովը մի կողմ է բաշխում և խոսքը տալիս է Պետրինին Հետեանքը լինում է այն, որ Պետրինի ներքին, Հոգեկան կյանքը մենք ավելի լրիվ ու խոր ենք իմանում Մի տեղ («Եշխանագուստը Մերի»-ում) լեռմոնտովը քիչ էր մնում բարձրացներ Պետրինի անցյալը ծածկող վարագույրը և բացարեր, թե ինչու է նա Կովկաս եկել. «Բայց ես հիմա հավատացած եմ, որ առաջին առթիվ էլ նա հշարցնի՝ ո՞վ եմ ես և ինչո՞ւ եմ այստեղ՝ Կովկասում։ Նրան հավանաբար կպատճեն մենամարտի աշակոր պատությունը և մանավանդ նրա պատճենը, որն այստեղ ումանց

հայտնի է, և այն ժամանակ... ահա Գրուշնիցիուն կատաղեցնելու զարթանալի միջոց կունենամամ: Բայց այս ամենը չնշված է, և ընթերցողն անտեղյակ է մնում Պեչորինի անցյալ կանքի վերաբերմամբ նույնպիս անհայտ է, թի ի՞նչ էր անում Պեչորինը Պետրովուրդում նրա Կովկասից մեկնելու և նորից երկարու միջն ընկած հինգ տարվա ընթացքում: Լեռմոնտովի դիտմամբ մանրամանորեն գծում է հերոսի բնավորությունը, տալիս է նրա խորհրդածությունները, ապավորությունները, զգացումները, բայց զանց առնում կենսադրությունը՝ հազորդելով (այն էլ թուուիկ կերպով) միայն ամենանցրածիշտը Ալեներաբար այսպէս էր Լեռմոնտովի մտահացումը, և հենց դրա համար էլ Շեղինակին դարձրել է նա կողմինակի անձնափորություն, և համարյա թի ամբողջ վեպը կազմել է հերոսի գրառումներից, որտեղ անցյալին վերաբերող (բացի Վերայի հնատ սննդած սիրավելից) ինքնակենսագրական ոչ մի փաստ չկա, իսկ Պարսկաստան մեկնելուց առաջ Պետրովուրդում անցկացրած հինգ տարին մնում է բնավ շուռաբանված:

Հստ բոլոր նշանների՝ Պեչորինը մեկնել էր Կովկաս ոչ թի իր կամքով, այլ արսորված էր Ֆրանով էլ Ընթերցողին է թողնվում կաւճի Պեչորինի կանքը մինչև Կովկաս արսորվելը, ապա Պարսկաստան մեկնելը: Պեչորինին հասկանալու համար խիստ կարևոր է նրա այն մենախոսությունը, որ զետեղված է «Ֆատալիստ»-ի վերջում («Իսկ մենք՝ նրանց ողորմիլի հատնորդներս...» և այլն): Այս մենախոսությունը համարյա թի «ԽօսՀ»-ի կամարյալ կրկնությունն է («Ճիրագին նայում եմ ես մեր սիրնդին») և դրանով էլ կրկնում է Չապաևի մտքերը:

Պեչորինին անկասկած պատկանում է ապօպիցիոն տրամադրված գվարդիական երիտասարդության շրջանակին: Զուր չէ, որ Պեչորինի կենսագործման մի քանի փաստերը համբեկնում են հենց Լեռմոնտովի և տառնը-վեցի խմբակի» նրա մերձավորագույն բարեկամների կենուագրությանը, Պեչորինի կենսագործյան ֆրազմենտայնությունը և որոշ հանկուկայնությունը հատկապես այն մասում, որը կազմած է Պետրովուրդի հետ, ակներեվար բացարձում է նրանով, որ Լեռմոնտովը չէր կարող քաջաքական պատճառներով ավելի մանրանասն ու լրիվ պատմելի: Բացի դրանից՝ վեպի բացառապես հոգեբանական ժանրը հնարավորություն ու իրավունք էր տալիս շրջանցել կենսագրական փաստերի մանրանասն շարագրումը:

¹ «Մեր ժամանակի հերոս»-ի վրա Լեռմոնտովն աշխատել է 1838—1839 թթ.: Նախապես «Օтечественные Записки» ժուռնալում տպագրվել են «Քելան», «Ֆատալիստ» և «Թարմանը»: Վեպն ամբողջությամբ լույս է տեսել 1840 թին առանց «Առաջարան»-ի, որը տպվել է միայն երկրորդ՝ 1841 թվի հրատարակության մեջ և դրվել է երկրորդ ժաման սկզբում:

² «Քելա»-ն առաջին անգամ տպագրվել է 1839 թվին Եզա (Այն զամանու օֆիցերա և Կավկազ) վերնագրով: Բայց Մ. Ն. Լոգինովի հիշողությունների պատմվածքի հիմքը իրական ղեկար է, որ Լեռմոնտովը պոետացիայի է նեթարկել և լրացրել իր հորինած մանրամասնությունները: Բուն ղեկարը պատահել է հեղինակի ազգական Ե. Ե. Խաստատովի հետ:

³ Մինչև երկաթուղու երկան գալը, հեռավոր ճանապարհությունն-

ները կատարում էին կամ սեփական կառքերով, կամ պետական փոստակառքով, բնդ որում վերցին ղեկարում յուրաքանչյուր փոստակայանում փոխում էին կամ ձիերը, կամ թի' ձիերը, թի' կառքը:

⁴ Տղամարդու երկարարզանցք բաճկոն:

⁵ Նա աօկա (նաև ա զայ—թեյի փող) սպասավորներին, կառապաններին և այն տրվող նվիրաբերամ նախատվական կարգերում (Ս. Թ.):

⁶ Ա. Պ. Երմոլովը Կովկասը նվաճող ցարական բանակի ղեկավարություններից էր:

⁷ Ալյանդ—ոպամական ամրությունների շարան:

⁸ Համապատասխանում է ներկայիս լիցենանատին: Պատերազմի ժամանակ կար նաև պրապորչութիւնի աստիճան, որ համապատասխանում է այժմյան կրտսեր լիցենանատի աստիճանին:

⁹ Ասացներում ոռուներն արդպիս էին անվանում Ռուսաստանի համարյա բոյոր մանմեկաններին:

¹⁰ Երեք ձիու:

¹¹ Ալյանդ և ն կովկասյան լիցենականների աները:

¹² Այժի մազից պատրաստված թագիկանման անթի վերաբերու, որ համապես շատ էր տարածված լեռնականների մեջ:

¹³ Երդիկից:

¹⁴ Ավագագույն ենթասպա նախկին ցարական բանակում: Վաշտապետի օքնականը:

¹⁵ Ցարական բանակում բոլոր ոշ-սպանները սպաններին բարեկ փոխարեն ասում էին «ողջություն եմ ցանկանում» (զգացած առաջարկություն):

¹⁶ Կոնյակի տեսակ ոգիլից խմիչք:

¹⁷ Ջուշաշարք:

¹⁸ Ռուսների գեմ շկավու:

¹⁹ Սպաններին խուլ բերդերում աշխատանքի նշանակելն այն ժամանակ երբեմն պատիժ էր հանդիսանում:

²⁰ Ռուսական տաօր ոռուիւնոց սոկեդրամ:

²¹ Ալյանդ—փորձանք:

²² Հյուրապիրության կապերով միմյանց հնատ կապված մարդիկ լիցենականների մոտ:

²³ Այսպես են կովկասյան լիցենականների գյուղերը:

²⁴ Հյուրապինյակի:

²⁵ Մանմեկան հոգենորական է:

²⁶ Մանմեկանների սուրբ գիրքը, որ համարվում էր երկնքից թիւգրգամձ:

²⁷ Զիարշավ:

²⁸ Վարօպես ձի քշող և քաջ կավող, իգիթ:

²⁹ Ուկիթել կամ արծաթաթիւ երիկ, որով զարդարում էին զինվորականների հագուստի օձիքը, թևաբերանները և այլն:

³⁰ Ալյանդ—ցարական բանակի ղեկար լիոնցի պատիզաններ:

³¹ Արխալուղանման, սակայն երկայնարդանցք հագուստ է:

32 Արևելյան դրահ երկաթի օղերից, որ հագնում էին զգեստի տակ:
33 Յանաբարիկոս մահմեդականներին այդպես էին անվանում ոչ-մահմեդաններին (քրիստոնյաններին): Գյավուր—ալլակրոն, անհավատ:

34 Արարերին—աստծուն:

35 Աստված վկա (երգման խոսր է):

36 Այլպես էին կոչվում լեռնցիների կողմից հատկապես գնահատվող հին, բարձրակ սրբը:

37 Նաև՝ բաշտուղ—գլխագին: Մի շարք արեկլան ժողովուրդների մեջ հարսնացուի համար նրա ծնողներին վճարվող գլխագին, որ նվաստացնում, վաճառքի առարկա էր գարձնում կեղզը: Այդ սովորությունը եղել է նաև Հայաստանում: Սովորական կարգերում գլխագինն արգելված է (Մ. Թ.):

38 Պարսկերին բառացի՝ թևավոր Ըստ իրանական գիցարեանության՝ կնոց պատճեռով թևակոր բարի ողի, որ պաշտպանում է մարդկանց շար սուուց՝ գելից: Փոխարերական իմաստով՝ հրապուրիչ գեղեցկության տեր կին (Մ. Թ.):

39 Աղավաղված ուստիրեն, նշանակում է՝ խնդրում եմ, խնդրում եմ, պետք չէ, պետք չէ (Մ. Թ.):

40 Լեռնական հողատեր-աղնվականներ, որոնք կախում ունեին իշխաններից և ուղեցում էին իշխաններին որպես նրանց շքախումբն ու թիկ-նապահները:

41 Ժան Ֆրանսուա Դամբա (1763—1833) ֆրանսիացի ճանապարհորդ: Մի շաբաթ ճանապարհորդ ճանապարհորդություններ է կատարել Հարավյախին Ռուսաստանում և հատուկ գիրը է գրել այլ մասին: Եղել է նաև Թիֆլիսի Հյուպապու:

42 Ռուսական հերիաթային հակա, որն իրք թե լոկ իր սովորով մարդկանց գետին էր տապալում:

43 Ռուսաստանի ամենասականավոր թագավորը (1672—1725), ականավոր պետական գործիչ և զորավար (Մ. Թ.):

44 Հնդանշյունու ձեր ամրություն կամ ամրոցի փոքրիկ բուրգ (Մ. Թ.):

45 Անգլիացի խոշոր բանաստեղծ (1788—1824), այսպես կոչված «համաշխարհյախին վշտի» երգիչը, Մասնակցել է հույների աշտաքրական պայքարին:

46 Մետաքսի կամ կիսամետաքսի խիտ գործվածքներ:

47 Սովորական առումով՝ գիտական աշխատություն ուսումնական աստիճան ստանալու համար: այստեղ՝ դատողություն, երկար պատմություն (Մ. Թ.):

48 Հյուսիսային Կովկասի Գելենցիկ և Տուապս քաղաքների միջև պանվոզ տերիտորիայում բնակող մի շերքեական ցեղ, որ Կովկասը ուսւների կողմից գրավելուց հետո գաղթեց Թյուրքիա:

49 Կանոնավոր երթեկության բացակայության պատճառով պատահար դնացող փոստակառք:

50 Այստեղ—օլին, կատակ, նախորդ առման հետ առնչվելով՝ տալիս է կալամբուր (Մ. Թ.):

51 Կատակ, սրախոսություն, հիմնված հնչուումային կազմով՝ նման, բայց իմաստով տարբեր բառերի խաղի վրա:

52 Կաթոլիկ եկեղեցու բարձրաստիճան հոգևորական (Մ. Թ.):

53 Հնում շատ գործածական և նստրավոր կառք (Մ. Թ.):

54 Հունգարական տարավի զինվորական հագուստ (Մ. Թ.):

55 Ֆրանսիացի գրամատուրդ Բումարշեի (1732—1799) «Սեփիլլան» ափիրիչ» և «Ֆիդարոյի ամուսնությունը» կոմեդիաների հերոսը: Ճարակի, խորածանկ, աշխատ և հնարագեն մարդու տիպար:

56 Ռուսների մեջ միապետության օրով ընդունված էր, որ գյուղացիները և ստորին աստիճանի ծառայողներն ու սպասավորներն ազնվականներին, պաշտոնյաներին և նրանց կանանց նկատմամբ հոգնակի թիվ էին դորձածում ոչ միայն անմիջապես նրանց զիմելին, այլև նրանց մասին խոսելիս (Մ. Թ.):

57 Բնագրում «Յօսչմիցրիւնիյ» ութ գրիենիկ—արծաթ գրամով:

58 Կոպեկ, պղնձե գրամով՝ 24 կոպեկ: Քանի որ այն ժամանակված համար 80 կոպեկն արծաթաբանի օղեղամալ չէր, ուստի վերցնում ենք 24 կոպեկը, որին համապատասխանում է մեջ մոտ նախասովետական շրջանում գոյացիուն ունեցող 25 կոպեկը, կամ մողովդական արտահայտությամբ՝ հինգ շահանոցը (Մ. Թ.):

59 Ակնարկում է ֆրանսիական մեծ վիպաշիր Օնորե Բալզակ (1799—1850) «Երեսնամայ կինը» վեպի հերոսություն:

60 Բարակ, թափանցիկ գործվածք էր Փոխարերական իմաստով՝ խորհրդագորության բոլոր:

61 Ֆրանսիացի գրամատարում «Էնթասպի, ոստիկանսկան վարչության մեջ՝ ոստիկանական վերակացու, Անդրկովվասում՝ գյուղակմբի ոստիկան» (Մ. Թ.):

62 Ցարական կարգերում՝ գյուղական ոստիկանության ավագ:

63 Պատվանուն, որով դիմում էին կրտսեր սպաներին (Ճինչե կապիտանը (Մ. Թ.):

64 Սպայի զինվոր-սպասավորը (դենակ) (Մ. Թ.):

65 Քաղաքի արվարձան, քաղաքամերձ գյուղ (Մ. Թ.):

66 Ցարական Ռուսաստանում այցպես էին անվանում ուկրաինացիներին բուրու ոչ-ուկրաինացիները: Համապատասխանություն նուկրաինան էլ կում էր Մալոռուսիա (Մ. Թ.):

67 Նկատի ունի ուստական մեծ գիշեցը, որ թիվ վառարան է, թիվ փուռ և որի վրա գիշերները բնում են (Մ. Թ.):

68 Ակնարկում է Ս. Պետերբուրգը, այժմյան կենտրոնագրք, որ այն ժամանակ Ռուսաստանի մայրապահը էր (Մ. Թ.):

⁶⁹ (Խուսեբենում՝ յոհանա—քարզմ.), և լատիներն սուս (ալիք) բառից, կնոջ կերպարանով շրի Հերիաթային ոգիներ, որոնք հրապուրում էին աղջամարդկանց և ձգտում նրանցից երեխա ունենալ, որով իր թե պիտի է մարդանային:

⁷⁰ Գերմանացի հանճարեղ բանաստեղծ Գյորի (1749—1832) «Էլի-չելմ Ալյասմերի թափառման ասրիները» երկի հերոսունիքն:

⁷¹ Առանց պետությունը տօւրը (մարտ) վճարելու ժամկարար ապրանք և արժույթ ներբուծովներ ու արտաշանուղներ, որոնց օրենքը հետապնդում և պատժում է (Մ. Թ.):

⁷² Մի տող Պուշկինի «Փոլիորիկ» բանաստեղծությունից:

⁷³ Ալյափի կոչված բարձր դասի» շրջանում լայն գործածական կոթավոր ակնոց (Մ. Թ.):

⁷⁴ Զինվորական և քաղաքացիական ծառայողների պաշտոնական զգեստ (մունիդիր) (Մ. Թ.):

⁷⁵ Ուսի սստերի կամ ծղոտի հյուսվածքի մեջ դրված (Մ. Թ.):

⁷⁶ Ալյափի՝ պայմանական:

⁷⁷ Քաթանից կարած փոթավոր նախա, որ կրում էին պարանոցի շուրջը և կրծկալի վրա (Մ. Թ.):

⁷⁸ Անոնը ծագել է երաժշտական լարավոր գործիքից, որի լարերը քամի փշելիս ախորժելի ձայներ են հանում (Մ. Թ.):

⁷⁹ Սրիմանների դաստիարակներ ազնվականների ընտանիքներում (Մ. Թ.):

⁸⁰ Սպայտական զպրոցի սան ցարական նուսաստանում:

⁸¹ Զինվորական շքանշան ցարական բանակում:

⁸² Դարձվածքների շարք կամ բանաստեղծության մի քանի տող (Մ. Թ.):

⁸³ Սրամիս ծալրական կարճ բանաստեղծություն (Մ. Թ.):

⁸⁴ Մանտիս — պլաշչանման վերակու է: «Ճրագիկ մանտիս» — ինչպես և շաբանմների շնծու, արհեստական ձեւ:

⁸⁵ Չորս հոգու մասնակցությամբ մի թղթախաղ է (Մ. Թ.):

⁸⁶ Հունվարի 6-ի շրջանի ցրտերը, որոնք նուսաստանում առանձնապես խիստ են լինում (Մ. Թ.):

⁸⁷ Էնդիմինը հնիմսոս հույների աստվածամայր Զեսի որդին էր, գեղեցկության և երիտասարդության մարմնացում:

⁸⁸ Գիտական Գալլի (1758—1822) այն ուսմունքի հետևորդը, ըստ որի մարդու հոգիկան առանձնահատկությունները կազ ունեն գլխուղեղի որոշ մասերի հետ:

⁸⁹ Ալյափին է Գյորեի հանճարեղ «Յառաւու» երկի հերոս սատանայի անոնը:

⁹⁰ Հին Հռոմի հռչակավոր հռետոր, փիլիսոփա և պետական գործիչ (105—43 թ. մեր թվականությունից տուաշ):

⁹¹ Ցիցերոնը պատմում է, որ ավգուրները (գուշակ-բրմերը, քարզմ.)

միմյանց հանդիպելիս մեծանշանակ ժպառում էին՝ ծիծաղելով մարդկանց գյուրաշալատության և տղիտության վրա:

⁹² Պայցմանավորված կափկ երկու անձների միջև սառը զենքով կամ հրազդենով՝ վիրավորվածի պատիզը վերականգնելու նպատակով էրունությի ժամանակ մենամարտն արդին արդիված էր:

⁹³ Բարձրաստիճան զինվարական պետական հանձնաբարությունները կամ շտարային աշխատանք կատարող սպա (այլուտանու) (Մ. Թ.):

⁹⁴ Ցարական զվարդիան թագավորի ընտրապորն էր՝ մեծ մասամբ բաղկացած ազնվականների զավակներից (Մ. Թ.):

⁹⁵ Ալյափնը՝ գրգռել, զարյացնել:

⁹⁶ Ակնարկում է հին զարի մեծագույն մաթեմատիկոս և ֆիզիկոս Արքիմեսի (287—212 թ. մեր թվականությունից առաջ) հայտնի ասուլիթը՝ «տվեր ինձ հնակեա, և ս երկրագունզը շուռ կտամ»:

⁹⁷ Պլատոնական սեր (անկիրը, գաղաքարական սեր) արտահայտությունը ծագել է Հույն փիլիսոփա Պլատոնի (427—348 թ. մեր թվականությունից առաջ) անոնից, որն այդպիսի սեր էր քարոզում (Մ. Թ.):

⁹⁸ Հյուծող շերմ է:

⁹⁹ Շնրամաշակ» աշխարհիկ մարդ, մոռայի օրինակ տվող (Մ. Թ.):

¹⁰⁰ Հատուկ զգեստ՝ ձի հեծնող կանանց համար (Մ. Թ.):

¹⁰¹ Ռիսուրան, հաշարան:

¹⁰² XVII դարում մոգա զարձած լայն շրջազգեստ, որ իր մեջ անցկացրած կամ ծկան բերանի եղչերաշերերի (ԿԻТОՎԱՅ Ս) շնորհիվ՝ զանգածի էր մնում հագնողի վրա:

¹⁰³ (Մուշկա բառացի՝ ճանճիկ, կանանց գելիքի կեղծ խալ, քարզմ.): Մուշկաներից զար ասելով՝ հեղինակը հասկանում է XVIII դարի աղնվականական հասարակությունը:

¹⁰⁴ Պարի կամ խաղի շրջան, պտույտ:

¹⁰⁵ Տիրություն, թափիծ:

¹⁰⁶ Բուրժուական ընտանիքներում և զպրոցներում օրիորդները և աշակերտուհիները բարեկելիս ծոնկ էին խոնարհում (Մ. Թ.):

¹⁰⁷ Ալյոսեղ՝ համեղ կերակուրների գիտակ և սիրող (Մ. Թ.):

¹⁰⁸ Խոտակենն—տան կենտրոնական մասի գլխին կառուցված թիթեարի (Մ. Թ.):

¹⁰⁹ Կատարման ժամանակ, առանց նախապատրաստության հորինած բանաստեղծություն, երաժշտական երկ և այլն:

¹¹⁰ Դիցարանության և պոեզիայի մեջ սիրո ասուլածը՝ աղեղ և նիտ կրող թևավոր մանկան կերպարանով (Մ. Թ.):

¹¹¹ Ալեքսանդր՝ Մակեդոնացին (356—323 մեր թվականությունից առաջ)՝Մակեդոնիայի թագավորը, հին դարերի ամենահռչակավոր զորավարներից մեկը:

¹¹² Ցարական նուսաստանում կար քաղաքացիական ծառայության պաշտոնյաների 14 կարգ, ամենաբարձր կարգն Ի էր, տիտղոսավոր խորդականը պատկանում էր Ի կարգին (Մ. Թ.):

¹¹³ Խոսքը ճորտերի մասին է, որոնց գույք հաշվելը և որպես օժիտ տալը սովորական քանի էր ճորտափառական կարգերում (Մ. Թ.);

¹¹⁴ Նարզան—շերբերին նշանակում է զյուցազունների չար (Մ. Թ.);

¹¹⁵ Ընդունված կանոններին չհամապատասխանող, առօրինակ (Մ. Թ.);

¹¹⁶ Հոռմի կայսր 54—68 թվականին ներսի շառավայրումը, անրարդար կանոններում, գաճանությունը (Հոռմի հրկիվումը, մոր և զնոջ սպանությունը, բազմաթիվ դաժան մահապատճենները) նրա անունը դարձել էն այդ հատկությունների հոմանիշ (Մ. Թ.);

¹¹⁷ Երկառող բերված է Պուշկինի «Եվգենի Շնորհին»-ից:

¹¹⁸ Տորիվաստ Տասո կամ Տասո (1544—1595) խոալական բանաստեղծի և Ալգատագրված Երուսաղեմում պահմում նկարագրված են խաչակիրների արշավանքներն իրեք թե բրիտանյանների սուրբ քաղաք Երուսաղեմը մահմեդականների տիրապետությունից ազատելու համար (Մ. Թ.);

¹¹⁹ Խաղալիքանման սարք, որի մեջ գունավոր ասպակու և թղթի կտորներ ու այլ մանր առարկաներ զետեղում են փոքրիկ հայելիների միջև այնպես, որ սարքը պատելիս՝ արագ փոփոխվող նախշանկարներ են երևում նայողի աշբին (Մ. Թ.);

¹²⁰ Բատ հին հունական դիցարանության՝ Վամպիրը մի արյունաբու հակա դիշատիչ թղուն էր:

¹²¹ Խոսք մենամարտի կանչելու մասին է (Մ. Թ.);

¹²² Մենամարտով կողմի վկան և հավատարմատարը՝ մենամարտի պայմանները մշակելիս:

¹²³ Թաղիրի կամ այլ թանձր առարկայի (կաշու, խցանի, խավաքարտի) կտոր փամփուշտի մեջ, որ վառողքը բաժանում է գնդակից:

¹²⁴ Մենամարտն օրենքով արգելված լինելու պատճառով՝ մենքով մահն ուղում են վերագրել չերքեզներին, որպեսզի իրենք պատժի խուսափեն:

¹²⁵ Շոալանդացի վիպագիր և բանաստեղծ (1771—1831):

¹²⁶ Նեղ անդրավարտիք, որ հագնում էին ձի նստելիս (Մ. Թ.);

¹²⁷ Որևէ բժշկի մոտ բժշկվողը կոշփում է նրա պացիենտը (Մ. Թ.);

¹²⁸ Հոռմի կայսր (102—44 թթ. մեր թվականությունից առաջ), որ միաժամանակ մեծահաշակ զերավար էր, պետական գործիչ և գրող (Մ. Թ.);

¹²⁹ Թախտ փորձելիս կամ դրամ խաղալիս մետաղի դրամը վեր էին նետում, մինչև դրամի ցած ընկնելը մեկն ասում էր «գիր», մյուսը՝ «թուշուն» (ցարական մետաղի դրամների մի կողմի վրա արծիվ էր պատկրված, մյուսի վրա՝ գիրն էր), դրամը գետին ընկնելիս նայում էին, թե երեսի կողմն ինչ է, և ըստ այնմ որոշում, թե խաղն ով է շահել, խաղը կոչվում էր «գիր», թե՝ «թուշուն» (Մ. Թ.);

¹³⁰ Ֆրահներին—փոփոխությունը մաղմագիտության մեջ՝ ուղարկան դրժանություն թշնամու ուժերը գլխավոր թատերաբեմից այլ կողմ ուղղելու նպատակով:

¹³¹ Վաթեռլոյի հակատամարտում ֆրանսիական կայսր նապոլեոն Բո-

նապարագ 1815 թվին պարտություն կրեց, որից հետո նրան գահընկեց արեցին:

¹³² Ճակատագրապաշտ (լատիներեն «Փատում»—ճակատագիր բառից): Այդպես է կոչվում նա, ով հավատում է կանխորոշված ճակատագրին, որի դեմ մարդն իրը թե անկարող է պայքարել:

¹³³ XIX դարի 20—30-ական թվականներին չինովնիկական-աղնվական նական թուսաստանում խիստ տարածված թղթախաղ:

¹³⁴ Մի ազարտ թղթախաղ է:

¹³⁵ Բանկի ամբողջ գումարն ասս (Մ. Թ.);

¹³⁶ Խաղաթղթի մի տեսակը (չերա) (Մ. Թ.);

¹³⁷ Խաղաթղթի ալյալ տեսակի ամենամեծ թուղթը—մեկանոցը (Մ. Թ.);

¹³⁸ Մի ազարտ թղթախաղ է:

¹³⁹ Աստրոլոգիա—Հին և միջին դարերում աշբաժված կեղծ ուսմունք աստղերի մասին, որ հիմնված էր այն հավատքի վրա, թե աստղերի դիրքին նայելով՝ կարելի է ազարտ գուշակել (Մ. Թ.);

Բ Ա Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ա.Բ.Ա.Զ.Ի.Ն ՄԱՍ

էլ

I. Բելա	5
II. Մաքսիմ Մաքսիմիչ	48

Պեշորինի օրագիրը

Առաջաբան	60
I. Թաման	61

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

Պեշորինի օրագրի վերջը

II. Իշխանադուստր Մերի	75
III. Ֆատալիստը	169
Մանորագրություններ	182

Խմբագիր՝ Վ. Գևիշելյան
Նկարիչ՝ Գ. Արմեսյան
Գեղ. Խմբագիր՝ Մ. Բաղդասարյան
Տեխն. Խմբագիր՝ Վ. Գալսոյան
Վերսատուգող սրբագրիչ՝ Վ. Նալբանդյան

Պատվեր 1141:

Տիրած 10000:

Հանձնված է արտադրության 8/IX 1956 թ.:

Ստորագրված է տպագրության 24/XII 1956 թ.:

Թուղթ 84×108^{1/32}. Հրատ. 9,4 մամ., տպ. 12,2 մամ.=10,0 պալմ. մամ.,
Գինը 3 ռ. 80 կ.:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՐԱԿԱՆ ՊՐՈՊՐԵՆԵՐԻ և ԱՊԼԻՂԻՔ ՓԱ
ՄՐԴՈՒՄՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԳԼԻԽԱՎՈՐ ԺԱՐՈՒԹՅԱՆ № 1 ՄԱՐԱՆ, ԵՐևան,
ԱԼԱՎԵՐԴՅԱՆԻ ՓՈղ. № 65: